

ԳՈՒՐԳԵՆ ԽԱԶԱՏՅԱՆ

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԽՈՏԻՆԻ ՊԱՏՐԱԶՄԻ



ԵՐԵՎԱՆ 2015

ՅՈՎԿԱՆՆԵՍ ԿԱՄԵՆԱՑԻ

3 - 18

հջ

ՀՈՎԿԱՆՆԵՍ ԿԱՄԵՆԱՑԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԽՈԹԻՆՈՒ

Քննական բնագիրը և բնագրի  
ծանոթագրությունները՝  
ՀԱԿՈԲ ԱՆԱՍՅԱՆԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ԽՈՏԻՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և  
թարգմանության ծանոթագրությունները՝  
ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

5126

ԵՐԵՎԱՆ 1964

ԵՐԵՎԱՆ 2015

## Հրադարակվում է Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3  
Կ 181

|                                |                    |
|--------------------------------|--------------------|
| Գլխավոր խմբագիր՝ բ.գ.դ., պրոֆ. | Լ. Շ. Հովհաննիսյան |
| Խմբագիրներ՝ բ.գ.թ., դոցենտ     | Ա. Սանթոյան        |
| պ.գ.թ., դոցենտ                 | Ա. Մելիքյան        |
|                                | Լ. Սարգսյան        |

### Կամենացի Հովհաննես

Կ 181 Պատմություն Խոտինի պատերազմի /Քննական բնագիրը և բնագիր ծանոթագրությունները՝ Հ. Անայանի, արևելահայերեն թարգմանությունը, առաջաբանը և թարգմանության ծանոթագրությունները՝ Գ. Խաչատրյանի. – Եր.: Ուսկան Երևանցի, 2015. – 200 էջ:

Ոչ մեծածավալ այս պատմության մեջ նկարագրվում են լեհ-թուրքական հարաբերություններից մի դրվագ՝ 1621թ. պատերազմը, լեհական զորքերի հերոսական դիմադրությունն ու ճարահատյալ թուրքական բանակի խաղաղության դաշինքը, և 1622թ. ետպատերազմյան դեպքերը, որոնց լեհահայ պատմիչ Հովհաննես Կամենացին անդրադարձել է 1627թ.:

Գրաբարից առաջին անգամ արևելահայերենի թարգմանված այս Երկը հասցեագրվում է պատմաբաններին, բանասերներին, միջազգայնագետներին, ուսանողությանը:

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3

ISBN 987-99930-0-238-3

© ԽԱԶԱՏՐՅԱՆ Գ. Կ. (թարգմ. համար), 2015  
© «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆԾԻ», 2015

Կազմի վրա «Խոտինի ճակատամարտը» (Յովեֆ Բրանդտ, 1867թ.) նկարից հատված:

## ՆԵՐԱԾՈՎԱՆ ԽՈՍՔ

«Պատմութիւն պատերազմին Խոթինու» երկի հեղինակը 17-րդ դարի լեհահայ պատմիչ Հովհաննես Կամենացին է<sup>1</sup>, որի մասին քիչ բան է հայտնի. Ծնվել է լեհահայոց<sup>2</sup> գաղութի Կամենեց Պողոլսկ բերդաքաղաքում՝ հոգևորականի ընտանիքում. նրա հայրը՝ Հակոբը, այդ քաղաքի հոգևոր հայրերից է եղել: Մայրը՝ Համան, ծնել է երկու զավակ, նրանցից անդրանիկը սոյն պատմության հեղինակ Հովհաննեսն էր, ով իր պատմության հիշատակարանում նշում է նաև Պողոս անունով կրտսեր եղբոր ու նրա զավակների՝ Աստվածատուրի և Ուտիհանի մասին<sup>3</sup>: Պատմությունից պարզ է դառնում նաև,

<sup>1</sup> «Պատմութիւն պատերազմին Խոթինու» երկու հեղինակը հանդես է գալիս Հովհաննես անունով: Կամենացի մականոնը հավելել է քննական բնագրի հեղինակ Հ. Անայանը՝ նշելով, որ պատմական արքյուրներում լեհահայ զարդիք Կամենեց քաղաքի հայ քննակիցներն անվանվում են կամենացի, կամենցի կամ կամենացի, որոնցից պատմիչ Հովհաննեսի համար ինքը նախընտրել է Վերջինը (Յովիհաննէս Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խոթինու աշխատափրայամբ Հ. Անայանի, Երևան, 1964թ., էջ 6: Այսուհետ՝ Յովիհաննէս Կամենացի): Նկատենք, սակայն, որ ավելի վաղ հրապարակումներում Հ. Անայանը նախընտրում է Կամենացից տարբերակը (տես, օրինակ, «Պատմա-քանախիքական հանդիս», 1958, թիվ 2, էջ 286):

<sup>2</sup> Հովհաննես Կամենացու Երկու նկարագրված դեպքերի ժամանակահատվածում (1621-1622թթ.) Լեհաստանի կազմում, որտեղ ընակվում էին նաև բազմահազար տարագիր հայեր, ընդգրկված էին ոչ միայն Զապրոբժյան Սեցը և Լիտվական մեծ իշխանությունը, այլև ուկրաինական որոշ տարածքներ: Սակայն Լեհաստանը ժամանակ առ ժամանակ տարածքային բազմապահիք փոխությունների է ենթարկվել: Նրա սահմանները երեսման ընդարձակվել են այլ երկների և վարչական միավորումների տարածքների հաշվին, իսկ երեսման էլ՝ նեղացել: Եղել է ժամանակաշրջան (1795-ին հաջորդող երկու տասնամյակներ), երբ Լեհաստանը իրըն պետություն դադարել է գոյություն ունենալուց: Այդ է պատճառը, որ լեհահայոց զաղութ հասկացությունը մնաք գործածում ենք պայմանականորեն:

<sup>3</sup> Եւ դուք մանկունքը պատուական,  
Որք պարապից սրմին խընդիման  
Թիշել հայցեմ զմեզ անխահան,  
Զի ձեզ տացի նոյնաշէ զիոյին:  
Նաև զծնողս իմ սլքրազան  
Հզուէր Յակոր ծեր քահանան  
Եւ զրաբեպաշտ մայր իմ Համայն,  
ԶՊողոս եղբայրս կըրպսերաման:

որ Հովհաննես Կամենացին եղել է իր կողմից նկարագրվող որոշ դեպքերի ականատեսը. «.... և այդ սքանչելատեսիլ փառքին նաև ես՝ անարգ Հովհաննես հետին նվաստությունը, այնտեղ գտնվելով, ականատես եղա»<sup>4</sup>: «Իսկ արքայորդի Վլադիսլավը վեց օր հետո հասավ մեր աստվածապահ քաղաքը՝ Կամենեց, և մի գիշեր օթևանեց ամրոցում: Ապա հաջորդ օրը քաղաքի հշխանը և ողջ ժողովուրդը, առավել ևս ազգս հայոց մեծ պատրաստությամբ ճանապարհեցին նրան մինչև Խոտինի բերդը»<sup>5</sup>: «Այսժամ ուրբաթ օրը արքայորդի Վլադիսլավը ողջ զորքերով եկավ բանակ դրեց Կամենեցի դաշտում, ինքը մտավ մեկ շարաթ հանգիստ առավ բերդում, իսկ զորավարը՝ Սանդոմիրի ստարոստան, իշխանեց տանը հայերի դատավորի, որի անունն էր պան Լուկաշ, և այնտեղ այդքան օր ուրախանում էին ուտել-խմելով»<sup>6</sup>:

Պատմության գրեթե բոլոր էջերում ակներև է Հովհաննես Կամենացու անթաքոյց համակրանքը թուրքական զորքերին դիմադարձ կանգնած, ուազմական սխրանքներով աչքի ընկնող և ըստ արժանվույն հակահարված տվող լեհական և առհասարակ քրիստոնյա զորքերի նկատմամբ: Ասվածի խոտուն վկայություններից է նաև այն, որ երբեմն հեղինակը հանդես է գալիս որպես վերջիններիս կողմանակից՝ ասելիքը ձևակերպելով դիմավոր բայի ոչ թե երրորդ, այլ հոգնակի առաջին դեմքով, ինչպես՝ «Ապա սրանից հետո տաճիկները եւս ուղարկեցին մեր դեսպանին՝ պան Ժերիսկուն, և Բատիստայի որդուն նոյնագեն, ով նախկինում եկել էր հաշտության համար»<sup>7</sup>: Կամենացին ներքին ոգևորությամբ է նկարագրում նաև այն տեսարանը, երբ ոչ թե քրիստոնյա զորքերը, այլ Կամենեցի բնակիչներն են հարձակվում ավարառությունից

Եւ զրյանիս ազնըլական,  
Որք լինելոց են և որ կան,  
Զդուարուոք ծալկամընան  
զԱպուածարուուն և զՇապիս:  
(Հովհաննես Կամենացի, էջ 82):

<sup>4</sup> Ասդ, էջ 46:

<sup>5</sup> Ասդ, էջ 46-47:

<sup>6</sup> Ասդ, էջ 73:

<sup>7</sup> Ասդ, էջ 61:

և գերեվարությունից վերադարձող թշնամական ջոկատի վրա, ազատում թիւ գերիներին, թէ ավարը<sup>8</sup>: Միանգամայն ճշմարիտ է Կամենեց Պողոսվի հայկական գաղութի ուսումնասիրությամբ զբաղվող Ն. Ռաշբայի արած հետևյալ եղրահանգումը. «Կամենեցի հայերն ապրում էին տեղական բնակչության շահերով, նրանց հետ միասին ամրացնում էին քաղաքը, պաշտպանում նրա շրջակայքը օտարների ասպատակություններից ....»<sup>9</sup>:

Հովհաննես Կամենացու «Պատմութիւն պատերազմին Խորինու»<sup>10</sup> երկը գիտական շրջաններին գերազանցապես ծանոթ է անցյալ դարի երկրորդ կեսից՝ շորիհիվ հիշյալ պատ-

#### <sup>8</sup> Հովհաննես Կամենացի, էջ 49:

<sup>9</sup> H. C. Раиба, Общественно-политическая жизнь армянского колонии в Каменце-Подольском /XVI-XVII вв./, Պատմա-քանասիրական հանդես, 1976, № 4, ст. 118.

<sup>10</sup> Խոտին գյուղաքաղաքը, որտեղ ընթացել է Կամենացու նկարագրած պատերազմը, ժամանակին գտնվում էր պատմական Բուկովինայի կազմում: Մինչև 14-րդ դարի վերջը Խոտինը մտնում էր Կիևյան Ռուսիայի կազմի մեջ, 14-րդ դարի վերջինից այն արդեն Սոլյանավիայի կազմում էր, ընկած էր սրա դեմք դիմաց՝ Նեստորի հակառակ ամիսն գտնվող լեհական Կամենեց բերդաքաղաքից ընդամենը 20 կմ դեպի հարավ-արևմուտք:

Միջնադարյան Խոտինը եղել է նվաճողների ուշադրության կենտրոնում: Քաղաքի պաշտպանության համար այնտեղ կառուցվել է ամրոց: Սոլյուական պետության անկումից հետո Խոտինը ընկավ Թուրքիայի իթի տակ և որպես սահմանամերձ ամրացված կետ՝ գտնվում էր թուրքերի ուշադրության կենտրոնում: 1615թ. լեհական գործերը գրավեցին Խոտինը, ասկայն 1621թ. տեղի ունեցած լեհ-թուրքական պատերազմի արդյունքում (ի դեպ, թուրքերը չկարողացան գրավել Խոտինը, և պատերազմն ավարտվեց լեհերի Ռեց Պուստոլիտա/ հաղթանակով) կարդեց 1621թ. Խոտինյան հաշտությունը, համաձայն որի՝ Խոտինը վերադարձեց Օսմանյան Թուրքիայից վասալական կախման մեջ գտնվելող Սոլյուակային:

Խոտինում գոյություն ուներ հայկական «.... մի ոչ անշան զարութ, որի հնագույն հիշատակությունը հասնում է 1418 թվականը, երբ Ալեքսանդր Չե-Բոյնի իրավերով հազարավոր հայ ընտանիքներ տեղավորվեցին Սոլյուակայի յոթը քաղաքներում» (Հ. Անասյան, նշվածին, էջ 10):

Խոտինի հայությունն ակտիվորեն շիվում էր Կամենեցում բնակվող հայերնակիցների հետ: Վերջիններին կողմից խոտինի հայտնի շուկայում վաճառքի էին հանվում կոտավ, ձիեր, գորգեր, համառներ և այլն: Ասվածը հաստատում են խոտինահայության մասին հետաքրքր տեղեկությունները Կամենեցի հիշյալ տարեգրության մեջ, որուր գերազանցապես վերաբերում են դատաիրավական և առաջի ուրուսերին (H. C. Раиба, Общественно-политическая жизнь армянского колонии в Каменце-Подольском /XVI-XVII вв./, Պատմա-քանասիրական հանդես, 1976, № 4, ст. 114-116):

մոլորակ՝ բազմավաստակ հայագետ Հ. Անասյանի կազմած քննական բնագրի<sup>11</sup> և վերջինիս ոռութերեն թարգմանության<sup>12</sup>:

Ինչպես նշում է Կամենացին, «Պատմութիւն պատերազմին Խորինու» պատմագրական երկն ինքը գրել է հոր հորդորով<sup>13</sup>: Ոչ մեծածավալ այս պատմության մեջ Հովհաննես Կամենացին նկարագրում է լեհ-թուրքական հարաբերություններից մի դրվագ՝ 1621 թվականին 45 օր տևած պատերազմը, և ետպատերազմյան (1622թ.) որոշ իրադարձություններ, որոնց բոլորին պատմիչն անդրադարձել է 5-6 տարի անց՝ 1627թ.<sup>14</sup>:

«Պատմութիւն պատերազմին Խորինու» երկը Հովհաննես Կամենացու ժամանակակիցների ընձեռոած փաստական նյութի շարադրանքն է և գերազանցապես ունի թարգմանական-փոխադրական բնույթ. ըստ հեղինակի վկայության՝ ինքն այդ պատմությունը թարգմանել-վերաշարադրել է ուրիշ լեզվից մեր ազգի լեզվով<sup>15</sup>: Բայն այն է՝ Հովհաննես Կամենացու պատմության համար իիմանական սկզբնադրյուր է ծառայել նրա հայրենակից և համաքաղաքացի Օքսնտ Կամենացու հայատառ օրագրությունը՝ հայ-դիշաղական<sup>16</sup> լեզվով<sup>17</sup>, որը տեղ է գտել Կամենացի Պողոլսկ քաղաքի ձե-

<sup>11</sup> Տե՛ս Հովհաննես Կամենացի, նշվ. աշխ.:

<sup>12</sup> Կ. Ի. Յոզասյան, «История Хотинской войны» Иоаннеса Каменецкого, «Պատմա-քանասիրական հանդես», 1958, թիվ 2, էջ 262-286):

<sup>13</sup> Հովհաննես Կամենացի, էջ 32-33:

<sup>14</sup> Անդ, էջ 80:

<sup>15</sup> Անդ, էջ 33:

<sup>16</sup> Դիշաղների՝ թուրք-թաթարական այդ ցեղի մասին առաջին վկայություններում են XI դարի կեսերից, երբ նրանք միջնասիրական տափաստաններից անցել են Վոլգան և տարածվել Հյուսիսային Կովկասում, Մերձանձուվան տափաստաններում: XI դարում դիշաղները մի շարք արշավանքներ կազմակերպեցին նաև դեպի Շուսիա, Հուսկարիա, Բյուզանդիա, հետազոտում միացան իրենց իշխանությունը դաժանորեն հաստատած թաթար մոնղոլներին՝ կազմելով Ըսկե հորդայի մի մասը, որի լծի տակ հայտնվեց նաև Հայաստանը: Դիշաղները գիր չունեին, և նրանցից կամսկածության մեջ ընկած ու նրանց լեզուն յուրացրած հայերը գրում էին հայատառ հայերեն-դիշաղներեն խառը լեզվով (Հայկական սովորական համրագիտարան, հ. 7, Երևան, 1981, էջ 54-55):

<sup>17</sup> Հայ-դիշաղներեն լեզուն հայտնի է հայ առաքելական եկեղեցու հավատը դավանող դիշաղական հայերի գրային հուշարձաններով,

ուագիր տարեգրության մեջ, և որը «Տարեգիրք Կամենացից» ենթախորագրով մեզ է հասել բազմավաստակ Ղևոնդ Ալիշանի կողմից հրատարակված «Կամենից» արժեքավոր աշխատության մեջ, որում Կամենաց Պողոլսկի պատմությունն սկսվում է 1430 թվականից<sup>18</sup> և շարունակվում մինչև 1652 թվականը՝ Ալիշանի հրատարակած երկում գրադացնելով 97 էջ<sup>19</sup>: Արծեն նշել, որ այդ աշխատության մեջ Ալիշանը գետեղել է ոչ միայն Կամենաց Պողոլսկին, այլև առհասարակ

որոնք մեծ գաղութերով բնակվում էին Կամենաց Պողոլսկում, Լվովում, Լուցկում, Սոգդյանով Պողոլսկում, Սուչավայում, Սերետում, Զամուտիեում, Յասինում և Ներկայի Ուկրաինայի, Լեհաստանի, Ռուսիայի, Սոլյովյանի տարածքներում գտնվող այլ քաղաքներում, որուել այդ հայերը տեղափոխվել էին Ղրիմից (իիմանալում Կաֆայից) և, հնարավոր է, որ Հայաստանից մոնղոլական արշավանքից հետո: Վիմագրական հուչարձանները վկայում են նաև, որ XII-XIII դարերում Հայաստանի տարածքում ապրում էին հայ առաքելական եկեղեցու դավանանքը ընդունած դիշաղներ: XII-XIII դարերում կառուցված Հայհճավանքի համալիրի տաճարներից մեկը կրում է «Ղիշաղավանք» անվանումը: Թաթար-մանղոլական արշավանքների ժամանակ ասպատակվում է նաև հայոց հինավորուց ոստանը: Ղիշաղների ցեղին պատկանող մի զորախումբ նվաճում է Համբճը, թաթանում վանքը մեծամասն հարստությունները և իր վայրենամիտ ցեղի անունով կոչում գյուղը՝ Ղիշաղ: Այս պախարակելի անունը 1400 թվականից մինչև 1946 թվականը շարունակում է պահպանվել և Հայաստանի գերազուն խորիրդի որոշմամբ վերանվանվում է Հառիճ: Ղազախները դիշաղներին համարում են իրենց նախնիները, իսկ դիշաղներներ՝ դազախներներին նախատիպաց: Հ. Անասյանն այդ լեզուն համարում է բարբառ (Յովհաննէս Կամենացի, էջ 8-9):

<sup>18</sup> Ղևոնդ Ալիշանը նկատում է, որ այս տարեգրի «....առաջին թուրքն կորած է, բայց ոչ այն միայն՝ այլ և շատ թուրքեր», իսկ մեկ այլ տեղում գրում է. «....անտարակելոյն կորսուած է Տարեգրոց առաջի մասն» (Ղևոնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 2, 3):

<sup>19</sup> Նշենք, որ հայր Ալիշանի ծրագիրն սկզբում այլ է եղել. «Ի Յառաջաբանի գրոց՝ ներ սկսած հրատարակուի ի Բազմավիճակի (1895 տարույ), յայտնած էինք,՝ գրում է նաև, - թէ միայն Կամենից քաղաքի հայերէն Տարեգրութիւնն ի լոյս կ'ընծայենք. յորում Լեհաստանի ուրիշ քաղաքաց և Շումենիոց կողմանց տեղեկությունը կան. իսկ թաթարներն կամ թուրքարէն շարունակութիւնը՝ քաղելով և թարգմանելով խոսանայինք: Մակայն, յետոյ լոյս համարուեցա՛ ոչ միայն այդ այլազգերէն գրուածն այլ հրատարակել (յորում շատ կարևոր գիտելիք կան Լեհաց պատմութեան), այլև զանազան Յաւելուածք՝ իրեւ Հայաստանը՝ Լեհահայոց վերաբերեալը, մասաւանդ Լովացոց (Լեմակերկ /Լվով քաղաքի նախկին անուններից են-Գ.Խ./ քաղաքի), որը նատի Հայոց արքապիսկոպոսն» (Ղևոնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 2):

լեհահայերին ու ոռոմինահայերին վերաբերող այլ արժեքավոր վավերագրեր նույնպես:

Մեր այս նախաձեռնությունը «Պատմութիւն պատերազմին Խորհնուու» երկի արևելահայերեն թարգմանության առաջին փորձն է, որն ընթերցողի սեղանին է դրվում անհրաժեշտ ծանոթագրություններով և թարգմանության զուգադիր էջերում տեղ գտած վերոնշյալ քննական քնագրով, որը փոփոխության ենք ենթարկել միայն խիստ անհրաժեշտության դեպքերում: Գրքի վերջում գետեղել ենք նաև քնագրի՝ Հ. Անասյանի կազմած հատկանունների և եզրաբառերի ցանկը:

#### Թարգմանության ընթացքում

ա) Աշխատել ենք հավատարիմ մսալ Հովհաննես Կամենացու քառապաշտին:

բ) Որպեսզի ընթերցողը գաղափար կազմի Կամենացու ոճի մասին, հիմնականում պահպանել ենք երկու հանդիպող զուգաբայությունները, բայական ավելադրությունները, այլև որոշ արտահայտություններ:

գ) Հազվադեպ դուրս ենք թողել քնագրի՝ կից կառույցներում կրկնվող բառերը (շարահյուսորեն՝ ենթակա, ստորոգյալ և այլն):

դ) Բնագրային նախադասությունների սկզբում հաճախակի հանդիպող և, իսկ, ապա բառերին ավելի հաճախ տեղ չենք տվել կամ էլ դրանք փոխարինել ենք այլ բառերով:

ե) Հազվադեպ դիմել ենք իմաստային թարգմանության:

զ) Ծանոթագրել ենք այն սկզբունքով, որ բավարարենք ընթերցողի՝ քնագրում տեղ գտած իրադարձությունների ու դեմքերի մասին լրացուցիչ հետաքրքրությունը:

է) Թվով 200-ը գերազանցող ծանոթագրությունների շարքում՝ հերթական համարների տակ, տեղ ենք տվել նաև Հ. Անասյանի քննական քնագրի վերջում գետեղված ծանոթագրություններին (դրանք բերվում են քնագրային թվահամարներով և դրանց նախորդող + նշանով) և քնագրի աստ-

վածաշնյան մեջբերումների՝ տողատակերին տեղ գտած հղումներին, որոնք բերվում են՝ նշանով:

ը) Հ. Անասյանի ծանոթագրություններին և հղումներին մեր կողմից կատարված հավելումները բերվում են շղատառերով:

թ) Բնագրի անկյունավոր փակագծերում բերված հոլյան և գրիգորյան տոմարներով զուգահեռ ամսաթվերից թարգմանության մեջ տեղ ենք տվել միայն գրիգորյանի ամսաթվերին:

ժ) Սոյն գրքի քնագրային և թարգմանական զուգադիր էջերի հերթական թվահամարներից հետո՝ փակագծերում, նշել ենք Հ. Անասյանի գրքում գետեղված քնագրի համապատասխան էջահամարները:

ժա) Բնագրային նախադասությունների՝ դերանուններով արտահայտված մի շարք անդամներ երբեմն փոխարինել ենք նախադասության բովանդակության պլանին որոշակիություն հաղորդող գոյականներով:

ժթ) Բնագրում բացակայող, սակայն տվյալ նախադասության բովանդակության պլանում նկատվող թերին լրացնող մեր կողմից գործածված բառերը բերվում են անկյունավոր փակագծերի մեջ:

ժզ) Համացանցից գերազանցապես կատարվել են անուղղակի մեջբերումներ՝ առանց հղումների:

\* \* \*

Մի քանի դիտարկում Հովհաննես Կամենացու երկի լեզվական առանձնահատկությունների մասին:

Լեհահայերից և հարավից շրջանների հայ գաղութներից մեզ է հասել գրավոր խոսքի երեք տարրերակ՝ գրված՝ ա) գրաբարով, որում տեղ են գտել նաև անսշան քանակությամբ փոխառություններ և ուշմիջինհայերենյան ու վաղաշխարհաբարյան տարրեր, ինչպիսին է, օրինակ, «Պատմութիւն պատերազմին Խորհնուու» երկը), բ) միջին հայերենով և վաղաշխարհաբարով, որտեղ ազդի է զարնում թուրք-թաթարերեն, լեհերեն և այլ լեզուներից կատարված փոխառությունների

առատությունը<sup>20</sup> (դրանցից է, օրինակ, Մինաս Թոխաթեցու «Ուր ի վերայ Օլախաց երկրի հայերուն» չափած պատմությունը<sup>21</sup>), գ) *հայադառ հայերեն-դիշադերենով* (հայ-կոմաներեն), որտեղ քիչ թիվ չեն կազմում վաղաշխարհաբարյան, լեհերեն և այլ լեզուներով փոխառությունները (այդպիսին է, օրինակ, Օքսնու Կամենացու օրագրության լեզուն<sup>22</sup>): Դևոնդ Ալիշանն ահա այդ վերջին լեզուն է համարում «թաթար կամ թանձր թուրք լեզու», երբ գրում է. «Բայց սա (Գրիգորը – Գ.Խ.) յետ մահուան հօրն (մեզ ոչ հաճելի) թաթար կամ թանձր թուրք լեզուաւ շարունակէ զտարեցիրսն մինչև ի 1616....: Այսպէս ըրած են այդ Լեհահայրդ իրենց դատաստանական գրուածոց ևս, որոց 30 մեծ հատորէն աելի հիմայ պահուին Քինի դիւնաց մէջ. առաջին քիչ տարիներու գործերն՝ հայերէն, վերջին մեծ մասն՝ թաթարերէն»<sup>23</sup>:

Թեև Հովհաննես Կամենացու երկի լեզուն տվյալ ժամանակաշրջանին (XVI դարավերջ – XVII դարի առաջին քառորդ) հատուկ գրաբարն է, որն աչքի է ընկույմ մատչելիությամբ, և Կամենացին փորձում է գրել նորմավորված գրաբարով, այսուհանդերձ, կարելի է առանձնացնել հայունական<sup>24</sup>, բառային, քերականական և ոճական մի շարք իրուրություններ, որոնք հետինակի իրական, տվյալ դեպքում

<sup>20</sup> Ա. Այտընյան իրավացիորեն նկատում է, որ լեհահայոց բառապաշտում առկա «անհամար տաճիկ ու թաթար բառերը» մեծ մասամբ Ասիից երկրորդ գաղթողների (XV դար) լեզվից են մնացել (*Արևել Այդրնյան*, նշվ. աշխ., էջ 162):

<sup>21</sup> Պատկերացում տալու համար բերենք մի հատված այդ գործից (*Դևոնդ Ալիշան*, նշվ. աշխ., էջ 20-27).

.... Զար իրաման հեան կրկին,      Պեղծ անիծած չար Օլախնին  
ԶՀայոց ազգըն ժողովեցին,      Զնոքա ճորով մերկացուցին,  
Ըզվոյթ, արկար, զերիցանին,      Հոռմի հաւատ դասնցուցին,  
Զկանայր, զաղչկունքն ի միասին:      Եւ ակամայ մըկրտեցին .... (էջ 23):

<sup>22</sup> Ասդ, էջ 68-110:

<sup>23</sup> Ասդ, էջ 3:

<sup>24</sup> Ասինփիլին պահելով Հովհաննես Կամենացու գործածած ուղղագրական համակարգը՝ Հ. Անսայսար գտնում է, որ այն այժմյան արևմտահայերենի համակարգն է, «ինչպես տեսմում ենք մի շարք օտար բառերի և հատուկ անունների ուղղագրությունից .... բրգալաս (pârcâlab), Ռաւու (Radul), Գորեցք (Korecki) և այլն» (*Յովիհաննէս Կամենացի*, էջ 28):

Վաղաշխարհաբարյան ժամանակաշրջանի լեհահայոց լեզվամտածության լեզվական փաստերի հավաստի վկայություններից են<sup>25</sup>:

Ա. Բառապաշար: Հովհաննես Կամենացին վաղաշխարհաբարյան ստեղծագործողների այն խմբի ներկայացուցիչն է, ովքեր իրենց պատմությունը գրել են գրաբարով՝ լավ տիրապետելով վերջինիս: Բնականաբար, Կամենացու բառապաշարի հիմնական մասը ներկայացնում է գրաբարյան շերտը, որտեղ պատմիչը շրջանառության մեջ է դնում նոյնիսկ հազվադեպ գործածված բառեր, սակայն երկի մեջ, պայմանավորված արծարծվող թեմայով, տեղ են գտել մի շարք փոխառություններ: Եվ քանի որ պատմությունը վերաբերում է լեհ-թուրքական հարաբերություններին, մասնավորապես՝ ոչ երկարատև մի պատերազմի, ուստի՝

ա) հանդիպող օտարաբանությունները ոչ թե մեկ լեզվից են, այլ հիմնականում երկու, տվյալ դեպքում լեհերենից ու թուրքերենից<sup>26</sup>, և գերազանցապես վերաբերում են նշված երկրների ոպամական ու վարչական ոլորտների անուններին:

<sup>25</sup> Ասել, թե լեհահայոց լեզուն միատարք է՝ ճիշտ չի լինի, քանի որ հիշյալ տարածաշրջան գաղթած հայությունն ինըն է աչքի չեր ընկույմ լեզվական միատարրությամբ: Բավական է նկատի առնել, որ գաղթերն այդ տարածաշրջան և այսուել կատարված ներքին տեղափոխությունները տեղի են ունեցել տարբեր ժամանակահատվածներում և ամենատարբեր վայրերից (Մեծ Հայք, Փոքր Հայք, Ղրիմ և այլն): Ասվածի մասին վկայում են ոչ միայն պատմական, այլև լեզվական փաստերը (վերջիններս արտահայտություն են գտել նաև Հովհաննես Կամենացու երկում և այդ երկի հիմնական սկզբանդրյուրում «Տարեցիրը Կամենիցցայում»), որոնց մասնակիորեն կանդրադառնար առաջիկա շարադրանքում զանց առներով հայունական համակարգը. Վերջինս Կամենացու պատմության և Կամենիցի տարեգրության մեջ այնքան անմիջանակ պատկեր է ներկայացնում, որ նպատակահարմաք ենք համարում առաջիկայում հասդես գալ այդ հարցին նվիրված առանձին հոդվածով:

<sup>26</sup> Դրանցից բացի՝ մոլդավերենից, օրինակ, գործածում է բրգալաս («քերդակալ»/«քերդապետ»/«քերդի և հարակա շրջանի կառավարիչ») փոխառությունը (68), ուստերենից՝ օրէց («հայր») փոխառությունը (66) և այլն: Այսպես նաև՝ հարլան և ոչ հարլան ազգությունների ու ժողովրդների՝ այլ լեզուներից փոխառյալ հատկանուններ՝ Մնանք (68), Պողոսանք (35, 62, 68)/Պողոսանք (44, 56, 57, 65), Աղամանք (68), Օլահք (45)/Ուղահք (76) և այլն:

Այսպես՝ թուրքերենից անմիջական կամ միջնորդավորված փոխառություններից են՝ *ամիրայ* – 53, *պարոք* – 49, *ենչարի* – 55, 62, 63, *ենչար-աղասի* – 62, *խոնքիքար* – 61//*խոնդրար* – 66, *թոփ* – 49, *թֆանկ* – 49, *խանգակ* – 63, *խոնքիքար* – 61//*խոնդրար* – 66, *կատոր* – 57, *կլայ* – 46, *միւֆիդ* – 41, *ամիրայ* – 59, *մրզայ* – 48, 49, *պալթաճի* – 62, *սոլաք* – 62, *սպահի* – 66, *չավոշ* – 66, *վեզիր* – 56, *փաշայ* – 47, 51, *Ղարահիսար* *փաշասի* – 60,

Որոշ դեպքերում էլ Կամենացին կամ բերում է և փոխառյալ բառը, և վերջինիս թարգմանությունը՝ ‘նորակազմությամբ, ինչպես՝ .... զնախիշխանն, որ ենչար-աղասի կոչի – 51, .... զձողն (*«դրոշ»*) առին, որ թարգմանի տաճիկ լեզուաւ պայրասի – 51, կամ նախընտրում է թարգմանված տարրերակը՝ մեծ վեզիր – 62, 77, թոփապելո (‘օր’ յ ի-բաշ) – 64, ասագ կուսակալ – 77:

Լեհերենից կատարված փոխառություններից են՝ *բան* – 61, 65, *գաշդալան* – 52, 53, 65, *գրուալ* – 39, *թապոր* – 45, *հեթման* – 44, *ստարուստա* – 61, *դակար* – 74, *օպոր* – 45<sup>27</sup> և այլն:

<sup>27</sup> Ի դեպ, Կամենեցի տարեգրության մեջ (*Ղևոն Ալիշան*, նշվ. աշխ.) Օրենտ Կամենացին գործածել է ոչ միայն լեհերեն փոխառություններ լվոյլուրա (*wojewoda «վլյուվոր»*) /15/, քնաք/զնագ (կոնաչ «փշխան») /16/, զժեօնց (ksiadz «քահանա») /30/, ստարոստա (*starosta «քաղաքագլուխ»*) /85/, բեխօրա (*piechota «հետևազոր»*) /96/ և այլն):

Ինչպես հայտնի է, «քառապաշարի հարստացման ներքին և արտաքին ճանապարհներից բացի՝ գոյություն ունի նաև երրորդ՝ խառը ճանապարհը (ընդգծումը մերև է – Գ. Խ.), երբ փոխառու լեզվի հիմնական ձևովների և փոխառու լեզվի ներքին միջոցների համարումնվ կամ հարադրումնվ ձևավորվում են քառային՝ նոր միավորներ» [Մ. Գ. Խոսապրյան, Արարական փոխառությունները հայուններում և կաֆաններում (թեմաթիկական աստենախոսություն), Ե., 2012, էջ 6]: Կամենեցի տարեգրության մեջ նկատելիորեն հաճախաբեաց են վերոնշյալ տիպի լեհերեն-հայերեն և լեհերեն-դիշանական բառապահները: Դրանցից առավել հետաքրքրություն են ներկայացնում բայական վերլուծական բարդությունները, որոնց կազմում որպես հարադիր գործածված լեհերեն բառերի հետ հանդես են գալիս հայերեն կամ դիշանական բայական բաղադրիչներ [հոլլուուադ (holadowač) արաւ – «հապատակեցրեց» /16/, տօրուսիդ (dorusciseč) էղմատի – «քոյլատրեց» /85/, օւլյուիդ (odejšče) էղիլար – «հետ նահանջեց» /85/, շրումօվադ (szturmowac) էղէլէտի – «հարձակվեց» /95/, վլոզրվադ (wzywać) էղէլէդի – «կանչեց» /97/, ուօզրազադ (rozkażac) էղդի – «հրամանեց» /92/ և այլն]:

Հովհաննես Կամենացու բառապաշարի մաս են կազմում չորս տասնյակից անցնող նորակազմությունները, որոնք այլ բառարաններում վկայված չեն (իսկ եթե վկայված են, ապա այլ իմաստով) և պայմանականորեն կարելի է համարել հեղինակային նորակազմություններ: Ահավասիկ՝

1. *ասենակոիս* ա. – ահեղադրոի, սարսափելի դոփյունով (58),
2. *ամէներանեալ* ա. – 1. երանավետ, երջանկաշատ, ամեն ինչով երանելի, 2. ամենաերանելի (69),
3. *անսանիսայարար* մ. – անխոդորեն, ամիսնայորեն, անգթարար (34),
4. *անսանցարար* մ. – հար, անվերջորեն, միշտ (40),
5. *անպակշաճաւոր* ա. – անպատշաճ, անշորիք, անկարգ (40)<sup>28</sup>,
6. *արօդացուցանեմ* ն.թ. – արածեցնել, հովվել (36),
7. *բազմողոր* ա. – չափազանց ողոքական, պաղատագին, աղերսագին (79),
8. *բեհեզագործ* ա. – բեհեզյա, բեհեզից գործված (66)<sup>29</sup>,
9. *բոլորապատ* մ. – շուրջանակի, շրջան կազմած, բոլորակի (58),
10. *գազանամորթ* ա. – գազանի մորթուց կարված, մորթեն (65),
11. *գայթակղիչ* ա. – գայթակղեցնող, գայթակղեցուցիչ, գրավիչ (39),
11. *գոչեցուցում* գ. – գոչեցում, գոչեցնելը (68),
12. *գովասանարար* մ. – գովաբանարար, ներբողարար, դրվատանքով, մեծարանքով (81),
14. *դառնաշատ* ա. – դառնալից, դառնագույն, դժմդակ (61),
15. *դռնապելու* գ. – բարապան, բարապետ (41),
16. *եղծիչ* ա. – եղծող, ապականող, ապականիչ (39),
17. *ենչարութիւն* գ. – ենչերիական ծառայություն, զինվորություն (61),

<sup>28</sup> ՄՀԲ-ում վկայված միակ օրինակի հելլինակը Գրիգոր Տղան է (էջ 63):

<sup>29</sup> ՄՀԲ-ում վկայված միակ օրինակի հելլինակը Միխիթար Գոշն է, որը գործածել է «քեհեզ գործող արիեստավոր» իմաստով (էջ 116):

18. Երկրանական ա. – Երկրա, Երկրայական, կասկածելի (67),  
 19. Երկնագունսակ ա. – Երկնագոյն (54),  
 20. զարմանացոցանեմ ն.թ. – զարմացնել (37),  
 21. թֆանկատը ա. – հրացանավոր, հրացանակիր (58),  
 22. ինքնարռորդ ա. – ինքնավառ, ինքնիրեն բռնկվող (53),  
 23. կապուղազգեար ա. – կապոյտ համազգեասով, կապոյտ համազգեասու հազած (54),  
 24. կէսօրեայ ա. – կէսօրյա, կէսօրվա (47),  
 25. կործանալիոթ ա. – 1. կործանուսույց, կործանալարժ,  
 2. կործանամետ, կործանատար (34),  
 26. հակառակումն գ. – հակառակություն, ներհակություն, խոռվություն, կորիվ, աղմուկ (41),  
 27. հարևանցոցանեմ ն.թ. – մակերեսորեն անցկացնել, հպանցիկորեն անցկացնել, թեթևակիորեն անցկացնել (37),  
 28. հելուամդեմ ն.թ. – ետ մղել, ետ շարտել (53),  
 29. հելուակակոյր ա. – հետևակաշատ, հետևակախիտ (45),  
 30. ձողակիր գ. – դրոշակակիր (60),  
 31. ճոխացոցանողական ա. – փառարանական, մեծարանքի, պանծացնող (73),  
 32. նախիշխան գ. – մեծ իշխան, ավագ իշխան (51),  
 33. ողորմարար մ. – անողոքարար, անխորեն, անզթուն (79),  
 34. ուսումնատը ա. – ուսյալ, կրթյալ (80)<sup>30</sup>,  
 35. վայելչարեսիլ ա. – վայելչազարդ, վայելչատես, գեղեցիկ (65),  
 36. վեհազնեայ ա. – ազնվազարմ, ազնվատոհմ, բարձրատոհմիկ, ազնվացեղ (40),  
 37. վեհիմասպոթին գ. – վսեմիմաստություն, մեծիմաստություն, բարձրիմաստություն (70),  
 38. տիրելութին գ. – տիրապետություն, (75),  
 39. տոհիմակալ գ. – տոհիմապետ, տոհիմի առաջնորդ (43),  
 40. փութաշաւիդ ա. – փութընթաց, փութագնաց, արագընթաց (45):

<sup>30</sup> ՄՀԲ-ում վկայված միակ օրինակի հեղինակը Սմբատ Գունդստարլն է, որը գործածել է «սովորող, ուսում առնող» իմաստով (Էջ 621):

41. փութացոցանողական ա. – փութացնող, շտապեցնող, արագացնող (32):

Պատմության մեջ արտահայտություն են գտել նաև անորոշ դերբայների՝ ուշ միջին հայերենին և վաղ աշխարհաբարին բնորոշ ի ծորդ ձայնավորով կազմություններ, ինչպես՝ զերծանիլ (39), լինիլ (35), խօսիլ (43), կարծիլ (79), կարարիլ (38), համարձակիլ (41), ձկուիլ (82), փախչիլ (64) և այլն, այն դեպքում, երբ տասնյակ անգամ հանդիպում են դասական հայերենին հասուով կազմություններ, որոնցից գրաբարում ե խոնարհման ներգործական սեռը ներկայացնող զերծանիլ, կարարիլ բայերի միջոցով արտահայտված գործածություններն ունեն կրավորածն չեզոք սեռի քերականական իմաստ: Օրինակ՝ Ի կարասչիք զերծանիլ ի ձեռաց իմոց, եթէ ոչ նախ եկեալ հնազանդեացիք ինձ (39): Եթի կ կարարիլ ամաց կենարարին, որ առ մեզ յաւելմամբ յուոց յարաբարեալ հազար վեց հարիր քսան և միոյ .... (38):

Բերենք հազվադեպ հետևյալ բառերը ևս՝ անշնահատը (փիլ., անշնորհատը – Գ.Խ.) – 62, գոչեցոցումն գ. – գոչեցում, գոչում (68), գոչեցոցանել-ից՝ գոչեցոցումն – ներգործական գաղափարն ընդգծելու համար:

Բ. Քերականական համակարգ: Կամենացու երկն աչքի է ընկնում թե՛ ձևաբանական և թե՛ շարահյուսական առանձնահատկություններով: Նշենք դրանցից մի քանիսը միայն:

1. Հիշյալ պատմության բնորոշ քերականական իրողություններից մեկն այն է, որ անհոգնական տեղանունների մեծ մասն սկսել է ենթարկվել ու հոլովման, մինչդեռ անձնանունները շարունակում են մսալ և հոլովման ուղեծրում: Հմմտ. Անապոլու (59), Խորինու (45, 53, 68, 75), Կամենիցու (73), Պերեմանու (53), Պուսնայու (59), Պողինու (57), Վաղարշապալու (80)<sup>31</sup> և Օսմանայ (80), Քրդըրդայ (80), Սենեքերիմայ (80), Թորգումայ (80)<sup>32</sup>: Հոգնակի թվում

<sup>31</sup> Բայց՝ Յովհիաննու (31):

<sup>32</sup> Բայց՝ Պողլիանայ (56), Տանգզայ (75):

Ակատելի ակտիվություն ունի և հոլովումը, որին ենթարկվում է հատկանուների մեծ մասը՝ Աղամանաց (35), Գրիժազաց (43), Էլահաց (33, 37, 39), Մաճառաց (35), Սիջագելեաց (39), Նեղողաց (43), Ծուելրաց (43), Պողպանաց (35), Ռուսաց (35), Սարակինուաց (43), Տաճկաց (31, 38) և այլն:

2. Եզակի թվի ներգոյական հոլովի քերականական իմաստը զուգահեռաբար արտահայտվում է և՛ ի/յ նախդիր +/− եզակի թվի տրական հոլովաձև, և՛ ի/յ նախդիր +/− եզակի թվի հայցական հոլովաձև կապական կապակցությամբ: Հմմտ. ի բանակին (74), ի դաշտին (75), ի դպրության (75), ի ճանապարհին (75, 76), ի նամքութեան (79), ի պահեւարի (61), ի դրան (73), ի սրբին (35), ի տեղի (36) և այլն և ի բանակին (56, 59, 68, 73, 75), յերկիրն (68), ի քաղաքն (73), ի կլայն (73), ի մայրաքաղաքն (73), ի Սունկով (44), ի Ֆլանս (44) և այլն: Ավելին՝ նշված կապակցություններին զուգահեռ նկատելի են նաև ի + մէջ-ով կապակցությունները՝ ի մէջ բազմութեան (53), ի մէջ անպատին (58), ի մէջ քաղաքին (77), ի մէջ բանակին (64), ի մէջ դաշտին (65) և այլն: Նշված հարցում Կամենացու անհետնողականությունն այն աստիճանի է հասնում, որ հիշյալ բոլոր արտահայտչամիջոցներով կիրառություններ կան նույնիսկ միևնույն կավլող բառի դեպքում: Հմմտ. Բայց միան ի բանակին ոչ այնքան թանկացին (74), .... քարոզել ի մէջ բանակին (62) և .... մինչ զի ոչ ոք մնաց ի բանակն (62):

Սրանց զուգահեռ Կամենացին ներգոյականի իմաստն արտահայտել է նաև զուգահեռաբար ոչ և ի հոլովումների ենթարկվող ժամանականից և տեղանից գոյականների նախդրավոր տրականներով: Հմմտ. ի չորեքշարաթոշ (47), յերկուշարթոշ (50), ի չորեքշարթոջն (57), յերեքշարթոշ (62), յերեքշարթոշ (67) և ի չորեքշարթի (54), ի հինգշարթի (55), յերկուշարթի (56), ի հինգշարթի (60), ի չորեքշարթի (67), յերկուշարթի և երեքշարթի (69)

3. Թեքման զուգաձևություններ են նկատվում նաև ու ի հոլովումներով: Հմմտ. նաև՝ Խորթինու (53, 73) և Խորթինի (63),

Հոթունի (68), յաւոր ուրբաթու (68) և յաւոր ուրբաթի (73), գումշոց (42) և գումշից (47, 76) և այլն<sup>33</sup>:

4. Ուշմիջինհայերենան և վաղաշխարհաբարյան ամենատիպական դրսնորումներից է նաև առանց է հոլովակերտի բացառական հոլովի քերականական իմաստի արտահայտությունը, որը դասական շրջանում միայն ա, ու ու-ա հոլովումներին էր հատուկ: Հաշվի առնելով, որ Կամենացին ինքը է իր շարադրանքն առաջ տանել նորմավորված բուաբարով, նրա երկում վերոնշյալ լուծմամբ բացառիկ օրինակ ենք արձանագրել՝ Գնացեալ ի վերայ գիտաքաղաքի մրոյ, որ կոչի Բանովցա, ոչինչ ենոյի ի Խորթինու .... (66): Հետաքրքիր է, որ այսուղեւ հանդիպում են նաև է հոլովակերտով ամսախոնից բացառականներ, ինչպես՝ Զի՞ս փոյթ է քոյին անկարօւն մեծովեւանդ այդպիսի հակառակությունը աղմկաց և անօգուտ կորուգենէ արանց մերոց և օտարաց (41): Այլ են հայցեն սորուէ խորոց՝ Զիոզին Աստուած յոյսն արդարոց (38)<sup>34</sup>: Բացառական հոլովի ձևափոխությունն ակնհայտ է նաև Կամենացու երկում տեղ գտած ծայրէ ի ծայր (48) և ուստերէ բառերում:

5. Անշուշտ, Կամենացուն հայտնի են դասական հայերենից ավանդված և հատկապես հաճախակի գործածվող բառերի թեքման օրինաչափությունները, սակայն նա երբեմն գործածում է ավելի ուշ շրջանի ձևեր: Օրինակ՝ փոքր ածականից ցփոքունս հոլովաձևի առկայությունը նրա պատմության

<sup>33</sup> Հմմտ. նաև մինչև յերեկոյն (56), մինչև երեկոյ (60), մինչև ցերեկոյ (61) և մինչև ցիրիկուն (50):

<sup>34</sup> Անդրաբանայով իր կողմից առանձնացված չորս «զատառականներին» Արսեն Այտընյանը «Եղբորդ գատառականի» տակ նկատի ունի «արդի արևմտեան զադժականութեան հայերէնը ...., սկզբնաբար Անեցի զադժականութեան մը լեզուն, որ լարերէ ի վեր Լեհաստան հաստատուած է, կէս՝ ուղղակի Հայաստանէն փոխադրուելով և կէս անուղղակի՝ որիշ արևմտեան երկիններ թափառելէն ետքը ժամանական մեծ ճիշտ մ'ալ արձակերով Առտեալի երկիրը». Այտընյանը երրորդ զավառականից քերականական առանձնահատկություններից մեկը համարում է հետևյալը. «Ամէն զատառականէ աելի ասոր մէջ մնացած է տրականէ բացառական կամ ու աննախդիր բացառականն»: Ի Խորթինու բացառականը ՈՒ հոլովման անախդիր բացառականի նախաձներից է (Արսեն Այդընյան, նշվ. աշխ., էջ 184)

մեջ (62), սակայն հանդիպում է նաև *և* ներքին թեքման ուշ շրջանի *փորերց* (68) հոգնակի սեռականը<sup>35</sup>: Այսպես նաև՝ *թոփ* («թնդանոր») բառի *թոփերու* (48) հոգնակի հայցական հոլովը այն դեպքում, երբ Կամենացին մեկ տասնյակից ավելի անգամ գործածում է *թոփիս քերականական համանիշը* (48, 50, 55, 56, 61, 63, 64, 64, 66, 66, 68), կամ՝ *ընդ թոփերացն* (63), երբ այլ դեպքում գործածում է *թոփից* (49, 58) և *ի թոփից* (50, 65) դասական հայերենի կանոններով կազմված ձևերը:

6. Ստորև բերվող բառաձևերը և *թոփի* բառի՝ Կամենացու երկում հանդիպող հոլովման հարացուցը վկայում են, որ տվյալ ժամանակահատվածում տիրապետող *ի* հոլովումը տարածվում էր նաև փոխառյալ բառերից մեծ մասի վրա՝ *գրուալիդ* (=թագավորիդ) – 39, *պարութիւն* (Վառողով) – 49, *թֆանկիւ* – 66, *ի թֆանկից*<sup>36</sup> – 50 և այլն:

ՈՒ. թոփ – 42 թոփի – 64

Հ. – զ)թոփի – 48, 50, 55, 56, 61, 63, 64, 64, 66, 66, 68//  
զթոփերու – 48

Ս. – թոփից – 58 //թոփերաց – 63

Տ. – թոփից – 49

Բ. – *ի* թոփից – 50, 65

Գ. թոփիւ – 64 թոփիւր – 60, 61

7. Նկատելի են հայցական հոլովի անկանոն (ուղղականաձև կամ տրականաձև) գործածության դեպքեր՝.... բայց միայն զարաքն փաշային (փիս՝ ‘փաշան – Գ.Խ.) կենդանի բերեալ պարզեց արքայորդույն – 60, Յայնժամ մեծաւ զգուշութեամբ հանդերձեցին ամենայն զօրավարքն և զօրագույնիք զրովանդակ հեծեալքն (փիս՝ ‘հեծեալքն – Գ.Խ.) և զիտունակագորս – 67:

8. Բացադրիկ կիրառություն է բաղաձայնով սկսվող անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմք արմատական բայաձևի վանկային աճեցումը ոչ թե *և*, այլ *և ձևույթով*՝ ... վերացուցեալ զթֆանկն և էզարկ զոտն փաշային (58):

<sup>35</sup> Կան նաև անմենաբանելի նախորով լուծումներ, ինչպես՝ *ընդհանուր* (79):

<sup>36</sup> Բայց նաև՝ *թֆանկաց* – 49, 58, *թֆանկօր* – 53:

#### Գ. Ոճական համակարգ:

1. Սովորաբար Կամենացին շարադրանքն առաջ է տանում բարդ և բազմաբարդ շարահյուսական կառույցներով: Ամենահաճախադեպ բազմաբարդ կառույցները համադասական և ստորադասական հարաբերություններ արտահայտող երեք և ավելի նախադասություններով բաղադրված կապակցություններ են, որտեղ ստորադասական նախադասությունների կապակցման միջոց է ծառայում մինչ//մինչև շաղկապը, որի հետ հաճախակի գործածվում է *զի* թարմատար: Օրինակ՝ Ի եինզշաբթի, յուրբաթի, և *ի* շաբաթի ոչինչ եղին ընդ միմետանս՝ մինչ դեսպանքն առ նոսա էին, այլ խաղաղեցաւ պատերազմ յերկոցունց կրոնմանց (69): Իսկ օրքն Լեհաց և Խազախացն ելանէին հետուակ և ճակատէին ընդ նոսա, մինչև սպանին զերկու ծողակիրս նոցա և զգլուխան և զծողան բերեալ թագաւորորդույն և ընկալան պարզես ի նմանէ (60): .... և գնացեալ հեռացան ի քրիստոնէիցն, մինչ *զի* հազի երսէին, և իշխաննեցան ի վերայ նոյն զետոյն ժուլույի ի բարձրավագնակ տեղուց իբրև զամաս թխացեալս (69) և այլն:

2. Հովհաննես Կամենացին քաջածանոթ է հայ պատմիչների երկերին, «Աստվածաշնչին» և թարգմանական այլ գործերի, որոնք ազդեցություն են թողել նրա ոչ միայն բառապաշտի, այլև ոճի վրա: Պատահական չէ, որ նրա պատմության մեջ երբեմն-երբեմն տեղ են գտնում բառեր և արտահայտություններ, որոնք միայն այս կամ այն պատմիչնն են: Հմմտ. դժուարահասար և լուսանելիի է<sup>37</sup> և դժուարահասար և լուսանելիի ից (33), .... սկսցոր, ուսպի արժան է սկսանելի<sup>38</sup> և սկսեալ անդի, ուսպի սկսանելին է արժան (33) և այլն: Այս տեսանկյունից առանձնապես նկատելի է Նարեկացու ազդեցությունը: Կամենացու պատմության մեջ՝

2.1. Մի շաբթ բառեր Նարեկացու՝ «Մատեան»-ում և այլ գործերում<sup>39</sup> առկա նորակազմություններից են, ինչպես՝

<sup>37</sup> Մովսիսի Խորենացուց Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1913թ., էջ 17:

<sup>38</sup> Երիշէի Վասն Վարդանան և Հայոց պատերազմին, Երևան, 1957թ., էջ 5:

<sup>39</sup> Վերջիններս քաղել ենք ՆԲՀ-ից՝ նրանում ընդունված համառոտագրություններով:

արգասատրեալ – 80 (Նար., ԽԼ), բարեգեկոյց – 80 (Նար., ՂԲ), բիլրակործան – 79 (Նար., ԻԵ), մակագալիթ – 38 (Նար., ՅՀշ.), մալթողական – 73 (Նար., ԳԱԸ.), վերավկայեալ – 80 (Նար., ԶԳ) և այլն:

2.2. Որոշ բառեր, այլ հեղինակներից բացի, գործածել է նաև Նարեկացին՝ այսակիր – 34 (Նար., ԺԸ, ՀԵ), բազմերանեան – 45 (Նար., Կուս.), զեղեցկազարդ – 46 (Նար., ԳԶ), զգապացուցանեմ – 37 (Նար., ԿԳ), լրցումն – 46 (Նար., ԼԱ), մերասեր – 7 (Նար., ԼԴ և ՄԾԲ.), նորագործ – 80 (Նար., ԽԼ) այլն:

2.3. Առանց վկայակրչելով տեղ են գտել գրեթե բառացի մեջբերումներ «Սատեան»-ից: Հմմտ.

Վասն որոյ յեղակարծ ժամանակի մինչդեռ ի բարձրագոյնս կամեր ձկոփի՝ նուազեցաւ ընդհանուրը, ի ինդրել սակաւուն՝ զրկեցաւ ի հանուրցն, առ յուժգին ընթանալն՝ ընկլաւ սաստրկապէս, լյանիսախիտելի կարծիլն՝ մանր խորդակեցաւ և որ ի յերկինս բարձրանալն՝ էջ ի դժոհս լի դառնութեամբ (79) և

Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկլաւ սաստրկապէս, Յանչաին ձգոփի՝ իմոյն ոչ հասի, Ի մեծագոյնն ամբառնալ ասկոսսր գլորեցայ, Յերկնային ուղոյն՝ անդնդոց մարդնեցայ, Ի զգուշանալն առաւել՝ յաւէլ վնասեցայ, Յանարարն պահիլ՝ մանր խորդակեցայ (Նար., ԾԵ, Զ): Կամ

.... որք բարրառեալ բանի վերապարմէին զեղեալսն և զոչ գոյացեալսն անսպոերար տեսչութեամբ (Էջ 31) և

Քանցեալսն և զգալոցն, զեղեալսն և ոչ գոյացեալսն Ասսպոերար բարրառով բանի վերապարմէցին (Նար., ԼԳ):

2.4. Հանդիպում է Նարեկացու ոճին հատուկ ատեղծագործական հնարքներից մեկը, այն է՝ բայանուն գոյականներին ստորադասվում են մակրայ որոշիչներ՝ ըստ պակրուասիրար հրամանիր (33), հեթանոսարար զայրացմամբ (39)<sup>40</sup>,

<sup>40</sup> «Սատեան»-ում հեթանոսորէն հնչման (ՂԲ, Ը):

համօրէն քրիստոնէից (39), փութապէս ընթացիր (42), որոնցից մեկը՝ հենց Նարեկացու գործածած մակրայով՝ անսպոերար տեսչութեամբ (31) և այլն:

3. Հետևելով իր նախորդներին՝ Կամենացին որոշ խոսքեր համեմում է աստվածաշնչան մեջբերումներով<sup>41</sup> մի դեպքում հատակորեն նշելով մեջբերվող խոսքի հեղինակին, մյուս դեպքում՝ ակնարկով նրա մասին Այլ և մեր ամենեցուն ցածոյց զտառապումն մտաց երանելին Եսայի խրատելով թէ՝ Ո՛ զիտաց զմիտս Տեառն, կամ ով եղի խորհրդակից<sup>42</sup> (72): .... յորոց կատարեցաւ առ մեզ կանխագործակ տեսութիւն մարգարէին՝ յասելն ողբալով ի վերայ Խարայէլի, թէ՝ Ահա մտին հեթանոսը ի ժառանգութիւն քո, պղծեցին զտաճար սուրբ քո<sup>43</sup> (34) կամ զի զոր ինչ ոք և ընկալաւ ի Տեառնէ<sup>44</sup> (32), .... ըստ վկայութեան առաքելոյն թէ՝ Ումեն ի Հոգուոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան զիտութեան, և այլն թէ նմին Հոգուոյն<sup>45</sup> (32): .... ուստի ժամանեալ լցաւ կտակ երգոցն բանից իմաստընյն, զոր աւաղս և ողբս գրեաց ի վերայ քաղաքին, որում թագաւորն մանուկ է<sup>46</sup> (35) և այլն:

Ամիկովինք: Հովհաննես Կամենացու «Պատմութիւն պատերազմին Խորինու» երկի՝ լեզվաբանական տեսանկյունից ուսումնասիրությունը երևան է հանում լեզվական մի շարք

<sup>41</sup> Դրանց մի մասը գտնում ենք նաև այլ պատմչների երկերում: Այսպես՝ Հոռվմ. ԺԱ գլխից կատարված մեջբերումն ունի նաև Սերեսը (տե՛ս Սերես, Պատմություն, ըննական բնագիրը՝ Գ. Վ. Արգարյանի, առեղակայերեն բարգմաններունը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Գորգեն Խաչատրյանի և Վանն Եղիազարյանի, Երևան, 2004թ., 156-157), Սաղմ. ՀՀ գլխից արված մեջբերումը՝ Գրիգոր Նարեկացին (տե՛ս Ս. Գրիգոր Նարեկացի, Նիկիական հանգանակ («Ողբերգության մատյան», գլուխ ՀԵ), Տեսուր արենեահյերնի վերածեց Գորգեն Խաչատրյանը, Երևան, 2003թ., Էջ 30-31) և այլն:

<sup>42</sup> Հոռվմ., ԺԱ, 34: Հմմտ. Ո՛ զիտաց զմիտս Տեառն և ո՛ եղի նմա խորհրդակից՝ եթէ խելամուտ արասցէ զնս (Ես., Խ., 13):

<sup>43</sup> Սաղմ., ՀԵ, 1:

<sup>44</sup> Հմմտ. Թէկէտս և բաժինը շնորհաց են, այլ Հոգի նոյն է: Եթէ բաժինը պաշտամանց են, այլ Տեր նոյն է: Եթէ բաժինը յաջողութեանց են, Աստուած նոյն է, որ յաջողէ զամենայն ամենայնի (Ա. Կոր., ԺԲ 4-6):

<sup>45</sup> Ա. Կոր., ԺԲ, 8:

<sup>46</sup> Նկատի ունի ժողովողի հայտնի արտահայտությունը. Վայ թեզ, որոյ թագաւոր քո մանուկ է, և իշխանը քո ընդ առաւօտս ուտեն (Ժող., Ժ, 16):

փաստեր, որոնք կարող են հետաքրքրել հայ գրական լեզվի պատմության, այլև բարբառագիտության հարցերով գրաղող մասնագետներին: Նշված երկի շարադրանքից ստացված ընդհանուր տպագրությունն այն է, որ չնայած պատմիչների ոճին հատուկ ինքնանսեմացման փորձերին<sup>47</sup> Կամենացին եղել է ուսյալ անձնավորություն: Նրա երկի լեզուն տվյալ դարաշրջանին (XVI դարավերջ – XVII դարի առաջին քառորդ) հատուկ գրաբարն է, որն աչքի է ընկնում մատչելիությամբ: Ու թեև Կամենացին փորձում է գրել նարմանավորված գրաբարով, այսուհանդերձ նրա երկում առանձնանում են ոչ միշտին հայերենին և վաղ աշխարհաբարին բնորոշ հնյունական, բառային, վերականական և ոճական մի շարք լեզվական իրողություններ, որոնք լեհահայոց, մասնավորապես՝ Հովհաննես Կամենացու իրական լեզվամտածողության փաստացի վկայություններն են և գաղափար են տախիս լեհահայերի ոչ-միշտինհայերենյան և վաղաշխարհաբարյան ժամանակաշրջանների լեզվի իրական վիճակի մասին՝ առաջ բերելով գիտական հետաքրքրություն:

Գիտական շրջանառության մեջ առկա և մեր կողմից ուսումնասիրված սկզբնադրյուրների ընձեռած լեզվական փաստերը վկայում են, որ լեհահայոց լեզուն միատարր չէր: Բանն այն է՝ տվյալ ժամանակաշրջանում, ‘նախ’ ինքնին պայմանական է Լեհաստանի՝ որպես պետության սահման-ների հստակությունը, քանի որ այն մի շարք վերաճնումների է ենթարկվել, և երկրորդ՝ նոյնքան պայմանական է նաև լեհահայություն հասկացությունը ոչ միայն վերը նշված,

<sup>47</sup> Անա թե ինչպես է բնութագրում իրեն Հովհաննես Կամենացին. «Իսկ զի ին ոչ և եթ ունայն գոյով ի լաւագոյն շնորհաց բարձրագունից, այլ և ոչ վերջնոցն և հասարակացն բարականանայր միտք տառապեալ բնորոշեանս ....» (32), մենք այլ առիթով՝ «Արդ՝ յայս անդորրութեան առորց, յորում ընդունեալ մերժեցան վասակար թշնամիք եկեղեցւոյ, յետ ամաց վեցից անցանելոյ, ես՝ Յովհաննես հոուկ յետին բանահիաց և տառառամ հետևող ուսումնասորաց, բռնեալ գրազում տառապանս մշտակիր ոգոյս և խանդաղատեալ սիրով՝ ցանկացայ թարգմանել խօսիր նիրական լեզուիս զայս բարեգելոյց արգասաւրեալ նորագործ իրաշից համբա, վերավկայելով կրկին յաւելուածովյք» (80):

այլև այն պատճառով, որ հիշյալ տարածաշրջան գաղթած հայությունն ինքն է աչքի չէր ընկնում լեզվական միատարրությամբ: Մասնավորապես պետք է նկատի առնել, որ գաղթերն այդ տարածաշրջան և այստեղ կատարված ներքին տեղակինսությունները տեղի են ունեցել տարբեր ժամանակահատվածներում և ամենատարբեր վայրերից: Ասվածի մասին վկայում են ոչ միայն պատմական, այլև լեզվական փաստերը, որոնցից վերջիններս արտահայտություն են գտել նաև Հովհաննես Կամենացու երկում և այդ երկի հիմնական սկզբնադրյուրում՝ «Տարեգիրը Կամենացյում»:

Ստորև ներկայացվում են աշխատության մեջ օգտագործված համառոտագրությունները\*:

Բ.գ.դ., պրոֆ. Գ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

\* ՀԱՄԱՌԱԴՐԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա. - ածական

գ. - գոյական

մ. - մակրայ

ն.թ. - ներգործական սեղի բայ

ՄՀԲ - Միշտին հայերենի բառարան, Ո. Ս. Ղազարյան, Հ. Ս. Ավետիսյան, Երևան, 2009 թ.:

ՆՀԲ - Նոր բառեգիր հայկագետների, Գ. Աւետիքեան, Խ. Սիրմելեան, Մ. Աւետիքեան, Վենետիկի, 1836-1837:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՏԵՐԱՋՄԻՆ ԽՈԹԻՆՈՒ,  
Ի ԺԱՄԱՆԱԿՍ ՍՈՒԹԱՆ ՕՍՍԱՆԻՆ ՏԱճԿԱՑ,  
ԵՒ Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ  
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՄՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ

ԽՈՇԻՆԻ ՊԱՏԵՐԱՋՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ  
ՏԱՃԿՎՆԵՐԻ ՍՈՒԹԱՆ ՕՍՍԱՆԻ  
ԵԿ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ  
ՄԵԼՔԻՍԵԴԵԿ<sup>1</sup> ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ

## ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ԳՐՈՑՍ ՊԱՏԵՐԱՋՄԻՆ ԽՈԹԻՆՈՒ, ՈՐ ԵՊԵՒ Ի ԺԱՄԱՆԿՍ  
ԲԱՐԵՊԱՅԾ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԱՊԱՍԿ ԱՐՔԱՅԻՆ ԻԼԱԽԱՑ,  
ԱՅՍԻՆՔ ԼԵՀԱՑ, ԶԻԿՄՈՒՆՈՒ ԵՐՈՐԴԻ, Ի ՉԵՂՆ  
ԱՄԲԱՐԻԾ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՐՔԱՅԻՆ ՏԱՃԿԱՑ ՓՈՔՐ  
ՕՍՍԱՆ ԿՈՉԵՑԵԼՈՅՆ՝ ԱՐԱՐԵԱԼ ՈՒՄԵՄՆ ՅՈՎԿԱՆՆՈՒ  
ԱՆԻՄԱԱՆ ՀԵՏԵՒՈՂԻ, Ի ԽՆԴՐՈՅ ՀՈՐ ԻՒՐՈՒՄ ՏԵՐ  
ՅԱԿՈԲ ԲԱՐԵՍԵՐ ՔԱԿԱՆԱՅԻ, ԵՒ Ի ՊԱՐԾԱՆՍ ՀԱՄՕՐԵՆ  
ՀԱԽՏԱՑԵԱԼ ԵՂԲԱՐՑ

ՅԵՐԻՄ ՈՐՈՂՄՈՒՆՍ բաժանեալ Երկիր արհեստ Վի-  
պարանութեանց՝ իմացմամբ մտաց, տեսութեամբ ա-  
չաց, ի լուր լսելեաց:

Արդ՝ ի նախաղուեալ Երիցս, ո՞վ Հայր պատուա-  
կան, առաջինն ՎԵՒԱԳՈՒՆԻՒ է ծանօթութիւնն, քանզի  
իմացողական հոգի՝ զմարգարեականն զուշակէ զտեսակ,  
որ ոչ ամենակին կարօտանային օգնութեան գրոց և  
նշանագրաց, այլ զիոնին սուրբ ունեին<sup>2</sup> մտավարժ, որ  
զամենայն նկարագրէր զխորհուրդ, ի սիրտս նոցա, որը  
բարբառեալ բանիւ ՎԵՐԱՊԱՍՏՈՒՀԻՆ գեղեալսն և զոչ գոյա-  
ցեալսն անստուերաբար տեսչութեամբ<sup>3</sup>, այլայլ լեզուօք

## ԱՌԱՋԱԲԱՆ

ԽՈՏԻՆԻԿ<sup>4</sup> ՊԱՏԵՐԱՋՄԻՆ ԱՅՍ ԳՐԵՒ, ՈՐԸ ՏԵՐԻ  
ՈՒՆԵՑԱԿ ԻԼԱԽԱՆԵՐԻ<sup>5</sup> ԱՅՍԻՆՔՆ՝ ԼԵՀԱՑ ԲԱՐԵՊԱՅԾ  
ԵԿ ՔՐԻՍՏՈՍԱՊԱՍԿ ԱՐՔԱՅԻՆ ԶԻԿՄՈՒՆՈՒ ԵՐՈՐԴԻ  
ՕՐՈՔՏԱՃԻԿՆԵՐԻ ՓՈՔՐ ՕՍՍԱՆ ԿՈՉԿԱԾ ԱՄԲԱՐԻԾ  
ԵԿ ԻՆՔՆԱԿԱԼ ԱՐՔԱՅԻՆ ՉԵՐԵՔՎ՝ ԳՐԿԱԾ ԱՆԳԵՏ  
ՆՄԱՆԱԿՈՌ ՀՈՎԿԱՆՆԵՍԻ ԿՈՂՄԻՑԻՐ ՀՈՐ ՀՈՐ ԲԱՐԵՍԵՐ  
ՏԵՐ ՀԱԿՈԲ ՔԱԿԱՆԱՅԻ ԽՆԴՐԱՆՔՈՎ ԵԿ Ի ՊԱՐԾԱՆՍ  
ԲՈՒՐՈ ՀԱԿԱՆԱՑՅԱԼ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ ԱՐՎԵՏՈՐ ԲԱԴԼԿԱԳՈՎ Է ԵՐՆՈՒՄ  
ԵՐԵՔ ՄԱՍԵՐԻց՝ մտքերի իմացությունից, աչքերի տեսո-  
ղությունից և ականջների լսողությունից:

Արդ, վերոգրյալ ԵՐԵՔ ՎԵՒԱԳՈՒՆՆԵՐԻ առաջինը,  
ո՞վ պատվական հայր, իմացությունն է, քանզի իմացող  
հոգին զուշակում է մարգարեների ծնով, ովքեր ամենակին  
կարոտ չեն զորերի կամ գրությունների օգնության, այլ  
Սուրբ Հոգին ունեին խելամիտ, որն ամեն մի միտքը  
դրոշմում էր նրանց սրտերում, և նրանք ակնհայտ  
տեսչությամբ բարբառում-վերապատմում էին կատար-  
ված և չկատարված բաները տարբեր լեզուներով,

առանց ուսանելոյ յումեքէ, ըստ որում գրէ Պօղոս թէ՝ Նա ետ զոնանս առաքեալս, զոնանս մարգարէս աւետարանիչս, այլ ոչ ամենեքեան արժանացան այն շնորհի<sup>6</sup>. որպէս և կրկնէ յետագայ բանիք, ո՛չ թէ ամենեքեան մարգարէք իցեն կամ թարգմանք, բայց որ տուանն ի վերուստ՝ վասն որոյ զաստուածայինսն աստուածայնոյն պարտ էր վերադրել ի փառս նմին:

Իսկ երկրորդն և երրորդն՝ ոչ այնչափ առաւել կատարելապէս, այլ մասնաւորաբար և նուաստագոյն քան զառաջինն. սակայն միևնույն Հոգի բաժանէ գրազմապատիկ պարզէս առ ամենեսին, || որպէս և յոլովք ի նախնեացն մերոց զօրացեալք նովաւ ընթացան զետ զանազան և ազգի ազգի շնորհաց, զի զոր ինչ ոք և ընկալաւ ի Տեառնէ, ըստ վկայութեան առաքելոյն թէ՝ Ումենն ի Հոգուոյն տուեալ է բան իմաստութեան, այլում բան գիտութեան<sup>7</sup>, և այն թէ նմին Հոգուով. Ումանք առաքինութեանց ցանկացան, և ոմանք իմաստասիրական բանից հետևեցան, բազումք քերականութեան և աստեղաշրջագայութեանցն ծանօթացան, և կեսք ժամանակագրութեանց և պատմաբանութեանց զիոյքն կալան, որք մինչև ցայսօր պարապին նմին հանձարոյ, և այն ևս յերկար աշխատութեամբ և ի յյօժանդակութենէ միմեանց, զի մարմին եղծանելի ծանրացուցանէ զմիտս բազմահոգ, մինչ զի հազիւ նկատել կարենք զայն՝ որ ինչ առ յոտս մեր է ըստ երրորդի բանին:

Իսկ զի իմ ոչ և եթ ունայն գոլով ի լաւագոյն շնորհաց բարձրագունից, այլ և ոչ վերջնոցն և հասարակացն բաւականանայր միտք տառապեալ բարութեանս, բայց զի հարկեցայ ի թախանձելոյ հանապազ ի ծեռն փութացուցանողական հրամանի տեառնդ իմոյ և երկիւղածութեամբ դաստիարակողի՝ տէր Յակոբ քահանայիդ

առանց որևէ մեկից ստվորելու, ըստ որի՝ Պողոսը գրում է. «Նա ունաց կարգեց առաքյալներ, ունանց՝ ավետարանիչ մարգարեներ, բայց ոչ բոլորն արժանացան այդ շնորհին», ինչպէս և կրկնում է հաջորդ խոսքերում. «Ոչ թէ բոլորն են մարգարեներ կամ թարգմաններ<sup>8</sup>, այլ միայն [նրանք], ովքեր ի վերուստ օժտվեցին», այդ պատճառով աստվածայինը Աստծուն պետք է վերագրել՝ ի փառս նրա:

Իսկ երկրորդ և երրորդ [մասերն] այդքան շատ չեն կատարյալ, այլ մասամբ, և ավելի ցածր են, քան առաջինը. սակայն նույն Հոգին բազմապատիկ ձիրքեր է բաժին համում ամենքին, ինչպէս որ մեր նախնիներից շատերը, նրանով զորանալով, ձգտեցին տեսակ-տեսակ շնորհների, և ով ինչ էլ որ ստացավ, Տիրոջ միջոցով է<sup>9</sup>, ըստ առաքյալի վկայության. «Մեկին Հոգուց տրված է իմաստության խոսքը, մյուսին՝ գիտության խոսքը», և [վկայում է], թէ այլ լրաներն էլ են տրվում] նույն Հոգուց<sup>10</sup>: Ումանք առաքինության ձգտեցին, ունանք փիլիսոփայական խոսքին հետևեցին, շատերը քերականությանը և աստղագիտությանը ծանօթացան, իսկ կեսը՝ ժամանակագրությանն ու պատմագիտությանը շամբ դրին ու մինչ այսօր գբաղվում են այդ գիտությամբ և այն էլ՝ երկար տքնությամբ ու միմյանց օգնությամբ, քանզի ապականացու մարմինը ծանրացնում է հոգսաշատ միտքը, մինչև որ հազիւ ենք կարողանում նկատել այն, ինչ մեր ոտքերի առջև է՝ ըստ երրորդ հատկության:

Իսկ ես ոչ միայն ունայն եմ լավագույն և բարձրագույն շնորհներից, այլև տառապյալ անձիս միտքը չի բավարարի հետին և միջակ իմացությանը, բայց քանզի քո՞ իմ տիրոջ և երկյուղածությամբ դաստիարակողի՝ տէր Հակոբ քահանայիդ աճապարեցնող հրամանով անընդհատ հարկադրվեցի

յառաքինութիւն, զյաղթանակ մարտի արքային հլախաց յեղանակել ամփոփելով յայլմ ցեղէ ի մերասերն լեզու, և այնքան՝ մինչ զի մոռացումն ետուր գրաղմանց կենցաղականիս, որ յարաժամ զգուեն զիս հրապուրեալ ցնորիւք. զոր և ես նախապէս վարկայ զինազանդութեամբ աշխատութիւնն՝ քան զիեղզութեամբ լրելն:

Որոյ վասն ի խոյզ իսկ եղեալ գտի զաքն ումեմն պատուականի զգիր, որ անդ գոլով ականատես լեալ ամենայնի, մի ըստ միոցէ պատմութիւն արարեալ սոցին բանից ըստ պատշաճի իրին եղելոյ, կարձառօտ և այլախօս բարիւք<sup>11</sup>. Առա այլ ևս յոնանց յոլովից՝ որք առ ընդհանուրս համբաւեցին զլուր գովելի գործոյս այսորիկ, և զորս իմ եղեալ ծանօթ մասամբ իւիք իբր ծագի մատին նշուլից սմին խորհրդոյ:

230a || Ուստի թօթափեալ զտկարութիւնս իմաստից ժողովել մարթասցուք զյառաջարկեալ բանիցս հանդէս ուշիմ նպատակ առնելով զՅիսուս, զի տացէ մեզ տեղի և ժամանակ մինչ ի վախճան ելանել զդուզնաքեայ մատենիկս՝ թերևացուցանել զսկիզբն յօժարութեան փոքրոգի լոյս, և անսայթաք ուղևորիլ զիետ ճշմարտութեան՝ զուգահաւասարելով միմեանց բնագրացն օտարասեր ազանց, թէպէտ դժուարահաւաք և տաժանելի իցէ անօգուտ աշխատութիւնս:

Եւ աստ ոչ եթէ զջանից իմոց ցուցանեմ զքաջութիւն

և կամ զաբերձութիւն, գովութիւն ունելոյ յումեթէ զիղձ, այլ սակս գերազանցելոյ գրոց և բանից ներգործեցելոց, յաղագս որոյ խոստացաքն կանխագոյն ըստ պատուասիրաբար հրամանիդ, թերևս տացուք զլուումն խնդրոյդ որդիիկանս հպատակութեամբ, զոր իմ այժմ ուշ եղեալ գրեցից ստոյգ կտակաւ, այնապաղ սկսեալ անտի, ուստի սկսանելն է արժան:

բարգործության՝ լեհաց արքայի մարտական հաղթանակի պատմությունն ի մի հավաքելու՝ վերաշարադրելով ուրիշ լեզվից մեր ազգի լեզվով. և այնքան [ստիպեցիր], մինչև որ մոռացում բերեցիր երկրային գրաղմունքներիս, որոնք հանապազ ծանծրացնում են ինձ՝ հրապուրելով ցնորքներով, և ես նախընտրեցի հնազանդությամբ տքնելը, քան ծուլությամբ լթելը:

Հենց այդ պատճառով վինտրեցի-գտա մի պատվական մարդու գրվածքը, ով, այնտեղ գտնվելով, ականատես էր եղել ամեն ինչին՝ մեկ առ մեկ այդ բաները կարձառուտ և օտար լեզվով պատմություն դարձնելով՝ ըստ կատարված գործի պատշաճության: Այլ ուրիշ շատերից [օգտվեցի], ովքեր առհասարակ համբավեցին այս գովելի գործի լուրզ, և որի նշույներին ինչ-որ մասով՝ մոտավորապես մատի ծայրի չափով, ծանոթ էի ես նոյնանես:

Ուստի թոթափելով իմաստության տկարությունը՝ պիտի կարողանանք ժողովել առաջադրված այս բաների պատմությունը՝ խելամտորեն նշանակետ ունենալով Հիսուսին, որպեսզի մեզ տեղ և ժամանակ տա, մինչև որ այս փանարի մատենիկն ավարտեն՝ թերևացնելու ծերնարկնան սկիզբն այս դժվարության, և անսայթաք ուղևորվելու ճշմարտության հետքով՝ զուգադրելով միմյանց օտարապեզու բնագրելը, թէկուզ դժվարահավաք և տաժանելի լինի<sup>12</sup> իմ այս անօգուտ աշխատանքը:

Եվ այստեղ ես ոչ թէ իմ ժրաջանությունն եմ ցույց տալիս կամ պերձախոսությունը, որևէ մեկից գովասանքի արժանանալու իղձը, այլ դա անում ես օգտակար եղած գործերն ու գրուցները գերազանցելու նպատակով, որի մասին, ըստ պատվարժան հրամանիդ, կանխավ խոստացանք, որ արդարև կկատարենք պահանջող որդիական հնազանդությամբ, և ես այժմ ուշադրությամբ կգրեմ ստոյգ կտակով՝ անհապաղ սկսելով այնտեղից, որտեղից արժանի է սկսել<sup>13</sup>:

ՅԱՂԱԳՍ ԲՈՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՆ ԻՍՍԱ-  
ՅԵԼԵԱՆ ԵՒ ՎԱՍՆ ԽՈՐՀԵԼՈՅՆ ՕՍՄԱՆԱՅ ՍՈՒՒ-  
ԹԱՆԻՆ ԳԱԼ Ի ԿԵՐԱՅ ԱՇԽԱՐՀԻՆ ԻԼԱԽԱՅ,  
ՄՈՒԱՑԵԱԼ ԶՈՒՏ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՅ

Արդ՝ ի զօրանալ խուժադուժ ազգին Սարակինոսաց,  
որը յետ հալածելոյ Սարայի գհազար զաղախինն իւր  
յերեսաց իւրոց, զետեղեալ բազմացան յոյժ առ ընդ-  
հանուրս՝ յաջ և յահեակ սեպհականելով զամենեխին  
ըստ ճշմարտապատում գրոցն, մինչ զի զերիցագոյն  
մասն տիեզերաց և զբազում վիճակս ազգաց խնդից  
աշխարհաց հնազանդեցուցեալ ընդ ձեռամբ՝ հարկա-  
տուք իւրեանց արարին:

Որպէս զԱրարատեանն Մեծ և զՓոքրն, և զԲարե-  
լովն իին և զԵզիստոսն զառաջին, զԴամասկոս և զՊա-  
ղեստին, զՎիրու և զԱլուանս, և զայլ յոլովս, զոր այժմ  
տեղի տայ յԵրկարելոյ բանին տկարութիւն ոգւյս,  
մանաւանդ զՅունացն ասեմ զբովանդակ տէրութիւնն, և  
զանյաղթելի կայսերացն Բիւզանդիոյ հզօր քաջութիւնն,  
որով միանգամայն բարձին անանխայաբար զբնաւին  
յոյս զօրութեան ի քրիստոսադաւան ժողովորդոցն, և  
զյօքունս մոլորեցուցին ի կործանակիրթ կրօնս այսա-  
կրին և խարուսկին Մահմէտի, զոնանս դաւաճանող  
•խոստմամբ, և զոնանս պէսպէս սաստիք և սպառնա-  
լեօք, յորոց կատարեցաւ առ մեզ կանխագուշակ տեսու-  
թիւն մարզարէին՝ յասելն ողբալով ի վերայ Խորայէլի, թէ՝ Ահա մտին հեթանոսք ի ժառանգութիւն քո, աղջեցին  
զտաձար սուրբ քո<sup>14</sup> և այլն: Եւ զի՞նչ է ին յԵրկարելն  
զբազմաց գուշակեալ իրին շարաբանութիւն, ուստի  
առ ամենեսեան կարծեն զոլ կատարելապէս ի նախ-  
նեաց վիպազրացն, զոր հաստատագրութեամբ հասու-  
ցին մինչ ի մեզ, և զմերկայինսն միայն ապագայցն

ԻՍՍԱՅԵԼԵԱՆ ԱԶԳԻ ԲՈՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵԿ  
ՍՈՒՒԹԱՆ ՕՍՄԱՆԻ, ՄՈՈՍԱՆԱԿՈՎ ԻՐ ԱՆԽԱՆՏ  
ՈՒԽՏԾ, ԼԵՀԱՅ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿԵԼ  
ԽՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արդ, երբ սարակինոսների<sup>15</sup> խուժադուժ ազգը  
հզորացավ, ովքեր Սարայի՝ իր աղախին Հազարին իր  
մոտից հալածելուց հետո հոյս բազմացավ ամենուր,  
ըստ ճշմարտապատում զրբերի՝ աջ ու ձախ նվաճելով  
ամենքին, մինչև որ տիեզերքի մեծագոյն մասը և  
տարբեր երկրների ազգերի բազմաթիվ տարածքները  
հնազանդեցնելով իր իշխանության ներքո՝ հարկատու  
դարձրեց:

[Դրանցից էին] Մեծ Հայքն ու Փոքր Հայքը, իին  
Բաբելոնն ու վերին Եգիպտոսը, Դամասկոսն ու Պա-  
ղեստինը, Վրաստանն ու Աղվանքը և ուրիշ շատ  
[Երկրներ], բայց այժմ խոսքի երկարությունից ոգուս  
տկարությունն է տեղի տալիս, մանավանդ երբ ասում  
եմ՝ Հունաց ողջ տերությունը [ինազանդեցրին] և Բյու-  
զանդիայի անպարտելի կայսրերի քաջազրությունը  
[կործանեցին], որով անզթորեն միանգամայն մարեցին  
քրիստոսադաւական ժողովուրդների զորության ողջ  
հոյսը և շատերին մոլորեցրին սատանայակիր և խա-  
բեբա Մահմէտի<sup>16</sup> կործանաբեր կրոնի մեջ. ոմանց՝  
կեղծ խոստումներով, իսկ ոմանց՝ զանզան ահա-  
բեկություններով ու սպառնալիքներով, որոնց պատ-  
ճառով մեր հանդեպ կատարվեց մարզարէի կանխա-  
տեսությունը, երբ ողբում էր Խորայէլի վրա՝ ասելով.  
«Ահա հեթանոսները մտան քո ժառանգությունը,  
աղջեցին քո սուրբ տաճարը» և այլն: Եվ իմչո՞ւ եմ  
ես երկարացնում շատերի հայտնած բանի [մասին]  
շարադրանքը, որն ամբողջականորեն, կարծում եմ, իին  
պատմիներից բոլորի մոտ կա, և որն արժանահավա-  
տորեն հասցրին մինչև մեզ, և միայն ներկայի  
կատարվածները հետագայում եկողների կամքին

231ա յանձն || արարին ի կամս, զոր և խնում նուաստութեանս հարկ եղև գրել զայժմունս սակաւուք:

Բայց ոչ բարուք զօգուտն հեթանոսաց, այլ իբրև յարանց յուսացելոց ի օրութիւն իւրեանց, և օրացելոցն ի պարտութիւն, քանզի դեռ ևս ոչ պակասեցան աւար հարկանելոյ գերկիր չարաբարոյ ազգն Խանայէլի, այլ հանապազ խրոխստան և մշնան անյագաբար իբր զվայրենամիտ գազան, տիրեալ տիեզերաց:

Յորոց մին ի սոցան ի մնաւասմերորդ թագաւորեաց ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս, որ էր այր նենգամէտ և ամբարհաւած, մանկագոյն տիօք և ամկատար հասակաւ, զոր ըստ առաջնոցն իւրոց անուանեալ Օսման սուլթան<sup>17</sup> որդի Ահմէտի, թոռն Մահմէտի. ուստի ժամանեալ լցաւ կտակ երգոցն բանից իմաստնոյն, զոր աւալս և ողբ գրեաց ի Վերայ քաղաքին, որում թագաւորն մանուկ է<sup>18</sup>:

Այսպէս և ի ծերն սորա թագում վիշտս և աղէտս եհաս ամենայն աշխարհի, զի ոչ այսու ամենայնի շատանայր՝ զոր ընկալեալ աւանդեցին նախնիքն իւր, այլ հետևեալ նոցին բարուց և գործոցն՝ լինիլ հակառակ խաղաղութեան և կենաց մարդկան, ըստ այնն թէ՝ Ոչ կարտ ծառ չար որ բարի պտուղ բերել<sup>19</sup>, և թէ՝ Ի պտղոյ իւրմէ ծառն ծանաչի<sup>20</sup>:

Սա յերրորդ ամի տէրութեան իւրում սահմանեալ սերմանէ զխորհուրդ չարութեան ի սրտին, և հանապազ մախայր Ելանել ի Վերայ աստուածապաշտ աշխարհին Ելախաց, որ Սարմատ և Սարմատեանք կոչին, որք են ազգաւ Դաղմատք<sup>21</sup>, և դաւանութեամբ Հռոմայեցւոց, բնակեալք ընդ արևմուտս կոյս, և են սահմանակիցք Ալամանաց<sup>22</sup> և Մաճառաց<sup>23</sup>, Պողոտանաց<sup>24</sup> և Ուսաց որ Սոսկովք կոչին: Եւ արմատացաւ այս գործ չարութեան ի հոգի անիրաւ արքային այն, մինչ զի յանդզնեալ ան-

հանձնեցին, ինչպէս որ և ինձ՝ նվասսիս, հարկ եղավ հանառոտ նկարագրել այժմյան [կատարվածները]:

Բայց [նկարագրել] ոչ թէ հեթանուների օգտակարությունը, այլ որպէս մարդկանց կողմից իրենց ուժին ապավինած հզորների պարտության մատնվելը<sup>25</sup>, քանզի Խանայէլի չարաբարո ազգը դեռևս չի դադարել աշխարհին ավարի մատնելուց, այլ որպէս վայրենամիտ զազան հանապազ հիխորտում և գռնորում է անհագորեն՝ տիրելով տիեզերին:

Մրանցից մեկը, ով մայրաքաղաք Կոստանդնուպոլսում տասնիններորդ թագավորեց<sup>26</sup>, նենզաբար և ամբարտավան մարդ էր՝ շատ փոքր տարիքով<sup>27</sup> և կարծ հասակով, Մահմետի թոռը, Ահմետի որդին, ում, ըստ նրա նախնիների, կոչեցին սուլթան Օսման, ուստի եկավ-կատարվեց իմաստունի խոսքերի մարգարեւորունը, որն ավաղներ և ողբեր գրեց այն քաղաքի մասին, որի թագավորը մանուկ է:

Այսպէս էլ սրա ծեռքով թագմաթիվ տառապանքներ ու աղետներ վրա հասան ամբողջ աշխարհին, քանզի չէր թափականանում այն ամենով, ինչը գրավելով՝ ավանդեցին [նրան] իր նախնիները, այլ հետևեց նրանց բարքերին ու գործերին, այն է՝ դեմ լինել խաղաղությանը և մարդկանց կանքին՝ ըստ այն խոսքի, թէ «Զի Կարող չար ծառը բարի պտուղ տալ», և թէ «Ծառն իր պտուից է ծանաչվում»:

Սա իր թագավորության երրորդ տարում սրտի մեջ չար խորհուրդ սերմանեց և հանապազ չարամսում էր հարծակվել աստվածապաշտ լեհաց աշխարհի վրա, ովքեր սարմատներ կամ սարմատյաններ են կոչվում<sup>28</sup>, որոնք ազգությամբ դադմատներ են և հրոմեացիների դավանանքով, բնակվում են արևմուտքի կողմը և սահմանակից են զերմանացիներին ու հունզարացիներին, մոլդավացիներին ու ռուսներին, որ մոսկովցիներ են կոչվում<sup>29</sup>: Եվ այս չար գործն արմատավորվեց այն անիրավ սուլթանի հոգում, մինչև որ ան-

հանձարութեամբ, անկաւ յիրս անհաս[ս] և անկարելիս,  
231ա կամելով բառնալ զտէ || րութիւնս լեհաց, և ընդ բօամբ  
ածել զամենայն բնակիչս սորա, խրամատելով զդաշինս  
երդմանց՝ զոր ի վաղուց ժամանակաց հաստատեալ  
ունեին ի միջի երկոցունցն սակս սիրոյ և հաշտութեան:

Ուստի կատարած գործոյն կորուստ անձին իրոյ  
նիւթեաց ըստ բանի ումեմն փիլիսոփայի, որ ասէ. Եթէ  
ոք ցնորեսց զցանկ հայրենեաց՝ հարցին զնա օձք  
թունալիցք. զոր եթէ ժամանեսցուք յաւարտ խոս-  
տացելոց՝ զսրայն և ի տեղի իրում շարադրեցից  
զդաշնագոյն մահն ի դարձի պատերազմին:

Այլ այժմ թողոցուք մերոյ պատուիրողի և հրամա-  
նատուիդ՝ կառուցեալ կարձոյ յոյժ սակաւուք ի յոլովիցն,  
զի մի՛ առաւելութիւն իրին ծանրացուսց զլուրն:

Անեղն Աստուած որ էնն անլոյծ՝  
Անհաս մըտաց և անմատոյց,  
Զարմանալի գործով լըցոյց՝  
Զազգըս մարդկան այսըմ դարուց:

Զոր Ամբակում իրովն երգուց՝  
Նախանձ էարկ կողմանց երկուց,  
Եթէ զիա՞րդ ոչ միացոյց՝  
Զիամայն էակս որ գոյացոյց:

Այլ թէ զանարգս առոյգացոյց՝  
Եւ զգինազանդն ոչ օգտեցոյց,  
Եւ զընտանիսն արօտացոյց՝

Զանբարտաւանս արմատացոյց՝  
Արքանեկաց կեանս ըզգեցոյց,  
Եւ զմեծատունս ունայնացոյց՝

(36)

մտությամբ հանդգնելով՝ ընկավ անհասանելի և ան-  
կարելի գործերի մեջ՝ կամենալով վերացնել լեհաց տե-  
րությունը և իր ձեռքի տակ առնել սրա ողջ բնակչությանը՝  
խախտելով երդման դաշինքը, որը վաղ ժամանակներից  
հաստատել-պահում էին երկու [տերությունների] միջև  
սիրո և բարեկամության համար:

Հետևաբար այդ գործի պվարտը նրան կորուստ  
պատճառեց՝ համաձայն ոմն փիլիսոփայի խոսքի, որն  
ասում է. «Եթե մեկը ցնորելով [խախտի] հայրենյաց  
սահմանները, թող խայթն նրան թունավոր օձերը», և  
եթե հասնենք խոստացածներիս ավարտին, իր տեղում  
կշարադրեմ նաև սրա դառնագույն մահը պատերազմից  
վերադառնալուն պես:

Իսկ այժմ անսանք մեր պատվիրատուիդ և հրա-  
մանատուիդ՝ համառոտ շարադրելու շատ բաներից  
քիչը, որպեսզի ասելիք շատությունը չծանրացնի այս  
պատմությունը:

Անեղն Աստուած որ էնն անլոյծ՝  
Անհաս մըտաց և անմատոյց,  
Զարմանալի գործով լըցոյց՝  
Զազգըս մարդկան այսըմ դարուց:

Զոր Ամբակում<sup>31</sup> իրովն երգուց՝  
Նախանձ էարկ կողմանց երկուց,  
Եթէ զիա՞րդ ոչ միացոյց՝  
Զիամայն էակս որ գոյացոյց:

Այլ թէ զանարգս առոյգացոյց<sup>32</sup>՝  
Եւ զգինազանդն ոչ օգտեցոյց,  
Եւ զընտանիսն արօտացոյց՝

Զանբարտաւանս արմատացոյց՝  
Արքանեկաց կեանս ըզգեցոյց,  
Եւ զմեծատունս ունայնացոյց<sup>33</sup>՝

(36)

Եւ այլ բազումք նըման սոցունց՝  
Որ ի վերուստ տօւան յոգունց,  
Հրաշատեսիլ զարմանացոյց՝  
Չոր մեզ թըլի առանց բարուց:

Բայց նա սոքօք ըզկիործն եցոյց՝  
Ամենեցուն որ զայս զատոյց,  
Զի զանհրաժեշտն ըզգաստացոյց՝  
Եւ զիմաստունս ըզգօնացոյց:

Արդ դու ըզբանն ա՞ռ ապացոյց՝  
Սարգարէին որ քեզ ծանոյց,  
Թէ ո՞չչափ զանարզսն բարձրացոյց՝  
Քան զԼիբանան ամրակառոյց:

|| Ապա յետոյ հարևանցոյց՝  
Մինչ զի հետոցն լինել անցոյց,  
Զխոնարհագոյնըս մընացոյց՝  
Զխաղաղարըս փափկացոյց:

Քեզ գաղափար այլ իմն ի գրոց՝  
Առակ փրկչին որ վասն որոց  
Զնախսկին լինելն ասէ հըրդնոց՝ (sic)  
Եւ առաջինքն խոնարի յետոնց:

Որպէս ազինք Հազարացւոց՝  
Որք աղախնոյ թըլին ծնընդոց,  
Այժմ ի բարձունս թըռչին յօդոց՝  
Թէպէտ նըման են անդընդոց:

Սակայն Ներսէս հայրըն հոգուց՝  
Մեզ ընծայեաց յոյս խորհրդոց,  
Եթէ հըգօրքն Դաղմատացւոց՝  
Առցեն ըզվրէծս Մահմետացւոց<sup>34</sup>:

Եւ այլ բազումք նըման սոցունց՝  
Որ ի վերուստ տօւան յոգունց,  
Հրաշատեսիլ զարմանացոյց՝  
Չոր մեզ թըլի առանց բարուց:

Բայց նա սոքօք ըզկիործն եցոյց՝  
Ամենեցուն որ զայս զատոյց,  
Զի զանհրաժեշտն ըզգաստացոյց՝  
Եւ զիմաստունս ըզգօնացոյց:

Արդ դու ըզբանն ա՞ռ ապացոյց՝  
Սարգարէին որ քեզ ծանոյց,  
Թէ ո՞չչափ զանարզսն բարձրացոյց՝  
Քան զԼիբանան ամրակառոյց<sup>35</sup>:

Ապա յետոյ հարևանցոյց՝  
Մինչ զի հետոցն լինել անցոյց,  
Զխոնարհագոյնըս մընացոյց՝  
Զխաղաղարըս փափկացոյց:

Քեզ գաղափար այլ իմն ի գրոց՝  
Առակ փրկչին որ վասն որոց  
Զնախսկին լինելն ասէ հըրդնոց՝ (sic)  
Եւ առաջինքն խոնարի յետոնց<sup>36</sup>:

Որպէս ազինք Հազարացւոց՝  
Որք աղախնոյ թըլին ծնընդոց<sup>37</sup>,  
Այժմ ի բարձունս թըռչին յօդոց՝  
Թէպէտ նըման են անդընդոց:

Սակայն Ներսէս հայրըն հոգուց՝  
Մեզ ընծայեաց յոյս խորհրդոց,  
Եթէ հըգօրքն Դաղմատացւոց՝  
Առցեն ըզվրէծս Մահմետացւոց:

232w

(37)

(37)

Ի սոցանէ ոմն ի վերջնոց՝  
Կոչեալ Օսման ըստ առաջնոց,  
Նըստեալ յաթոռըս Հոռոմոց<sup>38</sup>,  
Տիրէր բազում աշխարհայնոց:

Սա բարձրութեամբ կողմանց մերոց՝  
Նեղեալ լինէր իրու այլոց,  
Յառնէ ի վեր նըման գայլոց՝  
Յափջտակել ըզփառս այլոց:

Յոյժ նախանձէր կողմանց մերոց՝  
Բառնալ զազինս Սարմատացոց,  
Մինչ զայրացմամբ հանգոյն գետոց՝  
Եհեղ զալիսն անդրէն յիւր ծոց:

Այլ ես հայցեմ սըրտէ խորոց՝  
Զինզին Աստուած յոյսն արդարոց,  
Ծագել ըզլոյս շաւլացս հետոց՝  
Մինչև ի կէտ խոստմանցս իմոց:

#### ԳԼՈՒԽ Բ.

ՎԱՍՆ ՍՊԱՌՈՆԱԵԱՑՆ ՈՒՂԱՐԿԵԱԱ  
ԹԹՈԹՅՆ ՕՍՍԱՆԱՅ ՄԱՆԿԱՀԱՍՍԿԻՆ, ԵՒ  
ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՐՔԵԱՅԻ  
ԻԼԱԽԱՑ, ԱՅՍԻՆՔՆ ԼԵՀԱՑ

Եւ ի կատարիլ ամաց կենարարին, որ առ մեզ յա-  
լեմանբ թուոց յարաբարդեալ հազար վեց հարիւր քսան  
և միոյ, իսկ յարեթական վիճակն ցեղիցս Հայկայ, որ ըստ  
համարոյ հինգհարիւրեկին՝ հազար և եօթանասուն, և ի  
բռնութենէն Տաճկաց յառաջնոյն Մահմէտի և Քըղըրդայ  
մինչև ցայս Վայր ժողովին ամք՝ ինն հարիւր և ութսուն<sup>39</sup>:

Առ այսու ժամանակօք վերակոչեալն Օսման՝ մինչ  
232p դեռ ընդ լլ մակազաւիթ և լայնասփիթ տարածնամբ չո-  
րեքին կողմանց, հրամայեալ խրոխտաբար իշխէր ազ-  
գաց և ազանց, ուստի յղփացեալ յայնմ փարթամութենէ՝

(38)

Ի սոցանէ ոմն ի վերջնոց՝  
Կոչեալ Օսման ըստ առաջնոց,  
Նըստեալ յաթոռըս Հոռոմոց՝  
Տիրէր բազում աշխարհայնոց:

Սա բարձրութեամբ կողմանց մերոց՝  
Նեղեալ լինէր իրու այլոց,  
Յառնէ ի վեր նըման գայլոց՝  
Յափջտակել ըզփառս այլոց:

Յոյժ նախանձէր կողմանց մերոց՝  
Բառնալ զազինս Սարմատացոց,  
Մինչ զայրացմամբ հանգոյն գետոց՝  
Եհեղ զալիսն անդրէն յիւր ծոց:

Այլ ես հայցեմ սըրտէ խորոց՝  
Զինզին Աստուած յոյսն արդարոց,  
Ծագել ըզլոյս շաւլացս հետոց՝  
Մինչև ի կէտ խոստմանցս իմոց:

#### ԳԼՈՒԽ Բ

ՄԱՆԿԱՀԱՍՍԿ ՕՍՍԱՆԻ ՈՒՂԱՐԿԱԾ ՆԱՍԱԿԻ  
ՍՊԱՌՈՆԱԻՔՆԵՐԻ ԵՎ ԻԼԱԽԱՑ, ԱՅՍԻՆՔՆ  
ԼԵՀԱՑ ԱՐՔԵԱՅ՝ ՀԱՄԵՍ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՄԱՍԻՆ

Երբ Կենարարի<sup>40</sup> ծննդյան տարեդարձն ավարտ-  
վեց, որը թվերի գումարումով մեզ մոտ<sup>41</sup> լինում է հա-  
զար վեց հարյուր քսանմեկ, Հայկի ցեղերին հարեթական  
վիճակի մեջ, որը, ըստ իինգհարյուրակի հաշվարկի,  
լինում է հազար յոթանասուն, իսկ տաճիկների նախ-  
նի Մուհամեդի և Քաղրդի քռաստիրությունից մինչև  
այստեղ ստացվում է ինը հարյուր ութսուն տարի – այս  
ժամանակներում, մինչդեռ վերոնշյալ Օսմանը, դեպի  
չորս կողմերը բազմածավալ և լայնասփյուռ տարած-  
մամբ խրոխտաբար հրամայելով իշխում էր ազգերին  
ու ազգություններին, հղփացավ այդ հարստությունից,

(38)

կալաւ զնա ամբարտաւանութիւն, և անօրինաբար կազմեցաւ զայլոցն ևս յափշտակել զժառանգ, որպէս զի ամենեքումքը յաւելուցու բաժինս մասանց խմբից աշխարհաց ի ծոց իւր:

Կասն որոյ առաքէ պատգամաւոր իրովարտակս առ քրիստոսաւէր և փառաւոր արքայն կախաց անուանեալն Երրորդ Զիկնունդ<sup>42</sup>. որ ո՞չ ըստ օրինի և սովորութեանց թագաւորաց, այլ հեթանոսաբար զայրացմանը, Վիշտու և սպառնալիս խոստանալով, այսպիսի օրինակաւ.

«Օսման՝ ողորմութեամբ միոյն Աստուծոյ և օգնականութեամբ մարգարէին իմոյ կայսր ամենայն Տաճկաց, թագաւոր ի Վերայ թագաւորաց և իշխան ի Վերայ իշխանաց, ի տանէ և ի զարմէ կարող և բարձր, յարմատոյ տնկոյն Օսմանայ յառաջնոյ, հրամանատու և տէր ամենայն ազգաց՝ Երրայեցոց, Արաբացոց, Եթովպացոց, Մակեդոնացոց, Միջագետաց Հայոց, Կիւլիկեցոց, Քանանացոց, Ամորիացոց, Պաղեստինացոց, Քաղդէացոց, և այլոց բազմաց: Հաստատութիւն և խաղաղութիւն հաւատոյն մըսուրմանայ<sup>43</sup>, զոր եղև անվախճանելի պահապան գերեզմանին Մահմէտի, ցրումն և զայթակդիչ համօրէն քրիստոնէից, հերքիչ և եղջիշ ներհակաց, ահարկու և զարհութեցուցիչ բովանդակ ազան:

«Եւ այժմ քեզ ասեմ Զիկնունդի գրուալիդ կախաց, և ամենեցուն որ ընդ քև են, զի ծանեաք զծերում անմիաբանութիւն և զանմարդութիւն ընդդէմ մեր և բարկացար յոյժ. և արդ պարաստ լիջիք, զի ահա յարուցեալ եկից ի Վերայ ծեր, և գերկիրդ յորս բնակեալ էք դուք՝ հրձիգ արարից, և գեկեղեցիսդ ծեր աւար հարից, և զանուանեալն փայտ խաչի ընդ յերկիր կործանեցից, և ի պարանց քահանայից ծերոց եղից զլուծ ծառայութեան, և զամենեսին Վարեցից ի գերութիւն ազգին իմոյ, որպէս և այլոց քրիստոնէից հասուցին նախնիքն իմ, լլ և ապա տեսից, թէ ի՞ւ կարասջիք գերծանիլ ի ծեռաց ինոց, եթէ ոչ նախն եկեալ հնազանդեսջիք ինձ»:

(39)

նրան համակեց ամբարտավանությունը, և պատրաստվեց անօրինաբար հափշտակել ուրիշների ժառանգությունը, որպեսզի լիովին իր գիրկը հավաքի այլ երկրների ժողովուրդների տարածքներ:

Այդ պատճառով քրիստոսաւէր և փառավոր Զիգմունդ Երրորդ անունով արքային առաքեց այս պատգամաբեր իրովարտակը, բայց ոչ թագավորների օրենքով ու սովորույթներով, այլ հեթանոսական զայրույթով՝ տարապանքներ և սպառնալիքներ խոստանալով, այս ծնով.

«Օսման՝ միակ Աստծու ողորմությամբ և օգնականությամբ իմ մարգարէի՝ կայսր ամենայն Տաճկաստանի, թագավորաց թագավոր և իշխանաց իշխան, գերդաստանով և զարմով կարող և բարձրաստիմիկ՝ [խերպած] Օսման Առաջինի<sup>44</sup> ծառի արմատից, հրամանատու և տեր բոլոր ազգերի՝ Եբրայեցիների, արարացիների, Եթովպացիների, մակեդոնացիների, Հայկական Միջագետքի<sup>45</sup>, Կիլիկիացիների, քանանացիների, ամորիացիների, պաղեստինցիների, քաղեցացիների<sup>46</sup> և շատ ուրիշների: Հաստատություն և խաղաղություն մուտքմանական հավատին, որը դարձավ Սահմեդի գերեզմանի անվախճան պահապանը, հանայն քրիստոնյաների ցիրուցան անողն ու գայթակղողը, ներհակների հերքորդն ու եղջողը, բովանդակ ազգերի ահարկուն ու զարինութենողը:

Եվ այժմ քեզ են ասում՝ լեհաց թագավոր Զիգմունդին, և ամենքին, ովքեր քո [իշխանության] ներք են, որ իմացանք ծեր անմիաբանությունն ու տմարդությունը մեր դեմ և հոյս բարկացանք. և արդ պատրուն են եղեք, քանզի ահա ելնելու-զալու են ծեզ վրա և այդ երկիրը, որում բնակվում եք դուք, պիտի հրի մատնեմ, ծեր եկեղեցիները՝ պարի ենթակեն և խաչափայտ կոչվածը պիտի գետին տապալեմ, ծեր քահանաների պարանցներին ծառայության լուծ պիտի դնեմ, բոլորին պիտի գերի տանեմ իմ ազգի համար, ինչպես և իմ նախնիներն ուրիշ քրիստոնյաների հետ վարկեցին, և ապա տեսնեմ, թէ ինչպես կլարդողանաք ազատվել իմ ծեռքից, եթե նախն չզաք հնազանդվեք ինձ»:

(39)

Չայլ և բազում ևս նման սոցին գրէ բանս հրաժեշտս և անպատշաճաւորս:

Չոր լուսալ հանձարեղ և մեծախորհուրդ թագաւորն Զիկմունդ՝ զարմացաւ յոյժ ընդ լրբութիւն առն այնպիսոյ, և ապա յդէ խոնարհաբար պատասխանիս առ նա, քանզի ամենայն չար խորհուրդը ի խոնարհութենէ սպառին, ըստ խրատու հարցն, և այս ոչ եթէ առ երկիւի անօրինացն, այլ զի արդար էր և երկնչէր յԱսուութոյ, վասն այն կամէր իմաստութեամբ շիջուցանել զաղտեղի խորհուրդ հպարտացեալ գոռոզին, և դադարեցուցանել զանչափ հոսնունսն արեան անպարտ և անմեղ արանց, և գրէ այսպէս.

«Ո՛վ ինքնակալ և հզօր արքայդ Օսման, ոչ է արժան մեծամեծաց և վեհազնեայ արանց զանախորժս միմեանց գրել ծանուցումն, և դու ի քումնէ գերակատար բարձրութենէր զիհա՞րդ համարձակեցար զայսպիսի անյարմարս և յանդուզս խօսել, որ ոչ էր քեզ անկ. և արդ տեղեկացիր և տես, զի բաւական է քեզ զոր զմբունեալ ունիս զայդքան մեծութիւնդ ազգաց բազմաց. և այժմ զգոյշ լեր յայտյանդիման խրոխտանացդ, և զիտեա հաւաստեաւ, զի մեք ի սնոտի սաստմանէ քումնէ ոչ զանգիտենք, միայն գերդիմունսն հարցն մերոց, զոր աւանդեալ յանձնեցին մեզ, ոչ կամիմք շփոթել վասն կարենոր իրաց անցաւորիս, և պահեմք հաստատուն մինչև ցայսօր անանցաբար. սոյնպէս և դու ի քեն ընտրեա զարժանն, ապա թէ ոչ, զոր հանդերձեալդ ես առնել՝ արա՛ վաղվաղակի. բայց զոր ինչ և գտանիցես ի մէնջ՝ զայն խնդութեամբ ընկալչիր. յայսմիետէ մեք անպարտ եմք յայդմանէ օգտի Վրդովնանցդ, արիւն ձեր ի գլուխս ձեր եղիցի»:

Ասս ԺԲ ուսանաւոր կայր պատմաբար:

(40)

46

Ուրիշ և այսպիսի ավելի շատ խոսքեր ևս գրեց՝ անթույլատրելի և անպատշաճ:

Այս լսելով՝ հանձարեղ և լայնախոր Զիգմունդ թագավորը հոյժ զարմացավ այդ մարդու լկտիության վրա, ապա համեստորեն հղեց նրան այս պատասխանը, քանզի ըստ հայրերի խրատի՝ խոնարհությունից բոլոր չար մտքերը խափանվում են, բայց սա [արեց] ոչ թե անօրենների երկյուղից, այլ քանզի արդար էր և երկնչում էր Ասուծուց, այդ պատճառով էր կամենում իմաստնությամբ շիջել հպարտացյալ գոռոզի զազրելի մտադրությունը և դադարեցնել տարապարտ ու անմեղ մարդկանց արյան անչափ հեղումը, և գրեց այսպես.

«Ո՛վ ինքնակալ և հզօր արքադ Օսման, մեծամեծերին և ազնվազարմ այրերին անվայել է միմյանց գրել անախորդ խոսքեր, բայց դու քո գերակատար բարձրությունից ինչպես համարձակվեցիր այսպիսի անպատշաճ և հանդուզս խոսքեր ասել, որը քեզ վայել չէր. արդ, իմացիր և տես, որ քեզ բավական է, որ բռնագրավել ես բազմաթիվ ազգերի այդքան հարստությունը և այժմ զգուշացիր բացահայտ խրոխտանքներից ու հաստատ իմացիր, որ մենք քո դատարկ ցատումից չենք վախենում. լոկ մեր հայրերի երդումները, որ ավանդեցին մեզ, չենք կամենում դրժել հանուն այս անցավոր չար գործերի և հար ու հաստատուն պահում ենք մինչև այսօր, այսպես էլ դու ինքոդ ընտրիր արժանին, ապա թէ ոչ, ինչ պատրաստվում ես անել, իսկույն արա, բայց ինչ էլ որ կստանաս մեզնից, խնդությամբ ընդունիր այն. սրանից հետո մենք մեղք չունենք այդ Վրդովնութիւնի համար. թող ձեր արյունը ձեր գլխին թափվի»<sup>47</sup>:

47

(40)

ՅԱՂԱԳՍ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՅ ՕՍՄԱՆԱՅ  
ԶԱՄԵՆԱՅՆ ԶՈՐՍ ԻՒՐ, ԵՒ ԳԱԼՈՅՆ ՄԻՆՉԵՒ Ի  
ԳԵՏՆ ԹՈՒՆԱՅԻ

Յայնժամ իբրև ընթերցաւ զիմաստութեամբ պատախանիսն արքային հլախաց, երկրորդ Նաբրուգողոնոսորն Օսման զայրանայ յոյժ լի տրտմագին ցամամբ առաւել քան զառաջինն, կոչէ առ ինքն զմեծամեծս և զնախարարս իւր, զպետս և զգաւառակալս, զօրս և զգօրագլուխս, զդրնապետս և զգօրականս<sup>48</sup>, և ասէ ցնոսա ցամամբ. Երբայր հանդերձեցէք ինձ այսր Վաղվարակի զամենայն սպառագինութիւնս մարտից, զի ահա կամին ելանել ի վերայ ապստամբ բնակչաց աշխարհին հլախաց, զի զամենայն զգօրութիւն նոցա խորտակեալ բարձից յերկրէ:

Իբրև լուսա զայս ոմն խորհրդականացն իւրոց, որ նախնին ամենեցուն, կոչեցեալն միլֆտի<sup>49</sup>, յառաջ մատուցեալ մեծաւ երկիւիի և ասէ. Ո՛չ լեր, ո՞վ ամենամեծ և անյարթելի կայսր. Եթէ եզիտ ծառայ քո շնորհս այսօր առաջի արքային խօսել բանս սակաւս, և արդ՝ զի՞նչ փոյթ է քոյին անկարուտ մեծութեանդ այդպիսի հակառակմունք աղմկաց և անօգուտ կորստենէ արանց մերոց և օտարաց. միթէ ո՞չ ունիս բաւականապէս ընդ լծով ծառայութեան այնչափ ազգ և ազինս. զայլս և այլ բազում բանս ողոքականս ասէր ննա. և նա ոչինչ օգնեալ այնքան խօսից առն այնորիկ, այլ խոժոռեալ զերեսս իւր անզոսներով զնա և ասէ. Ի բաց զնա յինէն, ո՞վ դու զառածեալ ալկոր, և այլ մի՛ երեւեսցիս առաջի աչաց ինոց, ապա թէ ոչ ահաւասիկ առաքեցից զքեզ ի մետաղն՝ որ ոչ ելանիցես անտի մինչև յօր մահուան քո: Եւ զնաց այրն լի տրտմութեամբ յանդիմանեալ || ի ննանէ, և յայսմետէ ոչ ևս կարէր հանարձակիլ ոք կամ իշխել յիշել ինչ վասն այնպիսի իրաց:

Ապա յետ այսորիկ արձակէ զբազումս ի դրնապանաց<sup>50</sup> և ի ծառայից իւրոց՝ բարձր իրամանաւ ի կայս և

ՕՍՄԱՆԻ ԻՐ ԲՈՒՐՈՐ ԶՈՐՔԵՐԸ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ  
ԵԿ ՄԻՆՉԵՎ ԴԱՆՈՒԲ ԳԵՏ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Այնժամ, երբ երկրորդ Նաբրուգողոնոսոր<sup>51</sup> Օսմանն ընթերցեց լեհաց արքայի իմաստուն պատասխանը, իսկստ զայրացավ՝ լի տրտմագին ցամամբ ավելի, քան առաջ, կանչեց իր մոտ իր մեծամեծերին ու նախարարներին, իշխաններին ու գավառապետներին, զորքերին ու զորապետներին, բարապաններին ու զորականներին և ցամամբ ասաց նրանց. «Գնացեք պատրաստեցեք ք ինձ համար մարտական ողջ սպառագինությունը, քանզի ահա կամենում եմ ելնել լեհաց աշխարհի ապստամբ բնակիչների վրա, որպեսզի նրանց ողջ զորությունը խորտակելով՝ վերացնեմ երկրի երեսից»:

Երբ այս լսեց նրա խորհրդականներից մեկը՝ մյուֆքի կոչվածք, որ բոլորից տարեցն էր, մեծ երկյուղով առաջ եկավ և ասաց. «Ո՞չ եղիր, ո՞վ ամենազոր և անհաղթ կայսր, եթէ քո ծառան շնորհ զուավ այսօր արքայի առջև սակավ-ինչ բաներ խոսելու. և արդ, քո կատարյալ մեծությանն ի՞նչ պետք են այդախի աղմկավի կրիվները և մեր ու օտար մարդկանց անտեղի կորուստը. մի՞թէ ծառայության լին տակ չունեն այդշափ ազգ ու ազգություններ». ուրիշ և շատ այլ թախանձական խոսքեր ասաց նրան, բայց նա այդ մարդու այդքան խոսքերից ոչ մի օգուտ չքաղեց, այլ խոժոռելով իր դեմքը՝ քամահրեց նրան և ասաց. «Հեռո՛ւ զնա ինձնից, ո՞վ դու ցնդած ալկոր, և էլ չերևաս իմ աչքին, ապա թէ ոչ, ահա կուղարկեմ քեզ բանտ, որ չելնես այնտեղից մինչև քո մահկան օրը»: Եվ այդ մարդը, հանդիմանվելով նրա կողմից, տիրապիր հեռացավ և դրանից հետո այլևս որևէ մեկը չէր կարողանում համարձակվել կամ փորձել հիշել ինչ-որ բան այդ բաների մասին:

Ապա սրանից հետո իր բարապաններից և ծառաներից շատերին սաստիկ հրամանով ուղարկեց իր ընդարձակ աշխարհի բնակավայրերը և

ի կոյս կողմանս և յոլորտս տիեզերաց Երկարաձիգ աշխարհին հիրոյ առ հեռաբնակ զօրսն իւր, քարոզել և ասել. Այս ինչ յայտնի լիցի ծեզ ամենեցուն՝ որք էքդ<sup>52</sup> առկայացեալը հնազանդութեամբ ընդ իշխանութեամբ մերոյ. Կամ եղև ինում թագաւորութեանս, զի ամենեքին փութապէս ընթացիւք յառաջեսչիք ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլիս՝ առանց ընդդիմութեան և հակառակելոյ:

Եւ ժողովեցան առ նա յաւուրսն այնոսիկ անքիւ քազութիւն ժողովրդոց յոյժ յոյժ ոչ միայն հազարապետաց և գաւառապետաց հանդերձ հեծելազունդ գինուրաց, այլ և ռամկաց և շինականաց, քաղաքականաց և գեղջկաց, որք և առհասարակ ժամանեցին անդ իբրև զմրիկի յօդոյ, կամ որպէս գերամս Ճայեկից:

Եւ իբրև ետես կատարեալ զամենայն կամս իւր Օսման, ապա հրամայէ բանալ զամենայն տունս գանձուց և գինուց, և պատրաստէ զբովանդակ կահս պատերազմաց, զգէնս և զասպարս, և բազում ջոկս ուղտուց և զոմշուց, զի կրիցեն զզարհուրեցուցիչ զէնսն՝ որ թոփ<sup>53</sup> և թֆանկը<sup>54</sup> կոչեն, և զանթիւ զանձս ոսկոյ և արծաթոյ, զկերակուրս և զընաելիս, և ո՞վ կարէ ճառել զբազութիւն զօրացն անհաւատից:

Յայնժամ յարուցեալ զայ մեծաւ զօրութեամբ և աներկիւդ դիմօք մինչև ահարկու գետոն՝ որ կոչի Թունա<sup>55</sup>, և զոր ի ճանապարհին և ի վերայ ջուրցն՝ թէ որպիսի<sup>56</sup> կամուրջս հնարեցին, այժմ Երկարել ոչ կամիմ<sup>56</sup>, այլ զայն ի ծանօթութիւն լաւագոյն մտաց քննողիցն աւշնեմ ապաստան, գիտելով զասացեալն, եթէ առաւելութիւն բանից պատերազմող է լսելեաց:

Ժայրամասերն ու անեզր ոլորտները՝ իր հեռաբնակ զորքերի մոտ՝ քարոզելու և ասելու. «Թող այս բանը հայտնի լինի ծեզ ամենքիդ, ովքեր հնազանդութամբ գտնվում եք մեր իշխանության ներքո. Իմ՝ թագավորիս կամքն է, որ ամենքդ առանց ընդդիմության և հակառակելու արագ ընթացքով շարժվեք դեպի մայրաքաղաք Կոստանդնուպոլիս»:

Եվ այդ օրերին նրա մոտ հավաքվեց մարդկանց շատ մեծ բազմություն ոչ միայն հազարապետերի ու զավառապետերի՝ հեծելազունդ զինվորներով հաներձ, այլև ռամիկների և շինականների, քաղաքաբնակների և գեղջուկների, ովքեր էլ միանգամայն ժամանեցին այս տեղ իբրև մրդիկը ողից կամ որպէս Ճայեկների երամներ:

Երբ Օսմանը տեսավ իր ողջ կամքը կատարված, հրամայեց բացել իր բոլոր զանձատներն ու զինանոցները և պատրաստեց պատերազմական բոլոր անհրաժեշտ բանները՝ և՛ զենքերն ու ասպարները, և՛ ուղտերամակներն ու գոմեշների բազմաթիվ նախիրները, որպեսզի փոխադրեն զարհուրելի զենքերը, որ թոփ ու թվանքներ են կոչում, և՛ արծաթի ու ոսկու անթիվ զանձերը, և՛ ուտելիքն ու զմագելիքը: Եվ ո՞վ կարող է նկարագրել անհավատների զորքերի բազմությունը:

Այնժամ մեծ զորությամբ և աներկյուղ տեսքով ելավ եկավ մինչև այն ահարկու գետը, որ կոչվում է Դանուր, իսկ այն, թէ ճանապարհին և գետերի վրա ինչպիսի կամուրջներ կառուցեցին, այժմ Երկարաբանել չեմ կամենում, այլ դա թողնում եմ որպէս լավագույն տեղեկություն հետաքրքրողներին՝ իմանալով այն ասացվածքը, թէ խոսքերի առատությունը թշնամի է լսելիքին:

ՅԱՂԱԳՍ ԳՆԱԼՈՅ ԶՈՐԱՎԱՐԻՆ  
ԻՆԱԽԱՑ ԽՈԹԻՆՈՒ

Իսկ բարեպաշտ արքայն Զիկմունդ՝ իբրև Ետես թէ ոչ այլագունեաց զբարս իւր անհրաւն Օսման, այլ ըստ ննանութեան ազգաց իժից և քարրից մերձեալ է ի տարածանել զմահարեր թոյնս իւր ի թիկունս անմեղաց, յայնժամ յերեսներորդ չորրորդ ամի թագաւորութեանն իւրուն, որ լեալ էր յառաջին տէրութենէն Իլխաց հազար Եօթանասուն և մի ամ, առնէ աշխարհաժողով մեծ բազմայլով և տիեզերակոյտ քրիստոնէից զահաւորաց և տոհմակալաց, տէրանց և գաւառապետաց, հոգևորականաց և մարմնականաց, հրամայողաց և հնազանդելոց, ի թագաւորանիստ քաղաքն Վարչով<sup>57</sup>, և հրամայէ բերել զնամակն Օսմանին և ընթեռնուլ ի լուր ամենեցուն, և սկսաւ խօսիլ բանս միմթարականս ի սիրտ իշխանացն, և քաջալերէ զնոսա ասելով.

«Ո՞վ տեարքդ Իլխանաց և հաւատարիմ սիրելիք իմ, այս բանք նման են Սենեքերիմայ արքային Ասորեստանեաց, զոր գրեաց երբեմն առ Եզեկիա, նախատանօք նախատել զԱստուած Կենդանին, և խոստանայր դնել պարան ի պարիսպն Երուսաղէմի և քաշել տանել ի Բաբելովն:

Եւ այժմ դուք՝ փառաւոր որդիքդ արքունի և ժառանգք հայրենեաց, յիշեցէք զգերահոչակ համբաւ գովկելի գործոց նախնեացն ծերոց, թէ որքան զօրութիւնս, քանի քաջութիւնս, քանի յաղութիւնս ընկալան ընդդէն բազմագոյն ներհակաց օտար և ընտանի թշնամեաց՝ Երբեմն ընդ Գրիծազաց<sup>58</sup> և Երբեմն Շուետաց, Երբեմն Սարակինոսաց և Երբեմն Նետողաց<sup>59</sup>, և ստացան իւրեանց անուն յաւիտենական և աճնշելի կտակ, որ մինչն ցայօր յայտնապէս փայլին անմռուանալի յիշատակաւ: || Արդ՝ նոյնպէս և դուք այսօր իբրև զորդիս հարազատս, հետևելով զիւտ բարիոք շատաց նոցին զօրացարուք Տէրամբ և մի՛ Երկնջիցիք ի բազմութենէ հեթանո-

ԼԵՀԱՑ ԶՈՐԱՎԱՐԻ  
ԽՈԹԻՆ ԳՆԱԼՈՅ ՄԱՍԻՆ

Իսկ բարեպաշտ Զիկմունդ արքան երբ տեսավ, որ այն անիրավ Օսմանը չփոխեց իր բարքը, այլ օձազգի իժերի և քարրերի<sup>60</sup> նմանությամբ մոտեցել է՝ իր մահարեր թոյնը տարածելու անմեղների թիկունըի մեջ, այնժամ իր տիրապետության Երեսունչորսերորդ տարում<sup>61</sup>, որը լեհաց թագավորության սկզբից կազմում է հազար յոթանասունմեկ տարի<sup>62</sup>, թագավորանիստ Վարչով քաղաքում բազմաշատ և տիեզերասկիյուռ քրիստոնյաների՝ զահավորների<sup>63</sup> և տոհմապետերի, իշխանների և զավառապետերի, հոգևորականների և աշխարհականների, հրամայողների և հնազանդվողների մեծ համաժողով արեց, հրամայեց բերել Օսմանի նամակը և ընթերցել ի լուր ամենքին, սկսեց խոսել միմթարական բաներ իշխանների սրտով, և քաջալերում էր նրանց՝ ասելով.

«Ո՞վ տիարը լեհաց և իմ սիրելի հավատարիմներ, այս խոսքերը նման են Ասորեստանի Սենեքերիմ արքայի [խոսքերին], որ ինչ-որ ժամանակ գրեց Եզեկիայի<sup>64</sup>, խստագոյնս նախատելու կենդանի Աստծուն, և խոստանում էր պարան դնել Երուսաղեմի պարսպին ու քարշել-տանել Բաբելոն<sup>65</sup>:

Այժմ դուք՝ արքունի փառավոր զավակներ և հայրենյաց ժառանգներ, իիշեցե՛ք ձեր նախնիների գովկելի գործերի մեծահոչակ համբավը, թէ որքան հզորություն և որչափ քաջություն ցուցաբերեցին և ինչքան հաղթանակներ տարան բազմաթիվ ներհակ արտաքին և ներքին թշնամիների դեմ, Երբեմն՝ խաչակիրների դեմ, Երբեմն՝ շվեդների<sup>66</sup>, Երբեմն՝ սարակինոսների և Երբեմն՝ թաթար-նոնդուների, և իրենց համար վաստակեցին հավիտենական անուն և անշնչելի ավանդ, որ մինչ այսօր հայտնապէս փայլում են անմռուանալի յիշատակով: Արդ, այսօր դուք նոյնպէս, որպես հարազատ զավակներ, հետևելով նրանց բարի շափուներին, զորացե՛ք Տիրոջով և մի՛ Երկնչեք հեթանու-

սաց, զի ամենեքին իբրև զկաթիլ մի ի դուլէ են, և որպէս զմէտ մի ի կշռոց՝ յաչս Տեառն, և ոչ ոք ի հողեղինաց ապահնելոց ի գօրութիւն իւր՝ կարող լիցի առնել ինչ, եթէ ոչ Աստուծով դատեալ ընտրեսցի, մանաւանդ եթէ ուխտադրուժ և պատուիրանազանց ևս իցէ. քանզի Տէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց:

Իբրև լուան զբանս զայսոսիկ ամենայն բազմութիւն զօրացն, աղաղակեցին առ հասարակ իրաքանչիւր ի նոցանէ և ասեն. «Ո՞չ լեր, թագաւոր ամյարթելի, մեք ամենեքեան պատրաստ ենք ի մեռանել վասն անուան Քրիստոսի և ի պահպանութիւն հայրենեաց մերոց և եկեղեցւոյ սրբոյ, այլ և ոչ ևս այլոց ազգաց կամ թագաւորաց կարօտիմք օժանդակութեան, մինչև ոչ նախ զփորձ առեալ ծանիցուք անգամ մի և երկուս զգօրութիւն բարբարոսացն:

Արո՞՝ եթէ կամ իցէ քում թագաւորութեանդ վեհագունոյ, առաքեսիք նախ զմեծ իշխանն մեր զեթերման Լիթասքին զկոչեցեալն Գարով Խոտքէիչ<sup>67</sup>, զի երեալ ընդ սահմանն Պուղտանաց պատրաստեսցէ մեզ տեղի ըստ պիտոյից պատերազմաց, մինչ չև եկեալ իշեն անօրէն զօրքն Տաճկաց»:

Եւ էր Խոտքէիչն այն՝ այր Ճարտար և հզոր բանիւ և արդեամբք, վայելուչ հասակաւ և գեղեցիկ պատկերօք, լցեալ ամենայն իմաստութեամբ և շնորհօքն Աստուծոյ, սնեալ և վարժեալ ի մանկութենէ ամենայն մրցական՝ արհութեամբ ամս ԾԵ, մանաւանդ ի Մոսկով և յԱվանան և ի Ֆլանտ և ի Մաճառս, որ ոչ սակաւ յաղթութիւնս մարտից ցուցանէր առաւել քաջութեամբն իւրով և ի պարտութիւն մատնէր զամենեսին:

Եւ իբրև հաճոյ թուեցաւ այս թագաւորին և ընդհանուր ժողովոյն, յայնժամ եւտուն ննա զպատիւ սպարապետութեան և հաստատեն զգօրագլուխ ի Վերայ համօրէն աշխարհին հլախաց<sup>68</sup>. և ապա եւտուն || ի ծեռսն նորա զօրս հեծելագունդ զինուորաց արս իբրև երեսուն

235p

(44)

ների բազմությունից, քանզի ամենքը Տիրոց աչքում որպէս դույլի մի կաթիլ ջուր են և որպէս կշեռքի մի մետ<sup>69</sup>, և սեփական ուժին ապավինած հողեղեններից ոչ չի կարողանա ինչ-որ բան անել, եթէ ոչ, ապա Աստուծու կողմից կապատժվի, մանավանդ եթէ ուխտադրուժ և պատվիրանազանց էլ լինի, քանզի Տէրը ամբարտավաններին հակառակ է և շնորհներ է տալիս խոնարհներին»:

Երբ զորքերի ողջ բազմությունը լսեց այս խոսքերը, նրանք բոլորը միահամուռ աղաղակեցին և սասցին. «Ո՞չ եղիր, անհա՛յթ թագավոր, մենք ամենքս պատրաստ ենք մեռնելու Քրիստոսի անվան և մեր հայրենիքի ու մեր սուրբ Եկեղեցու պահպանության համար, այլև կարիք չունենք նաև ուրիշ ազգերի և թագավորների օժանդակության, մինչև որ նախ մեկ-երկու անգամ փորձնենք իմանալ այդ բարբարոսների զորությունը»:

Արդ, եթէ թեզ՝ վեհազոյն թագավորիդ կամ է, նախ մեր մեծ իշխաննին՝ Կարող Խոտքէիչ անունով Լիտվական հետմաննին ուղարկեցեք, որ գնա Սոլդավիայի<sup>70</sup> սահմանների մոտ մեզ համար պատերազմներին հարկավոր տեղ պատրաստի, նախքան տաճիկների անօրեն զորքերը եկած լինեն»:

Այդ Խոտքէիչը ճարտար և խոսքով ու ունեցվածքով հզոր այր էր, վայելչահասակ, գեղեցկապատկեր, լի ամենայն իմաստությամբ և Աստծո շնորհներով, մանկությունից հիսունինգ տարի դաստիարակված և վարժված ամենայն մարտական ամեն մի արիությամբ, հատկապես՝ Մոսկովով<sup>71</sup>, Գերմանիայում, Ֆլանդրիայում<sup>72</sup> և Հունգարիայում: Առավելապես իր քաջությամբ նա մարտական քիչ հաղթանակներ չտարավ և պարտության մատնեց բոլորին:

Եվ երբ այս հածո թվաց թագավորին ու ընդհանուր ժողովին, այնժամ Խոտքէիչին տվեցին սպարապետության պաշտոնը և հաստատեցին լեհաց ողջ աշխարհի զորագլուխ, ապա նրա ծեռքը հանձնեցին հեծյալ զինվորների գնդերը՝ շուրջ երեսուն

(44)

հազար, որ և նա յառաջընթաց փութութեամբ եկն վաղվաղակի և եհաս յերկիրն Օլախսաց<sup>73</sup> ի գիտաքաղաքն Խորին՝ յուշիսի ժ, օրն Երեքշաբթի<sup>74</sup> [=10/20 յուլ.], և անդ գտանէ տեղիս պատշաճաւորս առ ափն գետոյն, որ Նիստ[ր]՝<sup>75</sup> կոչեն:

Եւ ապա բազմահնար հանձարիք հաստատէ գրանակն ի բարձրավանդակ և անմատչելի տեղուց, ըստ նմանութեան տէրունական առակին, որ ասէ թէ՝ «Փորեաց և խորեաց, և եղ հիմն ի Վերայ վիմի. ի յառնել հեղեղաց՝ բաղխեաց գետն զտուն և ոչ կարաց շարժել զնա, քանզի ի Վերայ վիմի հաստատեալ էր»<sup>76</sup>:

Նոյնպէս և զբերդն Խորինու ի մէջ առեալ ընդ գլուխ բանակին, այսինքն, թապորին կամ օպոզին, և մտեալ բնակէր անդ ամենայն քաջօքն, ոչ բազում աւուրս մնալով գալստեան արքային և տեառն իւրոյ:

## ԳԼՈՒԽ Ե.

ՅԱՂԱԳՍ ԳՆԱԼՈՅ ԱՐՔԱՅՈՐԴՈՅՆ Ի ԲԱՆԱԿՆ,  
ԵՒ ԿԱՍՆ ԳԱԼՍՏԵԱՆ ԽԱԶԱԽԱՑ

Բայց զի խոհեմն այն և արին քան զյոլովս ի թագաւորացն՝ քրիստոսասէր արքայն Զիկմունդ ընդ աւուրսն ընդ այնոսիկ մինչդեռ պարապէր ի հոգս այլոց հարկաւոր պիտոյից աշխարհին իւրոյ, որ և այն աղագաւ ոչ կարաց ընթանալ առժամայն, վասն որոյ նախ արձակէ անդ զիեռաբողբոջ զաւակն և զթագաժառանգ անդրանիկն իւր գրազմերանեան Վկատիլաւ<sup>77</sup> հանդերձ մեծամեծ նախարարօք և իմաստնագոյն խորհրդակցօք իւրոք, յորս էր գերազոյնն Օազանովսքի<sup>78</sup> և զարմանալին Վայիշ գլուխ Ալամանաց<sup>79</sup>, և ունէր ընդ իւր արս իբրև երկուտասան հազար<sup>80</sup>: Նաև և այլ ևս յոլովից ազատագունդ հեծելոց և հետևակակոյտ զօրաց, որք փութաշակիդ հետևամբ դիմեցին ի մայրաքաղաքն Իլով<sup>81</sup>, պնդեալք զմիմեանս արիական նախանձու, և Ճակատա-

հազար հոգի, և նա փութով առաջ խաղաց ու Երեքշաբթի օրը [=10/20 հուլ.], անմիջապէս Եկապ-հասավ Օլախսաց Երկիր՝ Խորին զյուղաքաղաք, և այնտեղ զտակ [Ճակատամարտի] հարմար տեղեր այն գետի ափին, որն անվանում են Ղնեստր:

Ապա բազմահնար հմտությամբ բանակը տեղակայց բարձր և անմատչելի տեղում, տերունական առակն նմանությամբ, որն ասում է. «Փորեց, խորացորեց և հիմքը ժայռի վրա դրեց. Երբ հեղեղները բարձրացան, գետը հորձանքով հարվածեց տանը, բայց չկարողացավ շարժել այն, քանզի քարաժայրի վրա էր կառուցված»:

Այսպէս և [նա] զիխավոր բանակի, այսինքն՝ թապորի կամ օրոգի<sup>82</sup> հետ շրջափակեց Խորինի բերդը և իր բոլոր քաջերով մտավ նստեց այնտեղ՝ մի քանի օր սպասելով իր տեր արքայի զալուստին:

## ԳԼՈՒԽ Ե

ԱՐՔԱՅՈՐԴՈՒ ԲԱՆԱԿԱՏԵՂԻՆ ԳՆԱԼՈՅ  
ԵՎ ԿԱԶԱԿՆԵՐԻ ԳԱԼՍՏԵԱՆ ՄԱՍԻՆ

Բայց որովհետև շատ թագավորներից խոհեմն ու արին՝ քրիստոսասէր Զիկմունդ արքան, այն օրերին դեռ գրադկած էր իր աշխարհի այլ անհրաժեշտ պետքերը հոգալով և դրա համար չկարողացավ անմիջապէս Ճանապարհ ընկնել, այդ պատճառով նախ իր դեռաբողբոջ զավակին և անդրանիկ թագաժառանգին՝ Երանակետ Վայիշլավին, ուղարկեց այնտեղ՝ մեծամեծ նախարաններով և ամենախորագետ խորհրդատուններով հանդերձ, որոնց մէջ էին գերազոյն Կազանովսկին և սրանչելի Վայերը՝ գերմանացիների գորագուխը. և [թագաժառանգն] իր հետ ուներ շուրջ տասներկու հազար զինվոր: Նաև ուրիշ շատ իշխանական հեծյալ զնդեր և հետևակախիտ զորքեր ևս, ովքեր փութընթաց Ճանապարհներական և դիմեցին դեպի մայրաքաղաք Լվով՝ սրտապնդելով միմյանց սխրալի վրեժխնդրությամբ և մար-

մարտ քաջութեամբ, պարունակեալ ահարկու գինուք և պարփակեալը փայլակնացայս պողոպատիկ զրահիւք, զարդարեալ || ոսկիհակազմ երիվարօք և գեղեցկայարմար մեծածախ կառօք, և այլ բազմապատիկ և երփնագունակ զանազան հանդերձիւք ըստ որակութեան ծաղկանց գարնայնոյ, մինչ զի ափշեալ հիացուցաներ զաշս տեսողաց գեղեցկազարդ վայելչութիւն արանցն. զոր և ինուն տրուա նուաստութիւնս Յոհաննէս ներգնեալ ողի անդ գոլով՝ ականատես եղէ սքանչելատեսիլ փառացն այնոցիկ:

Ապա յետ քանի մի աւուրց ել անտի և զնայր. իսկ բազմութիւն քաղաքակցացն արծակեալ զկնի մեծաւ շարժմամբ և առ հասարակ ընթանային՝ ուղարկել ըստ արժանեացն պատուով զամենօրինեալն յԱստուծոյ զարքայորդին Վկատիսլաւ. և ապա յայնմ օրէ պատուիրեն արքունական և իշխանական հրամանաւ քարոզել առ ընդիհանուր աշխարհս կախսաց, զի ամեննիմբ դադարեցուցեն զպէսպէտ ձայնս Երաժշտականաց և նուագարանաց, քնարաց և թմբկաց, տաւուից և ամենայն ազգաց արուեստականաց, մինչև վերասից ցասումն յերկրէ:

Եւ եղէ իբրև լոեաց ամենայն անպատշաճ և սնոտի խրախճանութիւնն, յայնժամ դիմեցին առ հասարակ ազգ և ազինք յիւրաքանչիւր յԵկեղեցին մեծաւ յուսով կարդալ առ Տէր և կոչել յօգնութիւն ի նեղութեան, և այնքան առաւելան ի նոյն, մինչ զի ի զիշերի և ի տունքեան ոչ դադարէին երբեք հնչունք զանգակաց, ձայնք աղաղակաց, երգ[ք] հայցուածոց, պալատանք ալորից, մատուցմունք պատարագաց, լուցմունք լապտերաց, զենմունք գուարակաց՝ ի քաղաքս, ի գեօլոս, ի վանս, յանապատս և յամենայն շէնս մինչև ի յյօր վերջոյ պատերազմին:

Իսկ արքայորդին Վկատիսլաւ յետ վեց աւուրց հասանէ ի յաստուածապահ քաղաքն մեր Կամենից<sup>83</sup>, և զիշեր մի օթևաննեցաւ ի կլայն, և ապա ի վաղին իշխան քաղաքին և ամենայն ժողովուրդն, ևս առաւել ազգս Հա-

տական քաջությամբ՝ գոտուորված ահարկու գենքերով և պարփակված պողոպատյա փայլակնացայս զրահներով, զարդարված ոսկեզարդ երիվարներով, գեղապատշաճ թանկարժեք կառքերով և այլ բազմաթիվ ու գունզգույն զանազան հագուստներով՝ զարնանային ծաղիկների տպավորությամբ, մինչև որ այդ մարդկանց գեղեցկազարդ վայելչությունն ապշեցնում-հիացնում էր տեսմողներին, և այլ սրանչելատեսիլ փառքին նաև Ես՝ անարդ Հովհաննես հետին նվաստությունս, այնտեղ գտնվելով, ականատես եղաւ:

Ապա Աստծու կողմից ամեննին օրինյալ արքայորդի Վկատիսլավը մի քանի օր հետո ելավ այնտեղից ու զնաց, և քաղաքացիների բազմությունը մեծ թափով շարժվեց նրա հետևից, և բոլորը գնում էին՝ ըստ արժանվույն պատվով ճանապարհելու [նրան]. ապա այն օրվանից արքունական և իշխանական հրամանով պատվիրեցին քարոզել լեհաց ողջ աշխարհում, որ բոլորովին դադարեցնեն Երաժշտների և նվազարանների՝ քնարների և թմբուկների, տավիղների և ամեն տեսակ գործիքների բազմապիսի ձայները, մինչև Երկրից վերանա [Աստծո] ցասումը:

Եվ երբ դադարեցին բոլոր անկարգ և դատարկ խրախճանքները, այնժամ բոլոր ազգ ու ազգությունները դիմեցին յուրաքանչյուրն իր Եկեղեցի՝ մեծ հույսով ձայնելու առ Տէր և օգնության կանչելու նեղության պահին. և այնքան շատ տրվեցին այդ քանին, որ մինչև պատերազմի վերջին օրը զիշեր ու ցերեկ երբեք չդադարեցին զանգակների դողանջները, աղաղակների ձայները, թախանձական երգերը, աղոթքների պաղատանքները, պատարագների մատուցումը, լապտերների յուցանունը, [մատաղացու] կենդանիների զոհաբերումը քաղաքներում, զյուղերում, վանքերում, անապատներում և բոլոր շեներում:

Իսկ արքայորդի Վկատիսլավը վեց օր հետո հասավ մեր աստվածապահ քաղաքը՝ Կամենից<sup>84</sup>, և մի զիշեր օթևաննեց ամրոցում<sup>85</sup>. Ապա հաջորդ օրը քաղաքի իշխանը և ողջ ժողովուրդը, առավել ևս ազգս

յոց մեծաւ պատրաստութեամբ ուղարկեցին զնա մինչև ի բերդն Խոթինու, որ կեսօրեայ ճանապարհաւ իբրև մնաց, լուաւ գօրավարն Խոտքիչ, Ել ընդ առաջ նորա ամենայն բազմութեամբ գօրօք, և յոյժ Երկիւղածութեամբ և սիրով ողջագորեալ զմիմեանս մտանեն ի բանակն || օգոստոսի ժԴ, օրն Երեքաբթի<sup>86</sup> [=14/24 օգոստ.]:

**Եւ ապա ի միում աւուր չորեքշաբաթոց** [=22 օգոստ./1 սեպտ.] զայ հասանէ գօրագլուխն Ոուսաց՝ անուանեալն Պորոտաւքա, և ընդ նմա ԽԵ հազար հեծեալս Խազախաց, որ կոչին Զափորոհցիք. և ի ճանապարհին հանդիպեալք գօրուն Թաթարաց և Տաճկաց, և արարին ընդ նոսա մեծ պատերազմունս զաւուրս ութ, մինչև սպանին զփաշայն Սիլիստրէի Հիւսէին անուն, և զայլս բազում<sup>87</sup>:

Իսկ անօրէնքն ոչինչ այսպիսի կարացին առնել, բայց միայն հազարապետի ումեմն՝ կոչեցեալ Սահայտաշնի Վէրս ուժգինս հասուցին յոտսն, և զայն առանց վնասու. և զի չորս հազար Խազախն ի սոցանէ ուղարկեալ էր գօրավարն ի հեռագյն տեղուց վասն աւարի, այնք ոչ ևս կարացին դառնալ, քանզի ի Վերայ հասեալ անօրէն ազգն Տաճկաց, և անդ կոտորեցին զնոսա առ հասարակ, զոր յետոյ ամենայն գօրքն Վրեժինդիր Եղեն ի Վերայ Պորոտաւքային, որ և զայս յիւրում տեղուց գրեցից:

## ԳԼՈՒԽ Զ.

ՅԱՂԱԳՍ ԳԱԼՍՏԵԱՆ ՕՍՄԱՆԻՆ Ի ԽՈԹԻՆ, ԵՒ ԶԿՆԻ՝ ԹԱԹԱՐ ԽԱՆԻՆ] [ԵՒ] ԽԱՆ-ԹԱՄՈՒՐԻՆ

Ապա ի հԳ աւուր օգոստոս ամսոյն [=23 օգոստ./2 սեպտ.] Եկն Եհաս ամբարիշտ արքայն Տաճկաց Օսման ի սահմանս Խոթինու, և ընդ նմա գօրք բազումք հե-

յոց մեծ պատրաստությամբ Ճանապարհեցին նրան մինչև Խոստինի բերդը: Երեքաբթի օրը [=14/24 օգոստ.], Երբ յարքայորդու հասնելուն] կեսօրյա ճանապարհ էր մնացել, զորավար Խոդկիչը տեղեկացավ, զորքերի ողջ բազմությամբ Ելավ նրան ընդառաջ, և հոյժ Երկյուղածությամբ ու սիրով միմյանց ողջագորելով՝ մտան բերդ:

Ապա հաջորդ չորեքշաբթի օրը [=22 օգոստ./1 սեպտ.] Եկավ-հասավ ռուսաց զորագլուխը՝ անունը Բորոդավկա<sup>88</sup>, և նրա հետ՝ քառասունինգ հազար կազակ հեծյալներ, որ կոչվում են զապորոցցիներ. Ճանապարհին [նրանք] հանդիպեցին թաթարների և տաճիկների զորքերի և նրանց դեմ ութ օր կատաղի մարտեր մղեցին, մինչև որ սպանեցին Սիլիստրիայի Հյուսեին անունով փաշային և ուրիշ շատերի:

Իսկ անօրեններն այսպիսի ոչ մի բան չկարողացան անել, այլ միայն Սահայդաշնի<sup>89</sup> անունով ոմն հազարապետի ոստքերին խոր վերքեր հասցրին, բայց այն՝ ոչ Վտանգավոր. և քանի որ զորավար [Բորոդավկան] կազակներից 4.000 հոգու ուղարկել էր շատ հեռու տեղ՝ ավարառության, նրանք այլևս չկարողացան վերադառնալ, քանզի տաճիկների անօրեն ազգը վրա հասավ, և նրանց այնտեղ իսպառ կոտորեցին, սակայն հետո կազակների ողջ զորքը վրեժ լուծեցին [Բորոդավկայից], բայց այս կգրեն իր տեղում:

## ԳԼՈՒԽ Զ.

ՕՍՄԱՆԻ, ԱՊԱ ԹԱԹԱՐ ԽԱՆԻ ԵՎ ԹԱՄՈՒՐ ԽԱՆԻ՝ ԽՈՏԻՆ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ապաօգոստոսամսի 23-րդ օրը [=23 օգոստ./2 սեպտ.] տաճիկների ամբարիշտ սուլթան Օսմանը Եկավ-հասավ Խոթինի սահմանները, նրա հետ՝ անթիվ-անհամար հե-

ծեալք և հետևակք անթիւ և անհամար<sup>90</sup>, որք էին առաւել քան զբազնութիւն քրիստոնէից տասնապատիկ յաւելուածովք, և իջևանեցաւ հանդէա բանակին հյախաց իբրև մղոնաւ մի հեռի, և սփրեալ տարածեցան ի վերայ երկրի ազգի ազգի վրանօք, մինչև առ հասարակ ծայրէ ի ծայր լցին գերեսս դաշտին. բերէին ընդ հրեանս և զահագնատեսիլ թոփերս երեք հարիւր համարով<sup>91</sup>. իսկ ի մէջ այնոցիկ կային չորեքտասան առաւել || մեծամեծք, որք հազիւ կարէին տանել Լ. Լ. լուծք գոնչից, և այլք փոքրագոյնք քան զմիմեանս:

Եւ եղև իբրև դադարեցին ամենայն զօրք անհաւատիցն ի բանակն իրեանց՝ նոյնժամայն սկսան հնչեցուցանել զփողուն և զթմբուկսն և զամենայն նուագարանս մարտից ի պատրաստութիւն ժողովրդոց, և այս ոչ հրամանաւ արքային իրեանց, զի եթ ոք կամեսցի՝ փորձեսց զանձն հիւ ի հանդերձեալ գործն հիւ:

Յայնժամ ելին ի Տաճկաց արք ժ՛՛, և առեալ զբազում թոփս ընդ ինքեանս զան մեծաւ բարկութեամբ ի վերայ քրիստոնէից, և սկսան հարկանել զբանակն. զայն տեսեալ զօրքն իլախաց՝ ելին ընդդէմ նոցա արք հինգ հարիւր, և հանդիպեալք մինեանց սակաւ մարտակցութեամբ, բայց ոչ կատարեալ պատերազմաւ, այլ զի տեղեկացին զորպիսութենէ աղտեղի զօրացն մահմետականաց. և զի երեկոյացեալ էր ժամն, վաղվաղակի դադարեաց գործ պատերազմին:

Արդ՝ յայսմ սկսմունս խաղալեաց յերկոցունց կողմանց, նախ ի քրիստոնէից զորաց արք քսան, իսկ անհաւատիցն երկուտասան միայն (անկան ի պատերազմին). և ապա յայնմինտէ ևս քան զևս գային և աւելուին զօրքն Տաճկաց, քանզի ի միւսում աւուր ուրբաթի [=24 օգոստ./3 սեպտ.] զայ հասանէ Խան-Գերի<sup>92</sup> խանն թաթարին, որ ունէր զօրս ՃՂՌ, և ընդ նմա ևս քան զինքն չարագոյն Խան-Թամուր մրզա նոյնպէս՝ ԶՈ արամբք,

ծյալ և հետևակ զորքեր, որոնք քրիստոնյաների զորքերից տասնապատիկ ավելի էին, դադար առավ լեհաց բանակի հանդեպ՝ մոտավորապես մեկ մղոն հեռու, և զորքերը տեսակ-տեսակ վրաններով սփրկեցին-տարածվեցին գետնին, մինչև առհասարակ ծայրեծայր լցրին ողջ դաշտը. սփրկեցին-տարածվեցին իրենց հետ բերում էին նաև թվով երեք հարյուր ահազնատեսիլ թնդանոթներ, բայց նրանց մեջ կային տասնչորս առավել մեծերը, որոնք հազիւ էին կարողանում տանել գոմեշների երեսուն-երեսուն զոյգերը, իսկ մյուս թնդանոթները մեկը մեկից ավելի փոքր էին:

Երբ անհավաստների բոլոր զորքերը դադար առան իրենց բանակատեղիում, իսկուն սկսեցին հնչեցնել փողերն ու թմբուկները և մարտական բոլոր նվազարանները, որպեսզի զորքերը պատրաստվեն. և սա՝ ոչ իրենց արքայի հրամանով, [այլ որպեսզի] ով կամենա, ստորիդ իրեն իր անելիք գործի մեջ:

Այնժամ տաճիկների կողմից ելավ 10.000 զինվոր. իրենց հետ վերցնելով բազմաթիվ թնդանոթներ՝ մեծ բարկությամբ հարձակվեցին քրիստոնյաների վրա և սկսեցին հարվածել բանակին. և այդ տեսմելով՝ լեհաց զորքերից հինգ հարյուր զինվոր ելավ նրանց դեմ, և հանդիպեցին միջյանց կարճատև թնդարումով, բայց ոչ կատարյալ ճակատամարտով, այլ որպեսզի տեղեկանան մահմետականների զարշելի զորքերի որպիսության մասին. և քանզի երեկոյացել էր, մարտը շուտափոյթ դադարեց:

Արդ, այս պատերազմի մեկնարկին երկու կողմերից էլ զոհեր եղան. նախ քրիստոնյաների զորքերից՝ քսան զինվոր, իսկ անհավաստներից՝ տասներկուսը միայն [ընկան մարտում]. ապա դրանից հետո տաճիկների զորքերն էլի ու էլի էին զալիս և ավելանում, քանզի հաջորդ՝ ուրբաթ օրը [=24 օգոստ./3 սեպտ.] եկավհասակ Խան-Գերին՝ թաթարների խանը, որն ուներ 130.000-անոց զորք, և նրա հետ՝ նրանից առավել չար միրզա Խան-Թամուրը նույնպէս՝ 80.000-անոց զորքով.

237p

և Եկեղի հջանեցան յետոյ բանակին Տաճկաց ի վերայ նոյն գետոյն, որ Նիստը կամ Թուրլա կոչեն, և տարածեալ ասպատակ ամենայն կողմանց՝ ըմբռնեցին զընթաց ճանապարհացն, զի մի՛ ոք կարասցէ տանել դարմանս քրիստոնէից, որ և զբազումս գտեալ ի ճանապարհին, որք կրէին թագաւորորդույն ռոձիկս, և Երկուս կառս մեծամեծս աւելի պարութի ի պէտս թոփից և թֆանկաց, և կալեալ զայն թաթարացն տարան պարզէ արքային հրեանց, ուստի խնդրութեամբ ընկալաւ և յոյժ շնորհակալ եղև նոցա: Յայնժամ հրամայեաց Օսմանն արուեստաւորացն հրորց, զի փութապէս հաստատեցեն կամուրջս ի վերայ գետոյն՝ վասն անցման լի զօրացն, զոր մեծաւ Ճարտարութեամբ և շտապով մինչև ցիհնգ օրն պատրաստեցին յոյժ վայելու և ամրակառոյց. և ասեն թէ այլում ժամանակի ոչ ոք կարող էր շինել զամ մի ողջոյն, թէպէտ ի փայտից էր: Ապա յետոյ ոչ բազում աւորց անցանէ անօրէն մրգան Խան-Թամուր յիսուն հազար արամբ ի յերկիրն Ելախսաց մինչև ի Լուպլին հնգետասան աւոր ճանապարհ, զբազում գաւառս և զանդաստանս խանձեալ պականեաց սրով և հրով, և բազում աւարաւ և գերութեամբ դառնայր առ Օսման:

Եւ մինչեւ անցանէր մօտ ի Կամենիցն՝ ժողովեալ բազում քաղաքակցաց և գեղջկաց, և չորս հարիւր այլ ևս Ակամանք, և ի վերայ հասեալ թաթարին՝ զակաւս կոտորեցին, և զաւարս և զգերիս բազումս ազատեալ մուժին ի քաղաքն, ընդ որ բարկացեալ անօրինացն այրեցին զշայոց Եկեղեցին, այսինքն զվանս Սրբոյ Լուսաւորչին, որ կառուցեալ կայ ոչինչ հերի ի քաղաքն, հանդերձ մերձակայ շինութեամբն. նոյնպէս և զՍուրբ Խաչին վերևն միայն, և ոչ զգմբերն<sup>93</sup>:

Ապա յայսմհետէ լսեցէք զամենայն համբաւս պատերազմաց, որք լինեին յաւուրսն յայնովիկ:

(49)

64

Եկան դիրքավորվեցին տաճիկների բանակի թիկունքին՝ նոյն գետի ավին, որը կոչում են Ղնեստը կամ Թուրլա, և ասպատակ սփուելով բոլոր կողմերում՝ փակեցին ճանապարհների երևեկը, որպեսզի ոչ ոք չկարողանա հոգ տանել քրիստոնյաներին. և ճանապարհին գտնելով շատերին, ովքեր արքայորդու համար ուտելիք էին տանում, և Երկու շատ ավելի մեծ կառքեր՝ լեցուն վարողով՝ թնդանոթների ու հրացանների համար, թաթարները, դրանք բռնազրավելով, նվեր տարան իրենց սուլթանին, որը նա խնդրութամբ ընդունեց և չափազանց շնորհակալ եղավ նրանց: Այնժամ Օսմանը հրամայեց իր արհեստավորներին, որ գետի վրա փութով կամուրջ կառուցեն՝ զորքերի անցնելու համար, և [նրանք] մեծ վարպետությամբ ու փութով մինչև հինգերորդ օրը կառուցեցին դրանք շատ հարմար և ամրակուր. և ասում են, թէ ուրիշ ժամանակ ոչ ոք չէր կարող մի ամբողջ տարում կառուցել, թեպէտ փայտից էր: Ապա ոչ շատ օրեր հետո անօրէն միրզա Խան-Թամուրը 50.000 մարդկանցով մտավ լեհաց Երկիր, մինչև Լուրդին անցավ տասնիննա օրվա ճանապարհ, բազմաթիվ զավառներն ու անդաստանները հրդեհելով՝ հրով ու սրով պականեց և մեծ ավարով ու գերիներով վերադարձավ Օսմանի մոտ:

Եվ մինչեւ անցնում էր Կամենիցի մոտով, բազմաթիվ քաղաքացիներ ու գեղջուկներ ու նաև չորս հարյուր գերմանացի, հարձակվելով թաթարների վրա, քերին կոտորեցին և ավարն ու բազմաթիվ գերիներին ազատելով՝ մտցրին քաղաք, որից բարկանալով՝ անօրեններն այրեցին հայկական Եկեղեցին, այն է՝ Ս. Լուսավորիչի վանքը, որը կառուցված էր քաղաքից ոչ հեռու, մերձակայ շինութեամբ հանդերձ, նոյն ձևով և Ս. Խաչի տանիքը միայն, բայց ոչ զգմբերը:

Ապա սրանից հետո լսեցէք բոլոր պատերազմական հրադարձությունները, որոնք տեղի ունեցան այն օրերին:

65

(49)

## ԳԼՈՒԽ Է.

ՅԱՊԱԳՍ ԳԱԼՈՅ ԶՈՐԱՑՆ ՏԱԾԿԱՑ  
Ի ԿԵՐԱՅ ԲԱՆԱԿԻՆ ԽԱԶԱԽԱՑ,  
ԵՒ ԱՄՕԹԱԼԻՑ ՂԱՌՆԱԼՈՅՆ

238ա

Իսկ յաւուր շաբաթու, օգոստոսի հե [=25 օգոստ. /4 սեպտ.], յարուցեալ զօրք բազում Տաճկաց գան մեծաւ զօրութեամբ, և արձակին ի վերայ բանակին Լեհաց, յայն կողմ, ուր Խազախսքն էին, և սկսան հարկանել ի հրաբորքոք թռփից և ի թֆանկիցն մինչև ցիրիկունն, բայց ո՞չ զոք կարացին վնասել, զի բազում զգուշութեամբ ամրացեալք էին, և զթշնամիսն ի յերկիր թաւալէին. և զի Խազախ ազգն այն շատիմաց և խորամանկ ևս են, վասն այն ոչ առժամայն || Ելին արտաքս, մինչև երեկոյացաւ օրն, և ծանծրացան թշնամիքն ի յընթանալոյ զօրն հանապազ յայս կոյս և յայն կոյս:

Իսկ յիննևաներորդ ժամն միաբանեալ զօրք Խազախացն Ելին ախոյեան, և խաչակնքեալք զդէնս իւրեանց՝ սկսան հարկանել զայլազգիսն, մինչ զի ոչ ևս կարացին ժուժկալել, այլ չոքան յետս փախստեամբ. և նոքա զիետ մտեալ կոտորէին անխնայ յոյժ, զոր անթի ասեն զանկեալ դիակունսն, որ ծածկեաց զերեսս երկրի. և զի տարաժամեալ էր օրն, դարձան մեծաւ յաղութեամբ, ժողովելով զառ և զաւար, և զերկու պատուական թոփսն քարշեալ բերէին զկնի իւրեանց. և այսպիսի զորք քաջութեան ցուցին յաւուր յայնմիկ զօրքն Խազախաց, մինչ զի ահ պատեաց զամենայն հեթանոսս, որ և թագաւորն Օսման ևս հանդերձ նախարարօրն առ յերկիւդի լեալ, ոչ սակաւ հոգայր և աւաղէր զկորուստ անչափ պատուական արանցն մահմետականաց:

Իսկ ի կիրակէի և յերկուշաբթօց աւուր [=26-27

(50)

## ԳԼՈՒԽ Է

ՏԱԾԿԱՆԵՐԻ ԶՈՐՔԵՐԻ ԿԱԶԱԿՆԵՐԻ  
ԲԱՆԱԿԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԵԿ ԱՄՈԹԱԿԱՐ  
ՓԱԽՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Շաբաթ օրը՝ [=25 օգոստ./4 սեպտ.], տաճիկների բազում զորքեր մեծ ուժով Ելան-Եկան և հարձակվեցին լեհաց բանակի վրա այն կրղմում, որտեղ կազակներն էին, և մինչև երեկո հրաբորքոք թնդանորներից ու հրացաններից սկսեցին հարվածել, սակայն ոչ որի չկարողացան վնասել, քանզի [կազակները] շատ զգուշությամբ դիրքավորվել էին և գետին էին տապալում թշնամիներին. և քանի որ այդ կազակները բանիմաց ու նաև խորամանկ ազգ են, այդ պատճառով իսկովն դուրս չելան, մինչև որ օրը երեկոյացավ, և թշնամիները հոգնեցին ամբողջ օրն այն կողմ ընթանալուց:

Իսկ ժամը 19-ին կազակների զորքերը միաբանվելով ախոյան Ելան և իրենց երեսները խաչակնքելով՝ սկսեցին հարվածել այլազգիներին, մինչև որ [սրանը] այլևս չկարողացան ստոկալ, այլ փախուստով նահանջեցին, իսկ [կազակները] հետապնդելով՝ այնքան անխճարար կոտորեցին [տաճիկներին], որ, ասում են, ընկած դիակներն անթիվ էին և ծածկեցին երկրի երեսը. և քանզի օրը տարաժամել էր, հավաքելով ավարը՝ կազակները մեծ հաղթանակով վերադարձան և երկու ընտիր թնդանոր քարշեցին-բերեցին իրենց հետևից. և այդ օրը կազակների զորքերն այսպիսի քաջազրծություն ցույց տվեցին, մինչև որ սարսակ պատեց բոլոր հեթանոսներին, և սուլթան Օսմանը ևս, նախարարներով հանդերձ վախեցած լինելով, քիչ չափաղեց ու չողբաց բարձրաստիճան մահմեդական այդերի այնչափ կորուստը:

Իսկ կիրակի և երկուշաբթի օրերին [=26-27

(50)

օգոստ./5-6 սեպտ.] ոչ ևս համարձակեցան ելանել ի մարտ, վասն զի դեռ ևս ապաշաւէին զանցեալ աւուր ահագին կոտորուածն:

Յայնժամ Օսմանն լի եղև բարկութեամբ, և տայ կոչել առ ինքն զնախիշխանն, որ Ենիշար-աղասի կոչի, և երկարի կապանօք առաքը ի բանտ, և գերկուս փաշայից՝ զմիոյն ասէ հատանել զգլուխն, և զմին աքսորէ ի պատույն, վասն զի սոքա խոստացեալ էին յառաջագոյն ի միում աւուր ջնջել և բառնալ զբանակն Լեհաց, և այժմ, ասէ, յայսքան աւուրս ոչինչ օգտիք, այլ և զբազումս ի զօրաց ինոց կորուսիք ի ծեռն անմարդի Խազախսաց<sup>94</sup>. և աստ կատարի բան մարգարէին որ ասէ թէ՝ Արտաքուստ մանկակոտորս արացէ զնոսա սուր, և ի ներքուստ շտեմարանաց նոցա, անդ է արհաւիքք ահից<sup>95</sup>:

Ապա յետ երկուց աւուրց [=28 օգոստ./7 սեպտ.] ելանէ քսան հազար արաճքը իշխանն Բարեկացոց Սուստաֆա փաշա<sup>96</sup> անուն և զայ նոյնպէս ի Վերայ Խազախսաց, բայց ի ծածուկ, զի մի՛ ոք գիտացէ, և յանկարծակի արձակեցան ի Վերայ հետևակազօրաց քրիստոնէիցն || ոք պահէին զՃանապարհն արտաքոյ դրան բանակին, մինչ զօրքն զՃաշն ուտէին արք երկու հարիւր. ոք իբրև տեսին զբազութիւն անհաւատիցն՝ դարձան ի փախուստ, և անօրէնքն զիետ մտեալ սպանին ի սոցանէ զայր ոմն պատուական, որ էր հարիւրապետ<sup>97</sup>, ընդ նման այլ ևս յիսուն, բայց [զ]ոյր ծողն կրէր՝ կենդանի ընթրնեալ տարան ընդ ինքեանս ի բանակն Տաճկաց, նոյնպէս և [զ] ծողն արին, որ թարգմանի տաճիկ լեզուաւ պայրախ<sup>98</sup>: Չայն լուեալ զօրքն Լեհաց ելին փութանակի յարտաքս, և մարտուցեալ ընդ անհաւատսն՝ փախստական արարին, կոտորելով ի նոցանէ զարս երեսուն կամ աւելի:

օգոստ./5-6 սեպտ.] [անհավատներն] այլևս չհանարձակվեցին մարտի ելնել, քանի որ դեռևս ափսոսում էին անցյալ օրվա սարսափելի կոտորածը:

Այնժամ Օսմանը լցվեց բարկությամբ և կանչել տվեց իր մոտ առաջին իշխանին, ով Ենիշար-աղասի է կոչվում, և երկարե կապանքներով ուղարկեց բանտ, իրանայեց երկու փաշաներից մեկի գլուխը կորել, իսկ մյուսին զրկեց աստիճանից, քանզի սրանք նախկինում խոստացել էին մեկ օրուն ջնջել և վերացնել լեհաց բանակը, «բայց այժմ, – ասում է, – այսքան օրերի ընթացքուն ոչ միայն օգուտ չտվեցիք, այլևս տնարդի կազակների ծեռքորվ իմ զորքերից շատերին կորսույան մատնեցիք». և այստեղ կատարվում է մարգարեի խոսքը, որն ասում է. «Դրսից նրանց մանկակոտոր կամի սուրը, իսկ ներսից՝ երկուդը»:

Ապա երկու օր հետո [=28 օգոստ./7 սեպտ.] քսան հազար զինվորով ելավ բարեկացիների իշխանը՝ Սուստաֆա փաշա անունով, և նոյնպէս շարժվեց կազակների վրա, սակայն ծածուկ, որպեսզի ոչ ոք չինանա. [նրանք] հանկարծակի հարձակվեցին քրիստոնյաների՝ երկու հարյուր հետևակազորայինների վրա, ովքեր քաղաքի դարպասից դուրս հակում էին ճանապարհը, մինչ զորքը ճաշում էր. երբ նրանք տեսան անհավատների բազմությունը, փախուստի դիմեցին, իսկ անօրենները հետապնդելով՝ նրանցից սպանեցին ոմն բարձրաստիճան զորականի, ով հարյուրապետ էր, նրա հետ՝ ուրիշ հիսուն [իորգու] ևս, իսկ ով կրում էր դրոշը, կենդանի բռնելով, իրենց հետ տարան տաճիկների բանակ, տարան նաև դրոշը, որ տաճկերեն թարգմանվում է բայրախ: Այդ լսելով՝ լեհաց զորքերը փութով ելան դուրս և անհավատների դեմ մարտի բռնվելով՝ փախուստի մատնեցին՝ կոտորելով նրանցից երեսուն կամ ավելի մարդու:

(51)

(51)

## ԳԼՈՒԽ Ը.

ՅԱՂԱԳՍ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ՊԱՐՈՒ ՇԵՆԵԱՒՄՔԻՆ,  
ԵՒ ԿՈՏՈՐԵԼՈՅ ԶԱՆԱԶԱՆ ԱԶԳԱՑՆ ՏԱՃԿԻՆ

Դարձեալ ի նմին աւուր [=28 օգոստ./7 սեպտ.] միաբանեալք անհաւատիցն, և գումարեալ անթի զօրք հեծելոց յոլովագոյն ազանց, և այլք մերկամարմինք, և հերարձակք իբրև զկանայս, և Արաբացիք, որք Եկեալ էին ի Բարելովնեւ և յեզիպտոսէ, աղաղակելով մեծածայն՝ լո՞ւ, լո՞ւ, լո՞ւ<sup>99</sup>, և այսպիսի ահարկու տեսլեամբ և լրբագոյն դիմօք ուղի անկեալ գային մինչև ի դուռն բանակին, անդ ուր փոքր զօրավարն<sup>100</sup> էր լեհաց. և ի միւս դրանէն մեծ հեթմանն<sup>101</sup> խոտքեկչ տեսեալ զգալուստ անօրինացն բարկանայ յոյժ, և կամէր մեծաւ զայրացմամբ ելանել ընդ առաջ խառնիճաղանձ ժողովոյն. իսկ գունդք զինուորացն, որք պահապանք էին դրան բանակին, իբրև տեսին զսրտմտութիւն առնն, ոչ ետուն թոյլ առժամայն ելանել ի մարտ, այլ հազի դարձուցին յետս բազուն ողոքանօք:

Յայնժամ մեծ զաշդալան Բոլոցքին<sup>102</sup> և հսկայացն լի Շենեաւարքին<sup>103</sup> իբրև երեք հազար արամքք, և հարիրապետ մի ևս ի հեթմանին զօրացն, իրամանաւ մեծ զօրաւարին<sup>104</sup> ելանեն ախոյեան մարտի, և կարգաւորեն զդասս հեծելոցն ամենայն պատրաստութեամբ ի հանդիպումն հակառակորդաց հիրեանց. և ապա ամենայն բազմութիւնք հաւատացելոցն միաբան անրացեալք, [Կնքեալ] զդէնս հիրեանց նշանաւ խաչին, կոչելով զանունն Յիսուսի յօգնութիւն՝ երեքին կրկմամբ ըստ օրինի քրիստոնէից, և միանգամայն արձակեցան մեծաւ զօրութեամբ ի Վերայ թանձրախիտ և անհուն զօրացն Խսմայէլացւոց, և հարեալ անցին ի միւս կողմն որպէս զկայծակն ընդ յեղեգսն, մինչև ոչ ումեք ունայնացան

## ԳԼՈՒԽ Ը.

ՊԱՐՈՒ ՇԵՆՅԱՎԱԿՈՒ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ԵԿ ՏԱՃԻԿ-  
ՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԱԶԳԵՐԻՆ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նոյն օրն [=28 օգոստ./7 սեպտ.] անհավատները կրկին միաբանվեցին, գումարվեցին ավելի շատ ցեղերի անթիվ հեծյալ գնդեր, նաև ուրիշ [զորքեր]. Կիսամերկ ու հերարձակ, որպէս կանայք, և արաբացիներ, ովքեր Եկել էին Բարելոնից ու Եզիպտոսից. [բոլորը] բարձրածայն աղաղակում էին՝ լո՞ւ, լո՞ւ, լո՞ւ, և այսպիսի ահավոր տեսքով ու լրբենի դեմքով ճանապարհ ընկնելով՝ Եկան մինչև քաղաքի դարպասը<sup>105</sup>, այնտեղ, որտեղ լեհաց փոքր զորավարն էր. բայց մեծ հետման խորկիչը, տեսնելով անօրենների զալուստը, հոյժ բարկացավ և մեծ զայրույթով կամենում էր մյուս դարպասից ընդառաջ Ելնել խառնիճաղանջ ամբոխին, բայց զինվորների զնդերը, որոնք քաղաքի դարպասի պահապաններն էին, երբ տեսան այդ մարդու կատաղությունը, թոյլ չտվեցին անմիջապես Ելնել մարտի, այլ մեծ աղաչանքով հազիվ հետ դարձրին:

Այնժամ ավագ բերդակալ Պոլոցկին ու հսկայագուն Շենյավսկին՝ մոտավորապես երեք հազար զինվորներով, և հետմանի զորքերից մի հայուրապետ ևս մեծ զորավարի իրամանով ախոյան Եկան դիմադիր մարտի, ամենայն պատրաստությամբ կարգավորեցին հեծյալների դասերը՝ իրենց հակառակորդներին հանդիպելու համար. և ապա հավատացյալների ողջ բազմությունը միաբան գոտեանդպելով, երեսները խաչակնքելով, Հիսուսի անունը օգնության կանչելով, ըստ քրիստոնեական կարգի՝ երեք անզամ կրկնելով՝ մեծ զորությամբ միահանուռ հարձակվեցին խմայելցիների թանձրախիտ ու անհամար զորքերի վրա և զարկեցին-անցան մյուս կողմը, որպէս կայծակը Եղեգների միջով, մինչև որ չսպառվեցին բոլորի

նիզակը ի խայթելոյ զոք. ի սպառել նիզակացն՝ գեղարդեանց դարձան առնուլ, և սկսան երկսայրի սուսերօք և փորբազոյն թֆանկօք ինքնաբորբոքօք և հրդեալ զամենեսին թօթափէին յերկիր առանց հոգուոյ. և այնքան խմբեցաւ պատերազմն, մինչ զի խառնակեալք՝ ոչ կարէր տեսանել այր զընկեր իւր:

Իսկ ամենագովելի տէրն Պերեժանու՝ պարոն Շենեասքին հեծեալ ի ծի սուր հանդերձ ընկերակցօք իւրովք, և առեալ զաջոյ թև գնդին՝ գնաց կոտորելով անխնայաբար, սկսեալ ի տասն ժամէ աւուրն մինչն ցրսան ժամն, և այնչափ բեկէր և խորտակէր զթշնամիսն, մինչն առ հասարակ լցաւ դաշտն Խոթինու սատակեալ Տաճկօք, և բազումք վիրաւորք ամկեալք ի մէջ արեանցն թաւալէին, դիզեալք յոյժ ի վերայ միմեանց իբրև զփայտ մայրեաց:

Նոյնակս և երանելի զաշդալանն Բոլոցքի, վստահացեալ ի զօրութիւն անձին իւրոյ և հետամղեալ բարկութեամբ մեծաւ, և քաջապէս մարտուցեալ դարձուցանէր զծախ թև գնդին, և ամիրայից և մեծամեծաց հատեալ զգլուխս յերկիր ընկենոյր, մինչն անկաւ ի մէջ բազմութեան հեծելոց. և մի ոմն ի զօրաց անհաւատից եհար գեղարդեամբ ի պարանոցն, զոր անցեալ ի ներքս սաղաւարտին և վէրս վնասակարս ետուր ննա. բայց ոչ առժամայն անկաւ յերկիր յերիվարէն, այլ դարձաւ անդր

239p || էն կենդանի ի բանակն:

Իբրև լուան զայս զօրք քրիստոնէիցն՝ ևս առաել զայրացեալք դարձան և կոտորեցին զամենայն զօրս անհաւատիցն, մինչն դարձան ի փախուստ, և հազիւ թէ ի հազարաց տասն զերծան. և ապա ժողովեալ զամենայն աւարս այլազգեացն՝ դարձան մեծաւ յաղթութեամբ:

Արդ՝ յայս մեծ և առաջին պատերազմին անկեան ի

նիզակները մարդկանց խոցելուց. նիզակներն սպառկելուց հետո դարձան-գեղարդներ վերցրին, ապա սկսեցին [կրվել] երկսայրի սուսերներով ու ինքնավառ փոքրիկ հրացաններով և բոլորին այրելով՝ անկենդան գետին էին տապալում. և պատերազմողներն այնքան կուտակվեցին, մինչն որ խոնված՝ մարդ չէր կարողանում տեսնել իր ընկերոջը:

Իսկ Բերեժանի<sup>106</sup> ամենագովելի տերը՝ պարոն Շենյավսկին, մի սրընթաց ծի հեծած, իր ընկերներով հանդերձ վերցնելով զորագնդի աջ թևը, անխնա կոտորելով առաջ զնաց՝ սկսած ցերեկվա ժամը 10-ից մինչն ժամը 20-ը, և այնքան զարդեց ու փշրեց թշնամիներին, մինչն խոտինի դաշտն առհասարակ լցվեց սպանված տաճիկներով. և բազմաթիվ վիրավորներ, արյան մեջ ընկած, թափալվում էին՝ խիտ առ խիտ դիզված իրար վրա, որպես անտառի փայտ:

Վստահ լինելով իր ուժին՝ ավագ բերդակալ երանելի Պոլոցկին նույնակես, [թշնամուն] բարկությամբ հետ մղելով և քաջարար մարտնչելով, հետ դարձրեց զորագնդի ձախ թևը և կորելով ամիրաների ու մեծամեծերի գլուխներ՝ գետին նետեց, մինչն որ ընկավ հեծյալների բազմության մեջ, և անհավատների զորքերից ինչ-որ մեկը նրա պարանոցին հարվածեց գեղարդով, որն անցավ սաղավարտից ներս և վտանգավոր վերքեր հասցրեց նրան, բայց նա երիվարից անմիջապես գետին չընկավ, այլ կենդանի վերադարձավ բանակ:

Երբ քրիստոնյաների զորքերն այս լսեցին, ավելի ևս զայրանալով՝ ետ դարձան և կոտորեցին անհավատների ողջ զորքերին, մինչն որ [նրանք] փախուստի դիմեցին, և հազար մարդուց հազիկ տասն ազատվեց. ապա ժողովելով այլազգիների ողջ ավարը՝ մեծ հաղթանակով հետ դարձան:

Արդ, այս մեծ և առաջին մարտում լեհաց զորքերից

գօրացն հլախաց ոչ բազումք, այլ երկու այր ի զինուրաց<sup>107</sup>, և երկուտասանք ի զինուրացն ծառայից<sup>108</sup>. բայց ի հերմանին գօրացն գծողն առին. նոյնպէս և բարեյադր տէրն Բոլոցքի յետ հինգ աւուր աւանդէ զինագին արիական մահուամբ ի փառս Քրիստոսի, խառնելով զարիւնն իւր ընդ արեան մարտիրոսացն, զի և պակացն նոցին ժառանգակից եղիցի, ամէն:

Իսկ ի կողմանէ անօրինացն անթիւ բազմութիւնք սատակեցան, զոր ի զիշերին այնմիկ եկեալ անհաւատիցն լուցեալ լապտերօք ժողովէին զինակունսն կոտորելոցն զիսաւրաց և ծանօթականացն, և առեալ տանէին, և մնացեալքն անկեալ կային կերակուր գէշ թռչնոց երկնից և ամենայն գազանաց երկրի:

Այս եղև ի ծեռն նոյն Մուստաֆա փաշային՝ զոր վերագոյն յիշեցաք, ի ԻՇ օգոստոսի, Երեքշաբթի օրն [=28 օգոստ./7 սեպտ.]:

#### ԳԼՈՒԽ Թ.

ՅԱՂԱԳՍ ԵԼԱՆԵԼՈՅ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՈՐԱՑ  
ՀԱՒՏԱՑԵԼՈՅՆ Ի ՃԱԿԱՏ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ, ԵՒ  
ՏԱՃԿԱՑ ՈՐ ՈՉ ԻՇԽԵՑԻՆ ԵԼԱՆԵԼ ԱՄԵՆԵՒԻՆ

Յայնժամ ի չորեքշաբթի աւուր օգոստոսի [=29 օգոստ./8 սեպտ.] ամենայն զօրք Քրիստոնէիցն պատրաստեցան մեծաւ զգուշութեամբ խոստովանելով և հաղորդելով, և ի մինեանց զթողութիւն հայցելով. և ապա միահաղոյն ելին արտաքս վաղվաղակի, և բազում ճարտարութեամբ հանդերձեցին զգունդ հեծելոցն դասս դասս, լի նոյնպէս և զիտևակազօրսն ըստ պատշաճի պիտոյից պատերազմացն, և մնային յերկար գալստեան հակառակորդացն:

Իսկ զօրք անհաւատիցն հայցեալ ի վերայ զարհութեցուցիչ և ահարկու ազանց Լեհացն, որք միահամուռ կապուտազգեստ և երկնագունակ, երկարապատ

ընկան ոչ շատերը, այլ երկու հոգի զինվորներից և տասներկուսը՝ զինվորների ծառաներից, սակայն հետմանի զորքերից առան դրոշը, ինչպէս և մեծահաղթ տէր Պոլոցկին հինգ օր հետո քաջի մահով ավանդեց հոգին ի փառս Քրիստոսի՝ իր արյունը խառնելով մարտիրոսների արյանը, որպեսզի և նրանց պսակին ժառանգակից լինի. ամեն:

Իսկ անօրենների կողմից անթիվ մարդիկ սպանվեցին, և այդ զիշեր անհավատները զալով՝ վառվող լապտերներով հավաքեցին սպանված մեծավորների ու ծանօթների դիակները և վերցրին-տարան, իսկ մյուսներն ընկած մնացին կեր երկնքի թռչուններին և երկրային բոլոր զագաններին:

Այս կատարվեց [=28 օգոստ./7 սեպտ.] Երեքշաբթի օրը, նոյն Մուստաֆա փաշայի ծեռքով, որին ավելի վերը հիշեցինք:

#### ԳԼՈՒԽ Թ

ՀԱՎԱՏԱՑՅԱՆՆԵՐԻ ՈՂՋ ԶՈՐՔԵՐԻ՝ ՃԱՎԱՏԱՍԱՐԻ  
ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԵԿ ՏԱԺԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ  
ԱՄԵՆԵՎԿԻՆ ԶՀԱՄԱՐՁԱԿԵՑԻՆ ԴՈՒՐՍ ԳԱԼ

Այնժամ օգոստոսի չորեքշաբթի օրը [=29 օգոստ./8 սեպտ.] քրիստոնյաների ողջ զորքերը, խոստովանություն առնելով, հաղորդվելով և մինյանցից թռղություն հայցելով, մեծ զգուշությամբ պատրաստվեցին և ապա միահամուռ իսկույն ելան դուրս և մեծ վարպետությամբ հեծյալների գունդ դաս-դաս կազմեցին, նոյն ծնով՝ նաև հետևակազորայիններին՝ Ճակատամարտի պահանջներին համապատասխան, և երկար սպասում էին հակառակորդների զալուն:

Բայց երբ անհավատների զորքերը նայեցին լեհաց զարհութելի և ահարկու զարմերին, որոնք միահամուռ կապույտ և երկնագուն համազեստներով երկարյա

պողոպատիկ գրահիւք հաստատեալ կային ի դիմի՝ որպէս զիեառն անդրդուելի կամ իբրև զպարհսապ ամրակառոյց, յանժամ պակուցեալը ամենեթին ընթռնեցան լլահ և երկիւղ, և ոչ համարձակեցան ելանել ի մարտ, այլ բերեալ զմեծամեծ թոփսն ի մէջ անտառախիտ ծառոց, և անտի թաւալիին (գրումբսն) ի վերայ քրիստոնէից, և բարձր ձայնի աղաղակէին՝ Արիք ընդ առաջ. զոր տեսեալ քրիստոնէից զանվաւեր գործս նոցա, թոյլ ետուն ի տեղիս իրեանց. նոյնակս և նոքա արարին:

Յայս աւուր ի բանակն Տաճկաց գրեցին չորս հազար Ենիշարի, քանզի յոյժ պակասեալ էր զօրք հետևակացն:

Ի հինգշաբթի օր [=30 օգոստ./9 սեպտ.] դարձեալ զօրք քրիստոնէիցն ի Ճակատամարտին հանդերձեցան, և թշնամիքն ոչ կամեցան ելանել ամենկին որպէս և յերէկն. բայց սակաւք ի Թաթարաց անցեալ յետս Խորին, և խորհեցան նենգաւ հարկանել, իսկ քրիստոնէից ունէին յարաջագոյն դարանակալս ի պահեստի յեկեղեցին Խորինու՝ նոյնակս հարիւր այր հետևակ, որք ի վերայ հասեալ ընթռնեցին ի նոցանէ երեք Թաթար կենդանի և բերին առ հեթանոն, և զորքանս սատակեցին սրով, և մնացեալքն փախեան անմխթար:

Ուրբաթ և շաբաթ [=31 օգոստ.-1 սեպտ./10-11 սեպտ.] նոյնակս Եկին այլազգիքն ի վերայ Խազախաց չորս և կամ հինգ անգամ, և ոչինչ օգտեալք դարձան յետս ամօթով:

Իսկ ի կիրակէի աւուրն [=2/12 սեպտ.] շարժեցան ամենայն զօրութեամբ բազմութիւն անհաւատիցն, և Եկեալ շուրջանակի պաշարեցին զբոլոր բանակն քրիստոնէից իբրև զամապ Խորնացեալ, և որպէս զվիժանս հոսմանց փրկեալ յալեաց, և այնքան առաւել՝

և պողպատյա գրահներով հաստատուն կանգնած էին իրենց դեմ որպէս անշարժ լեռ կամ իբրև ամրակուռ պարհսապ, այնժամ բոլորն ահ ու սարսակի մեջ ընկան, և չհամարձակվեցին Ելնել մարտի, այլ ամենամեծ թնդանորները բերեցին ծառախիտ անտառի մեջ և այնտեղից ռումբեր էին տեղում քրիստոնյաների վրա ու բարձրածայն աղաղակում՝ ընդառաջ Ելեք. քրիստոնյաները, տեսնելով նրանց անընդունելի արարքները, թողեցին իրենց դիրքերը, նոյն կերպ վարկեցին նաև [մրանք]:

Այդ օրը տաճիկների բանակ զինվորագրեցին 4.000 Ենիշերի, քանզի հետևակների զորքը հոյս նվազել էր:

Հինգշաբթի օրը [=30 օգոստ./9 սեպտ.] քրիստոնյաների զորքերը դարձյալ Ելան մարտի, բայց թշնամիներն ամենկին չկամեցան Ելնել, ինչպէս որ նախորդ օրը, բայց թաթարներից քչերը, ամցնելով Խոտինի քիկունքը, խորհեցին նենգությամբ հարվածել, բայց քրիստոնյաները Խոտինի Եկեղեցում՝ թաքստոցի մեջ, նախապէս թաքցրել էին դարանակալների, ինչպէս նաև հարյուր հետևակ զինվորի, ովքեր վրա հասնելով՝ թաթարներից երեք հոգու կենդանի բռնեցին և բերեցին հետմանի մոտ, մի քանիսին սպանեցին սրով, իսկ մյուս մերը հուսակտուր փախսան:

Ալլազգիներն ուրբաթ և շաբաթ օրերին [=31 օգոստ.-1 սեպտ./10-11 սեպտ.] նոյնակս չորս կամ հինգ անգամ հարձակվեցին կազակների վրա, բայց ոչինչ չշահելով՝ ամոթով հետ դարձան:

Սակայն կիրակի օրը [=2/12 սեպտ.] անհավատների բազմությունն ամենայն զորությամբ շարժվեց և Եկալ շուրջանակի պաշարեց քրիստոնյաների ողջ բանակը իբրև մթագնած ամպ և որպէս ալիքներից փրկված հոսանքի վիժանք, և այնքան բազմաքանակ [էին],

մինչ զի ոչ ամենակին երևիր դաշտն և ոչ լերինքն, և յամենայն կողմանց եղեալ զահագին թոփսն սկսան հարկանել լլ անդադար, զոր ասեն թէ ի ամին աւուր թաւալեցին զթոփս աւելի քան գերկու հազար անգամ, բայց ի զուր և ընդ վայր, զի ոչ զոք վնասել կարէին երբեք: Նոյնպէս և քրիստոնեայքն ի ներքուստ հարեալ զթոփս և զթաքանկս կործանէին յերկիր զբազումս ի նոցանէ, և ունանք ելանէին արտաքս ի նիզակակիր զօրաց և հետեւակացն և պատերազմէին ընդ բարբարոսս մինչև յերեկոյն, ուստի ծանրացեալք թշնամնացն գնացին թրտնութեամբ:

Ի ամին աւուր զօրքն խազախաց զմեծ զօրապետն իրեանց աքսորեցին ի պատուոյն, և ի տեղի նորա կացուցանեն զայր ոմն քաջ և պատերազմող՝ որ կոչիր Սահայտաչնի, որ յառաջն հազարապետ էր նոցա. և այս այնր աղազաւ դատեցին, զի ի զալն իրեանց ի խորիմ՝ ուղարկեալ էր չորս հազար խազախ<sup>109</sup> ի յերկիրն Պուղտանաց վասն ազահութեան, որ կորեան անդ անօգուտ առանց գիտութեան ընկերացն, որպէս և յառաջն ասացաք. և յետ երկու շաբաթի գլխատեցին զՊորոտաքա<sup>110</sup> ի բանակն իրեանց:

#### ԳԼՈՒԽ Ժ.

**ՅԱՂԱԳՍ ԳԱԼՍՏԵԱՆ ԴԵՍՊԱՆԱՑ ՏԱՃԿԱՑ  
ՎԱՍՆ ՀԱՇՈՒԹԵԱՆ, ԵՒ ԿՈՐՍՏԵԱՆ  
ԽԱՐԱԽԱԾ ՓԱՇԱՅԻՆ**

Երկուշաբթի աւուրն [=3/13 սեպտ.] գայ ոմն հրեշտակութեամբ ի կողմանէն Տաճկաց Կոստանդին անուն՝ որդի Պատիստայի, և մտեալ առ բարեհոգի զօրավարն Խոտքէիչ, և երկիր պագեալ նմա սկսաւ խօսել յաղազ հաշտութեան և սիրոյ, և ասէ եթէ առաքեսցիք և դուք դեսպանս առ պարոնն Պուղտանայ Ռատուլն, զի և նա անդ գոլով հանապազ ընդ վեզիրն և ընդ նախա-

որ դաշտն ու լեռներն ամենակին չէին երևում. և բոլոր կողմերից ահազին թնդանոթները տեղադրելով՝ սկսեցին անդադար հարվածել, և ասում են, թէ այդ օրն ավելի քան երկու հազար անգամ արկեր արձակեցին, բայց իզուր և ապարդյուն, քանզի բնավ չկարողացան որևէ մեկին վնասել: Քրիստոնյաները նոյնացն, [թերդի] ներսից թնդանոթներից և հրացաններից հարվածելով, գետին տապալեցին նրանցից շատերին, իսկ նիզակակիր զինվորներից ու հետևակայիններից ոմանք ելան դուրս և կրվում էին բարբարոսների դեմ մինչև երեկո, ուստի թշնամիները հոգնելով՝ տրտնությամբ հեռացան:

Այդ օրը կազակների զորքերն աստիճանից զրկեցին իրենց մեծ զորապետին՝ Բորոդավկային, և նրա փոխարեն կարգեցին ոմն քաջ և պատերազմող մարդու, որի անունը Սահայդաչնի<sup>111</sup> էր, ով առաջ նրանց հազարապետն էր: Եվ սա այն պատճառով վճռեցին, քանի որ, ինչպես նախորդ ասացինք, երբ իրենք զալիս էին Խոտքին, [Բարդավկան] ազահության պատճառով 4.000 կազակ ուղարկեց Բողդանաց երկիր՝ [թալանի], ովքեր տարապարտ կորան այնտեղ առանց ընկերների գիտության. երկու շաբաթ հետո իրենց բանակում գլխատեցին Բորոդավկային:

#### ԳԼՈՒԽ Ժ

**ՀԱՇՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՃԻԿՆԵՐԻ  
ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ԳԱԼՈՒ ԵՎ ԿԱՐԱԿԱԾ  
ՓԱԾԱՅԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ**

Երկուշաբթի օրը [=3/13 սեպտ.] տաճիկների կողմից Կոստանդին անունով մեկը՝ Բատիստայի որդին, եկավ բանակցության, և մտնելով բարեհոգի զօրավար Խոտքէիչի մոտ ու խոնարհվելով նրան՝ սկսեց խոսել հաշտության և բարեկամության մասին. ասաց. «Դուք ևս դեսպաններ ուղարկեցեք Բողդանի պարոն Ռադովի մոտ, քանի որ նա նոյնացն, վեզիրի և նախա-

րարս՝ միշտ ջանայ գխաղաղութիւն հաստատել յերկոցունց կողմանց:

Իսկ ամենագովելի հերմանն թէպէտ ոչ ուներ ի 241ա թագաւորէն || իւրմէ հրաման հաշտութեան, այլ խորհուրդ արարեալ ընդ արքայորդույն և ընդ մեծամեծս և ընդ բանին Պուտսանայ՝ ընտրեն ի միջի իւրեանց ի դեսպանութիւն զոմն ի զինուորաց, որում անունն էր ժելենսքի. և ապա ի միւսում աւուր [=4/14 սեպտ.] ուղարկեն զպատգամաւոր այրն [ընդ որդույն] Պատիստային ի բանակն Տաճկաց, և այլ ոչ ինչ լուան պատասխանիս<sup>112</sup>:

Եւ այս վասն այն, զի յաւուր չորեքշաբաթօջն [=5/15 սեպտ.] եկն եհաս փաշայն Պուտինու Քարաքաշ անուն<sup>113</sup>, որ ուներ ընդ իւր չորս հազար արս քաջ պատերազմողս, որ եկեալ համբուրէր զոտս Օսմանին, և ասէր. Ողջ լեռ, արքայ անյաղեթի, ես այսօր ոչ ձաշակեցից ի սեղանոյ տեառն ի մին՝ մինչև նախ երթեալ բնաջինջ արարից զթշնամիս քո, և զին՞չ է այս նոր սքանչելիս քոյոյ թագաւորութեանդ, որ այսքան աւուրս ոչ կարացիք բառնալ զսակաւարնակ բանակս կավուրաց<sup>114</sup>:

Զայս լուեալ անօրէնն Օսման, Վաղվաղակի մոռանայ գխոստումն խաղաղութեան՝ պատճառաւ գոռոզ առն այնմիկ, և զի գիտէր զնա յառաջագոյն այր համարձակ և բարեբախտ ի մարտս, վասն որոյ հրամայէ տալ նմա պարզևս մեծամեծս, և հանդերձս ուկենկարս, և ընդ նմա վեց հազար հեծեալս Անատոլիցիս, և հինգ հազար հետևակ ենիշարիս, և երկոտասան հազար Ռումելիցիս<sup>115</sup>, որ միահոդոյն և լինին քսան և եօթն հազար արք ընտիրք և պատուականագոյնք, և ասէ. Երթայք և օգնեսցեն ձեզ Մահմէտն և Ալին:

Յայնժամ անօրէնն Խարախաշ հրամայէ հնչեցուացնել գփողսն, և զամենայն նուագարանսն պատերազմաց, և ի ժամ ձաշուն սկսան ամենայն բազմութիւնք անհաւատից գոչել՝ Ալլահ, ալլահ. և դիմեցին միաբան

րարների հետ այնտեղ գտնվելով, միշտ ջանում է խաղաղություն հաստատել երկու կողմերի միջև:

Եվ թեպետ ամենագովելի հետմանն իր թագավորի կողմից հաշտության մասին հրաման չուներ, բայց խորհրդակցելով արքայորդու, մեծամեծերի և Բողդանի պանի հետ՝ իրենց միջից դեսպանության համար ընտրեցին զորականներից մեկին, որի անունն էր ժելենսկի, և ապա մյուս օրը [=4/14 սեպտ.] պատզամավոր զորականին Բատիստայի որդու ետ ուղարկեցին տաճիկների բանակը, և այլս ոչ մի պատասխան չլսեցին:

Եվ սա այն պատճառով, քանզի չորեքշաբթի օրը [=5/15 սեպտ.] եկավ-հասավ Բուլինի<sup>116</sup> փաշան՝ Կարակաչ անունով, որն իր հետ ուներ չորս հազար քաջամարտիկներ. նա եկավ համբուրեց Օսմանի ոտքերը և ասաց. «Ո՞ղ Եղիր, անհա՞ղթ արքա, ես այսօր քո՝ իմ տիրոց սեղանից չեմ ձաշակի, մինչև նախ զգնամ բնաջինջ անեմ քո թշնամիներին. և թեզ՝ թագավորի համար այս ի՞նչ զարմանալի նորություն է, որ այսքան օրեր չկարողացաք վերացնել անհավատների սակավամարդ բանակը»:

Այս լսելով՝ անօրէն Օսմանն այդ գոռոզ մարդու պատճառով իսկույն մոռացավ խաղաղության խոստումը. և քանզի կանխապես նրան որպես մարտերում համարձակ և բարեբախտ մարդ գիտէր, այդ պատճառով իրամայեց տալ նրան մեծամեծ պարզևներ, ուկեզարդ հանդերձներ և նրա հետ՝ վեց հազար հեծյալ անատոլիացի, հինգ հազար հետևակ ենիշերի և տասներկու հազար ռումելիցի, որ միասին անուն է քսանյոթ հազար ընտիր և պատվականագոյն մարդ, և ասաց. «Գնացե՞ք, և թող ձեզ օգնեն Սուհամեդն ու Ալին<sup>117</sup>»:

Այնժամ անօրէն Կարակաչը հրամայեց փչել փողերն ու պատերազմական բոլոր նվազարանները, և ձաշի ժամին անհավատների ողջ բազմությունն սկսեց գոչել՝ Ալլահ, Ալլահ, և միահամուռ դիմեց

ի Վերայ քրիստոնէից դառն սպառնալեօք և բուռն գորութեամբ, զոր այժմ տկարանամ ի պատմել լսողացդ զարսափելի սաստիցն գտնսիլ՝ մանաւանդ գոռումն և ձայթումն հրաբոր || բոք թաւալմանց թովից և թֆանկաց, փայլատակմունք վաղակաւոր սուսերաց և զինուց, խինջիւն և որոտմունք ահեղակոխ Երիվարաց, մինչ զի թնդայր և դղոդէր [առ] հասարակ դաշտն և լերինք ամենայն. այսպիսի յաղորդ զօրութեամբ ևս քան զևս գային և յաւելուին, և զմինեանս յորդորէին ի գործն հեծեալք և հետևակը, և ի մահ Եղեալ զանձինս իւրեանց՝ անկանէին ի Վերայ դրան բանակին մեծաւ ջանի, և այնչափ, մինչ զի մերձ Եղեն ի մտանել, զոր տեսեալ քրիստոնէից յուսահատեցան բազումք ի փրկութենէ:

Իսկ զօրավար ոմն Վայիր անուն գլուխն Ալանացն զօրաց՝ հասանէ ի տեղին այնմիկ չորս հազար թֆանկաւոր արամբ, ընդ նմա և ամենայն զօրք Ելախաց գումարեցան վաղվաղակի բոլորապատ ի Վերայ խանտակին<sup>118</sup>. Վասն որոյ առեալ լյօգնութիւն զԱստուած և զամենայն սուրբս, մեծաւ յուսով և հաւատով կազմեցան ի պատերազմ, և այնչափ զդէմ Եղեալ ձակատէին ընդ այլազգիսն, մինչև գրազումս ի նոցանէ կոտորեցին, և մնացեալքն դարձան ի փախուստ: Եւ մինչդեռ փախչէին անօրէնքն, ոմն Ալանան այր ձարտար և սովոր, Վերացուցեալ զթֆանկն և էզարկ զուն փաշային, զոր ի սաստկութենէ վիրացն զարկաւ զգեստնի, և Երիվարն անկեալ սատակեցաւ: Ապա մի ոմն ի զօրաց իւրոց մատուցանէ նմա այլ Երիվար՝ զի հեծեալ փախչից: Եւ իբրև էաւ ողորմելիին Խարախսաշ զծին և կամէր Ելանելի ի Վերայ նորա, յայնժամ միւս ևս Ալանան ուղեալ զթֆանկն նոյնպէս և Եհար գիրացեալ կապարն ի սիրտ անհաւատին, և նոյնժամայն անկեալ յԵրկիր փշեաց զդառնացեալ հոգին ի ձեռն սատանայի:

Զայն տեսեալ զօրացն՝ կապեցին չուան ի սատակ

241p

քրիստոնյաների վրա ծանր սպառնալիքներով ու կատաղի զորությամբ. այժմ դժվարանում եմ լսողների պատմել [այդ] հոյժ սարսափելի տեսարանը, մանավանդ թնդանոթների և հրացանների հրաբորորք կրակոցների թնդյունն ու ձայթյունը, մերկ սուսերների և զենքերի փայլատակումները, ահեղատրովի Երիվարների խրխինջն ու դրվյունը, մինչև որ թնդում և դրդում էին ամբողջ դաշտն ու բոլոր լեռները. այսպիսի հաղթական զորությամբ [տաճիկները] նորից ու նորից էին զալիս և ավելանում, և հեծյալներն ու հետևակները միմյանց քաջակերում-դրդում էին [մարտական] զործողությունների և իրենց կյանքը մահվան վտանգելով՝ մեծ ջանքով հարձակվեցին բերդի դարպասի վրա և այնքան, մինչև որ գրեթե մտնում էին ներս, որը տեսնելով՝ քրիստոնյաներից շատերը հոյսները կտրեցին փրկվելուց:

Իսկ Վայեր անունով մի զորավար՝ գերմանացիների զորագուխը, չորս հազար հրացանակիր զինվորներով հասավ այնտեղ, նրա հետ նաև լեհաց ողջ զորքերն իսկույն բոլորապատ գումարվեցին խանդակի վրա. այդ պատճառով օգնական ունենալով Աստծուն ու բոլոր սրբերին՝ մեծ հոյսով ու հավատով պատրաստվեցին մարտի և դիմադարձ կանգնելով այնքան ձակատեցին այլազգիների դեմ, մինչև որ նրանցից շատերին կոտորեցին, իսկ մնացածները փախուստի դիմեցին: Եվ մինչդեռ անօրենները փախչում էին, ոմն գերմանացի տղամարդ՝ ձարտար և վարժ, հրացանը բարձրացրեց ու զարկեց փաշայի ոստին, և նա վերքերի սաստկությունից գետին զարկեց, իսկ Երիվարն ընկնելով՝ սատկեց: Ապա փաշայի զինվորներից մեկը նրան ուրիշ Երիվար մոտեցրեց, որպեսզի հեծնելով՝ փախչի: Բայց երբ ողորմելի Կարակաշը ձին վերցրեց և կամենում էր Ելնել նրա վրա, այնժամ մեկ այլ գերմանացի ևս հրացանն ուղեց դեպի նա, հրացյալ կապարը զարկեց անհավատի սրտին, և նա, իսկույն գետին տապակվելով, փշեց սատանայի ծեռքով դառնացած հոգին:

Այդ տեսնելով՝ զորքերը պարանով կապեցին անկենդա

(58)

(58)

մարմինն, և քարշէին զկնի իրեանց իբրև նետընկէցս երեք, և ապա դադարեցին սակաւ մի ի մէջ անտառին, մինչև բերեալ զկառան, և բարձեալ տարան ամօթալից դիմօք ի բանակն իրեանց. նոյնպէս և զայլ կոտորելոցն 242w զնարմինսն կարա || ցին տանել. և քրիստոնեայքն արծակեալք զկնի՝ առին զամենայն աւարս նոցա, և դարձան բազում ուրախութեամբ գոհանալով զտեանէ, որ լլայնպիսի հզօր թշնամուն ապրեցոյց զնոսա յաւուրն յայնմիկ:

Եւ իբրև լուաւ զայս անօրէն արքայն Օսման՝ ի խոր խոցեցաւ, և ոգրոց հանեալ վշտալից ողբով լայր դառնապէս ի վերայ այնպիսի կոտորածին, մանաւանդ զկոչեալն Քարաքաջ, որ զամենայն յոյս ի նմա էր եղեալ, այնպէս և զամենայն ընտիր և զպատուական հեծեալսն Պունայու և զԱնատոլու, որ ի կորուստ եղեն ի ձեռն Լեհաց. այսպէս ամենայն զօրքն աւաղէին, և զմիմեանց զկորուստն ողբային:

Արդ՝ լլայս մեծ պատերազմին անկան ի քրիստոնէից արք եօթն, և ի կողմանէ անհաւատից՝ երեք հազար<sup>119</sup>, և քան զնոյն երեքին աւելի վիրաւորեալք եղեն, որք յետոյ մի մի սատակէին ի բանակն իրեանց, և ամեներին որ կորեան՝ նախնիք և հզօրագոյնքն էին հեծելոցն: Բայց այս ամենայն եղև ի ձեռն Մաճառ հետևակազօրի միոյ, որ փախեաւ ի քրիստոնէից, և երթեալ միաբանեցաւ ընդ անհաւատսն. և նա առեալ գայր զանուանեալն Խարախաշ ասելով թէ յայս նիշ տեղուց բանակն Լեհաց անպատրաստ է ի զինուց, և ոչ գոն պահապանք յայն կողմն, և խանտակն յոյժ ցած է, ուստի դիւրաւ կարող ես գտանել զնոսա, որպէս և էրն իսկ: Բայց զխորհուրդն զոր կամեցան, խափանեաց Տէր, վասն որոյ ըմբռնեալ զպերախստ այրն այն և սրախողիսող արարեալ բարձին որպէս զամբարիշտ յերկոր ասելով. Դու եղեր պատճառ կորսուեան այսքան զօրուն մըսըլմանայ:

(59)

մարմինը և շուրջ երեք նետընկէց [տարածություն] քարշ տվեցին իրենց հետևից, ապա մի փոքր դադար առան անտառում, մինչև կառքը բերեցին, և ամորերես վերցրին տարան իրենց բանակը. նոյն ձևով և ուրիշ սպանվածների մարմինները կարողացան տանել. իսկ քրիստոնյաները, նրանց հետևից հարձակվելով, վերցրին նրանց ողջ ավարը և մեծ ուրախությամբ վերադարձան՝ գոհանալով Տիրոջից, որ այդ օրն իրենց փրկեց այդպիսի հզօր թշնամուց:

Երբ անօրեն սովորան Օսմանն այս լսեց, խորապես խոցվեց և հառաչելով վշտալից ողբով դառնապես լայիս էր այդպիսի կոտորածի համար, մանավանդ Կարակաչ կոչվածին [Եր ողբում], քանի որ իր ողջ հովսը դրել էր նրա վրա, այդպես էլ՝ Բունիայի և Անատոլիայի բոլոր ընտիր և պատվական հեծյալներին, ովքեր կորսույան մատնվեցին լեհաց կողմից. այսպես բոլոր զորքերն ավաղում էին և միմյանց կորուստը ողբու:

Արդ, այս խոշոր ճակատանարտում քրիստոնյաներից ընկավ յոթ մարդ, իսկ անհավատների բանակից՝ երեք հազար մարդ, բայց դրանց եռապատիկ ավելի [զինվորներ] վիրավորվեցին, ովքեր հետո մեկը մեկի հետևից մեռան իրենց բանակում. և ամենը, ովքեր սպանվեցին, իին և հզօրագոյն հեծյալներն էին: Բայց այս ամենը կատարվեց մի հունգար հետևակազորայինի ձեռքով, որը փախավ քրիստոնյաների մոտից, զնաց միացավ անհավատներին և Կարակաչ կոչվածին վերցրեց-եկավ՝ ասելով. «Այս կետում լեհաց բանակը ապահովված չէ զենքերով, այն կողմում պահապաններ չկան, և խանդակը շատ խոր չէ, ուստի հեշտությամբ կարող ես հաղթել նրանց», ինչպես որ հենց կար: Բայց այն մտադրությունը, որը կամենում էին [իրականացնել], Տէրը խափանեց, որի պատճառով [անօրենները] բռնեցին այդ ապերախստ մարդուն և սրախողիսող ասելով վերացրին աշխարհի երեսից որպես ամբարշտի ասելով. «Դու եղար մուսուլմանների այսքան գորք կորսույան պատճառը»:

(59)

## ԳԼՈՒԽ ԺԱ

ՅԱՂԱԳՍ ԽԱԶԱԽԱՑՆ ԵՒ ՎԱՍՆ ՄԱՀՈՒԱՆ  
ՀԵԹՄԱՆԻՆ, ԵՒ ԱՐՁԱԿԵԼՈՅՆ ՏԱՃԿԱՑ  
ԶԴԵՍՊԱՆՆ ՔՐԻՍՏՈՆԵՒՅՑ

242p Ո ԽԱԿ ի հինգշաբթի աւուրն [=13/23 սեպտ.]  
աստուածատր զօրավարն Խոտքեկչ հրամայէ Խազախս  
հեծելոցն, որ յայս կոյս ջրոյն բանակեալ էին, զի անց-  
ցեն զգեստն և եկեսցեն յայն կողմն, ուր մեծ բանակն էր  
հիախաց. և ըստ հրամանի նորա ելեալք ի գիշերի հա-  
զար երկու [Խարիլը]<sup>120</sup> այր, և կամէին անցանել գմուռ-  
լայն, բայց ի խելս կամրջացն ունէին ի պահեստի երկու  
հազար Տաճիկը, որք անհոգս եղեալ ննջէին, յորս էր  
մին Ղարահիսար փաշասի, և միւսն Ալի փաշա<sup>121</sup>. զայն  
տեսեալ Խազախացն, և գաղտաբար անկան ի Վերայ  
և կոտորեցին զամենեսին ի մէջ վրանացն, մինչ զի ոչ  
ոք ի նոցանէ ապրեցաւ, բայց միայն զարապն փաշային  
կենդանի բերեալ պարզես արքայորդույն, և զամենայն  
աւարս բաժանեցին ի միջի հրեանց<sup>122</sup>:

Չոր լուեալ Օսման լի եղև սրտմտութեամբ և բար-  
կուրեամբ, և հրամայեաց զօրաց իւրոց, զի ի վաղին [=14/24 սեպտ.] ամենայն զօրութեամբ արձակեսցին  
ի Վերայ քրիստոնէից, և առաւել յայն կողմն, ուր Խա-  
զախքն էին. որք բազմաշխատութեամբ և ջանի մինչև  
• երեկոյ ոչ դադարէին ի մարտնչելոյ, և երկու անգամ  
ընթացան մինչև երեկոյ դրան բանակին հանդերձ թո-  
փիւքն, զոր եկեալ թաւալէին, և դարնային վաղվաղակի  
գալստեամբ:

ԽԱԿ զօրք Լեհաց և Խազախացն Ելանէին ի բանակէն  
հետևակ և ճակատէին ընդ նոսա, մինչև սպանին գերկու  
ծողակիրս նոցա, և զգլուխիսն և զծողսն բերեալ թա-  
գաւորորդույն, և ընկալան պարզես ի նմանէ, և մնա-  
ցեալքն փախչէին արագ արագ որպէս յերեկն և յեռանդն:

(60)

## ԳԼՈՒԽ ԺԱ

ԿԱԶԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵԿ ՀԵՏՄԱՆԻ ՄԱՀԿԱՆ  
ՈՒ ՏԱՃԻԿՆԵՐԻ՝ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻ  
ԴԵՍՊԱՆԻՆ ՀԵՏ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հինգշաբթի օրը [=13/23 սեպտ.] աստվածատր  
զորավար Խոտքեկչը կազակ հեծյալներին,  
ովքեր ջրի այս ափին էին բանակել, որ անցնեն զետք և  
զան այնտեղ, որտեղ լեհաց մեծ բանակն էր. և ըստ նրա  
հրամանի՝ հազար երկու հարյուր մարդ գիշերով ելավ և  
կամենում էր անցնել Ղնեստորը<sup>123</sup>, սակայն անօրենները  
կամրջախելին՝ դարանում, թաքցրել էին 2.000 տաճիկ,  
ովքեր, սակայն, անհոգ քնած էին, որոնց մեջ մեկը  
Կարահիսարի<sup>124</sup> փաշան էր, մյուսը՝ Ալի փաշան. կա-  
զակները տեսան այդ, զաղտնաբար վրա ընկան և բո-  
լորին կոտորեցին վրանների մեջ, մինչև որ նրանցից  
ոչ չփրկվեց, բայց միայն արար փաշային կենդանի  
բերեցին արքայորդուն որպէս պարզես և ամբողջ աւարը  
բաժանեցին միմյանց միջև:

Այս լսելով՝ Օսմանը լցվեց սրտմտությամբ ու բար-  
կությամբ, իր զորքերին հրամայեց, որ հաջորդ օրը  
[=14/24 սեպտ.] ամբողջ զորությամբ հարձակվեն քրիս-  
տոնյանների վրա, առավելապես դեպի այն կողմը, որտեղ  
կազակներն էին. նրանք մեծ ծիգ ու ջանքով մինչ երեկո  
չդադարեցին մարտնչելուց և այդ ընթացքում երկու ան-  
գամ մոտեցան քաղաքի դարպասին՝ թնդանորներով  
հանդերձ, որոնցից զալիս-կրակում և անմիջապես հետ  
էին դարնում:

ԽԱԿ լեհաց և կազակների զորքերը հետիոտն ելան  
բերդից և ճակատեցին նրանց դեմ, մինչև որ սպանեցին  
նրանց երկու դրոշակիրներին, և գլուխներն ու դրոշներն  
արքայորդուն բերելով՝ նրանից պարզես ստացան,  
իսկ մնացածներն արագ-արագ փախան, ինչպես որ  
երեկ և նրա նախորդ օրը:

(60)

243w

Իսկ ի շաբաթի օր սեպտեմբերի [=15/25 սեպտ.] ամենագովելի և աստուածահածոյ զօրավարն Գարուլ Խոտքիչ հանգեաւ ի Քրիստոս բնական մահուամբ<sup>125</sup>, և Եթող սուզ մեծ ամենեցուն, վասն որոյ արքայածինն իշխան Վկատիսլաւ, և բովանդակ զօրքն և զօրագլուխք յոյժ աշխարէին զնա կսկծալից ողբով, որ լյայնափսի Վշտալից և դառնաշատ ժամանակին կանխաժաման մահուամբ բաժանեցաւ ի լի փոփոխական կենցաղոյ յանմահ և յանվաղձան կեանս, որոյ Քրիստոս Աստուած փառաւորեսցէ զիոգի նորա ընդ սրբոց իշխանացն, և զմեղաց թողութիւն պարզեսցէ զգիտութեան և զանգիտութեան:

Ի սմին աւուր դարձեալ եկին ի Վերայ Խազախաց բազում մեծամեծ թոփիւք, և ոչինչ կարացին առնել: Յայսմ աւուր ի բանակն Տաճկաց գրեցին Ենիշերութեան զարս տասն և չորս հազար հանեալ ի դրանէն արքունի:

Եւ ի կիւրակէի աւուր Վերացման սուրբ Խաչին [=16/26 սեպտ.] ասէ խոնթիքարն անցուցանել զգեստն ԺՇ մեծագոյն թոփսն, և լյայս կողմանէ ջրոյն հարկանել զբանակն, նոյնպէս և ի միւս կողմանէն, սկսեալք յառաւուտէն նինչն ցերենկոյ, և ոչ կարացին առաւել վնասել, բայց և եթ երկու ծառայից<sup>126</sup> և չորս ծիոց. նոյնպէս և ի միւս կողմանէն ոչ ինչ օգտեալք՝ դարձան անմիտար ամենակին:

Ապա յետ այսորիկ [=17/27 սեպտ.] արձակեն Տաճիկը գրեսապանն մեր զբան ժելինսքին, նոյնպէս և զՊատիստային որդին, որ յառաջն էր Եկեալ. ուստի բերեալ ծանուցին փոքր զօրավարին ստարոստա Սենտոմիրսքին<sup>127</sup> զամենայն պատասխանիս Տաճկաց՝ ըստ հրամայեցելոցն նոցին, զոր կալեալ զՊատիստային [որդին] Եղին ի պահեստի զգուշութեամբ զաւուրս երկու, վասն զի մի՝ տեղեկասի և ծանուսցէ անօրինաց զնահ մեծ զօրավարին, մինչ ինքն խորհուրդ առնից ընդ թա-

Սեպտեմբերի շաբաթ օրը [=15/25 սեպտ.] ամենագովելի և աստվածահածոյ Կարուլ Խոդկիչը հոգին ի Քրիստոս ավանդեց բնական մահով և ամենքին խորը սուզ պատճառով արքայածին իշխան Վկադիսլավը և բովանդակ զորքն ու զորագլուխները շատ սգացին նրան կսկծալի ողբով, որ այդպիսի Վշտալից և դառնաշատ ժամանակ վաղաժամ մահով բաժանեց փոփոխական կյանքից դեպի աննահ և անվախճան կյանք. թող Քրիստոս Աստվածը փառավորի նրա հոգին սուրբ իշխանների հետ և զիտակցած ու զգիտակցած մեղքերին թողություն պարզի:

Այդ օրը թուրքերը բազում մեծամեծ թնդանորներով դարձալ հարծակվեցին կազակների վրա, բայց ոչինչ չկարողացան անել: Նույն օրը, արքունի զորքերից հանելով, տաճիկների բանակ Ենիշերության զինվորացեցին տասնչորս հազար մարդու:

Կիրակի՞ Սուրբ Խաչի Վերացման օրը<sup>128</sup> [=16/26 սեպտ.], կոնդիգարը<sup>129</sup> հրամայեց տասնութ ամենամեծ թնդանորներն անցկացնել գետը և գետի այս ափից հարվածել բանակին, նոյն ձևով՝ նաև մյուս ափից՝ սկսած առավոտից մինչև Երեկոյ, բայց չկարողացան ավելի վնաս պատճառել՝ բացի միայն Երկու ծառայից և չորս ծիոց. նոյն ձևով նաև մյուս ափից ոչինչ չշահելով՝ լիովին անմիտար հեռացան:

Ապա սրամից հետո [=17/27 սեպտ.] տաճիկները հետ ուղարկեցին մեր դեսպանին՝ պան Ժելինսկուն, և Բատիստայի որդուն նույնպէս, ով նախկինում եկել էր [իհաշտության համար]. նրանք տաճիկների ողջ պատասխանը բերին-ծանուցեցին փոքր զորավարին<sup>130</sup>՝ ստարոստա<sup>131</sup> Սանդոմիրսկուն՝ ըստ տաճիկների պատվիրածի. [ապա լեհերը] Բատիստայի որդուն երկու օր զգուշավորությամբ վերցրին որդին հակողության տակ, որպեսզի նա չտեղեկանա և անօրեններին հաղորդի մեծ զորավարի մահը, մինչև [փոքր զորավարն] ինքը խորհրդակցի ար-

գաւորորդույն, թէ որպիսի օրինակաւ ուղարկեցեն զեկեալ դեսպանն ի Տաճկաց:

Դարձեալ ի սմին աւուր ամօրէն արքայն Օսման աքսորէ ի պատույն զմեծ վեզիրն իւր, և զենիչարադասին նոյնպէս ըննենու ի փառացն, պատճառս տալով նոցա, թէ դուք անշնահաւոր<sup>132</sup> և անբաղդ ոմանք էք, վասն այն ոչինչ օգտեցայք այսքան ժամանակս, և ի տեղի նոցին զայլ ոմանս (կացուցանէ), գիտացեալ թէ այլքն յաջողդք և հզօրագոյնք լինելոց իցեն, մոռանալով զասացեալն՝ Եթէ ոչ Տէր շինէ զսունն, ի նանիր վաստակին շինողք նորա<sup>133</sup>:

243թ ||

## ԳԼՈՒԽ ԺԲ.

### ՅԱՂԱԳՍ ՄԵԾ ԵՒ ԱՀԱԳԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՏԱՃԿԱՑ ԸՆԴ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՆ

Ապա յաւուր երեքաբարոց [=18/28 սեպտ.] հրամայէ Օսման բարձր քարոզել աղաղակաւ ի մէջ բանակին առ ամենայն զօրս իւր, զի յայն աւուր ամենեքեան ի միասին ի մեծամեծաց մինչև ցփոքունս պատրաստ լինիցին ի պատերազմ, և եթէ իցէ ոք որ ընդդիմասցի հրամանին՝ կորուսցէ զկեանս իւր:

Յայնժամ մեծաւ զգուշութեամբ հանդերձեցին ամենայն զօրավարքն և զօրագլուխքն գրովանդակ հեծեալքն՝ և զետուակազօրոս՝ որպէս զՏաճկիս, նոյնպէս զՊողտանցիս, զՄինթացիս<sup>134</sup>, և զՌումելցիս, զՊոսմացիս, և զԱնատոլցիս, և զԹաթարս, և զամենայն ազգս, որք եկեալ էին ի հեռաստանէ, մինչ զի ոչ ոք մնաց ի բանակն, բայց միայն ընդ իւր երկու հազար մերձաւոր սոլաքս<sup>135</sup> և չորս հազար ենիշարիս, և նոյնչափ տապարակիրս, որք են պալթաձիք<sup>136</sup>. և զայլ ամենայն զօրս իւր խաղացոյց հանդերձ փերօքն ի վերայ քրիստոնէից ասելով թէ՝ Զոր ինչ լինելոց է եղիցի այսօր, կա՛մ կո-

քայորդու հետ, թէ ինչ ծևով հետ ուղարկեն տաճիկների մոտից եկած դեսպանին:

Դարձալ սույն օրը անօրեն սուլթան Օսմանը պաշտոնանկ արեց իր մեծ վեզիրին և ենիշար-ալասուն<sup>137</sup> նոյնպէս զրկեց աստիճաններից՝ պատճառաբանելով նրանց. «Դուք ձախորդություն բերող և անբախտ ոմանք եք, այդ պատճառով ոչ մի օգուտ չտվեցիք այսքան ժամանակ». և նրանց փոխարեն ուրիշներին նշանակեց՝ կարծելով, թէ ուրիշները հաջողակ և ավելի զորեղ կլինեն, մոռանալով ասացվածքը. «Եթէ տունը Տերը չի կառուցում, իզուր են չարչարվում այն կառուցողները»:

## ԳԼՈՒԽ ԺԲ

### ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԴԵՍ ՏԱՃԻԿՆԵՐԻ ՄԵԾ ԵՎ ՍԱՐՍԱՓԵԼԻ ՍԱՐԻ ՍԱՍԻՆ

Ապա երեքաբրի օրը [=18/28 սեպտ.] Օսմանը հրամայեց բանակի մեջ իր բոլոր զորքերին բարձրածայն քարոզ կարդալ, որ այդ օրն ամենքը՝ մեծամեծերից մինչև վորքերը, միասին պատրաստ լինեն մարտի, և եթէ լինի մեկը, ով ընդդիմանա հրամանին, կզրկի իր կյանքից:

Այնժամ բոլոր հրամանատարներն ու զորագլուխները մեծ զգուշությամբ պատրաստեցին ողջ հեծալներին և հետուակազորայիններին՝ ինչպէս տաճիկներին, այնպէս էլ բողդանցիններին, մինթացիններին, ռումելցիններին, բուսնիացիններին, անատոլիացիններին, թաթարներին և բոլոր ազգերին, ովքեր եկել էին հեռուներից, մինչև որ ոչ ոք չմնաց բանակում՝ բացի միայն իրեն ուղեկցող երկու հազար մերձավոր թիկնապահներից, չորս հազար ենիշերինց և նոյնքան տապարակիրներից, որոնք բալթացիններն են, իսկ իր մյուս բոլոր զորքերը փղերով հանդերձ շարժեց քրիստոնյաների վրա՝ ասելով. «Ինչ որ լինելու է, թող լինի այսօր. կա՛մ կը-

(62)

տորիցէք զթշնամիս մեր, կա՞մ ամենեքին կորնչիցիք միահաղոյն. և ապա ասէ անցուցանել զգետն քառասուն թոփս մեծամեծս, և լլայնն կողմանեն ևս հարկանել զբանակն, զոր առժամայն կատարեցին. և ընդ թոփերացն անցին չորս փաշայք՝ չորս հազար արամբ<sup>138</sup>, և եղին անդ զգրասի հրեանց, և արքն որք ընդ նոսա պատրաստ կային ի վերայ Երիվարաց. նոյնակս և հինգ հարիւր Ենիշարիք առ ակն գետոյն պահէին, և ոչ տային թոյլ քրիստոնէից իջանել ի ջուրն: Եւ այսպէս ոմանք յայսմ կողմանէ և ոմանք յայնն կողմանէ ջրոյն՝ սկսան յառաջին ժամէ աւուրս մինչև ցյետին ժամն հարկանել զբանակն քրիստոնէից. և յայսմ աւուր ինն անգամ, մեծաւ ջանի դիմեցին || ի նարտ, մինչ զի բազումք յանհաւատից ելին ի վերայ խանտակի բանակի դրանն և կամէին անկանել ի ներքս:

Իսկ քրիստոնեայքն անտուստ հարեալ ծակուտկէին զնոսա ազգի ազգի սուսերօք, զոր սատակեալ անկանէին ի խանտակն. բայց այժմ ոչ միայն կամաւ հրեանց պատերազմէին այլազգիքն որպէս յայլ աւուրս, այլ զի յետոյ կացեալ հարիւրապետաց և հազարապետաց՝ մերկ սուսերաւ և ռմբաւ վարէին գեղկելի զօրսն յոչ կամաց ի վերայ քրիստոնէից:

Եւ ինքն Օսման ել ի վերայ բարձրագոյն բլրի միոց առ յետոյ Խորինին՝ որ կոչի Հորոտիչէ, և առաջի իր երկու փիղս, և ի վերայ փղացն արք չորք փողահարք և երգեցիկք, և ազգի ազգի նուազարանք, զի ուրախացնուցեն զնա, և ակներև տեսանէր զմարտակցութիւն զօրաց իւրոց: Յայնժամ մատեան առ նա խարուսիկք և դաւաճանք, աւետիս ետուն ննա և ասեն, թէ՝ Ուրախ լեր, արքայ, զի ահաւասիկ մերձ ենք ի կործանել զթշնամիս

տորեք մեր թշնամիներին, կա՞մ ամենքդ միանգամից կլորչէք». ապա հրամայեց քառասուն մեծամեծ թնդանոթներ անցկացնել գետը և այն ակից նոյնակս հարվածել [քրիստոնյաների] բանակին, որն անմիջապես կատարեցին. և թնդանոթների հետ անցան չորս փաշաներ՝ չորս հազար զինվորներով, և տեղադրեցին այնտեղ իրենց թնդանոթները. իսկ զինվորները, որ նրանց հետ պատրաստ կային ծիերի վրա, ինչպէս նաև հինգ հարյուր Ենիշերիներ պահպանում էին գետեզրը և թոյլ չին տալիս քրիստոնյաներին իջնել դեպի գետը: Եվ այսպէս ոմանք գետի այս, ոմանք այն ակից օրվա առաջին ժամից մինչև Վերջին ժամն սկսեցին հարվածել քրիստոնյաների բանակին. և այդ օրը ինն անգամ մեծ ջանքերով դիմեցին նարտի, մինչև որ անհավատներից շատերը ելան քաղաքադրան խանդակի վրա և կամենում էին ներս սողոսկել:

Իսկ քրիստոնյաներն այնտեղից տեսակ-տեսակ սուսերներով հարվածում-խոցուում էին նրանց, որոնք սպանվելով՝ ընկնում էին խանդակի մեջ. միայն թե այլազգիներն այժմ ոչ թե իրենց կամքով էին կրվում, ինչպէս մյուս օրերին, այլ որովհետև նրանց թիկունքին կանգնած հարյուրապետերն ու հազարապետերը մերկ սուսերով ու ռումբով եղկելի զորքերին, հակառակ [նրանց] կամքին, քշում էին քրիստոնյաների վրա:

Ինքն Օսմանը ևս բարձրացավ մի շատ բարձր բլրի վրա՝ Խոտինի թիկունքին մոտ, որ կոչվում է Հորոդիչէ<sup>139</sup>, և նրա առջև՝ երկու փիղ, իսկ փղերի վրա՝ չորս փղահար և երգիչ մարդիկ ու տեսակ-տեսակ նվազարաններ, որպեսզի ուրախացնեն նրան, և [նա] պարզ տեսնում էր իր զորքերի դիմամարտությունը: Այնժամ նրան մոտեցան ստախոսներ ու դաշտաններ, ավետիս տվեցին նրան և ասում են. «Ուրախացի՛՛, արքա՛, քանզի ահավասիկ մոտ ենք քո թշնամիների կործանմանը»,

քո. և ոմանք թէ՝ Զորդի թագաւորին հարաք թոփիւ ի մէջ բանակին, և զվրանս և զամենայն կահս նոցա նան-րեալ խորտակեցաք. բայց սուտ և ընդ վայր ել:

Իբրև տեսին քրիստոնեայքն եթէ առաւել համար-ձակութեամբ յարեան ի վերայ այլազգիքն, յայնժամ բերեալ զբովանդակ թոփսն, և լցին զամենեսին բազմա-դիմի անօրիւք երկաթեղինօք, զոր պատրաստեալ ու-նէին յառաջազգոյն, և արձակեցին միանգամայն ի վերայ անհաւատիցն, որ մանրեալ զամենեսին հոսեաց ընդ յոլով մասունս, և այնչափ երկարեցաւ գործն մարտի, մինչև առ հասարակ լցաւ արեամբ և դիակամբ մեռե-լոց բոլոր բանակն և դաշտն ամենայն. իսկ մնացեալքն սկսան փաշիլ ըստ սովորութեան հիրեանց, և իբրև զշունս մի ըստ միոյ՝ թօթափելով և զգէնսն. և ապա դարձու-ցին զթոփսն ի մի կողմն, և ուղղեալ ճարտարութեամբ գերկուսն միայն և այնպէս հարին զթոփապետն<sup>140</sup> Տաձ-կաց, որ լլերկուս հերձավ, և փաշայիցն զվրանն նոյնպէս բնաջինց արարին բազում արամբք:

Չոր տեսեալ անհաւատիցն՝ վաղվաղակի սկսան  
244p լծել || զսայլսն յորոց վերայ թոփն էին, և զվրանսն փութապէս ժողովեալ փախեան և նոքա էս անօրա-լից դիմօք, ոչինչ օգտեալք ոչ յայսմ կողմանէ և ոչ յայսմ. ընդ որ յոյժ վիրաւորեալ Օսման, և տարակուս-եալ ի ծանր սգոյն՝ յուսահատեալ ամենակմբ, և ի լլ անհնարին տրտոնութեանն նստեալ լայր զբեկումն իւր, յորում ունայնացաւ ի բազում արիական զօրաց: Ապա յայսմիետ ոչ ևս համարձակեցան ելանել ի մարտ, այլ հնազանդեալ ակամայ կամօք ստուգապէս կամեցան զիստաղութիւնն հաստատել:

Արդ՝ լլայս մեծ և վերջին պատերազմին անկաւ ի զօրաց հաւատացելոց, նախ ոմն պատուական Մածառ հազարապետն<sup>143</sup> մի, որում անուն Ֆեքեթի կոչիր, և

իսկ ոմանք էլ. «Թագավորի որդուն բերդի մեջ հար-վածեցինք թնդանոթով և նրանց վրաններն ու ողջ կա-հավորանքը ջաղորուիշուր արեցինք», բայց սուտ և ի դերն ելավ:

Երբ քրիստոնյաները տեսան, որ այլազգիներն առավել համարձակությամբ են հարձակվում իրենց վրա, այնժամ բերեցին բոլոր թնդանոթները և բոլորը լցրին բազմատեսակ երկարե անորեներով, որ նախօրոք պատրաստել էին, և միանգամից արձակեցին անհա-վատների վրա. [Կրակը], այդ ամենը մանրելով, դուրս սկրեց բազմաթիվ կտորներով. մարտն այնքան եր-կարեց, մինչև որ առ հասարակ ողջ բանակն ու ամբողջ դաշտը լցվեցին արյամբ և մեռյաների դիակմներով, իսկ մնացածներն, ըստ իրենց սովորության, մեկը մեկի հետևից սկսեցին փախչել որպես շներ՝ թողնելով նաև թնդանոթները. ապա [քրիստոնյաները] թնդանոթները մի կողմ քարշեցին, վարպետորեն ուղղեցին միայն եր-կուսը և այնպէս զարկեցին տաճիկների թնդանոթապե-տին, որ կիսվեց երկու մասի, ոչնցացրին նաև փաշ-ների վրանը՝ բազմաթիվ մարդկանցով հանդերձ:

Այս տեսնելով՝ անհավատներն իսկուն սկսեցին լծել սայլերը, որոնց վրա թնդանոթներն էին, և վրաննե-րը փութով հավաքելով՝ ամորթահար փախան՝ ոչինչ չշահելով ոչ այս և ոչ այն ափից. այս բանից հոյժ վի-րավորվելով և ծանր սգից տարակուսելով՝ Օսմանն ամենակի հուսահատվեց և անսահման տրտոնության մեջ նստել լալիս էր իր բեկումը, որտեղ զրկվեց բազմաթիվ արի զինվորներից: Ապա սրանից հետո այլս չհամ-արձակվեցին մարտի ելնել, այլ կամա թէ ակամա ան-սպիռ՝ իրապէս կամեցան խաղաղություն հաստատել:

Արդ, այս մեծ և վերջին ճակատամարտում հավա-տացյալների զորքերից ընկան նախ մի բարձրաստիճան այր՝ հունգար հազարապետը, որի անունը Ֆեքետի էր

ինքն էր այր հմուտ ամենայն պատերազմական արիութեանց. ընդ սմին այլ ևս արք քան և ուրեն, որք կատարեցան սրով յաւուր յայնմիկ, իսկ ի կողմանէ անհաւատից՝ անբաւ և անահմար, բայց ըստ կարծեաց և ըստ ննանութեան թուեցին այսքան՝ ի հետևակաց ԴՌ<sup>142</sup>, և ի հեծելոց ԳՌ, և ի Պուլտանցոց և ի Մինթացոց ԶՌ<sup>143</sup>, և վիրաւորեալք ի սրոյ և ի թոփից՝ աելի քան տասն հազար<sup>144</sup>, որ բարձեալ սայլիւք կրէին ի բանակն իրեանց, և զատօկեալ ծանօթսն և զգիխաւորսն միայն առնուին, և զմնացեալսն զորս արկանէին ի գետն և զորս թառէին անդ, և զորս թողուին ի մէջ դաշտին կերակուր շանց և զազանաց:

Եւ գիտել պարտ է, զի ոչ միայն սուսերօք և զինուք լինէր կորուստ անօրինացն, այլ մանաւանդ աներևոյթ աջովն Աստուծոյ հանապազ հարեալք և եղծեալք և կործանեալք լինէին:

#### ԳԼՈՒԽ ԺԳ.

ՅԱՂԱԳՍ ԱՐԶԱԿԵԼՈՅ ԶՂԵՍՊԱՆՆ ՏԱՃԿԱՑ, ԵՒ  
ԸՆԴ ՆՍՍ ՅՂԵՆ ԶԻՒՐԵԱՆՑ ՂԵՍՊԱՆՆ

245ա || Յետ այսորիկ ի բանակէն հիախաց արձակեն ի չորեցաբթի աւուրս [=19/29 սեպտ.] զպատգամաբեր այրն որ եկեալն էր ի Տաճկաց՝ զորդի Պատիստային, և ընդ ննա առաքեն զդեսպանս քրիստոնէից զգաշղալան . քան Պլզզեցքին և զվոյվոչիչ Լուպելսքին<sup>145</sup>, քան և հինգ արամբք բայց ի զօրաց Լեհացն զնացին ուղարկել զդեսպանսն երկու հարիւր հեծեալք, արք ընտիրք և պատուականք, զարդարեալ ազգի ազգի Ճոխութեամբ և վայելչաւտեսիլ զազանամորթ Վերարկուրօք, այլ և հանդերձ իշխանաց և բազում մեծամեծաց, մինչ զի ինքն զօրավարն ևս ստարոստա Սենտոնիրսքին<sup>146</sup> յանծանօթս լեալ գնայր զիւտ նոցա մինչև որ մերձ եղեն ի բանակն Տաճկաց:

Յայնժամ ի կողմանէ Տաճկացն իբրև տեսին զզա-

(նա ինքը պատերազմական բոլոր սիրազդրություններին հմուտ այր էր), նրա հետ՝ ևս քսանութ ուրիշ այրեր, ովքեր այդ օրը զովկեցին սրով, իսկ անհավատների կողմից անթիվ-ամիսամար մարդիկ ընկան, բայց ըստ կարծիքների և իրականությանը մոտ՝ հաշվեցին այսքան. հետևակազդրայիններից՝ չորս հազար [զինվոր], հեծելազդրից՝ երեք հազար, բողդանցիներից և մինթացիներից<sup>147</sup> վեց հազար, և սրից ու արկերից վիրակորվածները՝ ավելի քան տասն հազար, որոնց բարձելով սայլերին, տանում էին իրենց բանակը. բայց միայն սպանված ծանոթների և զիխավորների դիերն էին վերցնում, իսկ մնացածներից ովանց նետում էին գետը, ովանց թաղում էին այնտեղ, ովանց էլ թողնում էին դաշտում՝ որպես կեր չներին և զազաններին:

Բայց պետք է ինանալ, որ անօրենների կորուստը ոչ միայն սուսերներով և այլ գենքերով եղավ, այլև մանավանդ Աստծու աներևոյթ աջով էին հանապազ զարկվում, ոչնչացվում և կործանվում:

#### ԳԼՈՒԽ ԺԳ

ՏԱՃԻԿՆԵՐԻ ԲԱՆԱԳՆԱՑԻՆ ՎԵՐԱԿԱՐՁԵԼՈՒ ԵՎ  
ՆՐԱ ՀԵՏԸ ԻՐԵՆՑ ՂԵՍՊԱՆՆ ԱՐԶԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սրանից հետո՝ չորեցաբթի օրը [=19/29 սեպտ.], լիեաց քանակից արձակեցին պատգամաբեր մարդուն՝ Բատիստայի որդուն, ով եկել էր տաճիկների կողմից, և նրա հետ ուղարկեցին քրիստոնյաների դեսպաններին՝ Բելզի<sup>148</sup> բերդակալ պանին<sup>149</sup> և Լյուբլինի վոյեվոդայի որդուն<sup>150</sup>. քանին մարդկանցով հանդերձ. բայց լեհաց զորեցից դեսպաններին ուղեկցելու եղավ երկու հարյուր հեծյալ՝ ընտիր և պատվական այրեր՝ զարդարված բազմապահի Ճոխությամբ և վայելչազարդ մորթե վերարկուներով, այլև իշխաններ ու բազում մեծամեծեր. մինչև անգամ ինքը զորավարը՝ Սանդոմիրի ստարոստան ևս ծախտալ գնաց նրանց հետ, մինչև որ մոտեցան տաճիկների բանակին:

Երբ տաճիկների կողմից տեսան քրիստոնյաների զա-

լուստ քրիստոնէիցն՝ ընդ առաջ ելին նոյնպէս և նոքա բազմապատիկ և զարմանալի բեհեզգործ կերպասիթք, և ցեղ ի ցեղաց կազմեալ մեծագին երիվարօք, որ սպահիք<sup>151</sup> կոչին՝ արք ԳՃ, և չափուշը<sup>152</sup> Ճ, և այլ բազմութիւն զօրաց նոցա, որք եկեալ ի դաշտն հանդիպին միմեանց ողջոյն տալով ուրախութեամբ, և ապա առեալ տարան զդեսպանսն քրիստոնէից առ Օսման, և մնացեալքն դարձան խաղաղութեամբ ի բանակն իրեանց:

Բայց յառաջ քան զդեսպանն ի սմին աւուր առաքէ անօրէնն խոնդքար գրագում արս թաթարաց և Ենիշարեաց և ընդ նոսա զմեծամեծ թոփս, որք գնացեալ ի Վերայ գիւղաքաղաքի միոյ, որ կոչի Բանովցա, ոչինչ հեռի ի Խորինու, և սկսան մեծաւ ջանիւ արձակիլ ի Վերայ, և հարկանել հանապազ զպարիսապն թոփիւ և թֆանկիւ մինչև ցնեծ ժամ աւուրն, իսկ քաղաքացիք ի ներքուստ հարեալ կործանէին ի նոցան:

245p

Եւ ոմն քահանայ ազգաւ Ոուզ, անուն Օթէց Նիքոլսի, պատրաստեալ զրֆանկն և Եհար ճարտարութեամբ զանիրաւ || այրն որ զրոփսն թաւալէր, և արժամայն անկեալ սատակեցաւ. զոր տեսեալ անօրինացն ժողովեցին փութանակի զամենայն գէնս և զասպարս իրեանց և գնացին անդառնալի հետիւք լի անօրով:

Ի հինգշաբթի, յուրեաբթի, և ի շաբաթի, և ի կիրակէին օր [=20-23 սեպտ./30 սեպտ.-3 հոկտ.] ոչինչ եղև ընդ միմեանս՝ մինչ դեսպանքն առ նոսա էին, այլ խաղաղեցաւ պատերազմ յերկոցունց կողմանց. բայց հանապազ ի պատրաստի ունէին ամենայն զօրք քրիստոնէից, ոչ Վստահանալով պատրողական բանից և խօսիցն անհաւատից:

Յաւուրսն յայնոսիկ բարեյաղը և քրիստոսասէր իշխանն Վլատիխալ սկսաւ առատածեռն պարզեօք շնորհել ամենեցուն հսկայածն ազանց և հեծելագունդ զօ-

լուստը, այնժամ բեհեզյա բազմազան և զարմանալի հանդերձներով և պես-պես զարդարված թանկագին երիվարներով ընդառաջ ելան նրանք նույնպէս, ովքեր հեծելագունդ են կոչվում (Երեք հարյուր մարդ), հարյուր չափուշ և նրանց զորքերի բազմաթիվ այլ գնդեր, որոնք, գալով դաշտ, հանդիպեցին միմյանց՝ ուրախությամբ ողջոյն տալով, և ապա քրիստոնյաների դեսպաններին վերցրին-տարան Օսմանի մոտ, իսկ մյուսները խաղաղությամբ վերադարձան իրենց բանակը:

Բայց նոյն օրը՝ դեսպանի [զալուց] առաջ, անօրէն խոնդքարը<sup>153</sup> բազմաթիվ թաթար և Ենիշերի զինվորներ ուղարկեց, նրանց հետ՝ մեծամեծ թնդանորները: Նրանք շարժվեցին Խոտինից ոչ հեռու մի զյուղաքաղաքի վրա, որ կոչվում է Պանովցա, սկսեցին մեծ ջանքով հարձակվել [նրա] վրա և մինչև օրվա մեծ ժամը թնդանորներով ու հրացաններով հանապազ հարվածել պարհապներին, իսկ բնակիչները ներսից էին զարկում-գետին տապալում նրանցից [նմանց]:

Եվ ազգությամբ ուսւ ոմն քահանա, անունը՝ հայր Նիկոլսի, հրացանը լիցքավորեց և վարպետորեն հարվածեց այն անիրավ մարդուն, որ թնդանորից կրակում էր, և նա վայր ընկնելով՝ տեղնուտեղը մեռավ. այս տեսալով՝ անօրենները փութով հավաքեցին իրենց ողջ զենքերն ու զրահները և ամորով լի՝ հեռացան ադառնալի ճանապարհով:

Հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերին [=20-23 սեպտ./30 սեպտ.-3 հոկտ.], մինչ դեսպանները նրանց մոտ էին, միմյանց դեմ ոչ մի թան չեղավ, այլ երկու կողմերից կրիվը դադարեց. բայց քրիստոնյաների ողջ զորքերը, չվստահելով անհավատների պատիր խոսք ու զրուցին, հանապազ պատրաստ վիճակում էին:

Այդ օրերին բարեհաղը և քրիստոսասէր իշխան Վլատիխալ սկսեց առատածեռնորեն մեծամեծ պարզեներ շնորհել բոլոր հսկայակերպ ազգերին և հեօյալ զոր-

րաց օժիտս և ծիրս մեծամեծս, վասն առաւել և աներկբայ հաւատարին ծառայութեանց իւրեանց. նոյնպէս և խազախաց և Ազամանաց յորդառատ պարզէօք հասուցանել խոստանայ զփոխարէնն քաջութեան նոցա՝ յետ ուրախութեամբ դարձին իւրոյ, որ և արարին իսկ, և յամենեցուն շնորհակալ լինել, և գրիանայր ի նոցանէ վասն ամենայն իրացն գործեցելոց:

Ապա յաւուր երեքաբարոց<sup>154</sup> [=25 սեպտ./5 հոկտ.] սուլթան Օսմանն արձակէ գդեսպանս քրիստոնէից, և Տաճիկ չավուշ մի ընդ նոսա, որ կատարեալ գրովանդակ դաշինս երդմանց, և նուրիհակ խաղաղութեան անդառնայի տուեալ ի ծեռս նոցա, եկին բերկրալիր աւետեօք ի բանակն լեհաց:

Բայց զբան դեսպանացն ոչ ոք կարաց հաւատեալ իմանալ՝ թէ յո՞յր վերայ հաստատեցին զպայմանն, քանզի բազումք բազում ինչ այլ ընդ այլոյ պատմէին ամմիաբան միմեանց, վասն որոյ և ես ոչ կարացի այժմ ստուգիւ գրել զերկբանական ծանուցումն անհմանալի իրին, մանաւանդ զբագաւորական և զարքունական գործսն, այլ զկարծեօք լի խորհուրդն Աստուծոյ թողեալ անհաս իմաստիցն և ի մնացեալ յայտնիսն դիմեցից՝ ընտրելով զատոյգն ի յոլովից:

246ա

#### ԳԼՈՒԽ ԺԴ.

ՅԱՂԱԳՍ ԺՈՂՈՎԵՐԵՈՅՆ ԶԱՄԵՆԱՅՆ ԶՈՐՍ ԻՒՐ  
ՕՍՄԱՆԻՆ ԵՒ ՂԱՌԱԱԼՈՅՆ Ի ՅԵՐԿԻՐ ԻՒՐ ՅԵՏ  
ԿԱՏԱՐԵՒՅՅ ՀԱՇՏՈՒԹԵԱՆՆ

Յայնժամ չորեքաբարի աւուրմ [=26 սեպտ./6 հոկտ.] սուլթան Օսման պատրաստէ իինգ հարիւր չավուշ, և բազում դրնապանս և ասէ անցանել յերկիրն իլախաց, զի գորս գտանեն անդ ի օօրացն իւրոց, թաթար կամ Տաճիկ և կամ այլ ամենայն ազգս յիւրոցն, վաղվաղակի անցուցանիցեն յերկիրն Պուղտանաց. որ և

(67)

քերին՝ նվերներ և վարձեր՝ նրանց առավել և աներկբայ յորեն հավատարիմ ծառայությունների համար: Նոյնպէս և կազակներին ու գերմանացիներին էր խոստացել նրանց քաջության դիմաց հաստուցել չափազանց առատ պարզներով իր՝ [Ճակատամարտից] հաղթությամբ վերադարձից հետո, որն էլ հենց արեցին, և [արքայորդին] բոլորին շնորհակալ եղավ ու գրիացավ նրանցից՝ կատարված բոլոր գործերի համար:

Ապա երեքաբարի օրը [=25 սեպտ./5 հոկտ.] սուլթան Օսմանը հետ ուղարկեց քրիստոնյաների դեսպաններին և նրանց հետ՝ մի տաճիկ չավուշի, ով, ի կատար ածելով երդման ողջ դաշնադրությունը, նրանց անխախտ խաղաղության դաշնագիր հանձնեց, և բերկուալիր ավետիսով եկան լեհաց բանակ:

Բայց դեսպանների խոսքը ոչ ոք չկարողացավ հավաստի կերպով իմանալ, թէ ինչի մասին պայման կապեցին, քանզի շատերը միմյանցից տարրեր այլևայլ շատ բաներ էին պատմում, որի պատճառով և ես այժմ չկարողացա ստուգապես գրել այդ անհայտ բանի մասին երկբայական ծանուցումք՝ մանավանդ թագավորական և արքունական գործերը, այլ կասկածելի մտքերը Աստծո անհասնելի իմասնտությանը թողնելով՝ պիտի դիմեմ մնացած հայտնի բաներին՝ ընտրելով շատերից ստույգը:

#### ԳԼՈՒԽ ԺԴ.

ՕՍՄԱՆԻ՝ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԿՆՔԵԼՈՒՑ ՀԵՏՈ  
ՈՐ ԶՈՐՔԵՐԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԵՎ ԻՐ ԵՐԿԻՐ  
ՎԵՐՍԱԿՈՆԱԿՈՒ ՄԱՍԻՆ

Այնժամ չորեքաբարի օրը [=26 սեպտ./6 հոկտ.] սուլթան Օսման պատրաստեց իինգ հարյուր չավուշ ու բազմաթիվ բարապաններ և հրամայեց անցնել լեհաց երկիր, որպեսզի այնտեղ իր զորքերից՝ թաթար, տաճիկ և կամ մյուս բոլոր յուրային ազգներից, ում գտնեն անմիջապես անցկացնեն Բողդանների երկիր, որն էլ

(67)

արարին իսկ, և քարոզ կարդացին յամենայն բանակս Տաճկաց մեծաւ սպառնալեօք, զի մի՛ ոք յայնմհետ իշխեսցէ անցանել զջուրն և կամ աւեր ինչ հասուցանել համարձակեսցի յերկիրն հլախաց, և եթէ գտանիցի ոք [որ] յանդգնեալ արասցէ զայն, մահապարտ լինիցի յյամենայն յատենի. և ապա որպէս յառաջն աճեցան, նոյնակտս և ի վերջն սկսան պակասի մի ըստ միոչէ, մինչև ամենկիմք դադարեցին հետք նոցա յընդհանուր աշխարհին լեհաց: Իսկ յաւուր ուրբարու [=28 սեպտ./8 հոկտ.] ի բանակն քրիստոնէից եղև ուրախութիւն յոյժ առ հասարակ զօրաց և զօրապետաց, մեծաց և փոքրեց, և սկսան հարել զթոփս և զթանկս, և հնչեցուցանել զփողս և զնուագարանս և զթմբուկս մեծաւ գրչեցուցանք, մինչ զի զօրքն Տաճկաց հիանային ընդ ահեղ դղրդումն լերանց և վիմաց ի յուրախական ձայնէ քրիստոնէիցն. և այսպիսի պայծառութեամբ և բերկրութեամբ օրինին և գովէին զԱստուած լի զՓրկիչն ամենեցուն, որ զայնքան մեծ բարկութիւնն և զցասումն նոր Յուլիանոսին դարձոյց ի խոնարի և ի նախատինս որպէս ամենագէտն Տեր: Նոյնակտս և քահանայք և ուխտականք, որք էին յայնժամ ի բանակն, պարակիցք եղեալ հոգևորացն ընդ մարմնաւորսն, միաբան հանդիսի և բարձրաբարեառ եղանակօք առեալ զկցորդսն Դաւթի Երգէին ասելով խրախուսմամբ. Նոքա ի ծեռանէ քումնէ մերժեցան<sup>155</sup>, մեք ժողովուրդը և խաշն արօտի քո<sup>156</sup>:

Ի շաբաթ օրն [=29 սեպտ./9 հոկտ.] եկն չափուշ մի, և ընդ նմա մեծաւոր Պողոտանցի մի որ բրգալապ<sup>157</sup> կոչիւր. ուստի ետուն զբերդն Խորինու ի ծեռս նոցա և ինքեանք ազգն լեհաց ելին ի միջէն. և այս բերդս նախ առաջ Պոլոտանաց էր և Տաճիկը տիրէին. բայց ինձ ամ յառաջ քան զայս իշխան ոմն հլախաց Գորեցքի<sup>158</sup> անուն

հենց կատարեցին, և մեծ սպառնալիքներով տաճիկ-ների բոլոր զորքերի մեջ քարոզ կարդացին, որ այնու- հետև ոչ չիամարձակվի անցնել գետով<sup>159</sup> և կամ ավերածություն անել լեհաց երկրում. իսկ եթէ գտնվի մեկը, ով կիանդգնի անել այդ, բոլոր ատյաններում մահվան կդատապարտվի. ապա [անօրեններն] ինչ- պէս որ սկզբում ավելացել էին, այդպէս էլ վերջում սկսեցին մեկ առ մեկ նվազել, մինչև նրանց հետքը ողջ լեհաց աշխարհից ամենկին վերացավ: Իսկ ուրբաթ օրը [=28 սեպտ./8 հոկտ.] քրիստոնյաների բանակում համ- ընդհանուր մեծ ուրախություն կատարվեց զորքերի ու զորապետերի, մեծերի ու փոքրերի, և սկսեցին կրա- կել թնդանորներից ու հրացաններից, փչել փողե- րը և բարձր գրչունով հնչեցնել նվազարաններն ու թմբուկները, մինչև որ տաճիկների զորքերը ապշ- ահար էին լեռների և ժայռերի՝ քրիստոնյաների ուրա- խալի ծայներից [արձագանքող] ահեղ դղրդունից. և այսպիսի շքեղությամբ ու բերկրանքով օրինում և գո- վարանում էին ամենափրկիչ Աստծուն, որը՝ որպէս ամենագետն Տեր, նոր Հովհանոսի<sup>160</sup> այնքան խիստ բարկությունն ու ցասումը վերածեց հնազանդության և նախատինքի: Այդպէս և հոգևորները՝ քահանաներն ու ուխտավորները, ովքեր այժ ժամանակ բանակում էին, աշխարհականների հետ մեկտեղ պարելով, միահամուռ ցնծությամբ և բարձրածայն ելեկջումներով երգում էին Դավթի կցուրդները՝ խրախուսով ասելով. «Նրանք մերժվեցին Քո կողմից», «Մենք ժողովուրդն ենք և խաշն քո արոտի»:

Շաբաթ օրը [=29 սեպտ./9 հոկտ.] եկավ մի չափուշ և նրա հետ՝ մի բողդանցի պաշտոնյա, որը արկալաք էր կոչվում, և լեհերը Խոտինի բերդը հանձնեցին նրանց, իսկ իրենք ելան այստեղից. այս բերդը նախկինում բող- դաններինն էր, և տաճիկներն էին տիրում, բայց սրանից ինչն տարի առաջ լեհ ոմն իշխան՝ Կորեցկի անունով,

246p

(68)

(68)

գնացեալ անդ և բռնութեամբ էառ զբերդն օայն, զոր մինչև ցայս վայր կալեալ ունեին:

Արդ՝ այժմ թուի թէ այսու աղագաւ հաստատեցին զխաղաղութիւն յերկոցունց կողմանց, զի վերստին դարձուսցեն առ նոսա զկլայն Հոթունի. իսկ յետոյ անիրաւուն համբաւեցին թէ, սուտ բարբաջնամբ, խոստացան քրիս-տոնեայքն հարկս հանդիսականս տալ Տաճկաց, զոր մի՛ ոք իշխեսցէ հավատալ անհանձար բանից նոցա<sup>161</sup>:

Ապա ի կիրակի աւուր [=30 սեպտ./10 հոկտ.] յարուցեալ Օսման ընդ առաւոտն և հրամայէ հնչեցուցանել զփողսն ի լուր ամենեցուն, զի յայնմ պատրաստեցին ի ծանապարի ամենայն զօրք իր հեծեալք և հետևակը, և ապա ի ժամ ձաշուն շարժեցաւ ընդհանուր զօրօն և բոլոր բանակաւն, և գնացեալ հեռացան ի քրիստոնէից, մինչ զի հազիւ երեւէին, և իջևանեցան ի վերայ նոյն գետոյն թուռլայի ի բարձրավանդակ տեղւոց իբրև || զամպս թխացեալ. իսկ բազմութիւն անհաւատիցն որպէս զմառախ սփոթեալ ծածկէին գերեսս երկրի [և] դաշտին. և ապա ի միւսում աւուր ելեալք անտի, և գնային անդառնալի ուղեգնացութեամբ:

Յայնժամ յաւուր [Երկուշաբարի և<sup>162</sup> Երեքշաբարի [=1-2/11-12 հոկտ.] սկսան զօրք հաւատացելոց անցանել զջուրն, այլ ոչ ամենեքեան, քանզի կամուրջն Լեհաց որ էր մոտ ի բերդն՝ կործանեալ էր, վասն այն փոքր նաւակաւ անցանէին սակաւ առ սակաւ: Բայց ի հեռաւոր տեղւոց կամուրջն Տաճկաց դեռ ևս կայր հաստատուն, զի ինքն Օսման ի դարձին իւրում պատուէր ես զօրաց իւրոց, զի մի՛ տապալեսցեն օայն, այլ թողցեն ամբողջ, զի անտի եկեալ անցանիցեն հեծեալքն Լեհաց:

Ապա ի չորեքշաբթի և հինգշաբթի աւուրն [=3-4/13-14 հոկտ.] ամէներանեալ իշխանն Վլատիկաւ հանդերձ ամենայն զօրօք և զօրավարօն զայ անցանէ ընդ այն կամուրջն և մտան ի սեպհական հայրենիսն

247ա

գնաց այնտեղ և բռնությամբ գրավեց այդ բերդը, որը մինչ այժմ գրավել-պահում էին [լեհերը]:

Արդ՝ հիմա թվում է, թէ երկու կողմերը սրա համար խաղաղություն հաստատեցին, որպեսզի խոտինի բերդը վերստին վերադարձնեն տաճիկներին. բայց հետո անիրավները սուտ բարբաջնաքով հայտարարեցին, թէ քրիստոնյաները հանդիսավոր խոստացան հարկեր տալ տաճիկներին, բայց թող ոչ ոք չհամարձակվի հավատալ նրանց անհեթեթ խոսքերին:

Ապա կիրակի օրը՝ [=30 սեպտ./10 հոկտ.] առավոտյան, Օսմանը ելավ և հրամայեց փշել փողերն ի լուր ամենքի, որպեսզի իր բոլոր հեծյալ և հետևակ զորքերը պատրաստվեն այնտեղից ծանապարի ընկնելու. ապա ծաշին [նայ] բովանդակ զորքերով և ողջ բանակով շարժվեց, և զմացին-հեռացան քրիստոնյաներից, մինչև որ հազիվ էին երևում. իբրև թուս ամպեր դադար առան նոյն Ղնեստոր գետի ափին՝ միբարձրավանդակ վայրում, իսկ անհավատների բազմությունը ինչպես մորեն սկսովել-ծածկել էր դաշտը. ապա հաջորդ օրը եկան այնտեղից և հեռացան անվերադարձ ուղևորությամբ:

Այնժամ երկուշաբթի և Երեքշաբթի օրերին [=1-2/11-12 հոկտ.] հավատացյալների զորքերն սկսեցին անցնել գետոք, բայց ոչ բոլորը, քանզի լեհաց կամուրջը, որը բերդին մոտ էր, կործանվել էր. այդ պատճառով սակավ առ սակավ գետն անցնում էին մի փոքր նավակով: Բայց մի հեռավոր տեղ տաճիկների կամուրջը դեռևս կանգուն էր, քանզի ինքն Օսմանն իր վերադարձին պատվիրեց զորքերին, որ չավերեն այն, այլ թողմեն կանգուն, որպեսզի լեհաց հեծյալները գան-անցնեն նրանով:

Ապա չորեքշաբթի և հինգշաբթի օրերին [=3-4/13-14 հոկտ.] երանակետ իշխան Վլատիկավը բոլոր զորքերով և զորավարներով հանդերձ Եկապ-անցակ այդ կամրջով, մտավ իր ժառանգական հայրենիքը՝

(69)

(69)

իր երկիրն հլախաց, և եկեալ բանակն առ ստորև գիտաքաղաքի միջոց որ կոչի Ըզվանեց:

Ուրեմն աստ պատեհազոյն իմն թուի ինձ արտադրել և դնելի ի շար բանիս զգայուստ արքային հլախաց թէպէտ ոչ կարաց ժամանել գործոյն. այլ զի ամենկիմբ կատարելապէտ ծանուսցի ձերում վեհազոյն մտաց գիտութեանց՝ վասն որոյ այժմ գրեցից ծեզ զիդրն ի շատէն, զստուգի եղեալսն իրացն զշշնարտութիւնն, և ապա դարձաց յառաջին բանսն անձանձրալի հետովք ընթանալ մինչև ի վերջին կէտ բնաւին աշխատութեանս Վեհիմաստութեան ձերում:

247p ||

## ԳԼՈՒԽ ԺԵ.

ՅԱՐԱԳՍ ԳԱԼՍԵԵԱՆՆ ԹԱԳԱՎՈՐԻԻՆ ԻԼԱԽԱՑ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶՈՐօՔ ՅԻՒՂՎ, ԵՒ ԱՄԴ ԼՈՒԵԱ  
ԶՀԱՇՏՈՒԹԻՒՆ ԸՆԴ ԹԵՇՆԱՍԻՒ, ԴԱՐՁԱ  
ԿԵՐՍԻՒՆ Ի ՎԱՐՃՈՎ ՔԱՂԱՔ

Ընդ աւուրսն ընդ այնոսիկ ինքնակալ և բարեպաշտ արքայն Զիկմոնդ, իբրև կարգաւորեաց ինաստութեանբ զամենայն հաճոյն աշխարհին իրոյ, և զի դեռ ևս ոչ էր լուեալ զիամբաւ հաշտութեան ընդ Հազարացիսն, յայն-ժամ առարք զբազումս ի պաշտօնէց իրոց առ ընդհանուր երկիրս հլախաց բարձր հրամանաւ քարոզել և պատուիրել ամենայն դասուց զինուորաց և զօրաց, ազատաց և ծառայից, հեծելոց և հետևակաց, զի ամեներին փութանակի յառաջեսցեն ի մայրաքաղաքն իլով. որ և ինքն իսկ նոյնակս առանց յերկարելոյ վաղվաղակի չոքաւ անդ, բազում մեծամեծ իշխանոք, և գումարեցան առ նա գումարումն մեծ զօրաց յաւուր յայնմիկ ազգ ընդարձակ և բազմաթիւ, որը լինէին երեք հարիւր հազար<sup>163</sup>.

Ապա միաբանեալք մեծաւ պատրաստութեամբ կամէին զնալ ի վերայ խուժադուժ ազգին բարբարոսաց. և մինչ այս խորիրով շտապէին ելանել ի քաղաքէն՝ նոյնժամայն հասին շուտափոյթ ընթացիւք դեսպանքն ի բանակէն քրիստոնէց, և աւետիս մատուցեալ և ասեն.

(70)

լեհաց երկիր, և բանակը եկավ մոտակայքը մի գյուղաքաղաքի, որը կոչվում էր Ըզվանեց:

Ապա ուրեմն այստեղ ինձ շատ պատեհ է թվում թարգմանել և խոսքերիս շարքում տեղադրել լեհաց արքայի զալուստը, թեպէտ չկարողացավ վրա հասնել այդ գործին. բայց որպեսզի ամեն ինչով կատարելապէտ իրազեկվի Ձեր Վեհազոյն մտքի ինացությունը, այդ պատճառով այժմ փորքիշատ կնկարագրեմ ծեզ հաստատապէտ կատարված դեպքերի ծշմարտությունը, և հետո կանդրադառնամ նախկին պատմությանս, որպեսզի Ձերդ վսեմամնությունն անձանձիր ընթանա այս ողջ աշխատությանս մինչևն վերջին կետը:

## ԳԼՈՒԽ ԺԵ

ԼԵՀԱՑ ԹԱԳԱՎՈՐԻ՝ ԱՄԲՈՂՋ ԶՈՐՔԵՐՈՎ  
ԼԿՈՎ ԳԱԼՈՒ ՄԱՍԻՆ, ՈՎ, ԼՍԵԼՈՎ ԹԵՆԱՍՈՒ  
ՀԵՏ ՀԱՀՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՐ, ՎԵՐԱԿԱՐՁԱԿ  
ԿԱՐԾԱԿԱՍ ՔԱՂԱՔ

Այդ օրերին, երբ ինքնակալ բարեպաշտ արքա Զիգմոնդը խեամսորեն կարգավորեց իր աշխարհի բոլոր խնդիրները, քանզի դեռևս չէր լսել հազարացիների հետ հաշտության լուրը, իր պաշտոնյաներից շատերին ուղարկեց լեհաց ողջ երկրով մեկ բարձր հրամանով քարոզելու և պատվիրելու գինվորների և զորականների, ազատների և ծառաների, հեծյալների և հետևակայինների ողջ դասերին, որ բոլորը փութով շտապէն մայրաքաղաքը լկով. և հենց ինքը ևս բազմաթիվ մեծամեծ իշխաններով առանց հապաղելու անմիջապէս զնաց այնտեղ. և այդ օրը նրա նոտ բազմաքանակ զորքերի մեծ գումարում եղավ, որոնք թվով երեք հարյուր հազար էին:

Ապա միաբանվելով՝ մեծ պատրաստությամբ կամենում էին զնալ բարբարոսների խուժադուժ ազգի վրա: Եվ մինչ այս մտադրությամբ շտապում էին ելնել քաղաքից, նոյն ժամին քրիստոնյաների բանակից հասան ձեպազնաց դեսպանները և ավետիս տալով՝ ասացին.

Ողջ լեր, թագաւոր անյաղթելի, և բերկրեա ճոխութեամբ, քանզի Տեր ինքնին պատերազմեցաւ ընդ թշնամիս քո ընդ այն, և անդրորուելի պահեաց զնորաբողբոջ զաւակն քո և զտէրն մեր զմեծն Վլատիվլաւ հանդերձ ամենայն զօրօքն, մինչ զի ի հրեշտակութիւն առաքեալ անհաւատիցն, և հայեցին զոխստ խաղաղութեան և դաշինս սիրոյ ի մէնջ, որպէս և եղևն իսկ. և արդ մի՛ ևս աշխատ || լիցի քումդ բարձրագոյն թագաւորութիւն, զի ահա մերձ է ի գալ առ քեզ բարեպատեհ որդին քո ամենայն ազատագունդ հեծելովք, նոյնպէս և զամենայն եղեալ գործն պատմէին մի ըստ միոչէ:

Չոր իբրև լուաւ արքայն՝ տրտմեցաւ յոյժ, և յոգոց եհան և ասէ. Զի՞նչ գործեցից, զիարդ առանց մեր կամաց յանդնեալ արարին, ոչ մնալով զալստեան մերոյ: Այսպէս ամենայն զօրքն ափսոսային զայնպիսի պատահումն, որ այսքան բազմութիւն ժողովրդոց ոչինչ արութիւնս ցուցեալ հարկեցան դաշնալ վերստին ի տեղիս իւրեանց տրտնջալով և մեղադիր լինելով արքային, որ այնքան ժամանակ երկարեաց զընթացս իր, և ոչ առժամայն չոքաւ. բայց այս ոչ եթ յանհոգութենէ եղև, այլ ի պատճառս պիտոյից աշխարհին, որպէս և յառաջագոյն յիշեցար: Ապա յետ քանի մի աւուր զնաց դարձեալ արքայն Զիկմունդ ի քաղաքն իւր Վարչով:

Այլ ես զայս ճշմարտեմ հաստատեաւ, զի եթ ժամանեալ էին ան՝ այսու ամենայնի բնաջինչ առնէին զամենայն զօրս այլազգեացն, քանզի ուխստ եղեալ էին ի միջի հրեանց՝ ոչ դաշնալ յետս, մինչև ոչ նախ մտցեն ընդ դրունս Կոստանդնուպոլիսոյ, և այնչափ պատրաստութեամբ, մինչ զի զվեց ամսոյ դարմանս բարձեալ բերէին զիետ հրեանց, և գէնս և զասպարս անթի, որք ամենեցին էին արք ընտիրք և ձարտարք և հնուտք ի գործ պատերազմի: Իսկ զօրք անհաւատիցն լքեալք և հիւծեալք էին ի սովոյ և ի տօթոյ, և մանաւանդ որ այն-

«Ո՞ղջ եղիր, անհա՛ղթ թագավոր, և ցնծա՛ մեծապէս, քանզի Տերն ինքը պատերազմեց քո այն թշնամիների դէմ և անհողդող, պահեց քո նորաբողբոջ զավակին ու մեր մեծ տեր Վկաղիպավին՝ ամենայն զորքերով հանդերձ, մինչև որ անհավատները բանագնացներ ուղարկեցին և մեզնից խաղաղության ուխստ և բարեկամության դաշիքն հայցեցին, ինչպէս որ և եղավ իսկ. և արդ, թող այլևս չանհանզատանա Ձերդ մեծություն թագավորը, քանզի ահա ուր որ է քո բարեվայելու որդին կզաք քեզ մոտ ողջ ազատագունդ հեծյալներով հանդերձ». այսպէս մի ըստ միոչէ պատմեցին նաև կատարված բոլոր գործերը:

Երբ արքան այս լսեց, հոյժ տրտմեց, հառաչեց և ասաց. «Ի՞նչ անեմ, ինչպէս հանդգնեցին առանց մեր կամքի գործել՝ չսպասելով մեր զալուն»: Այսպէս ողջ զորքը ափսոսաց այդ կատարվածի համար, որ այսքան բազմաթիվ մարդիկ առանց քաջագործություններ ցուցաբերելու հարկադրված են վերստին հետ դառնալ իրենց տեղերը՝ տրտնջալով և մեղադրելով արքային, որ այդքան ժամանակ երկարաձգեց իր երթը և ոչ թե անմիջապէս զնաց. բայց այս ոչ թե անհոգության պատճառով եղավ, այլ երկրի կարիքների համար, ինչպէս որ նախապէս հիշատակեցինք: Ապա մի քանի օր հետո Ձիգմունդ արքան դարձյալ զնաց իր քաղաքը՝ Վարչով<sup>164</sup>:

Բայց ես այս հաստատապէս ճշմարիտ եմ ասում, որ եթե արքան և գորքերը ժամանեին այնտեղ, ամենին կը նաջնջեին այլազգիների բոլոր գորքերը, քանզի միհյանց հետ ուխստ էին դրեկ չվերադառնալ, մինչև որ նախ չմտնեն Կոստանդնուպոլիսի դարպասներից ներս. և այնչափ պատրաստությամբ [էին գնում], որ իրենց հետ բարձած բերում էին մինչև վեց ամսվա մթերք և անթիվ զենք ու զրահ. և նրանք բոլորն ընտիր այրեր էին, պատերազմական գործի մեջ՝ ճարտար հմուտ: Իսկ անհավատների զորքերը թուլացած և հյուծված էին սովոց ու տոթից, մանավանդ որ այն-

չափ ժամանակս օր ըստ օրէ հանապազ ի մարտ և ի պատերազմուն հարեալք և վիրաւորեալք էին, որոյ վասն դիւրաւ լինելոց էր կորուստ և մահ ամենեցուն:

Բայց ամենագէտն Աստուած և Ճշճարտադատ, որ քննէ զսիրսու և զերիկամուն ամենայն մարդկան, որ կշռ գլերինս և հաստատէ գիմունս երկրի, որ և ածէ անձուն ի վերայ հաւատացելոց և անօրինաց, և տայ զվայելչութիւն արեգականն՝ ծագել ի վերայ արդարոց և մեղաւորաց, ոչ կամեցաւ առնել ըստ կամաց հողածնաց և մտաց մարդկան, այլ ամենասքանչ զօրութեանբն իւրով || հանդարտեցոյց զյարուցեալ խռովութիւնս ի միջոյ յերկուց թագաւորաց, զի մի ոք երևեսի տրտում ի գրկմանց, այլ իւրաքանչիւրքն կացցեն ըստ չափու իւրեանց:

Իսկ ես ընդ այն զարմանամ, թէ զիա՞րդ յամեալ երկարեցաւ անբաւ գրութիւնն Աստուծոյ ի վերայ սրբոց իւրոց, որ և ոչ ևս կամի զկորուստ թշնամեաց խաչին իւրոյ. բայց թուի ինձ թէ դեռ ևս կամի զկծեցուցանել զապերախստ քրիստոնեայս, այս անպիտան և զազանաբարոյ ազգաւս, ըստ օրինակի հնոյն, որ սպառնայր իսրայէլի ասելով. Բաժակ սրտոնտութեան է ի ծերին ինում Նաբուգոդոնոսոր, և ում կամիմ՝ արբուցանեմ զնա: Այլ և մեր ամենեցուն ցածոյց զտառապումն մտաց Երանելին Եսայի խրատելով թէ՝ Ո՞ զիտաց զմիտս Տեառն, կամ ո՞վ եղև խորհրդակից<sup>165</sup>: Ասի և առաքեալն սքանչացեալ ընդ անհասութիւն դատաստանին Աստուծոյ՝ ասէ. Ո՞վ խորք մեծութեան և իմաստութեանն Աստուծոյ, զի առանց քննելոյ են ճանապարհը նորա, և առանց զննելոյ՝ իրաւունք նորա<sup>166</sup>: Վասն որոյ և մեք այժմ թոյլ տուեալ սմին լռութեամբ, դարձուք ընդ առաջակայ տեղին ծերնարկեալ գործոյս՝ ասելով. Եղիցին կամք՝ Տեառն օրինեալ յաւիտեան:

248r

քան ժամանակ ամեն օր կրիվներում և Ճակատամարտերում հանապազ հարվածներ էին ստացել և վիրավորվել, այդ պատճառով բոլորի կորուստն ու մահը դյուրին էր լինելու:

Բայց ամենագետն և արդարադատ Աստվածը, որ քննում է բոլոր մարդկանց սրտերն ու մտքերը, որ կշռում է լեռները<sup>167</sup> և հաստատում երկրի հիմքերը<sup>168</sup>, որը նաև բերում է անձուն հավատացյալների և անհավատների վրա և արեգակին տալիս է վայելչությունը՝ ծագելու արդարների և մեղավորների վրա – չկամեցավ վարվել՝ ըստ հողածինների կամքի և ըստ մարդկանց մտածությամբ, այլ իր հիմքանմանց զորությամբ իշեցրեց երկու թագավորների միջև բարձրացած խռովությունը, որպեսզի ոչ մեկը գրկանքներից տրտում չերևա, այլ յուրաքանչյուրը մնա իր չափի մեջ:

Իսկ ես այն բանի վրա եմ զարմանում, թէ ինչպե՞ս հապալեց-ուշացավ Աստծո անբավ գրությունն իր անմեղների նկատմամբ, Ով նաև չի կամենում իր Խաչի թշնամիների կորուստը. բայց ինձ թվում է, թէ Նա դեռևս կամենում է կոկծահարել ապերախստ քրիստոնյաներին այս անպիտան և զազանաբարո ազգի միջոցով՝ ըստ հնի օրինակի, երբ սպառնում էր Խսրայելին՝ ասելով. «Նաբուգոդոնոսորն իմ ծեռքում բարկության բաժակ է, և ում կամենամ, կխմեցնեմ այն»<sup>169</sup>: Այլև Երանելի Եսային հանդարտեցրեց մեր բոլորի մտքի տառապանքները՝ խրատելով. «Ո՞վ կարողաց Տիրոց մտքերը կամ ո՞վ խորհրդակից եղավ»: Ասի և առաջալը, սքանչանալով Աստծո դատաստանի անհմանալիության վրա, ասում է. «Ո՞վ Աստծոն մեծության և իմաստության խորություն, քանզի անքնին են նրա ճանապարհները և նրա իրավունքը՝ անզնին». այդ պատճառով և մենք, այս բանը լրությամբ զանց առնելով, այժմ դառնանք ծերնարկած գործիս առաջիկա տեղին՝ ասելով. «Թող Տիրոց կամքը օրինյալ լինի հավիտյան»:

(72)

(72)

## ԳԼՈՒԽ ԺԶ.

ՅԱՂԱԳՍ ԳՆԱԼՈՅ ԱՄԵՆԱՅՆ ԶՈՐԱՑ ՔՐԻՍՏՈՆԵՒԹՅԱՆ  
Ի ՏԵՂԻՆ ԻՒՐԵԱՆՑ ՓԱՌԱՌՈՇԵՐՈՎ ԶԱՍՏՈՒՆԾ ԵՒ  
ԶԱՐՔԱՅՈՐՈՂԻՆ ՎԱՏԻՍԱՄ

Յայնժամ յաւուր ուրբաթի [=5/15հոկտ.] արքայ-  
որդին Վլատիվալ եկեալ ամենայն զօրօքն հարկանէ  
զբանակն ի դաշտն Կամենիցու, և ինքն մտեալ բնակի  
ի կլայն շաբաթ մի. իսկ զօրավարն ստարոստա  
Սենտոմիրսքին իջևանեցաւ ի տան Հայոց դատաւորին,  
որ կոչիր բան Լուքաշ<sup>170</sup>, և անդ ուրախացեալք լինեին  
յայնքան աւուրս կերակորովք և ընպելեօք:

249ա || Ապա յետ ուր աւուր արձակեցան ամենայն զօրօքն  
քրիստոնէից իւրաքանչիւրքն ի տեղիս իւրեանց՝ հրա-  
մանաւ որդույ արքային. տարան և զմարմինն երանելի  
և մեծ զօրավարին Գարուլ Խոտքեիչին, որ ի բանակն  
փոխեցաւ ի Քրիստոս, ի սմնդական բերդն իւր, և անդ  
ամփոփեցին մեծաւ պատուով:

Բայց սպարապետն Խազախաց Սահայտաչնին  
Երեսուն հազար արամբքանցիս սահմանսիր Զափորին,  
անդ ուր բնական տեղին են Խազախաց<sup>171</sup>:

Իսկ մեծ իշխանն Վլատիվալ յետ այնքան աւուրն  
և ինքն գնացեալ մերձ եղս ի քաղաքն իլով: Յայնժամ  
շարժեցան ամենայն բազմութիւն ժողովորոց մեծամեծաց  
մինչև ցիոռունս և զարդարեալ զփողոց և զապարանս  
քաղաքին՝ ելին ընդ առաջ մեծաւ դղոդմանք, և ամենեքին  
անկեալ երկիր պագանէին նմա հանդերձ շնորհունակ  
զոհութեամբ, և ասէին. Օրինեալ զալուստ որդույ ար-  
քայիդ, խաղաղութիւն երկրիս և փառք ի բարձունս  
Աստուծոյ: Եւ բերեալ պարզևս ոսկոյ և արծաթոյ՝ մա-  
տուցանէին նմա, այլ և արջառոց և զուարակաց ևս և  
երիվարաց. և ոմանք յօրինեալ բանս մաղթողականս և  
Ճոխացուցանողականս՝ երգէին նմա իրձուանօք: Եւ եղս

## ԳԼՈՒԽ ԺԶ

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՈՂՋ ԶՈՐՔԵՐԻ՝ ԱՍՏՈՒՆ  
ԵԿ ԱՐԹԱՅՈՐՈՂԻ ՎԱՍՈՒՍԱՎԻՆ ՓՈՐԱԿՈՒԵԼՈՎ  
ԻՐԵՆՑ ՏԵՂԵՐԸ ԿԵՐԱԿԱՆԱԼՈՒ ՍԱՍԻՆ՝

Այնժամ ուղբար օրը [=5/15հոկտ.] արքայորդի  
Վլատիվալ զողքորքերով Եկավրանակդրեց Կամենիցի  
դաշտում, ինքը մտավ մեկ շաբաթ հանգիստ առավ  
բերդում, իսկ զորավարը՝ Սանդոմիրի ստարոստան,  
իջևանեց տանը հայերի դատավորի, որի անունն էր  
պան Լուկաշ, և այնտեղ այդքան օրեր ուրախանում էին  
ուտել-խմելով:

Ապա ութ օր հետո արքայորդու հրամանով քրիս-  
տոնյաների ողջ զորքերն արձակվեցին ամենքն իրենց  
տեղերը. տարան և դին երանելի և մեծ զորավար Կարուլ  
Խոտկիչի, ով պատերազմում հոգին ավանդեց ի Քրիս-  
տոս, իր ժառանգական բերդը և այնտեղ մեծ շուքով  
ամփոփեցին<sup>172</sup>:

Իսկ կազակների սպարապետ Սահայդաչնին երե-  
սուն հազար մարդկանցով զնաց իր սահմանները՝  
Զապորոժի<sup>173</sup>՝ այնտեղ, որտեղ կազակների բնիկ վայ-  
րերն են<sup>174</sup>:

Իսկ մեծ իշխան Վլատիվալ նույնքան օր հետո  
ինքը ևս զնաց-մոտեցավ Լոկով քաղաքին: Այնժամ ողջ  
ժողովուրդը՝ մեծամեծերից մինչև փոքրերը, քաղաքի  
փողոցներն ու ապարանքները զարդարելով, մեծ աղ-  
մուկով եկան նրան ընդառաջ, և բոլորը երախտալի  
գոհութեամբ ընկել-երկրպագում էին նրան ու ասում.  
«Օրինայլ է արքայորդու զալուստը, խաղաղություն մեր  
երկրին և փառք Աստծուն բարձունքներում»: Եվ բերե-  
լով ոսկե ու արծաթ պարզևսէր՝ հանձնեցին նրան,  
ինչպես նաև արջառներ, ցոլեր ու երիվարներ, իսկ  
ոմանք, հորինելով բարեմաղթական և փառարանա-  
կան խոսքեր, հրձվանքով երգում էին նրա համար: Եվ

(73)

(73)

ուրախութիւն մեծ յաւուր յայնմիկ ի մայրաքաղաքն իլով, և յընդհանուր աշխարհս իլախաց:

249p ||

### ԳԼՈՒԽ ԺԷ.

ՅԱՂԱԳՍ ՍՈՎՈՅՆ, ՈՐ ԵՂԵՇԻ ՄԵԶ ԵՐԿՈՒՑ  
ԲԱՆԱԿԱՑՆ, ԵՒ ՎԱՍՆ ԹՈՒՑ ԶՈՐԱՑՆ  
ՏԱՃԿԱՑ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵՒՑ

Իսկ արդ՝ քանզի հարկեցաք յառաջագոյն յօժարութեամբ բովանդակել գորպիսութիւն նախակարգեալ կտակիս, վասն այսորիկ դարձայց այժմ, և սկսայց գրել ծեզ վերստին զայլ ևս երկոցունց բանակաց զվշտակիր նեղութեանցն վտանգ, որ ի նուազութենէ դարմանից և կերակրոց թալկացեալք բազմաց յոչ կամաց շնչասպառ լինէի<sup>175</sup>.

Եւ նախ ի բանակն քրիստոնէից յոյժ սովեաց, քանզի յամենից կողմանց պաշարեալք էին ի զօրաց անհաւատիցն, և ուստեք չգոյր հնար գտանել կերակրուս. միայն այնք, որք յառաջագոյն ունեին աւելեօք, նոքա ևս մեծաւ զնով վաճառէին միմեանց այսպէս. մի փարայի հացն ևս փարայ<sup>176</sup>, մի ծուն Բ փարայ<sup>177</sup>, մի փոքր ծուկն ԻԴ փարայ<sup>178</sup>, մէկ նուկի պանիր Կ դրամ<sup>179</sup>, նուկի և կէս օղին ՃԶ փարայ<sup>180</sup>, նուկի մի քացախ ևս փարայ<sup>181</sup>, և այլն ամենայն սոյնպէս: Բայց միսն ի բանակին ո՛չ այնքան թանկագին, զի զօրք խազախացն յամենայն օր ելանէին ի բանակէն, և երթեալք ի գիշերի անկասկած անկանէին ի վերայ զօրացն Տաճկաց, և կոտորեալ զնոսա առնուին բազում աւարս ի նոցանէ զտավարս, և բերեալ զնոսա վաճառէին իլախաց բաւական զնով, զի տային զմէկ ուղտն մէկ դահեկանի ոսկոյ, և զգոնէշն

(74)

այդ օրք Լվով քաղաքում և լեհաց ողջ աշխարհում մեծ ուրախություն էր<sup>182</sup>:

### ԳԼՈՒԽ ԺԷ

ՍՈՎԿԻ ՄԱՍԻՆ, ՈՐ ԵՂԱՎ ԵՐԿՈՒՑ ԲԱՆԱԿՆԵՐԻ  
ՄԵԶ, ԵԿ ՏԱՃԻԿՆԵՐԻ ՈՒ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ  
ԶՈՐՔԵՐԻ ԹՎԿԻ ՄԱՍԻՆ

Արդ, քանի որ նախօրոք ստիպված եղանք հոժարությամբ ի մի ամփոփել առաջադիր նպատակիս շարադրանքը, այդ պատճառով այժմ դառնամ և սկսեն վերստին նկարագրել ծեզ երկու բանակների ուրիշ վշտակի նեղությունները ևս, քանի որ շատերը, պարենի և սննդի սակագությունից թալկանալով, ակամա շունչները փշում էին:

Նախ քրիստոնյաների բանակը խիստ սովի մատընքեց, քանզի բոլոր կողմերից պաշարված էին անհավատների գորքերի կողմից, և որևէ տեղից հնար չկար կերակուր գտնելու. միայն նրանք, ովքեր նախապես ավելցուկ ունեին, նրանք էլ թանկ զնով էին վաճառում միմյանց. այսպէս՝ մի դրամի հացը դարձել էր քառասուն դրամ, մեկ ծուն՝ երկու դրամ, մեկ փոքրիկ ծուկը՝ քսան չորս դրամ, մեկ ունկի<sup>183</sup> պանիրը՝ վաթսուն դրամ, մեկուկես ունկի օղին՝ հարյուր ուրսուն դրամ, մեկ ունկի քացախը՝ քառասուն դրամ և մնացած ամեն ինչը՝ սույն ծեռով: Բայց միսը բանակում այդքան թանկ չէր, քանզի կազակների գորքերը ամեն օր ելնում էին բանակից և գիշերով զնում աներկյուր հարձակվում էին տաճիկների գորքերի վրա և նրանց կոտորելով՝ նրանցից շատ անասուններ էին գողանում և բերում-վաճառում էին դրանք լեհերին բավական թանկ զնով, քանզի մեկ ուղտը տալիս էին մեկ դահեկան<sup>184</sup> ուկու, գոմեշը՝

(74)

ի ճ փարայ՝ զի որպէս ասի թէ՝ Զեռն որ ո՛չ վաստակեսցէ, ակն մի՛ խնայեսցէ: Եւ ի տիրելութենէ սովոյն տառապէին բազումք, մանաւանդ ողորմելի գօրքն Ալամանացն, որք ի դրանէն Խորինու մինչև ի Կամենից աւելի քան զհարիւր այր անկան ի Վերայ Ճանապարհին, և այլ ոչ 250w կարացին գնալ. նոյնպէս և ի քաղաքն լլ մինչև ի քան օր մեռան անսուադութեամբ համարմամբ թուոյ՝ Իլախը և Ալամանք՝ հազար եօրն հարիւր, զոր ժողովեալ զամենեսին և տարեալ թաղէին արտաքոյ պարսպին. և այս Ալամանաց զօրքն էին բովանդակ՝ հետևակը ուրն հազար, և հեծեալք երկու հազար հինգ հարիւր, որ լինէին երկոտասան հազար հինգ հարիւր<sup>185</sup>. իսկ ի սոցանէ կորեան ի պատերազմունս և ի Ճանապարհին հինգ հազար, և մնացեալքն դարձան վերստին յաշխարհն իւրեանց ի Տանգքա<sup>186</sup>:

Արդ՝ ամենայն թիւք քրիստոնէից որք էին ի քանակ՝ Իլախը, Ալամանք և Խազախը, հեծեալք և հետևակը, ըստ ասելոյ ոմանց էին արք իբրև հարիւր հազար, որք քաջութեամբ զդէմ Եղեալ մարտնչէին ընդ անթիւ զօրացն բարբարոսաց զաւուրս քառասուն և հինգ, և որք կատարեցան ի հանդիսի Ճակատամարտին արհական մահուամբ, և ի դարձին հեծելոց, որք մեռանէին ի Ճանապարհ, ասեն՝ ընդ ամենայն հնգետասան հազար, որոց անուանք նոցա Եղիցի գրեալ ի դպրութեան կենաց անվախճանից, յանձար և յանզրաւ ուրախութիւնն երկնից, ամէն:

Եկեսցուք այժմ ի կողմն Օսմանցւոց, որ բացարձակ և լայնասփիւր տարածմամբ քանակեալ էին ի դաշտին առանց պաշարմանց և երկիւղի յումեքէ, որ և յամենից կողմանց դիւրաւ կարէին գտանել կերակուր. սակայն ի բազմութենէ զօրացն առաւել սաստկացաւ սովն ի մէջ նոցա, քան թէ ի քանակն հաւատացելոց, այսպէս՝ մէկ

հարյուր դրամի, քանզի, ինչպէս ասվում է. «Զեռքը որ չվաստակի, աչքը չի խնայի»: Սովի իշխանությունից շատերն էին տառապում, մանավանդ գերմանացիների ողորմելի գորքը, որոնցից Խոտինի դարպասից մինչև Կամենից հարյուր մարդ մնաց Ճանապարհին և այլս չկարողացավ գնալ. այդպէս էլ քաղաքում շուրջ քսան օրում անորի մեռան թվով հազար յոթ հարյուր լեհեր և գերմանացիներ, որոնց բոլորին հավաքեցին և տարածաղեցին պարսպից դուրս. այս գերմանացիների ամբողջ զորքի հետևակները թվով ութ հազար էին, իսկ հեծյալները՝ երկու հազար հինգ հարյուր, որոնք միասին լինում են տասներկու հազար հինգ հարյուր. մարտերում և Ճանապարհին սրանցից կորսույան մատնվեց հինգ հազարը, իսկ մյուսները վերստին գնացին իրենց երկիրը՝ Դանցից:

Արդ, ըստ ոմանց ասելու, քրիստոնյաների՝ լեհերի, գերմանացիների և կազակների ամբողջ թիվը՝ հեծյալներ և հետևակներ, որ բանակում էին, շուրջ հարյուր հազար մարդ էր, ովքեր, քառասունինգ օր քաջությամբ դիմադարձ կանգնելով, մարտնչեցին բարբարոսների անթիվ զորքերի դեմ, իսկ ովքեր քաջի մահով զոհվեցին մարտի դաշտում և ովքեր հեծելազորի վերադարձին մեռան Ճանապարհին, բոլորը միասին, ասում են, թվով տասնինգ հազար էին, որոնց անունները թող գրվեն անմահների կենաց գրքում՝ երկնքի անպատմելի և անսպառ ուրախության համար. ամէն:

Այժմ զանք օսմանցիների կողմը, որոնք, թեև ընդարձակ և լայնասփիւր տարածվելով, քանակել էին դաշտում առանց պաշարման ու որևէ մեկից երկյունի և կարողանում էին բոլոր կողմերից հեշտությամբ սնունդ գտնել, սակայն զորքերի մեծաթիվ լինելու պատճառով սովը նրանց մէջ ավելի սաստկացավ, քան թէ հավատացյալների բանակում. այսպէս՝ մեկ

կապիճ այսինքն եմն գարին եղև Զ ոսկի<sup>187</sup>, երկու նուկի պաքսիմատոն Ծ փարայ<sup>188</sup>, մեկ սուկի հացն Կ ստակ<sup>189</sup>, երկու նուկի բրինձ Կ փարայ<sup>190</sup>, մեկ հաւ Զ դրամ այսինքն փարայ<sup>191</sup>, մեկ ծու Ծ փարայ<sup>192</sup>, սակաւ մի աղ Ա ոսկի<sup>193</sup>. բայց միսն բաւականապէս ունեին, քանզի շնաբարոյ թաթարքն բերեին յամենից կողմանց զյափշտակեալսն իրեանց ոչխարս և զարջառս և զծիս վաճառէին սակաւ գնոյ, իսկ այլ ամենայն դարմանք կերակրոցն թանկացաւ յոյժ, և այնր աղագաւ տկարացան ամենայն զօրքն այլազգեաց, և անկան յախտ հիւանդութեան, և բազումք ի բանակն սկսան սատակիլ ի սովոյն:

250r || Եւ իբրև դարձաւ Օսման գնալ յաշխարին իւր, իսկ և իսկ մեռանէին ի ձանապարիին հեծեալք և հետևակք, և եղեն դիակունք նոցա անթի, որ անկեալ ծածկէին զերես երկոի, և ի բազմութենէ մարմնոցն սատակելոց նեխեցան և հոտեցան դաշտքն և լերինք ամենայն, մինչ զի ոչ ոք իշխէր անցանել ընդ այն ձանապարի ի բազում աւուրս. նոյնպէս և պատուական Տաճիկը և երիվարք մեծազինք, ջոկք ուղսուց և գոմշից և եզանց՝ անթիվ և անհամար, որք անկանէին տապաստ ի ձանապարիին մինչև ի Կոստանդնուպոլիս:

Իսկ ամենայն զօրք Տաճկացն, որք եկեալ էին ի Խոթինն, Տաճիկը և Թաթարք, Ուլահք և Մինթացիք և այլ ամենեքին էին արք իբրև տասն հարիւր հազար, այլ ըստ վկայութեան և հաստատելոյ ոնանց, աւելի զոլ՝ քսան անգամ հարիւր հազար. և որք կորեան ի սրոյ և ի սովու, և ի շենս, ասեն՝ հարիւր քսան հազար, որք անօգուտ և վայրապար տեղիս կոտորեցան անխնայ. բայց ամենեցուն առիթ և պատճառ խորտակման եղև անօրէնն Օսման, ուստի և ինքն ի կատարածին անձամբն իւրով ելից զգուրն՝ զոր պատրաստեացն, ընկալեալ զիատուցումն գործոց ներկայիս, և ապագայիցն սպասեալ մնայ ամսպառ և անզերծանելի տանջանացն ընկալման:

(76)

կապիճ, այսինքն՝ աման գարին դարձավ վեց ոսկի, երկու ունկի պաքսիմատոն՝ վաթուն դրամ, մեկ արծաթի հացը՝ վաթուն արծաթ, երկու ունկի բրինձը՝ վաթուն դրամ, մեկ հավք՝ ութուն դրամ, այսինքն՝ փարա, մեկ ծուն՝ ութ դրամ, մի քիչ աղը՝ մեկ ոսկի, բայց միս բաւականաչափ ունեին, քանզի շնաբարոյ թաթարներն իրենց՝ բոլոր կողմերից հափշտակած ոչխարները, արջառներն ու ծիերը բերում-վաճառում էին էժան գով, իսկ ուրիշ բոլոր սննդամթերքները հույժ թանկացան, և այդ պատճառով այլազգիների բոլոր գորքերը տկարացան, հիվանդացան, և շատերը բանակում սկսեցին սովից մերնել:

Երբ Օսմանը դիմեց վերադառնալու իր երկիր, ձանապարիին իսկոյն մեռան հեծայաներ և հետևակայիններ. անթիվ էին նրանց դիակները, ովքեր ընկան-ծածկեցին գետինք, և մեռած մարմինների բազմությունից բոլոր դաշտերն ու լեռները նեխեցին ու հոտեցին, այնպես որ բազում օրեր ոչ ոք չէր համարձակվում անցնել այդ ձանապարիով. այդպես էլ բարձրաստիճան տաճիկներ և անթիվ-անհամար թանկազին երիվարներ, ուղտերի լեռանկներ], գոմեշների և եզների նախիրներ, որոնք տապալվեցին-ընկան ձանապարիին մինչև Կոստանդնուպոլիսի:

Իսկ տաճիկների ողջ գորքերը՝ տաճիկներ, թաթարներ, ուլահները, մինթացիներ<sup>194</sup> և մյուս բոլորը, ովքեր եկել էին Խոտին, [թվով] շուրջ հարյուր հազար<sup>195</sup> մարդիկ էին, բայց ըստ ոնանց վկայության և հավաստման՝ ավելին էին երկու հարյուր հազար. իսկ ովքեր անօգուտ և անտեղի անխնա կոտորվեցին սրից, սովից և շեներում, ասում են, հարյուր քսան հազար էին, բայց բոլորի կորսայան առիթն ու պատճառն անօրէնն Օսմանն էր, ուստի վերջում ինքն իրենով լցրեց այն փոսք, որը փորեց՝ ստանալով ներկայիս գործերի հատուցումք և սպասում է ապագայի անսպառ և անխուսակելի տանջանաքներն ընդունելուն:

(76)

## ԳԼՈՒԽ ԺԸ.

ՅԱՂԱԳՍ ՄՊԱՆՍԱՆ ՕՍՍԱՆԻՆ, ՈՐ ԵԴԵՒ  
Ի ԹՈՒԻՆ ՀԱՅՈՑ ՈՀԱ, ՄԱՅԻՍ ԺԹ, ՅԱՒՈՒՐ  
ՉՈՐԵՔԸԱԲԱԹԻՆ<sup>196</sup>

251ա

Արդ՝ որովհետև ժամանեցաք ի վերջ լիակատար պատմութեանս, օն առեալ ընթացուք յառաջին զպարտսն մեր ծանուցանել զմնացուածս բանից սկզբան գլխոյն, յորս թոյլ եւտ յայնժամ հարկ տեղույն այնորիկ: Քանզի լուաք ի տեղեկագունից և ի ճշմարտապատում արանց, թէ իբրև եհաս անօրէն արքայն Օսման ի քաղաքն իւր ի Կոստանդնուպոլիս, յայնժամ սկսաւ իո լլ գալ և տիսրել հանապազ անհանգիստ խղձի մտօք վասն ամենայն անցիցն անցելոց, մինչև նեղէր և տագնապէր ի բազում խորհրդոցն:

Ապա մտավարժ լեալ հանճարեցաւ նոր իմն խորհուրդ՝ հնարիւք ինչ հատուցանել զփոխարէնն վրիժուց ազգին հլախաց: Վասն որոյ կամեցաւ մեծաւ պատրաստութեամբ գնալ ի Սակրան, զի ոչ եթէ փոյթ ինչ էր նմա գնալ անդ, այլ ի մտի եղեալ էր անցանել ի յերկիրն Անատոլու, և հաստատել նոր հեծեալս և ի միւսում ամին գալ դարձեալ ի վերայ քրիստոնէից. զոր լուեալ զայս ամենայն նախարարացն իւրոց՝ ջանիւ մեծաւ կամէին արգելով զնա ի կամացն, իսկ նա ոչ բնաւ ումեք ի նոցանէ անսայր, այլ ընդիմադրեալ զբանս նոցա ասէր կեղծաւորաբար, թէ ո՞չ կամիմ այլափոխել զբանս իմ, զի ուխտ երդմամբ արարեալ են գնալ անդ անպատճառ:

Իբրև տեսին մեծամեծքն, թէ ոչ կարեն դարձուցանել զնա ի կամացն իւրոց, յայնժամ ժողովեցան ամենայն զօրք իւրեանց ի մէջ քաղաքին, և ուղարկեն առ նա դեսպանս և ասեն. Մեք զգնալն քո ի Սակրան արգելով չկարենք, քայլ տուր մեզ նախ զմեծ վեզիր քո զՏիլավէր փաշայն<sup>197</sup>, և զաւագ կուսակալն, և զայլ ևս ուրեն արս, որք հակառակ են մեզ, և երթ դու խաղաղութեամբ:

(77)

## ԳԼՈՒԽ ԺԸ.

ՕՍՍԱՆԻ ՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՈՐԸ  
ԿԱՏԱՐԿԵՑ ՀԱՅՈՑ ՈՀԱ (1071) ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՅԻՍԻ 18-ԻՆ, ՉՈՐԵՔԸԱԲԱԹԻ ՈՐԸ

Արդ, որովհետև հասանք իմ այս պատմության լիակատար ավարտին, դե ուրեմն եկեք գնանք ծանուցելու մեր նախկին խոստումը՝ առաջին գլխում [թերի] մնացած բաները, որոնք մենք զանց առաջածեցած քանիցն քաջատեղյակ և ճշմարտախոս մարդկանցից, թէ երբ անօրեն սուլթան Օսմանը հասավ իր քաղաքը՝ Կոստանդնուպոլիս, այնժամ անհանգիստ խղճանաբորվ սկսեց հանապազ տիսրել անցած բոլոր դեպքերի պատճառով, մինչև որ մեղվում և տագնապում էր քազմաքիվ մտքերից:

Ապա ուղեղը լարելով հղացավ մի նոր միտր՝ որևէ հնարքով հատուցել լիի ազգի վրեժի պատասխանը: Այդ պատճառով կամեցավ մեծ պատրաստությամբ գնալ Սակրան, քանզի նրան ոչ թէ անհրաժեշտ էր գնալ այնտեղ, այլ մտադրվել էր անցնել Անատոլիայի երկիր<sup>198</sup>, կազմակորել նոր հեծելազոր և հաջորդ տարի դարձալ զալ քրիստոնյաների վրա. այս լսելով՝ նրա բոլոր նախարարները մեծ ջանքով կամենում էին խափանել նրա ցանկությունը, քայլ նա նրանցից ոչ մեկին բնաւ չէր լսում, այլ ընդիմանալով նրանց խոսքերին՝ կեղծավորապես ասում էր. «Եմ կամենում դրժել իմ խոսքերը, քանզի երդմամբ ուխտել եմ անպատճառ զնալ այնտեղ»:

Երբ մեծամեծերը տեսան, որ չեն կարողանում հետ պահել նրան իր ցանկությունից, այնժամ նրանց ողջ զորքերը հակարկեցին քաղաքի մէջ, նրա մոտ պատվիրակներ ուղարկեցին և ասացին. «Մենք չենք կարողանում քեզ արգելել Սակրան զնալ, քայլ նախ հանձնիր մեզ քո մեծ վեզիրին՝ Դիլավէր փաշային, ավագ կուսակալին, ու նաև ուր ուրիշ այրերի ևս, ովքեր հակառակ են մեզ, և դու խաղաղութեամբ:

(77)

Իսկ Օսման ոչ կամեցաւ տալ նոցա և ոչ զմին ի նոցունց, զի մի՛ և նոքա զնա մատոնեսցեն զօրացն, քանզի խորհրդակիցը էին միմեանց: Եւ դարձեալ առաքեն երկու և երեք անգամ վասն նոյն իրաց, և նա ոչ տայր թոյլ ամենակին մերձենալ ի նոսա:

Եւ տեսեալ ամենայն ամբոխն թէ ոչինչ օգտին՝ յայնժամ համարձակեալ ամենայն բազմութիւն զօրացն, և դիմեալ առ հասարակ մինչև ի դարպաս վեզիրին առանց հրամանի թագաւորին, և ըմբռնեալ զնա քարշէին արտաքս ի փողոց քաղաքին, և անդ սրախողիսող արարեալ ընկեցին ի կերակուր շանց. նոյնպէս և զայլոցն հատեալ զգլուխն՝ կախեցին զիայտէ, և զմարմինս նոցա թաւալին ի թէ լի ատրոնն Աթ-մեյտանի<sup>199</sup>. և այսպիսի խռովութիւնք աղմկաց անկաւ ի միջի նոցա յաւուր [ս] յայնոսկի, մինչ զի բերեալ վաղվաղակի զիօրելրայրն Օսմանին՝ զսութան Մուստաֆայն հաստատեցին թագաւոր ի վերայ իրեանց:

Իբրև լուաւ Օսմանն գեղեալ գործն՝ երկեաւ յերկիտ մեծ, և թագուցեալ գայ ի տուն իշխանին, որ ենիշարաղասի կոչի, և ուղարկէ զնա առ ամբոխն՝ խոստանալ նոցա պարզևս ամենայն գլխոյ ճ դահեկան ոսկի՝ թերևս հանդարտեսցին այնպիսի վրդովնանց: Իսկ գունդք հեծելոցն ոչ ետուն թոյլ խոսել նմա և ոչինչ, այլ և կալեալ զնա սատակեցին ի նմին տեղուց, և ումենն Հիսէին փաշայի նոյնպէս ջախչախեալ թեկին զգլուխն, և ոչ այսու ամենայնի շատացան անգամ ազգն Սարակինոսաց, այլ ևս քան զևս խռովէին իբրև զալիս մրրկեալս կամ որպէս զյորձանս հեղեղաց գարնանացայր գետոց:

Եւ յարուցեալ գան մինչև ի դրունս պալատին կայսերականի, և ըմբռնեալ զողորմելին Օսման, նստուցանեն ի վերայ անարգ երիվարի միոց, և առեալ տարան

Բայց Օսմանը նրանցից և ոչ մեկին չկամեցավ հանձնել նրանց, որպէսզի նրանք էլ իրեն չմատունն զորքերին, քանզի կամակից էին միմյանց: Դարձյալ երկու-երեք անգամ պատվիրակներ ուղարկեցին նույն բանի համար, բայց Օսմանն ամենակին թույլ չտվեց մոտենալ նրանց:

Երբ ողջ ամբոխը տեսավ, որ ոչ մի բան օգուտ չի տալիս, այնժամ զորքերի ողջ բազմությունը համարձակություն առավ, և առանց թագավորի հրամանի գնացին մինչև վեզիրի տան դարպասը ու բռնելով նրան՝ դուրս քարշեցին քաղաքի փողոց, և այնտեղ սրախողիսող անելով՝ զցեցին որպէս շներին կեր, այսպէս նաև ուրիշների գլուխմերը կտրելով՝ կախեցին փայտերից, և նրանց մարմինները թափալում էին Աթ-մեյդանի հրապարակում. և այդ օրերին այսպիսի աղմկալից խռովություն ընկավ նրանց մեջ, մինչև որ թերին անմիջապէս իրենց թագավոր կարգեցին Օսմանի հորեղբորք՝ սուլթան Մուստաֆային<sup>200</sup>:

Երբ Օսմանը լսեց կատարված բաները, մեծապէս վախեցավ և ծածուկ եկավ այն իշխանի տուն, որ ենիշար-աղասի<sup>201</sup> է կոչվում, նրան ուղարկեց ամբոխի մոտ՝ նրանցից ամեն մեկին հարյուր դահեկան ուկի պարզ խոստանալու, թերևս հանդարտվեն այդչափ վրդովնունքից: Սակայն հեծյալների գները նրան ոչինչ չքույլատրեցին խոսել, այլ բռնելով նրան՝ նույն տեղում սպանեցին, ջախչախեցին նաև ոմն Հյուսին փաշայի գլուխը, բայց սարակինոսների անզգամ ազգն այս ամենով չքավարարվեց, այլ ավելի ու ավելի էր խռովվում, իբրև մրրկյալ այիշներ կամ որպէս գարնանը կատարած գետերի հեղեղների հորձանքներ:

[Ապա զորքերը] Ելան-Ելկան մինչև կայսերական պալատի դարպասները և բռնելով թշվառական Օսմանին՝ նստեցրին մի խղճուկ երիվարի վրա և վերցրին-տարան

մինչև ի տեղին, զոր կոչեն Ետի-խոլէ<sup>202</sup>, և ապա անդ ողորմաբար խեղանահ արարեալ կորուսանեն զարքայն հիրեանց, որ բազմորդ առաղակաւ հայցէր ամենից զիրկութենէն և ոչինչ օգտէր. որ և է այս՝ նշան և՛ եղծնան և՛ կործանման տաճն հեթանոսաց:

Բայց այս ամենայն վրեժիննդրութիւնը յուզեցան ի Տեառնէ և յերկայնամտէն Աստուծոյ ի վերայ ամբարտաւանին Օսմանայ, զի այժմ ևս պատրաստ էր հեղուլ վերստին զարիւն և զնենգութիւն դաւաճանութեան դարնացեալ սրտին իւրոյ ի վերայ քրիստոնէից, թէպէտ եղ ուխտ սիրոյ և դաշինս երդմանց: Կասն որոյ յեղակարծ ժամանակի մինչդեռ ի բարձրագոյնս կամէր ձկտիլ՝ նուազեցաւ ընդհանութը, ի խնդրել սակաւուն՝ գրկեցաւ ի հանուրցն, առ յուժին ընթանալն՝ ընկլաւ սաստկապէս, յյ անխախտելի կարծիլն՝ մանր խորտակեցաւ և որ ի յերկինս բարձրանալն՝ ջզ ի դժիխս լի դարնութեամբ, որպէս զԿափառնայում ընկերեալ ջնջեցաւ շաղախեալ գիոզի իւր արեամբ անմեղաց: Ընդ որս և մեք լի ամենեթեան գուարճացեալք ոգուկ, բարձրաբարբար բանիւ զիհրակործան վտանգեալ զանօթն ապականիչ՝ միաբան սաղմոսասաց ցնծութեամբ ասասցուք. Այս այն այր է որ ոչ արար զԱստուած իւր օգնական, այլ յուսացաւ սա ի բազում մեծութիւն իւր, և զօրացաւ ի նանրութեան իւրում<sup>203</sup>:

Ապա յետ այսորիկ զանհատանելին յօրինաբանութիւն առաքեսցուք գոհութեամբ ամենասուրբ երրորդութեանն, քանզի զոր մինչև ցայս ժամանեալ վայր՝ անդադար հետևնանց սակս համառօտութեան բանիս և գրոյս հանդերձ ծանօթութեամբ մտաց, և վկայութեամբ սրտից մերոց՝ ըստ ուխտադրութեանս մերում առաջարանի, թէ որչափ մարդն էր՝ այժմ բովանդակապէս

մինչև այն վայրը, որը կոչում են Ետի-խոլէ. ապա այս տեղ ամխազորեն խեղանահ անելով սպանեցին իրենց սուլքանին, որը պաղատագին աղաղակով բոլորից փրկություն էր հայցում, բայց ոչինչ օգուտ չտվեց. և սա հեթանոսների տան և՛ ապականման, և՛ կործանման նշանն է:

Բայց այս ողջ վրեժիննդրությունն ամբարտավան Օսմանի զիխին խռովվեց Տիրոջ և Երկայնամիտ Աստծու կողմից, քանզի նա այդժամ ևս պատրաստ էր իր դարնացած սրտի արյունն ու նենգությունը վերստին հեղելու քրիստոնյաների վրա, թեպէտ բարեկամության ուխտ և երդման դաշինք էր կապել: Այդ պատճառով անսպասելի պահին, մինչդեռ կամենում էր ձգտել դեպի բարձունքները, առհասարակ ցածրացավ, քիչը ցանկանալիս գրկեց ամբողջից, ուժգին ընթանալիս սաստկապէս սուզվեց, ամխախտ կարծելիս կտոր-կտոր խորտակեց, երկինք բարձրանալիս իջավ դառնալից դժոխվ<sup>204</sup>, Կափառնայումի<sup>205</sup> նման ընկղմվեց-ջնջվեց՝ շաղախելով իր հոգին անմեղների արյամբ: Նրանց հետ և մենք ամենքս, զվարձացած հոգով, բարձրահունչ խոսքով [ակնարկելով] բյուր անգամ կործանված, վնասված անորն ապականիչ, սաղմոսերգական ցնծությամբ ասենք. «Սա այն մարդն է, ով Աստծուն օգնական չդարձրեց իրեն, այլ հուսաց իր մեծ հարստության վրա և հզուացավ իր անիրավության մեջ»:

Ապա սրանից հետո, որպէս օրինաբանություն՝ գոհությամբ անվախճանություն մաղթենք Ամենասուրբ Երրորդությանը, Ով, որքան կարելի էր, մինչ այս հասած տեղը անդադար հետևեց խոսքիս և զրիս համառօտությանը՝ մտքիսիմաստությամբ և սրտիս վկայությամբ հանդերձ՝ ըստ առաջարանի մեր խոստման, և այժմ լիովին

Ետուր զվախճանն օժանդակութեամբն իւրով: Ուրեմն աստանօր ժամ է և մերս դադարեցուցանել գիտութեամբն շամից աշխատութեանց, փառաւորելով զամենակարող և զանհասանելի մեծութիւն զօրութեան նորա, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

### ԻՆՔՆԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՐԱՐՈՂԻ ԲԱՆԻՍ, ՈՐԻՇ Ի ԹՈՒԹՅՆ

Արդ՝ յայսմ անդորրութեան աւուրց, յորում ընդունեալ մերժեցան վնասակար թշնամիք եկեղեցւոյ, յետ ամաց վեցից անցանելոյ, ես՝ Յովհաննէս հուսկ յետին բանահիւսաց և տարտամ հետևողս ուսումնաւորաց, թողեալ զբազում տառապանս մշտակիր ոգւոյս և խանդադատեալ սիրով՝ ցանկացայ բարգմանել խօսիք նիւթական լեզուիս զայս բարեզեկոյց արգասաւորեալ նորագործ իրաշից համբաւ, վերավկայելով կրկին յաւելուածովք:

Որում տպաւորեալ տնօրինաբար, ճշգրտի պատուաստեալ կառուցից ընդ համարս ամաց կենարարին՝ որ միշտ ընթացնան է արուսեկին հոլովեալ ի մեզ յոբելինից ուրեքին չորից և ի յօդն յաւելեալ հիւսամբ, կրկնակի գոյի հնգից և երկրորդ յարակից<sup>206</sup>. իսկ Արա լի բատեան թորգոնայ տոհմին զարմիցն ի նորոգմանէ հինգիարիւրեկին, զենի կատարման դարուն ըստ շրջագայութեանց յեղանակաց ժամանակիս յայսմիկ. յաւել ևս առ մերս քանակութիւն չափոյ եօրներեակ տասանց և վեցից<sup>207</sup>: Յանս աստուածապատի և աբորջնկալ սուրբ ուխտին Վաղարշապատու տեառն տէր Մելքիսեդեկին, և ի թագաւորութեան ինքնակալի տեառն տէր և բարեպաշտի Զիկնունդի Երրորդի, որոյ Քրիստոս Աստուած պահեսցէ զընտրեալն իւր ընդ ամրածածուկ աջովն իւրով. մանաւանդ զմեծապայծառ իշխանն և ծիրանածին զանդրանիկն իւր զմեծն Վլատիսլաւ, և զայլ մեծամեծսն թագաւորութեանն իւրոյ հաս-

ավարտին հասցրեց իր օգնությամբ: Ուրեմն հիմա ժամանակն է, որ մենք ևս դադարեցնենք մեր փութաջան աշխատանքը՝ փառավորելով Նրա զորության ամենակարող և անհաս մեծությունը այժմ և միշտ և հավիտենից. ամեն:

### ԱՅՍ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐՈՂԻ՝ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԻՆՔՆԱԳԻՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ՝ [ԳՐՔԻ] ԳԼՈՒԽՆԵՐԻՑ ԱՌԱՋՈՒՆ

Արդ, այս անդորր օրերին, երբ այլայլված հեռացան եկեղեցու վնասակար թշնամիները, վեց տարի անցնելուց հետո ես՝ Յովհաննեսս, քերողներից] հուսկ հետինս և ուսալների պղերգ հետևորդս, թողնելով հոգուս մշտագոյ բազմաթիվ տառապանքները և սիրով գրաշարժ՝ ցանկացաց լեզվիս նյութական խոսքերով պատմել այս բարեհամբավ նորակատար իրաշքի պատմությունը՝ վերավկայելով կրկին հավելումներով:

Դրանք տնօրինաբար նակարագրելով՝ ճշգրտորեն համաձայնեցրի Կենարարի ծննդյան թվականության հետ<sup>208</sup>, որը միշտ համընթաց է Արեգակնային տարվան՝ մեզանում բոլորելով 5084 և այդ միացությանը կցելով 55 ու գումարելով 2 տարի<sup>209</sup> աստվածապատիկ և աթոռակալ Վաղարշապատ սուրբ ուխտի տեր տեր Մելքիսեդեկի<sup>210</sup> օրերին և ինքնակալ ու բարեպաշտ տիրոջ՝ տեր Զիզմունդ Երրորդի թագավորության օրոք: Թող Քրիստոս Աստվածը իր ընտրյալին պահպանի իր ամրածածուկ աջի ներքո, մանավանդ պայծառավիալ իշխանին, այսինքն՝ նրա ծիրանածին անդրանիկին՝ մեծն Վլատիսլավին: Թող Տերը նրա թագավորության այլ մեծամեծերին ևս գո-

252p

տատեսցէ Տէր ի գործ արութեան, և օրհնեսցէ զամենեսեան անսպառելի օրհնութեամբ, ամէն:

Դարձեալ շնորհեմ սիրով զայս բան,  
Գովել ազինդ իմ պատուական,  
Եւ յազգայնոցը մարմանական,  
Մանկանց տղայոց որք ապա զան:

Առ ձեզ աղերս գերադրական  
Յիմ ոց ջանից սակաւ այսքան,  
Թէադու շնորհաց բանիւ ունայն,  
Այլ հրահանգիցն է ազդարան:

253ա || Մըխիթարիչ յուսադրական  
Ընդդէմ ազգին ամբարտաւան,  
Քրիստոնէից զըւարթարան  
Եւ անհաճիցն մրտաց դարան:

Հաւատացեալքն աստ զօրանան,  
Առ այս գործոյս յաղթողական.  
Սահմետականք սրգով ողբան  
Զհագարացոց անլոյժ վարան:

Հըրծուին հոգուվ ամենեքեան,  
Որոց Քրիստոս է օգնական,  
Քանզի հարեալ հալածեցան  
Այնք որք չպատուեն զյաղթող նըշան:

Դացնի քաջագործություններով և անսպառ օրհնությամբ  
օրհնի ամենքին. ամեն<sup>21</sup>:

Դարձեալ շնորհեմ սիրով զայս բան,  
Գովել ազինդ իմ պատուական,  
Եւ յազգայնոցը մարմանական,  
Մանկանց տղայոց որք ապա զան:

Առ ձեզ աղերս գերադրական  
Յիմ ոց ջանից սակաւ այսքան,  
Թէադու շնորհաց բանիւ ունայն,  
Այլ հրահանգիցն է ազդարան:

Մըխիթարիչ յուսադրական  
Ընդդէմ ազգին ամբարտաւան,  
Քրիստոնէից զըւարթարան  
Եւ անհաճիցն մրտաց դարան:

Հաւատացեալքն աստ զօրանան,  
Առ այս գործոյս յաղթողական.  
Սահմետականք սրգով ողբան  
Զհագարացոց անլոյժ վարան:

Հըրծուին հոգուվ ամենեքեան,  
Որոց Քրիստոս է օգնական,  
Քանզի հարեալ հալածեցան  
Այնք որք չպատուեն զյաղթող նըշան:

Եկեղեցւոյ փառս անվախճան.  
Փայլէ ի գլուխըս զագաթան,  
Զի ի հաղթից հայրենական  
Եկաց մաքուր և անապական:

Թագաւորեաց Տէր յաւիտեան,  
Հայցեա՝ սիրով մայր հանգըստեան  
Պահել զերկիրս այս անսասան  
Մինչ ցօր երկրորդ իւր գալըստեան:

Ընդ սա և զմեզ կարգեալքս սորայն,  
Ընդ բուն որդուցըն սեպիական,  
Զի թէ նըժեկի ծնընդեամբ միայն,  
Այլ սընընդեամբ եմք միաբան:

Եւ դուք մանկունքը պատուական,  
Որք պարապիք սըմին խընդման  
Յիշել հայցեն զմեզ անխափան,  
Զի ձեզ տացի նոյնպէս զփոխան:

Նաև զծնողս իմ սըրբազան  
Ծզտէր Յակոր ծեր քահանայն  
Եւ զբարեպաշտ մայր իմ Համայն,  
ԶՊողոս եղբայրս կըրտսերամեան:

Եւ զընտանիսն ազնըւական,  
Որք լինելոց են և որ կան,  
Զդեռաբողբոջ ծաղկանընան  
զԱստուածատուրն և զՈւստիան:

Բայց ես գործով թափառական,  
Ի լաւագոյն շնորհաց սոցայն,  
Միայն կամաւ կամ անբաժան  
Եւ մերձակայ գոլովս արեան:

253p ||

Եկեղեցւոյ փառս անվախճան.  
Փայլէ ի գլուխըս զագաթան,  
Զի ի հաղթից հայրենական  
Եկաց մաքուր 'և անապական:

Թագաւորեաց Տէր յաւիտեան,  
Հայցեա՝ սիրով մայր հանգըստեան  
Պահել զերկիրս այս անսասան  
Մինչ ցօր երկրորդ իւր գալըստեան:

Ընդ սա և զմեզ կարգեալքս սորայն,  
Ընդ բուն որդուցըն սեպիական,  
Զի թէ նըժեկի ծնընդեամբ միայն,  
Այլ սընընդեամբ եմք միաբան:

Եւ դուք մանկունքը պատուական,  
Որք պարապիք սըմին խընդման  
Յիշել հայցեն զմեզ անխափան,  
Զի ձեզ տացի նոյնպէս զփոխան:

Նաև զծնողս իմ սըրբազան  
Ծզտէր Յակոր ծեր քահանայն  
Եւ զբարեպաշտ մայր իմ Համայն,  
ԶՊողոս եղբայրս կըրտսերամեան:

Եւ զընտանիսն ազնըւական,  
Որք լինելոց են և որ կան,  
Զդեռաբողբոջ ծաղկանընան  
զԱստուածատուրն և զՈւստիան:

Բայց ես գործով թափառական,  
Ի լաւագոյն շնորհաց սոցայն,  
Միայն կամաւ կամ անբաժան  
Եւ մերձակայ գոլովս արեան:

(82)

(82)

Թէ համարիք և աստի բան,  
Զիս Յովիաննէս անձն անպիտան,  
Խառնել ի թիւ սոցին արժան,  
Թէպէտ յետոյ և անազան:

Լիօի՞ք և դուք յիշեալ առ այն,  
Որ է անմեղ և անսահման.  
Զձեզ պըսակէ փառօք յայնժամ  
Ի յերկնային սուրբ հարսնարան:

Սահակ գըրիչս առնէք յիշման,  
Նա զձեզ յիշէ յիւր գալըստեան,  
Յորժամ նըստեցի յաթոր դատման,  
Մեղաւորաց նա քաւարան:

Ամենասուրբ Երրորդութեան  
Տացուք պատիւըս գոհութեան  
Յանցեալ, գալոցն և այժմ որ կեան,  
Եւ անըսպառ միշտ յաւիտեան:

Թէ համարիք և աստի բան,  
Զիս Յովիաննէս անձն անպիտան,  
Խառնել ի թիւ սոցին արժան,  
Թէպէտ յետոյ և անազան:

Լիօի՞ք և դուք յիշեալ առ այն,  
Որ է անմեղ և անսահման.  
Զձեզ պըսակէ փառօք յայնժամ  
Ի յերկնային սուրբ հարսնարան:

### Սահակ գրիչի հիշատակարանը

Սահակ գըրիչս առնէք յիշման,  
Նա զձեզ յիշէ յիւր գալըստեան,  
Յորժամ նըստեցի յաթոր դատման,  
Մեղաւորաց նա քաւարան:

Ամենասուրբ Երրորդութեան  
Տացուք պատիւըս գոհութեան  
Յանցեալ, գալոցն և այժմ որ կեան,  
Եւ անըսպառ միշտ յաւիտեան:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ\*

1 Մելքիսետ կամ Մելքիսեդեկ Գառնեցին ոչ թե կաթողիկոս էր, այլ Ղավիթ Դ Կաղարշապատցի կաթողիկոսի կողմից նշանակված աթոռակից 1593-1626թթ.: Ահա թե ինչ է գործ այդ մասին նրանց ժամանակակիցը՝ պատմիչ Առաքել Ղավրիմեցին. «Սրանից [Առաքել կաթողիկոսից] հետո սուրբ Էջմիածնի կաթողիկոսը եղավ տեր Ղավիթը, և սա ևս՝ նոյն Էջմիածնի գյուղից: ....բայց մինչեւ կենդանի էր և կաթողիկոսական իշխանության մեջ, ինքը ձեռնադրեց մի կաթողիկոս ևս, որի անունն էր Մելքիսետ .... : Սրան ձեռնադրեց այն հույսով, որպեսզի օգնական լինի իրեն, բայց նա նրան խանգարիչ և հակառակորդ եղավ .... : .... Թեպետ եղան երկու կաթողիկոսներ, ինչպես որ ասացի, որպեսզի թերեւացնեն պարտքերը, բայց էլ ավելի շատացրին, քանզի մինչ այժմ մի կաթողիկոս կար և մի մսխող, իսկ այժմ եղան երկու կաթողիկոսներ և երկու մսխողներ» («Պատմութիւն Առաքել Վարդապետի Ղավրիմեցոյ», Կաղարշապատ, 1884թ., էջ 2-3, այսուհետ՝ Ղավրիմեցի): Ավելին՝ կաթողիկոս Ղավիթ Վաղարշապատցու կենդանության օրոք Մելքիսեդեկն իր փոխարեն կաթողիկոս է օծել Երբորորդուն՝ Սահակ Գառնեցուն, սակայն Հայաստանում և Նոր Ջուղայում նրան որպես կաթողիկոս չեն ընդունել (տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Ե., 2002, էջ 270):

Ընչաքաղության, խորամանկության և պահանջվող հարկերից խուսափելու համար Մելքիսեդեկը Երևանի բերդում պարսկի Ամիրգունա խանի որդու՝ Թահմաղղովի բեկի կողմից անգամ կտտանքի է Ենթարկվել՝ կրտով շահ Աբբաս I-ի հրամանով սահմանված անմարդկային պատիժը (Ղավրիմեցի, էջ 157-158):

Մելքիսեդեկը կյանքի վերջին տարիներն անցկացրել

\* Ծանոթագրություններում գետեղված որոշ նյութերի տրամադրման համար հեղինակը շնորհակալություն է հայտնում իր լեհ գործընկերություն՝ Ազգեղական Բլաժեկին, և Լեհաստանի Արամ Միջկիշ համալսարանից ՎՊՀ-ում ուսանող Ղանուտա Ստոյակին:

է Լվովում և Կամենեց Պոդոլսկում կամ Պոդոլյան Կամենեցում (այսուհետ՝ Կամենեց): Նրա անվան հետ է կապվում լվովահայության մի մասի տարագնացությունը, մնացածների էլ կաթոլիկություն ընդունելը, երբ նա 1620թ., ժողովրդի կամքին հակառակ, Լվովում կաշարքով եպիսկոպոս ձեռնադրեց ուն տիրահօչակ Նիկոլի (Ղավրիմեցի, գլուխ ի՛մ):

Մելքիսեդեկի մասին Ս. Օրմանյանը նշում է. «Մելքիսեդեկի արկածախնդիր, փառամոլ, արծաթասեր և նենգամիտ լյանքը փակելով՝ գնահատումի կամ գովեստի ոչ մի կետ չենք գտներ առաջ բերելու համար: Իր աթոռակցութեան կոչված օրեն 33 տարի գործի վրայ գտնուեցաւ, բայց երբեք օգտակար ծառայութիւն նը չկատարեց, որուն ակնկալութեամբ Ղալիթ գինքն բարձրացուց, կամ թէ ինքն ինքզինքը բարձրացնել ստիպեց: Բոլոր նպատակն եղաւ Ղալիթը և ուրիշ աթոռակցուները անշքացնելով ինքն տիրանալ իշխանութեան ....» (Ս. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածնի, 2001, էջ 2768):

Մելքիսեդեկը մահացել է 1626թ. և թաղված է Լեհաստանի Կամենեց քաղաքում: Նրա գործունեության մասին առավել մանրամասնորեն կարելի է հմանալ Ղավրիմեցու հիշյալ երկից:

2 Բնագրում՝ ումին:

3 Հմտ.

Զանցեալսն և զգալոցսն, գեղեալսն և ոչ գոյացեալսն  
Անստուերաբար բարբառով բանի վերապատճեցին  
(Նար, ԼԳ):

4 Խոտին գյուղաքաղաքը (Ակար 1), որտեղ ընթացել է Հովհաննես Կամենացու նկարագրած լեհ-թուրքական պատերազմը, գտնվում էր պատմական Բուկովինայում: Մինչև XIV դարի վերջը մտնում էր Կիևան Ուստիայի կազմի մեջ, XIV դարի վերջերից այն արդեն Մոլդովայի կազմում էր, ընկած էր նրա դեմ դիմաց՝ Ղանտրի հակառակ ակին գտնվող լեհական Կամենեց բերդաբաղաքից ընդամենը 20 կմ դեպի հարավ-արևմուտքը:

Միջնադարյան Խոտինը եղել է նվաճողների ուշադրության կենտրոնում: Քաղաքի պաշտպանության համար այնտեղ կառուցվել է ամրոց: Մոլովական պետության անկումից հետո Խոտինն ընկավ Թուրքիայի լօի տակ: 1615թ. լեհական զորքերը գրավեցին Խոտինը, սակայն 1621թ. տեղի ունեցած լեհ-թուրքական պատերազմի արդյունքում կնքվեց 1621թ. Խոտինյան հաշտությունը, համաձայն որի՝ Խոտինը վերադարձվեց Օսմանյան Թուրքիայից վասալական կախման մեջ գտնվող Մոլովակիային, սակայն իրականում Խոտինը հսկվում էր թուրքերի կողմից:

Խոտինում նույնպես գոյություն ուներ հայկական «մի ոչ աննշան գաղութ, որի հնագույն հիշատակությունը հասնում է 1418 թվականը, երբ Ալեքսանդր Չել-Բունի հրավերով հազարավոր հայ զնտանիքներ տեղափոխվեցին Մոլովակիայի յոթ քաղաքներում» (Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 10):

Խոտինի հայությունն ակտիվորեն շփվում էր Կամենեցում ապրող հայրենակիցների հետ: Վերջիններին կողմից Խոտինի հայտնի շուկայում վաճառքի էին հանվում կտավ, ծիեր, գորգեր և այլն: Ասվածը հաստատում են խոտինահայության մասին հետաքրքիր տեղեկությունները Կամենեցի հիշալ տարեգրության մեջ, որոնք գերազանցապես վերաբերում են դատաիրավական և առևտի ոլորտներին (Հ. Ս. Ռաշբա, Общественно-политическая жизнь армянского колонии в Каменице-Подольском /XVI-XVII вв./, Պատմա-բանասիրական հանդես, 1976, № 4, ս. 114-116).

5 Պոլոններին, այսինքն՝ լեհերին տրվող անուններից մեկը:

6 \*Եփես., Ղ, 11:

7 \*Հմնտ. Ա Կոր., ԺԲ, 8:

8 \*\*Հմնտ. Միթ ամենեքի՞ն առաքեալք իցեն. միթ ամենեքի՞ն մարգարէք իցեն, միթ ամենեքի՞ն վարդապետք իցեն... (Ա Կոր., ԼԲ, 29):

9 \*\*Հմնտ. Թեպէտ և բաժինք շնորհաց են, այլ Հոգի նոյն է: Եթէ բաժինք պաշտամանց են, այլ Տէր նոյն է: Եթէ բաժինք

յաջողութեանց են, Աստուած նոյն է, որ յաջողէ զամենայն ամենայնի (Ա. Կոր., ԺԲ, 4-6):

10 \*\*Հմնտ. Ա Կոր., ԺԲ, 9-10:

11 \*1. Նկատի ունի Օքտենտ Կամենացու ժամանակագրությունը, տե՛ս Յովհաննէս Կամենացի, Պատմութիւն պատերազմին Խորհնու՝ աշխ. Հ. Անասյանի (Ե., 1964թ.) աշխատության առաջաբանը, էջ 8-9 և 13-15:

12 Հմնտ. .... դժուարահաւաք և տաժանելի է գիւտ ժամանակաց (Մովսիս Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տիղիս, 1913, էջ 17):

13 Հմնտ. .... սկսուք, ուստի արժան է սկսանել (Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957, էջ 5):

14 \*Հմնտ. Սաղմ., ՀԸ, 1:

15 «Սարակինոս» ամվանումը ուշ միջնադարյան Եվրոպայում գործածվում էր մահմեդականներին հատկանշելու համար: Քրիստոնեության առաջին դարերում հոյս և հռոմեացի հեղինակների երկերում այն գործածվում էր հռոմեական Արաբիա արովինցիայի և հարակից ամապատային տարածքներում ապրող և արաբներից հստակորեն տարբերվող ժողովորդի վերաբերյալ (Retsö Jan. The arabs in Antiquity: Their History from the Assyrians to the Umayyads. Routledge, 2003, pp. 505-506):

Կ. Պոտոնեոսի «Աշխարհագրություն» աշխատության մեջ Սինայի թերակղու հյուսիսում հիշատակվում է «Տարակղոյ» գավառը (Retsö Jan. pp. 505-506) և սրա հարևանությամբ ապրող սարակինոսներ (Տարակոնօս) կոչվող ժողովուրդը: «Օգոստոսների պատմություն» (Historia Augusta) նույնպես վկայում է 193թ. Եգիպտոսում Պետեկնիոս Նիգերի բանակի վրա «սարակինոսների հարձակման մասին» (Վոլկաций Գալլիկան, Յուլիй Կապուտուն և այլն, Վլաստելինա Ռիմ: Բնօրության պատմության մասին), որը պատմում է ապրության մասին («Տարակղոյ» բնութագրում՝ սարակինոսները «Կիսամերկ, մինչև կոնքերը գունագեղ թիկնոցներով ծածկված, արագավազ ծիերով, թերև

ուղտերով դեգերում են տեղից տեղ ինչպես խաղաղ ժամանակներում, նույնպես և ռազմական տագնապների ժամանակներում» (Аммиан Марцеллин, Римская история, перевод с латинского Ю. А. Кулаковского и А. И. Сонник, М., 2005, XIV. 4, 1-7, стр. 12):

Ակսած ոչ ուշ քան V դարի սկզբներից քրիստոնյա հեղինակները սարակինոսներին նույնացնում են արաբների հետ, որը հակադարձորեն հանգեցնում է խմայելացիների (Արահամի ավագ որդի Իսմայելի օրով) հետ նրանց նույնացմանը (տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 13, Բյուզանդական աղբյուրներ, Դ. Թեոփանես Խոստովանող, թարգմ. Հ. Բարթևյանի, Երևան, 1983, էջ 42): Հետագայում իրեն սարակինոս-խմայելացիների հոմանիշ գործածվում է հազարացիներ տերմինը՝ ընդգծելով նրանց աղերսը Արահամի հարձ Հագարի հետ (Rubenstein, Jan, 2011 Armies of Heaven: The First Crusade and the for Apocalypse, p.121): Այդ կապի մասին պատկերացումը բավականին տարածված էր միջնադարում: Սակայն հետագա դարերի ընթացքում սարակինոսներ եզրաքարը լատինական արևմուտքում փոխեց իր բովանդակությունը՝ ստանալով բացասական իմաստ:

VIII դարի բանավիճային աշխատություններում վատաքանվում են սարակինոսները՝ իրեն կեղծ մարգարի հետևորդներ և «հակաքրիստոսի նախագուշակներ» (Иоанн Дамаскин, Беседа с арацина с христианином, см. Azbyka.ru/otekhnik/Ioann\_Damaskin):

XII դարից միջնադարյան Եվրոպայում ստեղծվեցին յուրօհնակ տեսություններ իսլամի մասին, և սարակինոս հասկացությունը ստացավ էթնիկական ու կրոնական բովանդակություն: Սարակինոսներին, նույնն է թե մահմեդականներին, սկսեցին նույնացնել սևամորթների հետ, իսկ քրիստոնյաներին՝ սպիտակամորթների:

16 Նկատի ունի մուսուլմանական հավատի Մուհամմեդ (Մուհամեդ, Մահմեդ) մարգարեին, ով ծնվել է 570 (կամ 571) թվականի ապրիլի 20-ին Մեքքայում, մահացել է

632թ. հունիսի 8-ին Մադինայում: Մուհամմադն Ալլահից հետո համարվում է իսլամի կենտրոնական դեմքը, ով իսլամ կրոնի հիմնադիրն է և քարոզիչը: Ըստ իսլամի ուսմունքի՝ Աստվածն է Մուհամմեդին ուղարկել սուրբ գիրքը՝ Գաբրիել հրեշտակապետի միջոցով, ով, մատնացուց անելով գիրքը, ասել է՝ կարդա՝ (արաբ՝ ղուրա՛ն), այստեղից էլ՝ Ղուրան (Домшаков О. Г., История халифата, ч. I, Ислам в Аравии 570-633гг., Москва, 1989, с. 70-71):

- 17 \*2. Սուլթան Օսման II-ը թագավորել է 1618-1622թթ.:
- 18 \*Նկատի ունի Աստվածաշնչի գրքերից մեկի հեղինակի՝ ժողովողի հայտնի արտահայտությունը. Վայ՛ քեզ, որոյ թագաւոր քո մանուկ է, և իշխանք քո ընդ առաւտու ուտեն (ժող., Ժ, 16):
- 19 \*Հմմտ. Զի ոչ է ծառ բարի, որ առնէ պտուի չար և ոչ դարձեալ ծառ չար, որ առնէ պտուղ բարի: Զի հիրաքանչիր ծառ ի պտղոյ իւրմէ ձանաչի (Ղուկ., Զ, 43-44) և Ոչ կարէ ծառ բարի պտուղ չար առնել և ոչ ծառ չար պտուղ բարի առնել:.... Ապա ի պտղոյ նոցա ծանիչիք զնոսա (Մատթ., Է, 18, 20):
- 20 \*Ի պտղոյ անտի ծառն ձանաչի (Մատթ., ԺԲ, 33):
- 21 \*3. Հայկական աղբյուրները պոլոններին առհասարակ տալիս են իլախ կամ լեհ անունը: Կերչինս գործածական է և այսօր: Իսկ նրանց տրվող սարմատացի անունը գտնում ենք և լեհական աղբյուրներում: Դաղմատացի կոչման մասին տե՛ս ծանոթ. 35\*7:
- 22 \*4. Մեր հեղինակը գերմանացիներին տալիս է ալաման անունը, որը հայկական աղբյուրներում սակավ հանդիպող տերմին է: Այստեղ փոխառված է Օքսենտ Կամենացու հայ-կոմաններն ժամանակագրությունից:
- 23 \*5. Մաջար (արևմտահայ ուղղագրական սիստեմով՝ մաճար): Հայկական աղբյուրները թուրքերի միջոցով եկած այս տերմինով են անվանում հունգարացիներին:
- 24 \*6. Բողդան կամ Բուղդան (արևմտահայ ուղղագրությամբ Պողոտան, Պուղոտան): XVI-XVII դարերում հարևան ժողովուրդների կողմից Մոլդավիային տրվում էր Բող-

դամիա անունը՝ հետևողությամբ թուրքերի, որոնք 1513 թվականին իրենց գերիշխանությունը պարտադրելով Մոլդավիայի իշխան Բոգդան III Սլեի՛ այսուհետև նրա երկիրն անվանել են Բուղդանի (Բոգդանի) Երկիր, կամ՝ պարզապես՝ Բուղդան կամ Կարա-Բուղդան (այսինքն՝ Սև-Բոգդանիա):

Հայկական աղբյուրներում ևս Մոլդավիան կոչվում է Բուղդան (Պուղտան) և Բուղդանայ (Պուղտանայ) Երկիր, բայց հաճախ նաև՝ Բուղդանաց (Պուղտանաց) Երկիր, մի ձև, որը ցոյց է տալիս, թե Բուղդան (Պուղտան) անունը հավասարապես տրվում է նաև Մոլդավիայի ժողովրդին: Այս վերջին իմաստով երբեմն գործ էր ածվում նաև Բուղդանցի (Պուղտանցի) ձևը, ինչպես կաև Հովհաննես Կամենացու մոտ:

- 25 Կարծում ենք՝ բնագիրը խաթարված է, քանի որ այս տեղ խոսվում է Աստծու օգնությանն ապավինելու փոխարեն իրենց ուժին ապավինած մարդկանց պարտության մասին. աստվածաշնչյան մի գաղափար, որն արծարծվում է ոչ միայն մեր ուղիշ պատմիչների կողմից, այլև հենց Հովհաննես Կամենացու այս երկի մեկ այլ գլխում (էջ 79). «Սա այն մարդն է, ով Աստծուն օգնական չտարձրեց իրեն, այլ հուսաց իր մեծ հարստության վրա և հզորացավ իր անիրավության մեջ» (Սաղմ., ԾԱ, 9):
- 26 Սուլթան Օսման II-ը Օսմանյան կայսրության սուլթան-ների շարքում ոչ թե տասնիններորդն էր, այլ տասնվեցերորդը: Այս մասին մի քանի անգամ վկայում է Առաքել Դավրիթեցին նշված Երկում (Դավրիթեցի, էջ 439, 440, 446, 447, 449):
- 27 Ինչպես վկայում է Օքսենտ Կամենացին իր օրագրության մեջ, Օսման II-ը զահ է բարձրացել ընդամենը 14 տարեկան հասակում (Ղալոնդ Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896թ., էջ 83): Այս փաստն իր Երկում վկայում է նաև Առաքել Դավրիթեցին (Դավրիթեցի, էջ 439), սակայն 449-րդ էջում 14 տարեկանի փոխարեն նշում է 13:
- 28 Լեհերին տրվող սարմատացի անունը, ինչպես վկայում է Հ. Անասյանը 21\*3-րդ ծանոթագրության մեջ, հանդի-

պում է նաև լեհական աղբյուրներում (Հ. Անասյան, նշվ. աշխ., էջ 84):

Հերոդոտի կարծիքով սարմատները սերում են ամազոնուհիներից, որոնք ամուսնանում էին սկսութ պատանիների հետ՝ տեղափոխվելով Տանախս /Դոն/ գետից արևելք (Հերոդոտոս, Պատմություն ինը գործ, Երևան, 1986, IV, էջ 257-259):

Սարմատներն իրանալեզու խաշնարած քոչվորներ էին, որոնք մ.թ.ա. VI-IV դարերում գրալեցնում էին ներկայիս Ուկրաինայի տափաստանային շրջանները՝ Տիսսա և Դանուբ գետերի ջրաժամկետները:

Մ.թ.ա. V-IV դարերում սարմատները հիշատակվում են որպես սկսութների հարևան ցեղ, ովքեր պարսկիների դեմ կրիվների ժամանակ օգնում էին սկսութներին: Հետագայում սարմատների մի մասը ծառայության մտավ սկսութների արքունական գործերում, իսկ առանձին խմբեր բնակություն հաստատեցին Եվրոպական Սկյութիայի տարածքում:

Մ.թ.ա. III դ. բարեկամական հարաբերություններին փոխարինում են սարմատների թշնամական հարձակումները սկսութների վրա, որոնք, աստիճանաբար թուլանալով, հետագայում պարտություն են կրում թրակացիներից և կելտերից՝ զիջելով իրենց տարածությունների զգալի մասը:

Հետագայում իրենց սարմատ անունով են կոչել ոչ միայն Եվրոպական, այլև ասիական, մասնավորապես Կովկասյան մի շարք ցեղեր (ալաններ, օսեր և այլք): Այսպես էլ Ուչ Պոսպոլիտայի ժամանակաշրջանում՝ սկսած XVI դ. կեներից, լեի հումանիստները խորացնում էին հունական և հռոմեական ազգագրություններից հայտնի տափաստանային հին ժողովրդից՝ սարմատներից, լեհերի սերնան վարկածը (սարմատականություն): XVI դ. այդ դրույթը դարձնում է լեհական վերնախավի հիմնական գաղափարախոսությունը, որը մի յուրատեսակ սոցիալական ռասիզմի դրսևորում էր. ազնվականները համարվում էին սարմատների, իսկ հասարակության

մյուս շերտերը՝ պավոնների և լիտվացիների հետնորդներ: Արվեստի բնագավառում գոյություն ունի հատուկ էզրույր՝ «սարմատական դիմանկար». լին ազնվականները ցանկանում էին, որ նկարիչներն իրենց պատկերեն «որպես սարմատների» (նկարներ 2, 3, 4):

Սամսավորապես XVII-XVIII դարերից Լեհաստանում սարմատ էր անվանվում այն ազնվականը, ով հետևում էր հին հավատալիքներին և սովորություններին: Նա պետք է լիներ ասպետ և զինվոր, զյուղատնտես-հողատեր մագնատ, կրթած և աշխարհիկ հետաքրքրություններ ունեցող մարդ: Սարմատների հիմնական զբաղմունքներն էին պատերազմը, որսորդությունը, պղունեզը:

29 Նկատի ունի Մոսկովյան պետությունը, որը գոյություն է ունեցել XVI-XVII դարերում:

XVI դարը Մոսկովյան պետության համար մի ժամանակաշրջան էր, որը բնութագրվում է տարածքային ընդլայնմանը և բացարձակ միավետության ձևավորմանը: Բնակչության թիվը XVI դարում կազմել է մոտ 9 մլն մարդ, բուն Մոսկվայում՝ շուրջ 50 հազար: Արդյունքում Մոսկովյան պետությունը Վասիլի III-ի (1505-1533թ.) օրոք Եվրոպայում ամենամեծն էր: Իվան Ահեղ I (1533-1584թ.) օրոք ծերնարկված մի շարք բարեփոխումներ թուլացրին ազնվականության դիրքերը և ամրապնդեցին ցարի իշխանությունը: Իվան Ահեղը հայտնի էր դաժանությամբ և բռնատիրությամբ. իր բազավորության ընթացքում նա նվաճել է Սիբիրը, Կազանի և Կստորախանի խանությունները, չորս տարի պատերազմ է մղել Ղրիմի խանության դեմ, պայքար մղել մերձբալթյան մի շարք տարածքների համար: Սակայն Երկարատև պատերազմները Երկիրը հասցրին ծայր աղքատության, որին 1598-1612թ. հետևեց հանրահայտ խառնակ ժամանակաշրջանը, որում իրենց դերակատարությունն ունեին Ուչ Պուսպուլիտայի թագավոր Սիգիզմունդ III-ը և թագաժառանգ Վլադիսլավը: Երկրում հիշյալ ժամանակաշրջանն ավարտվեց 1612-ին, երբ զահ բարձրացավ Ռոմանովների հարստության հիմնադիրը՝

Միխայիլ Ռոմանովը (1613-1645թ.)՝ սկիզբ դնելով շուրջ 300-ամյա թագավորության:

Մոսկովյան պետության ամենանշանակալից դեպքերից է գյուղացիական ապստամբությունը Ստեփան Ռազինի գլխավորությամբ (1667-1671թ.), որը ձնշվեց մեծ ջանքերի գնում:

Ըստ Կամենեցի տարեգրության՝ Մոսկովցիք (Ղևոնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 16):

- 30 Նպատակահարմար համարեցինք բնագրի չափած հատվածները չթարգմանել, մանավանդ որ դրանք պատմական և գեղարվեստական տեսանկյուններից առանձնակի արժեք չեն ներկայացնում և ասելիքի հանգավորված ձևակերպումներ են:
- 31 Նկատի ունի աստվածաշնչյան Ամբակում մարգարեին:
- 32 Սաղմ., ՃԶ, 40-41:
- 33 Ժող., Ժ, 7-8: Ղուկ., Ա, 53:
- 34 \*7. Խոսքը Վերաբերում է հայոց կաթողիկոս Ներսես Պարթևին (IV դար) Վերագրված մարգարեությանը, որի համաձայն հայերը հազարացիների լոի տակ ընկելուց հետո մի օր պիտի ազատվեին հռոմեացիների կամ, ինչպես Հովհաննես Կամենացին է ասում, դաղմատացիների ծեռքով: Այս մարգարեությունը մուծված է IX դարի մատենագիր Մեսրոպ Երեցի գրած՝ Ներսես Պարթևի կենսագրության մեջ, որը մեզ հասել է Երկու խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ: Երկու խմբագրություններն ել հրատարակված են:

Թյուրիմացությունները կանխելու համար պետք է ավելացնել, որ հայ մատենագրության մեջ դաղմատացի անունը հաճախ գործածված է հռոմեացի նշանակությամբ: Ազաթանգեղոսը հայոց Տրդատ թագավորի և Գրիգոր Լուսավորչի դեպի Հռոմ ուղևորության մասին խոսելիս ասում է, որ նրանք «Երթային հասանելին յաշխարհն Իտալիացւոց և յերկիրն Դաղմատացւոց ի թագաւորական քաղաքն Հռովմայեցւոց», տե՛ս «Ազաթանգեղայ պատմութիւն», Կենետիկ, 1930, էջ 644-645: Այստեղ Երկիր Դաղմատացւոց կամ Դաղմատիա նշա-


նակում է Հատիոն: Իսկ Դաշանց թղթի համաձայն, Կոստանդիանոս Սեօք հայոց հետ դաշինք կնքելու առթիվ ասում է, թե «ժողով եղև մեծ... բազմաբիւր իշխանօրս դաղմատական», տես Կ. Շահնազարյանց, «Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը», Փարփ, 1862, էջ 14. հետո՝ հայոց հազարապետներին նվիրում է «նշանակու և դրօշ դաղմատացիս» , անդ, էջ 18. և հրամայում է, որ «համօրէն մարդիկ սեփիհական ազգաց Դաղմատացոց և Հայոց ամենսին անզիխահարկ լիցին», անդ, էջ 13: Ուրեմն հասկանալի է, որ Հովհաննես Կամենացին այս հատվածում դաղմատացի անվան տակ նկատի ունի հրոմեացիներին:

Սակայն հայերի մոտ դաղմատացի անունը տրվել է նաև առհասարակ այն բոլոր ժողովուրդներին, որոնք դավանությամբ հռոմեական կամ կաթոլիկ են, և հենց Հովհաննես Կամենացին ինքը քիչ վերև այս անունը տվել է լեհերին, «որը են ազգաւ դաղմատոք և դաւանութեամբ Հռոմայեցլոց» (տե՛ս էջ 35): Այսպես և XIII դարի բանաստեղծ Ֆրիկը զանազան ժողովուրդների մասին խոսելիս նրանց կրկնանուններ տալով՝ սպանացիներին տվել է դաղմատ կրկնանունը, տե՛ս Մ. Սկրյան, «XIII- XVIII դարերի հայ աշխարհիկ գրականություն», Ե., 1938, էջ 2:

Ներսես Պարթևի մարգարեության մասին խոսում են նաև պատմիչներ Գրիգոր Ակներցին, Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ: Անապահութեամբ կանխագուշակեց նետողների ազգի ու մեր հայոց աշխարհի ավերման մասին, այժմ կատարվեց թարար կոչված ազգի կողմից ....» (Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Ե., 1982, էջ 25):

35 \*\* Հմնտ. Տեսի զանապարհշտն վերացեալ թարձրացեալ որպէս զմայրիս լիբանանու (Սաղմ., ԼԶ, 35):

36 \*\* Հմնտ. Բազումք եղիցին առաջինք յետինք, եւ յետինք առաջինք: (Մատթ., Ժթ, 30): Այսպէս եղիցին յետինք առաջինք, եւ առաջինք՝ յետինք: Զի բազում են կոչեցեալք՝ եւ սակաւք են ընտրեալք: (Մատթ., Ի, 16): Զի բա-



Նկար 1.  
Խոտին գյուղաքաղաքի ամրոցը (ծանոթ. 4)



Նկար 2.  
Սարմատներ (ծանոթ. 28)



Նկար 3.  
Սարմատներ (ծանոթ. 28)



Նկար 4.  
Լեհ սարմատ (ծանոթ. 28)




Նկար 5.  
Զիզմունդ//Սիգիզմունդ III Կազա  
(1613թ.)  
Հեղինակ՝ Շիմոն Բոգուշովիչ  
(լկովան գեղանկարչական  
դպրոցի փայուն ներկայացուցիչ,  
հայազգի Պավել Բոգուշ  
Դոնչովովիչի որդին)  
В.А.Освейчук, Деятельность  
армянских живописцев во  
Львове /XV-XVII вв./,  
Պատմա-բանասիրական  
հանդես, 1966, № 2, ст. 257.  
(ծանոթ. 42\*)




Նկար 6.  
Զիզմունդ//Սիգիզմունդ III Կազա (ծանոթ. 42\*)




Նկար 7.  
Խաչակիրներ (ծանոթ. 58\*20)




Նկար 9.  
Ուշ Պատմությունի դրոշը  
(ծանոթ. 42\*10, 62)




Նկար 10.  
Շվեդիայի գերբը  
(ծանոթ. 42\*10, 62)



Նկար 11.  
Ականավետի խոհանոց




Նկար 12.  
Չապորովյան կազմերի ատաման  
Յան Կարոլ Խոդկես  
<Եղինակ՝ Լեռն Կապիհնսկի (ծանոթ. 71)




Նկար 13.  
Ֆլամանդիայի դրոշը  
(ծանոթ. 72)



Նկար 14.  
Ֆլամանդիայի քարտեզը  
(ծանոթ. 72)



Նկարներ 15-16.  
Վլադիսլավ IV Վազան (ծանոթ. 77\*27)




Նկար 17.  
Կազակական գումակ (Ժամոք. 82)



Նկար 18.  
Մի հատված Կամենեց Պոդոլսկ բերդաքաղաքի  
պարիսպներից և աշտարակներից (Ժամոք. 84)



Նկար 19.  
Չափորոժյան Սեչի ատաման  
Յակով Ադամովիչ Ներոնիչ-Բորովավկան (Ժամոք. 88)



Նկար 20.  
Չափորոժյան կազակների ատաման  
Պյոտր Կոնաշևիչ Սահայդաչնի (Ժամոք. 89)



Նկար 21.  
Կամենեց Պողոլսկի  
Ս.Նիկողայոս հայկական  
առաջին եկեղեցին  
(13-14-րդ դարեր)  
(ծանոթ. 93\*38)



Նկար 22.  
Տուպարըշ-հուսար  
(ծանոթ. 107\*49)



Նկար 23.  
Սամուիլ Կորեցկի  
(ծանոթ. 158\*80)



Նկար 24.  
Զիգմոնդ Ֆոգել, «Օստրովի ամրոցը» (XVIII դ.) (ծանոթ. 172)



Նկար 25.  
Ֆրանցիսկ Սմոլգլեհ, «Խողկիչի մահը»  
(Կենտրոնում՝ ատաման Սահայդաշնին) (Ժամոթ. 172)



Նկար 26.  
Զինված կազակներ (Ժամոթ. 174)

զումք եղիցին առաջինք՝ յետինք, եւ յետինք՝ առաջինք  
(Մարկ., Ժ, 31):

37 Ըստ Աստվածաշնչի՝ Եգիպտուի Հազարը արաբների նախահայր Իսմայելի մայրն էր: Նա Աբրահամի հարձն էր և Աբրահամի կնոջ՝ Սառայի աղախինը: Աբրահամն ու Սառան զավակ չունեին, և Սառայի համաձայնությամբ Աբրահամից և Հազարից ծնվեց արու զավակ՝ Իսմայելը, ում Սառան որդեգրեց, սակայն հետագայում արտաքսեց Եգիպտոս: Հազարի սերնդին կամ, որ նույնն է, Իսմայելից սերվածներին անվանում են հազարացիներ կամ իսմայելացիներ, այլուր նաև՝ աղախնաժիններ:

38 \*8. Հայկական աղբյուրները հոռոմ անունն են տալիս բյուզանդացիներին: Հեղինակն ուզրւ է ասել, որ Օսման II-ը, ինչպես իր նախորդները, նստած էր Երբեմնի բյուզանդական կայսրերի գահի վրա:

39 \*9. Այստեղ մեր հեղինակը գործ է ածում երեք գուգահեռ թվականներ, որոնցից առաջինը փրկչական թվականն է՝ 1621:

Երկրորդը հայկականն է: Հայկական թվականն սկսվել է մեր թվարկության 551/552 թվականին, ուստի և նրա 1070-րդ տարին իրոք համապատասխանում է փրկչական 1621 թվականին: Հայոց թվականը առաջ էր շարժվում յուրաքանչյուրը 532 տարիներից բարկացած տոմարական շրջաններով, որոնք տարիների թվի կլորացված հաշվով անվանվում էին «հինգիարիւրեակ»-ներ: Առաջին հինգիարյուրյակի լրանալուց հետո երկրորդ սկսվել էր 1084 թվականին, իսկ երրորդը՝ 1616 թվականին: Հովհաննես Կամենացին այստեղ առաջին հինգիարյուրյակին է ակնարկում:

Երրորդ թվականը իսլամականն է, սակայն ոչ հիջրեթինը, որի հաշվումն սկսվում է 622/623 թվականից: Քանի որ Հովհաննես Կամենացին իսլամական թվականի բոլորած տարիների թիվը դնում է 980, ապա պարզ է, որ նա որպես մեկնակետ ընդունել է 641 թվականը, որը 18-19 տարով ուշ է հիջրեթի թվականից: Կարծում ենք, որ Հովհաննես Կամենացին իր այս հաշիվն սկսելով,

ինչպես ինքն է ասում, «ի բռնութենէն Տաճկաց», նկատի է ունեցել արաբների կողմից Հայաստանի մայրաքաղաք Դվինի առօւն ու ավերումը, որն սկիզբ դրեց արարական նվազումներին Հայաստանում: Դվինի անկման թվականի մասին տարակարծություններ կան պատմական աղբյուրներում, բայց, ըստ Երևային, Ճշմարտությունից հեռու չէ Հովհաննես Կամենացու հաշիվը, այն է՝ 641 թվականը, հմմտ. Ս. Օրմանյան, «Ազգապատում», մասն Ա, Վ. Պոլիս, 1912, էջ 704-705: Հմմտ. նաև Կ. Եղյանի ի մի բերած աղբյուրների ցուցմունքները հետևյալ հրատարակության մեջ. «Պատմութիւն Ղենդեայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 176, ծան. 9:

Մի երկու խոսք էլ Քաղջրդի մասին, որի անունը ներ հեղինակը կապում է Մահմեդի և արաբների «բռնության» հետ: Քաղիրդ, Քաղիրթ, Քաղջրդ անունը հայացած ձև է արաբական գրության խալիթ իրև կալիրդ ամվան, տե՛ս Բ. Կյուլերսերյան, «Իսլամը հայ մատենագրութեան մէջ», Վիենա, 1930, էջ 336-338: Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց»-ում նրա մասին գրում է. «Որ և ութ ամօք յառաջ քան զՄահմէտ, իշխան ունն, անուն Քաղջրդ, առաջին նստեալ գլուխ Խանակլացոցն, և զօրացեալ աւերաց զԴամասկոս, որ է Ղմըշխ, և ելեալ ի Հայոց, բազումս ի Պարսից և ի Հայոց ի տուր սուսերի արկ» և այլն, անդ, էջ 121: Այդ պատճառով հայերն իրենց թշնամական վերաբերմունքն են արտահայտել Խալիրդին՝ նրա անունը դարձնելով քաղիրդ, որը մեր լեզվի մեջ նշանակում է՝ «մեծ պարկ ի փոր կենդանոյն... ընդունարան ապաւաթի», տե՛ս «Նոր բարգիրք հայկացեան լեզուի», հատոր Բ, Վենետիկ, 1837, էջ 972: Ըստ Զվանշերի՝ արաբներն իրենց այս նշանավոր զորավարի անունով «առ ժամանակ մի և Քաղջրականք կոչեցան», տե՛ս «Համառու պատմութիւն Վրաց, ընծայեալ Զուանշերի պատմչի», Վենետիկ, 1884, էջ 102:

40 Հիսուս Քրիստոսին տրվող ամենահաճախադեալ անուններից մեկը:

41 Նկատի ունի գրիգորյան տոմարը, որով առաջնորդվում

էին Լեհաստանում: Սակայն նշենք, որ սույն պատմության մեջ գրիգորյան տոմարով հիշատակվող թվականներին գուգահեր բերվում են նաև՝ ըստ հուլյան տոմարի, որը նախորդել է գրիգորյանին:

- 42 \*10. Սիգիսմոնդ III-ը թագավորել է 1585-1622թ.:  
Իրականում Սիգիզմոնդ Երրորդ Վազան (նկարներ 5, 6, 9-11) թագավորել է 46 տարի: 1587թ. Ծվեղիայի արքա Հովհան (Յոհան) III և լեհական արքայադուստր Կատարինա Յագելլոնիկի որդին ընտրվեց լեհ-լիտվական պետության՝ Ուչ Պոսպոլիտայի թագավոր՝ Սիգիզմոնդ կամ Զիգմոնդ III Վազա անվամբ, և թագավորեց 1587-1632թ.: Եվ քանի որ նա միաժամանակ նաև Ծվեղիայի գահաժառանգն էր, ուստի Լեհաստանն ու Ծվեղիան հայտնվեցին միևնույն գայիսոնի ներքո: Հոր՝ Հովհան III Ծվեղացու մահից հետո՝ 1592թ., նա օծվեց նաև Ծվեղիայի թագավոր, բայց այնտեղ տեղապահ նշանակելով իր հորեղբայր Կառլ Զյուդերմաննանացուն, Վերադարձավ Լեհաստան: Սակայն նեպքերի հետագա զարգացումները հանգեցրին նրան, որ հորեղբայրն ապստամբեց, 1599թ. Սիգիզմոնդին գահինեց արեց, իսկ 1604թ. իրեն հոչակեց Ծվեղիայի թագավոր (Կառլ IX): Նրա մահից հետո՝ 1611 թվականից սկսած, Ծվեղիայի թագը ժառանգեց Կառլի որդին՝ Գուստավ-Ադոլֆը, որը մինչև 1629 թվականին կնքված գինադադարը մարտեր էր մղում Ուչ Պոսպոլիտայի դեմ՝ զավթելով որոշ հողեր: Արդեն Սիգիզմոնդ III-ի օրոք Ուչ Պոսպոլիտան հեռու էր միասնական պետության իրեալից. առանձին իշխաններ, ելենելով անձնական շահերից, խախտում էին հարևան Երկրների, մասնավորապես Սոլոդավիայի սահմանները, Երկիրդ պատերազմում էր ոչ միայն Ծվեղիայի, այլև Մոսկովյան Ռուսիայի դեմ: Գլուխ էր բարձրացրել կրոնական անհանդուրժողականությունը, որը Սիգիզմոնդ III-ի վարած քաղաքականության արդյունք էր. նա զահակալության առաջին իսկ օրերից անհաշտ պայքար էր մղում առաջին հերթին բողոքականության դեմ: Թուրքիան սպասում էր հարմար պահի՝ Վրեժ լուծելու Ուչ Պոսպոլիտայից՝ իր տիրապետության տակ

գտնվող մոլդավական և վալախական հողերում շարունակաբար սանձազերծվող կրիվների համար, և այդ պահը չուշացավ: Հաշտություն կնքելով Պարսկաստանի հետ՝ 1620, ապա նաև 1621 թվականներին թուրքական սուլթանն իր գորքերով երկու անգամ հարձակվեց Լեհաստանի վրա (B. Грабенъский, История польского народа, Минск, 2006г., с. 252-267):

- 43 \*11. Մըսուրման կամ մուսուրման՝ փոխանակ մուսուրման-ի: Այս ձևը, ինչպես և բրուտրման ձևը, հաճախ պատահում է նաև Եվրոպական և ռուսական աղբյուրներում:
- 44 Օսմանյան թագավորական տոհմի նախնին Օսման I-ն է՝ Թուրքիայում սուլթանական դինաստիայի հիմնադիրը: Օսմանը սուլթան է հօչչակվել 1299թ.: Նրա անունով թուրքերը կոչվում են նաև օսմաններ կամ օսմանցիներ (Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Ե., 1986, էջ 565):
- 45 Հայկական Սիջագետքը Վերին Սիջագետքի տարածքն է, որը մինչև մ.թ. 37թ. Մեծ Հայքի կազմում էր՝ Ամիր կենտրոնով: Ընդարձակ հնաստով Հայկական Սիջագետքը պիտի ընդգրկեր նաև Ծավիեք և Արվատան զավառները՝ Մօրին կենտրոնով: Հայկական Սիջագետքը մ.թ. 37 թվականից անջատվել է Մեծ Հայքից՝ հետագայում կրվախնձոր դարնալով Հռոմի և Իրանի միջև (U. S. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 71):
- 46 Կիլիկիացիները, քանանացիները, ամովիացիները, պաղեստինցիները և քաղեացիները ժողովուրդներ էին, որոնցից յուրաքանչյուրի մասին Աստվածաշնչում հիշատակություններ կան մի քանի տասնյակ անգամ՝ բացառությամբ կիլիկիացիների, որոնց աստվածաշնչունչ գրքերը սակավ են անդրադարձում: Զուգահեռաբար հանդիպում են նաև Կիլիկիա, Քանան, Պաղեստին Երկրանունները: Ինչ վերաբերում է ամովիացիների և քաղեացիների Երկրանուններին, ապա դրանք Աստվածաշնչում չեն հիշատակվում:

47 Այստեղ Հովհաննես Կամենացու պատմությունն ընդհատվում է: Բնագիրն արտագրող Սարգիս դաիրն իր կողմից հավելում է, որ Հովհաննեսը շարադրանքն այստեղից առաջ է տարել չափած տողերով, բայց, ինչպես տեսնում ենք, Սարգիսն ինչ-ինչ պատճառով դրանք չի արտագրել:

- 48 \*12. Օսմանյան կայսրության վարչական ու գինվորական պաշտոներությանը վերաբերող այս հատվածում թերև անորոշություն է տիրում, որովհետև մեր հեղինակը, դժբախտաբար, թուրքական տերմիններ չի գործածում: Սակայն այդ ժամանակ Թուրքիայում գոյություն ունեցող պետական կարգի ուսումնասիրության հիման վրա հնարավոր է որոշ Ճշոտմներ կատարել: Այսպես՝

«Մեծամեծք և նախարար».— Պետք է հասկանալ մեծ վեզիրին , որը սուլթանի տեղակալն ու առաջին մինիստրն էր, և նրա խորհրդականներին՝ Դիվանի անդամներին. Վերջիններս էին մյուլֆթին մատուցում. (սուլթանի տեղակալը կրոնական գծով և օրինականության ներկայացուցիչը), կաղիլասկերները (զինվորական դատավորներ) և երկրորդական կարգի վեզիրները (տե՛ս Ricaut,,L'etat present de l'Empire Ottoman”, Rouen, 1677, Livre I, chap. XI. Հմնտ. նաև J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman”, trad. par J.-J. Hellert, t. III, Paris, 11836, p. 305-311):

«Պետք և զաւառակալք».— Պետք է հասկանալ բեզլերբեզիններին بکر بکر, որոնք էլայեթների կամ նահանգների զինվորական ու վարչական պետերն էին, և սանչակբեզիններին سنجاق بکر, որոնք սանչակների կամ զավառների զինվորական ու վարչական պետերն էին (տե՛ս Ricaut, livre I, chap. XII. հմնտ. և livre III, chap. X):

«Զօրք և զօրագլուխք».— Պետք է հասկանալ թուրքական հեծելազորը (սիկահիներ سپاهی هی) և հետևակազորը (ենիշերիներ ېچىرى) ու նրանց պետերը (տե՛ս Ricaut, livre III, chap. II-IV, VI-VII X. նաև J. de Hammer, „Histoire de l'Empire Ottoman”, „Histoire de l'Empire Ottoman”, t. I, Paris, 1835, էջ 123-127):

«Դրնապետք և զօրականք».— Պետք է հասկանալ կափուջի-բաշիներին իշխան վայրի գործերին, որոնք կոչվում էին կափուջներ վոյացի «դրնապան», «բարապան» (հմնտ Ricaut, liver III, chap. X): Հովհաննես Կամենացին թուրքական այս տերմինները թարգմանել է հայերեն՝ դրնապան = կափուջ և դրնապետ = կափուջի-բաշի:

Կափուջիները պալատի կրտսեր պաշտոներին էին պատկանում: Նրանք զանազան պարտականություններ էին կատարում սուլթանի ծառայության համար թե՛ պալատի ներսում, թե՛ դրսում, և ուղեկցում էին նրան պատերազմի ժամանակ:

49 \*13. Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

50 \*14. Տե՛ս ծանոթ. 48:

51 Նաբուզողոնոսոր II-ը Բաբելոնի ամենադաժան տիրակալներից մեկն էր: Թագավորել է մ.թ.ա. 605-567 թվականներին: Հայտնի է որպես մեծ նվաճող, որի հետ պատմիչը համեմատում է սուլթան Օսման II-ին: Նաբուզողոնոսորի անունը Աստվածաշնչի մի շարք գրքերում (Դ Թագ., Ա և Բ Մնաց., Ա և Բ Եզր., Նեեմի, Եսր., Յուդ., Տովք., Երեմ., Բարութ, Դան. և այլն) հիշատակվում է հարյուրից ավելի անգամ՝ գրեթե միշտ կապված նրա պատերազմների, ավերածությունների ու գերեզմանությունների հետ: Բազմաթիվ արշավանքների ընթացքում նա նվաճել է Ասորիքը, Պաղեստինը, Հուտայի թագավորությունը, Փյունիկիան, Հյուսիսային Միջազգետքի մի մասը, ներխուժել նաև Եգիպտոս: Նրա օրոք Բաբելոնը դարձել է Մերձավոր Արևելքի խոշոր տերությունը (հմնտ. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 8, Ե., 1989, էջ 139):

Ի դեպ, պատմիչ Գրիգոր Ակներցին էլ թաթար-մոնղոլներին է համեմատում Նաբուզողոնոսորի հետ (Գրիգոր Ակներցի, Պատմություն նետաձիգների ազգի մասին, աշխ. Գ. Խաչատրյանի և Վ. Եղիազարյանի, Ե., 2011, էջ 7-8):

52 Բնագրում՝ Երջ:

53 \*15. Թրք. թուկ՝ ուղարկանոր»:

54 \*16. Թրք. թյուֆենք և գնդ «հրացան»:

55 \*17. Այն է՝ Դանութը: Այս գետի անվան գերմանական Donau ծևից մեր միջնադարյան աղբյուրներում պատահում է Տաւնա, և հետզհետեւ նաև թուրքական ազդեցությամբ՝ Թոնա, Թունա:

56 \*18. Թուրքական բանակը Դանութը անցնում է հուլ. 11/21-ին (տե՛ս J. de Hammer, „Histore de l'Empire Ottoman”, t. VIII, Paris, 1837, էջ 278):

57 \*19. Այն է՝ Վարշավա:

58 \*20. Լեհերեն krzyż նշանակում է «խաչ», կրծքակար্যակիր: Ավանարկությունը վերաբերում է Տևոնյան միաբանության գերմանացի ասպետներին, որոնք, XIII դարից սկսած հաստատվելով Մերձբարիկայում, երկար ժամանակ սպառնալիք էին դարձել Արևելյան Եվրոպայի պետություններին և հատկապես Լեհաստանին (Ավանել 7, 8):

59 \*21. Նետողներ (աղեղնավորներ) կամ նետողաց ազգ անունն են տալիս հայ մատենագիրներն առհասարակ թաթար-մոնղոլներին:

Նետել բայց սկզբնական իմաստով նշանակում էր «նետ արծակել», «նետ ձգել»: Թաթար-մոնղոլների հիմնական զենքը նետ-աղեղն էր, այդ է պատճառը, որ նրանց տրվել է նետողաց ազգ անունը, որն այլուր հանդիպում է նաև նետողական ազգ տարբերակով (L. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ծեռագրերի հիշատակարաններ, Ե., 1950, էջ 138):

60 Թունավոր օծի տեսակ, որն աչքի է ընկնում յուրահատուկ վարքագծով: Հմնտ. Սրտմտութիւն նոցա ըստ նմանութեան օծին, որպէս իծի եւ քարի, զի խցեալ է զականջու իւր, Զի մի՛ լուիցէ նա զծայն թովչի ճարտարի, եւ մի՛ առցէ դեռ ի դեղատուէ (Սաղմ., ԾԷ, 5-6):

61 Այն է՝ 1621թ.:

62 Վազաների (շվեդերեն Vaza, լեհերեն Wazowie «սափոր» բառից) տոհմը Շվեդիայում թագավորական զահն զբաղեցրել է 1523-1654թթ., իսկ Ուչ Պուսպոլիտայում՝ 1587-1668թթ.:

- Միջնադարում այդ տոհմի անդամները տոհմական որևէ անուն չէին կրում: «Վասս» անունը ծագումնաբանական փաստաթղթերում ի հայտ է եկել միայն XVI դ. Երկորոր կեսին: Այն սկզբնապես որևէ առնչություն չի ունեցել սափորի հետ: Սակայն հետագայում սափորի պատկերն ամրագրվել է նրանց տոհմանշանում (Ակարներ 9-11):
- 63 Խոսքը արքունական պալատում հանդիսությունների ժամանակ իրենց մշտական աթոռը՝ բարձն ունեցող բարձրաստիճան պաշտոնյաների (հերցոգներ, նախարարներ, իշխաններ և այլն) մասին է, որոնց նստատեղով՝ գահով, որոշվում էր նրանց պավուրթյան կարգը: Վերջինս, կախված այս կամ այն հանգանանքից, արքայի կողմից կարող էր փոփոխության ենթարկվել (ավելի մանրամասն տես Մովսես Խորենացի, *Պատմություն հայոց*, Ե., 1968, էջ 341): Այդ մասին ակնարկ կա նաև *Փավստոս Բուզանդի* պատմության չորրորդ դարության Բ, Ծ և ԾԴ գլուխներում (Փավստոսի *Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց*, Ս. Պետերբուրգ, 1883թ.):
- 64 \*\*Եզեկիա արքայի թագավորության 14-րդ տարում Ասորեստանի Սենեքերին արքան հարձակվում է Հուդայի վրա, գրավում մի շարք քաղաքներ, պաշարում Երուսաղեմը և իր զորավարների միջոցով Եզեկիայից հոխորտագին պահանջում անձնատուր լինել: Սակայն Եզեկիան դիմում է Աստծու զորությանը, և Աստված փրկում է նրա ժողովրդին՝ Սենեքերիմի քանակից հրեշնակի միջոցով հանկարծակի կրտորելով հարյուր ութունինգ հազար զինվոր: Հետագայում Սենեքերիմին սպանում են իր իսկ որդիները՝ Արքամելեքն ու Սարասանը, և փախչում Հայաստան (Դ Թագ., Ժ-ԺԹ: Ես., ԼՇ):
- 65 Հնմտ. Բ Թագ., ԺԷ, 13: Դ Թագ., Ժ-ԺԹ: Բ Մնաց, ԼԲ: Ես., ԼՇ-ԼՇ:
- 66 Հենց նկարագրվող ժամանակահատվածում շարունակվում էր լեհ-շվեդական երեսնամյա պատերազմը (1618-1648թթ.) (Վ. Գրաբենչևսկի, *История польского народа*, Минск, 2006г., ст. 266):
- 67 \*22. Կիլնայի վոյեվոդա և Լիտվայի հետման Կա-

րոլ Խոդկիսի (Jan Karoł Chaokiewiczz wileński, hetman litewski). Նրա մասին տես J. Tretiak, „Historya wojny chocimskiej 1621 r.”, Lwow, 1889, s. 67-72.

Նշված ժամանակահատվածում *Լեհաստանը ներկայացնում էր Ուչ Պոսպոլիտա պետությունը* (ստեղծվել է 1569թ.), որի կազմի մեջ մտնում էին *Լեհաստանը*, *Լիտվան*, *Ուկրաինան* և *Զապորոժյան Սեզը*: *Լեհաստանում XVI դարում թագավորական մեծ հետման* (*Լեհաստան*) պաշտոնին զուգահեռ ստեղծվել է *Լիտվական հետմանի* (*Լիտվա*) պաշտոնը: *Թագավորական մեծ հետմանի կոչումը 1581 թվականից Լեհաստանում դարձավ ցմահ և շարունակեց գործել մինչև 1795 թվականը*: Այդ կոչումին արժանացողն ուներ դատահրավական իշխանություն ևս և մշակում էր զինվորական օրենքներ, կարգեր: Խաղաղ օրերին մեծ հետմանը սովորաբար գտնվում էր արքունիքում, գրադկում վարչական և ռազմավարական հարցերով: Կարող Խոդկիսին այդ ժամանակահատվածում գրադեցնում էր *Լիտվական հետմանի պաշտոնը*, բայց միաժամանակ լեհական զորքերի գերազույն հրամանատարն էր՝ թագավորական մեծ հետմանը, և ռազմական նախարարը: (Տե՛ս նաև հաջորդ ծանոթագրությունը, ինչպես նաև՝ ծանոթ. 101\*45, 130)

68 \*23. «Զօրագլուխ ի Վերայ համօրեն աշխարհին Իլախաց», այսինքն՝ թագավորական մեծ հետման (hetman koronny wielki). Արքունի հետմանությունը Խոդկիսիին տրվել էր, ինչպես ասում է Օքսենտը, 1620թ. դեկտեմբերին Վարշավյան գումարված սեյմում: Տե՛ս «Կամենից», էջ 89. հնմտ. J. Tretiak, s. 70.

69 \*\*Հնմտ. Ամենայն հեթանոսք իրեն զկաթի մի ի դուլտ են, և իրեն զմէտ մի ի կշռոց համարեցան և իրեն շիթք ի բերանոյ համարեցին (Ես., Խ., 15):

70 Տե՛ս ծանոթ. 24\*6:

71 Նկատի ունի Խոդկիսիի հրամանատարությամբ երկու արշավանքները (1611-1612թթ. և 1617-1618թթ.) Մոսկվայան պետության դեմ, որոնց ընթացքում Խոդկիսիը մի քանի ճակատամարտ է շահել, սակայն Մոսկվան

գրավել չի կարողացել: Այդ արշավանքներով նպատակ էր հետապնդվում Զիգմոնդ III Վազայի թագաժառանգ որդուն՝ Վլադիսլավին, թագավոր նստեցնել Մոսկվայում (տե՛ս *Платонов С. Ф., Очерки истории внутреннего кризиса и общественной борьбы в Московском государствстве XVI-XVII веков*, М.-С. Петербург, 2007, ст. 142-185, *Волков В. и Кузьмин А., 1612: Освобождение*, М., 2012, ст. 128-169 (նկար 12):

72 Ֆլանդրիան (նկարներ 13, 14) Ֆրանսիայից հյուսիս ընկած այն կոմսությունն է, որն իր ստեղծման շրջանից (866թ.) մինչև կործանման տարեթիվը (1384թ.) գրեթե մշտական պատերազմների մեջ էր հարևան երկրների հետ: XV դարում Ֆլանդրիան Բուրգունդյան կոմսության կազմի մեջ էր, ապա նաև էր կազմում Հաբսբուրգյան Նիդերլանդների, իսկ հարավային սահմանները գրավվել էին ֆրանսիացիների կողմից: Որպես քաղաքական կազմակիրում՝ Ֆլանդրիան փաստացի դադարել է գոյություն ունենալուց 1795թ., երբ ֆրանսիան գրավեց Հաբսբուրգյան Նիդերլանդները:

Հովհաննես Կամենացին նկատի ունի Խոդկիսի հրամանատարությամբ ֆլանդրիական, բալթյան և մերձբալթյան որոշ տարածքներում շվենցների դեմ տարած հաղթանակները 1604-1605թթ., որոնց առիվ շնորհավորանքներ է ստացել Պողոս V Պապի, Ավստրիայի Օուդոլֆ II, Անգլիայի Հակոբ II, Թուրքիայի Սիմեոն I և Պարսկաստանի Աքբար I թագավորների կողմից: Արդյունքում 1605թ. արժանացել Լիտվական մեծ իշխանության մեջ հետմանի կոչման:

73 \*24. Հայկական աղբյուրներում Օլախ, Ուլախ կամ Վշախ անունով են հիշատակվում Վալախները: Վալախների երկիրը՝ պատմական Վալախիան, գտնվում էր Կարպատյան լեռների և Դանուբ գետի միջև՝ այժմյան Ռումինիայի հարավային մասում, և բաժանվում էր Երկու մասի՝ Մունտենիայի և Օլտենիայի: Սակայն հայկական աղբյուրներում, ինչպես ուրիշ օտար աղբյուրներում, Օլախաց երկիր անունը շփոթությամբ տրվում էր և Մոլ-

դավիային: Այդպիսի առումով ենք գտնում գործածված, օրինակ, XVI դարի հեղինակներ Մինաս Թոխաթեցու ու Հակոբ Թոխաթեցու գրվածքներում և թագմաթիվ այլ հիշատակարաններում: Այդպես նաև Հովհաննես Կամենացին այստեղ նկատի ունի Մոլդավիան, որտեղ գտնվում էր Խոտին գյուղաքաղաքը: Տե՛ս նաև ծանոթ. 134\*65:

74 \*25. Ըստ Օքսենտ Կամենացու՝ Խոդկիսի գործը 1621թ. հուլ. 7/17-ին շարժվում է Օրինայի դաշտից և 10/20-ին հասնում է Խոտինի սահմանը, տե՛ս «Կամենից», էջ 93: Ըստ լեհական մի աղբյուրի՝ Խոդկիսի բանակը Խոտին է հասնում հուլ. 8/18-ին, տե՛ս J. Tretiak, s. 210:

75 \*26. Նիստր գետ – Հունական Տύրաց-ը, որը սկսութական ցեղերի կողմից անվանվում էր Danastris, որտեղից էլ առաջացել է՝ Dniestr, Dniestr, այն է՝ Նիստր. և մոլդավերեն՝ Nistru (Նիստրո): Լեհական աղբյուրներում անվանվում է և Dniestr (Նիհեստր), և Niestr (Նիհեստր): Թուրքերն ու թաթարներն այս գետն անվանում էին Թուրլա՝ Ղմեստրի գլխավոր գետաբազուկի անունով: Ինչպես կտեսնենք՝ Հովհաննես Կամենացին օգտագործում է նաև Թուրլա ձևը՝ Օքսենտի հետևողությամբ:

76 \*Ոուկ., Զ, 48:

77 \*27. Վլադիսլավ արքայորդու շարժվելու մասին տե՛ս J. Tretiak, s. 117-119:

Արքայորդի Վլադիսլավը (1595թ.-1648թ.) դեռևս 15 տարեկան հասակում՝ 1610թ., կաթոլիկությունից ուղղափառության անցնելու պայմանով պետք է նստեր Մոսկվայն Ռուսիայի գահին, որի մասին Վլադիսլավի հայրը՝ Միգիզունդ III Վազան, Մալենսկի տակ պայմանագիր էր կնքել մոսկվյան դեսպանների հետ: Կասիլի Շույսկուն գահագրելուց հետո բոյարները ցար ընտրեցին Վլադիսլավին և նրա անունով («Վլադիսլավ Ժիգիմոնտովչ») դրան հատեցին: Սակայն Վլադիսլավը ուղղափառություն չընդունեց, քանի որ Միգիզունդն իսկույն հրաժարվեց այդ պայմանը կատարելուց՝ մոսկվյան գահի համար առաջարկելով իր թեկնածությունը: Բնականաբար Վլադիսլավը թագավոր չօծվեց, քանի որ

Ոուսիայում բարձրացավ դժգոհության հոկա ալիք, արքայորդի Վկադիսլավի թոյարական կառավարությունը վայր որեց իշխանությունը, և չմայած 1611-1612թթ. լեհական արշավանքին՝ 1613թ. ցար ընտրվեց Միխայիլ Ունանովը: *Հետագայում՝ 1617-1618թթ.* Վկադիսլավը նոր արշավանքով մեկ անգամ ևս փորձեց տիրանալ մոսկովյան զահին, բայց անօգուտ: Այսուհետերձ, մինչև 1634 թվականը Վկադիսլավը շարունակում էր կրել «Մոսկովյան մեծ իշխան» տիտղոսը: Այդպես նա օգտվում էր նաև «Ըվեդիայի թագավոր» տիտղոսից, սակայն Ըվեդիան ինչպես նրա հոր, այնպես էլ նրա իշխանության ներքո երբեք չի հայտնվել, ավելին՝ Վկադիսլավ IV-ը Ըվեդիայում երբեք չի եղել:

Մինչև ՈԵՅ Պոսպոլիտայի թագավոր ընտրվելը (1632թ.) Վկադիսլավը մասնակցել է մի շարք պատերազմների և ճակատամարտերի: 1617-1618թթ.՝ լեհ-ռուսական, 1621թ.՝ թուրք-լեհական, 1626-1629թթ.՝ լեհ-շվեդական, և հայտնի էր որպես մարտական գործողությունների հմուտ կազմակերպիչ (Ակարներ 15-16):

Թագաժառանգի թացակայությամբ պայմանավորված՝ Վկադիսլավ IV Կազայի մահից հետո (1648թ.) ՈԵՅ Պոսպոլիտայի զահին նաև է նրա արյունակից եղբայր՝ Յան II Կազիմիրը:

- 78 \*28. Սարցին Կազանովսկի (Marcin Kazanowski).  
Կազանովսկիների տոհմը լեհաստանում հայտնի էր դեռ XV դարի կեսերից: Մարտին Կազանովսկին թագավորական դաշտային հետման էր, Պոդլիի վոյեվոդան: 1618թ. մասնակցել է նաև Մոսկովյան Ոուսիայի դեմ պատերազմին: Մահացել է 1636թ.: XVII դարում լեհաստանում մարելուց հետո Կազանովսկիների տոհմը շարունակեց իր գոյությունը ռուսական կայսրության Սմոլենսկի մարզում:

- 79 \*29. Կուլմի վոյեվոդա Յան Վայեր (Jan Wajer Weiherr, wojewoda chełmiński, starosta pucki).  
80 \*30. Ըստ Օքտենտ Կամենացու՝ հիշյալ 12.000 գործ բաղկացած էր 8.000 գերմանացիներից և 4.000 լեհերից, տե՛ս «Կամենից», էջ 93:

81 \*31. Հայկական աղբյուրներում Լվով քաղաքը կոչվում է նաև Իլով, Իլով, Լով, Լեվ, Լեպոլիս և Լեմպերկ (Լեմբերգ) ձևերով:

82 Գումակ, մարտասայլերի ամբողջություն, «.... փոխադրական միջոցների ամբողջությունը (օրող), .... փոխադրամիջոցների կայան» (Է. Բ. Աղայան, Արդի հայերենի թացատրական բառարան, Ե., 1976, էջ 267): Զորախաղերի և արշավանքների ժամանակ գումակներով տեղափոխվում էին բանակին անհրաժեշտ պիտույքներն ու պարենը, դաշտային խոհանոցը, բուժկետը և այլն: Արշավանքների և մարտերի ժամանակ մարտասայլերն ու կառքերը մի քանի շարքերով դասավորում էին շրջանաձև կամ քառակուսի՝ մեկը մյուսին ամրացնելով շղթաներով. այդ կառույցները ծառայում էին որպես ռազմական ճամբար, անհրաժեշտության դեպքում՝ նաև որպես դիրքերի ամրացման միջոց (Նկար 17):

83 \*32. Ըստ Օքտենտի՝ լեհական թագաժառանգ Վկադիսլավը Կամենեց է հասնում օգոստ. 13/23-ին, երկուշաբթի, և հաջորդ օրը շարժվում է դեպի Խոտին, տես «Կամենից», էջ 93: Բայց լեհական աղբյուրներում այս ամսաթիվը մի վեց օրով առաջ է շարժվում, հմմտ. ծանոթագր. 86\*33:

84 Լեհահայոց գաղութը ծևափորվել է որպես հետևանք Հայաստանում տևական անբարենպաստ աշխարհաքաղաքական պայմանների: Հայտնի է Հայաստանից լեհաստան զանգվածային արտագաղթի երկու հիմնական ժամանակահատված. առաջինը տեղի է ունեցել Անի մայրաքաղաքի գրավման և Բագրատունյաց թագավորության անկման ժամանակաշրջանում՝ մոտավորապես 1060-ականներին, երկրորդ արտագաղթ՝ դրանից մոտավորապես չորս դար հետո (տե՛ս Արսեն Այստրենյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987թ., էջ 162): Հենց առաջին արտագաղթի ժամանակ էլ հայ ժողովրդի մի ստվար հատված բնակություն է հաստատել Լվովում, որտեղ 1182թ. կառուցվեց առաջին հայկական եկեղեցին (կայստաշեն), իսկ ավելի ուշ՝ 1363-ին՝ քարաշեն եկեղեցին: Լվովն այդ

ժամանակահատվածում դարձավ հայ գաղթականության «զիսավոր բնակատեղին» (Ղևոնդ Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896թ, էջ 4):

Լվովում և Լեհաստանի տասնյակ քաղաքներում (նախ՝ Կամենեցում, Լուցկում և այլուր, հետագա դարերում՝ Բերեժանում, Կուտիհում, Տիմինիցայում, Կրակովում, Լյուբլինում, Վարչավայում, Զամոստիեում, Վրոցլավում, Պոդոնանում և այլուր) բնակություն հաստատած հայությունը ձևավորել է մեր ժողովրդի միջնադարյան ամենածաղկուն և կազմակերպված գաղթօջախներից մեկը, որը տվել է մի շարք անվանի դեմքեր (Հակոբ Թոխաթեցի, Մինաս Թոխաթեցի, Սիմեոն Լեհացի և այլք՝ աչքի ընկնելով գեղանկարչության, կաշեգործության, ոսկերչության, ասեղնագործության, առևտի և այլ բնագավառներում (Հայկական սովետական հանրագիտարան, հ. 4, Երևան, 1978, էջ 530-531):

Կամենեց Պոդոլսկը (նկար 18) Լեհահայոց գաղութի հայաշատ քաղաքներից մեկն էր: Կամենեց Պոդոլսկում հայերը հաստատվել են XI դարից սկսած, երբ կործանվել է Բագրատունիների հայկական թագավորությունը: Դեպի Ուկրաինա և Լեհաստան հայկական նոր խմբեր են հաստատվում նաև Զաքարյան Հայաստանի անկումից հետո՝ XIII դարում: Հայերն այնտեղ են գաղթել նաև Ղրիմից, Սոլդովայից, Փոքր Ասիայի հայաբնակ Վայրերից [Առաքել Շավիթեցի, նշվ. աշխ., էջ 542]: XVI դարի երկրորդ կեսին Կամենեց Պոդոլսկում մինչև 1200 հայ ընտանիք էր ապրում (Առաքել Շավիթեցի, Պատմություն, թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Ե., 1988, էջ 542): Կազմելով Կամենեց Պոդոլսկի բնակչության զգալի մասը՝ հայերը կարևոր դեր են խաղում նրա մշակութային, տնտեսական և ռազմական կյանքում: Նրանք բնակվում են զիսավորապես քաղաքի հարավարևմտյան հատվածում: Մինչ այժմ պահպանվում է հայկական թաղամասը, որը հայտնի է որպես «Արմանկոյ»: Կամենեց Պոդոլսկի հայ համայնքի վիճակը լավագույն ներկայացնելու հա-

մար բավական է նշել նրանում հիշատակվող թվով հինգ (որոշ տվյալներով՝ ութ) հայկական եկեղեցիների առկայության փաստը, այլև այն, որ տեղի հայ համայնքն ուներ հայկական դպրոց, որը գործել է մինչև թուրքերի կողմից 1672թ. քաղաքի գրավումը («Հայկական սովետական հանրագիտարան», հ. 4, Երևան, 1978, էջ 520), և առանձին դատարան (գործել է մինչև 1787թ.)՝ հայ դատավորով [Վերջինիս մասին անուղղակիորեն հիշատակում է նաև պատմիչ Հովհաննես Կամենացին (էջ 73)]:

85 Ըստ Աձառյանի՝ կլա/կալա (qal'a – «բերդ», «ամրոց») բառը արաբական փոխառություն է (Հր. Աձառյան, ՀԱԲ, հ. 2, էջ 599):

86 \*33. Զեռագրում օգոստ. 14/24-ի օրը սխալմամբ նշված էր «ուրբաթ». Մենք սրբագրեցինք և դարձրինք «Երեքշաբթի»՝ ըստ Օքսենտի ժամանակագրության, որը նրա աղբյուրն է, հմնտ. «Կամենից», էջ 93-94: Սակայն լեհական աղբյուրները թագաժառանգի՝ Խոտինի ժամանումը դնում են ավելի ուշ՝ օգոստ. 20/30-ին, երկուշաբթի օրը, տե՛ս J. Tretiak, s. 119, 211:

87 \*34. Ըստ Օքսենտի՝ այս կրիվները տևում են «կես շաբաթ», տե՛ս «Կամենից», էջ 94: Կրիվների սկիզբը օգոստ. 17/27-ն էր, հմնտ. M. A. Алекберли, «Хотинская война (1621г.)», Чирновцы, 1957. Стр. 81:

88 Յակով Աղամովիչ Ներողիչ-Բորոդավկան կամ պարզապես՝ Յացկո Բորոդավկան (?-1621թ.) զապորոժյան կազմելու ատաման ընտրվեց 1619թ. (որոշ աղբյուրներ նշում են, որ նա ատաման է եղել դեռևս 1606-ից), ինչին դեմ էր նրա գլխավոր հակառակորդ Պյոտր Սահայդաչնին:

Բնույթով լինելով ազատատենչ՝ Բորոդավկան հակառակ էր խռովությունների: Նա մեծ ներդրում ունի Մոսկովյան Ուտիշայի հարավ-արևմուտքում ընթացող ազատագրական պայքարի կազմակերպման գործում, անձանք մասնակցել է տեղի ունեցող ապստամբություններին:

1620-1621թթ. Բորոդավկան նպատակ ուներ ազատագրելու Ուկրաինան Ուչ Պոսպոլիտայի տիրապետությունից, բայց Օսմանյան կայսրության՝ Ղրիմի խա-

նության հետ միությունը Բորոդավկային հարկադրեց համաձայնություն կնքել Ուչ Պոսպոլիտայի կողմից պետականորեն գրանցված (թագավորական) կազակների հետ, որոնց գլխավորում էր Պյոտր Սահայդաշնին՝ միացյալ պայքար մղելու թուրքերի դեմ:

1621թ. հունիսին տեղի ունեցավ գապորոժյան կազակների ռադան, որտեղ որոշում ընդունվեց լեհերին օգնության ուղարկել 40.000-անոց բանակ՝ Բորոդավկայի գլխավորությամբ: Ըստ ժամանակակիցների՝ գինվորները սիրում էին Բորոդավկային, և, ինչպես վկայում է լեհ զորավար մելկովսկին, Բորոդավկան պատրաստ էր նրանց հետ գնալ ոչ միայն ծով, այլև թեկուզ դժոխք:

Օգոստոսին, երբ սկսվել էր Խոտինի պատերազմը, ատաման Յակով Բորոդավկային բանտարկեցին և որոշ ժամանակ անց՝ սեպտեմբերի 8-ին, գլխատեցին՝ մեղադրելով տարբեր հարցերում, որոնցից ամենակարևորը, թերևս, լեհական ազնվականության կալվածքների ասպատակումն էր և մարդկային մեծ կորուստները, որ նա տվեց պատերազմն սկսելուց առաջ, ինչի մասին գրում է նաև Հռվիաննես Կամենացին (նկար 19):

89 Կազակական ատաման Կոպաչկիչ Սահայդաշնին (Սահայդաշնի Պյոտր Կոնոնովիչ) ծնվել է 1570-ին և մահացել 1622թ. Խոտինի պատերազմում ստացած ծանր վերքերից: Սահայդաշնին հայտնի էր նվաճողական արշավանքներով: Նշված ժամանակահատվածում, երբ Թուրքիան իր տիրապետությունն էր հաստատել Մոլոտավիայում և Վալախիայում, բայց պատերազմի մեջ էր Պարսկաստանի հետ, Սահայդաշնին առիթը բաց չէր թողնում թալամելու թուրքական քաղաքները, գրավելու Դրիմի խանության որոշ տարածքներ: Նա ազատագրական կրիվներ է նշել նաև Մոսկովյան Ռուսիայի դեմ: Սահայդաշնին իր գործերով հասել է մինչև Փոքր Ասիայի ափերն ու անգամ Կոստանդնուպոլիսի մերձակայքը (նկար 20):

1621թ. հունիսին տեղի ունեցավ գապորոժյան կազակների ռադան, որտեղ որոշում ընդունվեց լեհերին

օգնության ուղարկել բանակ՝ փոխարենը պահանջելով որոշակի պայմանների բավարարում: Չնայած լեհերի տարտամ պատասխաններին՝ Սահայդաշնին դրանք մեկնաբանեց որպես լեհերի կողմից համաձայնություն, և ռադան հանձնարարեց Բորոդավկային պատրաստվել թուրքերի դեմ պատերազմի:

Օգոստոսին Խոտինի մատուցներում զապորոժյան գործերում տեղի ունեցավ իշխանության փոփոխություն. գրելով ատամանական մականից՝ ատաման Յակով Բորոդավկային բանտարկեցին, ապա նրա գլխավոր հակառակորդի՝ Պյոտր Սահայդաշնու հրամանով, ով ժամանակին դեմ էր եղել Բորոդավկայի ատաման ընտրվելուն, գլխատեցին. ատաման ընտրվեց Սահայդաշնի: Սակայն նրա մահը մեկնաբանվել է տարբեր ձևերով: Լեհական կողմն, օրինակ, նրան մեղադրում էր ազնվականական կալվածքները ասպատակելու, իսկ կազակները՝ որոշ ջոկատների անհաջող մարտերի և պարենի պակասի համար:

Ցրտերն ընկնելուն պես մարդկային մեծ կորուստներ կրած թուրքերն ստիպված եղան կնքել իրենց համար ոչ շահավետ պայմանագիր, մանավանդ որ մտադիր էին ջախջախել լեհական բանակը և դուրս գալ դեպի Բալթիկ ծով:

Սահայդաշնին, ով ծանր վիրավորվել էր թևից, մարտական հաջող գործողությունների համար անծանր արթայորդի Վլադիմարի կողմից պարզեցվեց սրով՝ ընդելուզված ուկով և անդամանդներով, անտիկ զինվորների մարտի և Սողոմոնի դատավարության տեսարաններով:

Ատաման Սահայդաշնին վիրավորվելուց մի քանի ամիս անց անբուժելի վերքերից մահացավ Կիևում: (Փանկը Կ, Իстория Османской Империи, М., 209, с. 302-303)

90 \*35. Ըստ Օքսենտի՝ թուրքական գործի թիվը 250.000 էր, տե՛ս «Կամենից», էջ 94:

91 \*36. Ըստ Օքսենտի՝ թուրքական թնդանորների թիվը 250 էր, տե՛ս «Կամենից», էջ 94:

92 \*37. Զեռագրում Խան-Գերիչ էր. մենք նրա վերջին՝ չտար վերացրինք, այն համարելով բնագրի ընդօրինակողներից մեկի կամ հենց Եղծված բնագրի վերականգնող նույն ինքն Սարգիս դարի կողմից Վրիավմամբ ավելացված, և անունը դարձրինք Խան-Գերի, որը պիտի արտասանվի Խան-Քերի, քանի որ հեղինակի մոտ կիրառված ուղղագրական սիստեմում (այժմյան արևատահայ) գտարի հնչյունը շփորփում է քի հետ: Խան-Քերին մեր կարծիքով մի անուն է, որը կարող էր տրվել Ղրիմի թարար-խաներին, որոնք «Քերի»-ների կամ «Գիրեյ»-ների հարստությանն էին պատկանում: Կոմանախոս հայերը, ըստ Երևույթին նաև հայախոսները, «Գիրեյ»-ներին «Քերի»-ներ էին անվանում, իննտ. «Կամենից», էջ 72, տող 28:

Հովհաննես Կամենացու մոտ հիշատակված Խան-Քերին Ղրիմի թարարների խան Ջամիրեկ-Գիրեյ II-ն է, տե՛ս C. Լզն-Պուլ, «Мусульманские династии», С.-Петербург, 1899, стр., 196. Ժամանակագիր Խաչատոր Կաֆայեցին ևս հիշատակում է, որ սովորան Օսման II-ի հետ 1621 թվականին Լեհաստանի պատերազմին մասնակցող «քաջաւորն մողոց Ճանպէքէրէ խանն» էր, տես Վ. Ա. Հակոբյան «Մանր Ժամանակագրություններ II-XVIII դարերի», հտ. Ա. Ե., 1951, էջ 210:

93 \*38. Կամենեցի հայերը, որոնց թիվը մի ժամանակ 900 դուռն էր կազմում, ունեին բազմաթիվ Եկեղեցիներ՝ Ս. Նիկողայոս, Ս. Աստվածածին, Ավետիման, Ս. Լուսավորիչ և Ս. Խաչ: Ս. Լուսավորիչ Եկեղեցին գտնվում էր քաղաքի հարավյան կողմերում, հայոց թաղում, ընդարձակ տարածության վրա, և XIX դարի սկզբներում դեռ գոյություն ուներ ավերակ վիճակում, տե՛ս Ս. Բժշկյան, «Ճանապարհորդություն ի Լեհաստան», Վենետիկ, 1830, էջ 154: Հիշատակվում են Ս. Լուսավորիչ հրկիզման նախորդ Երկու դեպքեր ևս, մեկը 1575 թվականին՝ թարարների ծեռքով, մյուսը՝ 1602 թվականի մեջ հրդեհի ժամանակ, տե՛ս «Կամենից», էջ 46 և 63-64: Ս.Խաչ Եկեղեցու մասին հիշատակություններն առհասարակ քիչ են: Օքտե-

տի ժամանակագրության համաձայն՝ Ս.Խաչը 1612 թվականին նոյնպես հրկիզմել էր թաթարների կողմից, տե՛ս «Կամենից», էջ 72 (նկար 21):

94 \*39. Ըստ Օքտենսի՝ սովորանի բարկությանը զոհ գնացողներն էին՝ Ենիշերի-աղասին, որը պաշտոնանկ է արքուն, մի թուրք փաշա, որը գլխատվում է, և Օլախի (Մոլդավիայի) իշխան Ալեքսանդրը, որը շղթայակապ բանտարկվում է, տե՛ս «Կամենից», էջ 95. Բայց այստեղ ասվում է, որ դեպքը տեղի է ունեցել Երկու օր առաջ՝ օգոստ. 25/սեպտ. 4 շաբաթ օրը:

95 \*Հմտ. Արտաքուստ անգամակեսցէ զնոսա սուր և իր շտեմարանաց՝ Երկիր (Աստուածաշունչ մատեան իին և նոր կտակարանաց, Հայաստանի աստուածաշնչային ընկերություն, 1997թ.), Բ Օրէն., ԼԲ, 25:

96 \*40. Այն է՝ Բաղդադի կուսակալ Մուսթաֆա փաշան:

97 \*41. «Հարիւրապետ». Ըստ Օքտենսի՝ ռոտմիստր (լեռ rotmistrz), տե՛ս «Կամենից», էջ 96:

Փաստորեն Օքտենսի ժամանակագրության մեջ Երկու անգամ համիլպող (Ղևոնդ Ալիշան, նշվ. աշխ, էջ 96 և 102) ռօթմիլոր/րօդմիսոր (rotmistrz) զինվորական պաշտոնը Հովհաննես Կամենացին իր պատմության մեջ ներկայացնում է Երկու տարրերակով. մի անգամ՝ որպես հարիւրապետ (էջ 51), մյուս անգամ՝ որպես հազարապետ (էջ 64): Ակզրնական շրջանում ռոտմիստրը կարող էր գլխավորել և հետևակագորայիններին, և հեծելագորայիններին: Հետազայում ռոտմիստրը հեծյալ զնի հրամանատարն էր: Նա կազմավորում էր գունդը՝ նրանում ընդգրկելով մի քանի օգնականների կամ, որ նոյնն է, տովարշչների (towarzysz), որոնցից ամեն մեկն իր հետ թերում էր ոչ մեծ ջոկատ, որը մինչև XVII դարը սովորաբար կազմված էր յոր պախուեկներից (pacholek): Տովարշչները իրականում ռոտմիստրի օգնական-ընկերներն էին և նրա հետ միասին կրում էին ծառայողական և տնտեսական ռիսկերի պատասխանատվությունը:

98 \*42. Պրսկ-թրք. բայրակ Չ՛յու: «որոշ»:

99 \*43. «Լո՛ւ, լո՛ւ, լո՛ւ». Հավանաբար՝ արաբ. ալ լա ալ լա Ա

- լա իլահ իլլ-Ալլահ, որը նշանակում է «Զկա աստված՝ բացի Ալլահից»: Մահմեդական բանակների զորքերն այսպիսի աղաղակով էին գրոհում պատերազմների ժամանակ:
- 100 \*44. «Փօքր զօրավար», այն է՝ դաշտային հետման *hetman polny*, հմնտ., «Կամենից», էջ 96: Դաշտային հետմանը Ստանիսլավ Լուբոմիշկին էր, Սանդոմիրի ստարոստան (*Stanisław Lubomirski, starosta sandomierski*). ընտրվել էր 1620թ. դեկտեմբերին Վարչավայում գումարած սեյմում, տե՛ս «Կամենից», էջ 89: St. ս նաև ծանոթ. 127\*63, 130 և 146\*75:
- 101 \*45. «Մեծ հեթման» այն է՝ արքունի մեծ հետման, *hetman koronny wielki*, հմնտ. «Կամենից», էջ 96:
- St. ս ծանոթ. 67\*22, 68\*23, 130:
- 102 \*46. Բերդակալ Պոլոցկի (kasztelan Polocki):
- Կաշտելանի (*kasztelan*) պաշտոնը լեհաստանում կար դեռևս XIII դարում: Ակզենական շրջանում այն գրադարձնողը բերդակալն էր, ով գուգահեռաբար ուներ նաև վարչական, դատական և գինվորական գործառույթներ: Հետագայում վոյեվոդության մեջ իր գրադերած պաշտոնով կաշտելանը երկրորդ տեղում էր վոյեվոդից հետո և վոյեվոդի հետ միասին՝ սենատի անդամ: Սովորաբար այդ պաշտոնն զբաղեցնում էին նշանավոր իշխանական տների (Գոլշամակիներ, Խոռվակիներ, Տիշկևիչներ և այլք) ներկայացուցիչները:
- 103 \*47. Միկոլայ Շենիավսկի (*Mikołaj Sieniawski, krajczy koronny*):
- 104 \*48. «Մեծ զօրավար» տե՛ս ծանոթ. 67\*22, 68\*23 և 101\*45:
- 105 Լեհերը բանակ էին դրել Խոտինի բերդաքաղաքի շուրջը, և իրենք պատսպարվել ներսում: Այնպես որ բանակի դուռը կարելի է հասկանալ քաղաքի դարպասը:
- 106 Բերեժանը միջնադարյան հայաշատ քաղաք էր: Այժմ՝ Ռուկահինայի մայրաքաղաք Կիևի մարզի քաղաքներից:
- 107 \*49. «Երկու այր ի գինուորաց և երկոտասանք ի գինուորացն ծառայից»: Ըստ Օքսենտի՝ 2 տոռվարը *towarzysz* (պետք է լինի՝ *towarzysz-Q.Խ.*) և 11 պախոլեկ *pacholek*, տե՛ս «Կամենից», էջ 97:

Հովհաննես Կամենացին, Օքսենտի նշած *towarzysz*-ը գինուոր թարգմանելով, բնավ նկատի չուներ շարքային գինվորին: *Towarzysz*-ները գերազանցապես լեհական մանրակալվածք ազնվականներն էին՝ շյախտիչները, ովքեր, իբրև կանոն, ծառայում էին աշխարհազորային բանակում՝ կազմելով գինվորական եղբայրություն: Ի տարբերություն ունետու ազնվականների՝ շյախտիչների, ովքեր միմյանց դիմում էին պան բառով, տոռվարը միմյանց դիմում էին պան եղբայր բառակապակցությամբ: Հովսարների հետ միասին տոռվարըններն ունեին կրտսեր սպայի կարգավիճակ, որն ավելի բարձր էր, քան դրազուն-սպաններինը և հետևազորային-սպաններինը:

Ի դեպ, իրենք իրենց տոռվարը էին կոչում նաև զապորժյան կազմերը (նկար 22):

- 108 Պախոլեկները (*pacholek*) հարուստ լեհերին (արևմտյան ասպետների օրինակով) ծառայող աղքատ երիտասարդներ էին, ովքեր նրանց ծառայում էին ոչ միայն տնային գործերում: Ուզմական արշավանքների ժամանակ պախոլեկը ռազմաձիու հետ քայլում էր ասպետի կամ տոռվարըի առջևից կամ նրա կողքին:
- 109 \*50. Ըստ Օքսենտի՝ 5.000 կազմկ, տե՛ս «Կամենից», էջ 98:
- 110 \*51. Կազմակների մոտ տեղի ունեցած այս անցքերի մասին խոսում է Հակոբ Սորիեսկին՝ իշխան Զբարասկուն ուղղված իր նամակում, տե՛ս J. Tretiak-ի մոտ, էջ 207:
- 111 St. ս ծանոթ. 89, 174:
- 112 \*52. Բատտիստայի որդի Կոստանտին Վելելի (Costantino Battista Velleli կամ Velleli, Vevelli, Vavelli), ազգությամբ իտալացի, Մոլդավիայի և Վալախիայի իշխան Ռադու Միհնեայի փեսան էր: Նա 1611 թվականից սկսած հիշատակվում է որպես բոյեր (բոյար) Վալախիայում, հետագայում անցնում է Մոլդովիա և այնտեղ սպանվում 1633 թվականի ժողովրդական ապստամբության ժամանակ:

Կոստանտին Վելելին, ինչպես ասում է Հովհաննես Կամենացին, որպես բանագնաց թուրքերի կողմից էր

ուղարկվել, բայց խոսում էր Ռադուի անունից: Վերջինս՝ Ռադուն, հայտնի է որպես խաղաղատեր տրամադրության տեր մարդ: Նա 1601 թվականից սկսած, որոշ ընդհատումներով, Կալախիայի իշխան էր Եղել, իսկ 1616թ. նշանակվել էր Մոլդավիայի իշխան, բայց լեհ-թուրքական հարաբերությունների լարման այս շրջանում տեսնելով մոտալուտ պատերազմի վտանգն ու չկարողանալով դիմադրել դրան՝ հրաժարվել էր և 1620 թվականին նորից էր ստանձնել Կալախիայի իշխանությունը: Հովհաննես Կամենացին խոտինի պատերազմի ժամանակ նրան հիշատակելով որպես «պարոն Պուտոտանայ» (Մոլդավիայի իշխան): Ակասի ունի նրա նախկին պաշտոնը: Թուրք պատճառագիր Թյաթիր Չելեբին ևս մի տեղ նրան վրիամամբ անվանում է «Բողդան Վոյվոդա»: հմմտ. „Islam Ansiklopedisi”, 5, cilt, 46. Cuz, sah. 569.

Ըստ լեհական աղբյուրների՝ Վելեին լեհական բանկատեղին է հասնում սեպտ. 2/12-ին և լեհական բանագնացի հետ միասին մեկնում է սեպտ. 4/14-ին. մանրամասնորեն տե՛ս և հմմտ. J. Tretiak, s. 157-161. Լեհ բանագնաց Հակոբ Զելենսկին (Jako'b Zelenski կամ Zielinski, Zielinski) դաշտային հետման Ստանիշավ Լուրդիրսկու պալատականներից էր:

- 113 \*53. Բուրդինի (կամ Բուրդայի) կուսակալ Կարակաչ Մոհամմեդ փաշա: Այս գլխում հեղինակը Կարակաչ անունը գրում է Երկու ծևով՝ Քարաքաչ և Խարախաչ. Վերջինս Օքսենտի ժամանակագրության հետևողությամբ է, ըստ կոմանական արտասանության, հմմտ. «Կամենից», էջ 98-99:
- 114 \*54. Թրք. զյառու կամ զյառու چակ անհավատ», «անկրոն»: Թուրքերն այսպես էին անվանում քրիստոնյաներին:
- 115 \*55. Ըստ Օքսենտի՝ սուլթանը Կարակաչ փաշային տալիս է 6.000 ենիշերի, 12.000 ռումեյյան հեծյալ և 5.000 անատոլյան հեծյալ. Տե՛ս «Կամենից», էջ 98:
- 116 Ըստ Կամենեցի տարեգրության՝ Բուրդինը մաճարների (Հունգարիա) թագավորանիստ քաղաքն էր (Ղեղնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 17): Ալիշանի կարծիքով դա կարող էր լինել Բուրդապեշտը (Ղեղնդ Ալիշան, նշվ. աշխ., էջ 4):

117 Մուհամմեդ մարզարեն սկզբում գաղտնի քարոզում էր ընկերների և հարազատների շրջանում: Այս ընթացքում հավամին սկսեց հետևել մոտ 40 մարդ, որոնցից էին Մուհամմեդի կինը՝ Հաղիջան, Ալի իրն Արու Թալիբը, Արու Բաքրը և այլք (Болшаков О. Г., История Халифата, Москва, 1989, ч. I, ст. 76): Ալի իրն Արու Թալիբը (ծնվել է 661թ.) հայտնի է որպես բացարձի քաղաքական և հասարակական գործիչ: Նա Մուհամմեդ մարզարեի հորեղբոր տղան էր, փեսան և հետևողդը, չորրորդ արդարադատ կրոնապետը (656-661թ.) և շիա ուսմունքի մեջ՝ պաշտամունքի արժանացած առաջին իմամը և սուլթան: Ալին իսլամ ընդունած առաջին երեխան (իսլամ ընդունել է ինը տարեկան հասակում) և առաջին տղամարդն էր: Ավելի ուշ նա եղել է ակտիվ և մշտական մասնակիցը հավամի պատմության բոլոր վաղ իրադարձությունների և ճակատամարտերի, որոնք մարզարեն մղում էր իր դավանանքի հակառակորդների դեմ: «Եթե ես գիտության քաղաք եմ, ապա Ալին այդ քաղաքի բանալին է», – ասել է Մուհամմեդը: Ալին դարձել է կրոնապետ: Սպանվել է 661-ին:

- 118 \*56. Թրք. խանդակ չէ լուս «խրամ», «ական», «պատնեշ»:
- 119 \*57. Ըստ Օքսենտի՝ լեհական կողմից ընկնում են 7 հոգի, իսկ թշնամուց՝ 2.8000, տե՛ս «Կամենից», էջ 99:
- 120 \*58. Զեռագրում հազար երկու է՝ «հարիւր» բարի բացթողումով: Մենք լրացնում ենք (1200)` Օքսենտի ժամանակագրության հետևողությամբ, տե՛ս «Կամենից», էջ 100:
